այդ յերկու տեսակները համապատասխանում են յերկու ալիքիսի խըմբերի, ինչպիսիք են վոչ ժառանգական և ժառանգական փոփոխականությունը: Առաջինն է հիմքն եւ կազմում միայն արտաքին միջավայրի ազդեցությունը, իսկ յերկորդի հիմքն եւ ժառանգականությունը: Հետագայում մենք կքննենք փոփոխականության պատճառների հարցը: Այստեղ պետք եւ միայն մատնանշել վոր այդ տեսակետը կապված եւ Ֆիլիպընիոյի արտահայտած մի մտքի հետ՝ թե հնարավոր եւ առանձին դիտել փոփոխականությունը վորպես վիճակ և փոփոխականությունը վորպես պըրոցես: Իսկ իրոք ունալ կերպով գոյություն ունեցող տարրերությունների ամեն մի փաստ արտահայտություն և վորոշ պըրոցեսի, վորից անջատ չի կարելի ուսումնասիրել գոյություն ունեցող վիճակը:

Մի խոսքով՝ փոփոխականության յերևույթները կլասիֆիկացիայի յենթարկելու համար կարելի յեւ յենել տարրեր հիմունքներից և մասնավորապես վերլուծման համար գործադրված ձևերի տարրերություններից, բայց ավելի խորը կլասիֆիկացիայի համար պետք եւ ճշտել, թե վոր կոնկրետ հիմունքների վրա յեն ստեղծվում փոփոխականության տարրերը տեսակները և ինչպիսի կապ ունեն նրանք ժառանգականության հետ:




Փոփոխականության պատճեններ՝ արտահին միջավայրը յեւ ժառանգականությունը: — Զանազան փոփոխություններ կամ տարրերություններ ուշիուշով ուսումնասիրելիս դժվար չեւ համոզվել: Վոր դրանց առաջ դալու գործում խոշորագույն գեր են խաղում արտաքին միջավայրի տարրեր պայմաններ: Արդարեւ, վերցնենք այնպիսի մի ամենահասարակ գործոն, ինչպիսին եւ սնունդը, կովին վատ կերակրելիս նա շատ քիչ կաթ կտա, ընդհակառակը՝ լավ կերակրելիս արտաքում վատ կենդանին եւ բավականին լավ կիմնի իր տնտեսական հատկություններով: Կենդանիներին պահելու պայմանների վատացումը վատթարացնում եւ նրանց (նկ. 3 և 4): Զարգացման, կերակրման, խնամքի, կիմայի տարրեր պայմանների ազդեցությամբ կենդանիները կամ լավ են զարգանում կամ վատ (նկ. 5): Նրանք փոփոխում են կամ, ինչպես ասում են՝ մոդիֆիկացիայի յեն յենթարկվում: Ամեն մի փոփոխություն, վորն առաջ եւ գալիս արտաքին պայմանների ազդեցությամբ, կոչվում եւ մօդիֆիկացիա:

Բացարձակապես միատեսակ պայմաններ չեն լինում: Միշտ վորոշ տատանումներ կան կենդանիներին շրջապատող բազմաթիվ արտաքին ազդեցությունների մեջ, տատանումներ կենդանիների զարգացման մեջ նույնիսկ այն գեպքում, յերբ մենք անփոփոխ ենք համարում արտաքին պայմանները: Այդ պատճառով իրենց ընությամբ շատ նման կենդանիները (որինակ՝ յերկվորյակները, վորոնք գոլանում են մի ձվից) տարրերություններ կունենան տարրեր պայմանների ազդեցությամբ:

Քերպիլի որենքի համաձայն, վարիացիոն կորագծի ձևով արտահայտվող փոփոխականությունը հանդիսանում է բազմաթիվ ներգործությունների ու ազգեցությունների արտացոլումը, աղջակներ, վորոնք ներգործություն են որպանիզմի վրա տարրեր ուժով, մերթ մեկ, մերթ հակառակ ուղղությամբ:

Սակայն յեթե մենք խորանանք այդ հարցի ուսումնասիրման մեջ, կհամոզվենք, վոր փոփոխությունների բնույթը վորոշվում է վոչ միայն արտաքին պայմաններով, կարելի յեւ պահել խոշոր յեղջերավոր անասունների մի քանի գծեր կերակրման ու դաստիարակման միատեսակ պայմաններում, և այնուամենայնիվ մի գծին պատկանող կովերն ամենի կաթնատու կլինեն, իսկ մյուս գծերում կաթնատկությունը շատ ցածր կլինի: Այդ տարրերությունները մենք պետք եւ վերագրենք վոչ թե արտաքին պայմաններին, այլ նրանց ժառանգական, ընածին հատկություններին:

Յեթե յերկու տարրեր ցույքերի սերունգը տարրեր կաթնատկություն ունի՝ չնայած այն պայմանների նմանության, վորոնց մեջ գտնվում են նրանք, ընական կլինի նրանց մթերատկության տարրերությունները կապել ժառանգականության հետ:




Նկ. 5. Կլիմայի ազգեցությունը. վերեկում՝ Որպես բուրգում (Գերմանիա) առաջ բերված կով, մեջտեղը՝ Որպերբուրգում ծնված և մի տարեկան հասակում՝ Աֆրիկա փոխադրված կով, ներբեկում՝ մի կով, վոր ծնվել և՝ Աֆրիկայում՝ Գերմանիայից (Բաուբից) բերված զարյուն ծնողներից:

Բայց յեթե մենք համեմատելու լինենք կերակրման ու խնամքի միանգամայն տարրեր պայմաններում գտնվող յերկու կով, ապա նրանց միջև, ինարկե, զգալի տարրերություն կնկատենք, թեկուղ նրանք պատկանելիս լինեն միևնույն ցեղին կամ գծին:

Առաջին դեպքում տարրեր կաթնատվության գլխավոր պատճառը պետք է փնտրել ցուլերի ժառանգական հատկություններում, իսկ յերկրորդ դեպքում՝ կերային տարրեր ուժիմում: Միշտ ել հեշտ չեն լինում առանձնացնել մեկը մյուսից: Սոսկ արտաքին դննումը վոչինչ չի տալիս: Դրա համար անհրաժեշտ է հետևել, թե կպահպանվի՞ արդյոք այս կամ այն առանձնահատկությունն այս կամ այն ձևով միջավայրի պայմանները փոխվելիս, յերեան կգմ արդյոք նաև տվյալ կենդանու սերնդի մեջ, յեթե վերջինս գտնվի բոլորովին այլ պայմաննե-



ԽՈՇՈՐ ՏԵՍԱԿ




Նկ. 6. Լորու յերեք սորտի սերմերի չափի փոփոխականությունը
(Գուշակածից)

բում: Յեթե համապատասխան արտաքին ազդեցության պահպանմամբ լավ կենդանիների սերունդները նույնպես լավերն են լինում, յեթե սերունդը նույն հատկանիշներն են ունենում, ինչ ունեցել են ծնողները, ապա կարելի յե հաշվել, վոր այդ հատկանիշների պատճառը թաղված է ժառանգականության մեջ:

Մոդիֆիկացիաների ժառանգականությունը. — Ինչ վերաբերում է մոդիֆիկացիաներին, ապա դրանք, ժամանակակից գենետիկական հայցքների համաձայն, չեն կարող ժառանգությամբ անցնել:

Յեթե կենդանիները տարրերվում են իրենց կշռով՝ մի քանիսն ավելի ծանր են, մյուսներն ավելի թեթև, ապա չպետք է յենթազրել, թե ավելի ծանր կենդանիներն անսպայման ավելի ծանր սերունդ կունենան, կըսի վարիացիան (տատանումը) կարող է վորոշվել արտաքին պայմանների տարրերությամբ, որինակ՝ սննդի տարրերությամբ: Թե ծանր և թե թեթև կենդանիների ժառանգական հատկությունների

միատեսակ լիներու գևպքում, թե առաջինների և թե՛ մյուսների սերունդը կունենա միջին հաշվով միենույն կշիռ՝ չնայած նրանց ծնողների անհատական տարբերություններին։ Մողիֆիկացիաների վոչ ժառանգական լինելը շատ լավ ապացուցել ե բուսաբան Իոնանենսենը, վոր աշխատանք և կատարել շատ բույսերի վրա։ Իոնանենսենը, որինակ, լորու մի շարք զուտ գծեր ե գուրս բերել Զուտ (մաքուր) գծեր ասելով — Իոնանենսենից հետո, վոր առաջին անգամ տվել ե այդ սահմանորոշումը — հասկացվում ե գլխավորապես ինքնափոշոտվող մի բույսի սերունդը։ Նրա բույր հաջորդներն իրենց ժառանգական հատկություններով միատեսակ են։ Սակայն դուրս յեկավ,



Նկ. 7. Լորու սերմի մեծությունը ժառանգելու փորձ։ Յեղակետային մատերիալ 13 և 17 միլիմետր մեծությամբ սերմեր՝ ստացված 6-րդ նկարում պատկերված յերեք տարբեր սորտերից (Դոլգշմիդտից)։

վոր միենույն զուտ գծեց ստացված լորու հատիկներն իրենց մեծությամբ միատեսակ չեն։ Նրանք գծի սահմաններում կազմում են վարդացիոն շարք։ Այդ պատճառով յուրաքանչյուր գծին պատկանող լորու հատիկների մեծության համար տիպիկ կլինի միայն միջինը, որինակ՝ մանր սորտի համար՝ 10 միլիմետր, միջակի համար՝ 15 միլիմետր և խոշորի համար՝ 20 միլիմետր։ Ա և Ե լորու հատիկները մեծությամբ նման են իրար, բայց միատեսակ չեն իրենց ժառանգականությամբ, և նրանց սերունդը կունենա միջին հաշվով այն մեծությունը, վորը բնորոշ է ավյալ գծի համար։ Ա-ի սերունդը կկազմի մի

շարք՝ 10 միլիմետր միջին մեծությամբ, իսկ Ե-ի սերունդը կկազմի մի ուրիշ շարք՝ 15 միլիմետր միջին մեծությամբ Լորու և հատիկն իր մեծությամբ տարբերվում ե Ե-ից: Նրանք յերկուսն ել պայմանական իր տարբերություններից առաջացած մողիփիկացիաներ են և իրենց տարբերությունները ժառանգաբար չեն հազարդի: Ե-ի և Ը-ի սերունդները նման են միմյանց և ունեն միջին մեծությունը: Լորու և հատիկը, վորոն իր չափով հավասար ե Ը-ին, բայց պատկանում ե ավելի խոշորների գծին, կկազմի մի շարք՝ 20 միլիմետր միջին մեծությամբ (նկ. 7):

Խճաննեննենի փորձերից կարեռը հետեւություն և բղիում, այն և կենդանու կամ բույսի տվյալ առանձնելիք արտաքին հատկությունները և նրա ժառանգական/ հատկությունները տարբեր բաներ են ու հաճախ չեն զուգադիպում:

Առաջին, այսինքն՝ արտաքին հատկությունները, նա անվանեց ֆենոտիպ, իսկ ժառանգական հատկությունների գույնը՝ գենոտիպ: Ա և Ծ հատիկները միատեսակ են իրենց ֆենոտիպով, իսկ ըստ գենոտիպի նրանք տարբեր են, վորովհետև պատկանում են զանազան ժառանգական գծերին: Լորու Ծ և Ը հատիկները տարբեր են ըստ իրենց ֆենոտիպի, բայց միատեսակ են ըստ՝ գենոտիպի և ուրեմն միանման սերունդ են տալիս:

Ցեղական մողիփիկացիաներ. — Խճաննեննենի հետեւությունը՝ մողիփիկացիաների ժառանգականության մասին, չի հերքվում նաև հատուկ տեսակի մողիփիկացիաների հայտնագրծումով, վորոնք կոչվում են տեսական մողիփիկացիաներ: Դրանք առաջին անգամ դիտել ե Խոլոսը: Ներգործելով ամենապարզ կենդանիների՝ մուճակիկների վրա զանազան գրգիչներով, նա կարողացավ առաջ բերել նրանց մեջ այնպիսի առանձնահատկություններ, վորոնք այնուհետև պահպանվում ենին մի շարք սելունդներում, բայց միայն մինչեւ այն ժամանակ, յերբ մուճակիկը բազմանում եր գեռ վոչ սեռական յեղանակով (պարզ բաժանումով): Իսկ սեռական յեղանակով բազմանալիս, վոր ամենահասարակ կենդանիների նկատմամբ կոչվում ե կոնյուգացիա, տարբերություններն անհետանում ենին Այդ ցույց եր տալիս, վոր մուճակիկի ժառանգականության մեջ վոչ մի փոփոխություն չի յեղել: Այդ փոփոխությունները սովորական, բայց միայն ավելի ուժեղ մողիփիկացիաներ ենին:

Հետապայում այդպիսի տեսական մողիփիկացիաներ են նկատվել և այլ կենդանիների, ինչպես և բույսերի մեջ: Դրանց բոլորի համար բնորոշ ե այն, վոր այդ դեպքում ժառանգական հատկությունները չեն փոխվում, թեպես փոփոխությունը նկատվում ե մի քանի սերունդներում: Նկատվում ե մողիփիկացիա առաջացրած ազդեցության կար-

ծես ոհնեսեվանեցի, վոր, ասիմանաբար, սերնուից-սերունդ թուլանում և թունափորումը, կենքանիների պահպանման աննպաստ պայմանները, կիմայական պայմանները կարող են առաջ բերել մողիփիկացիոն ուժեղ փոփոխություններ, վորոնք յերևան են գալիս նաև սերնդի մեջ, վորովնետե մոր արգանգում գտնվող սաղմը նույնպիս յենթարկվում և այդ աննպաստ ներգործման, թունավորվում կամ շատ վատ և սնվում: Եեթե հաջորդ սերնդում այդ աղդեցությունն այլևս չինի, նրա հետևանքը կիբերանա ամենամոտ սերնդում, բայց զուցե և ազելի ուշ, յեթե միայն այդ աղդեցությունը շատ ուժեղ է յեղեւ: Հարկավ, ներգործումը կարող և կատարվել մոր մարմնի միջոցով, աղդելով նրա արգանգում գտնվող սաղմի վրա:

Կոմբինացիաներ յեզ մուտացիաներ. — Այլպիսով մողիփիկացիոն փոփոխականությունը ժառանգական փոփոխականություն չեւ Ուրեմն ի՞նչ հոդի վրա յեն ստեղծվում ժառանգական տարրերությունները: Ներկայումս ընդունում են ժառանգական փոփոխականության յիրկույումը՝ կոմբինատիվ խումբ, յերբ տեղի յեւ ունենում ծնողների ժառանգական հատկությունների միայն վերակոմընացումը, ըստվորում իրենք գեները չեն փոխում, և մուտացիոն խումբ, յերբ փոփոխություններ են կատարվում գեներում, վորոնց հետևանքը լինում ժառանգական նոր տիպերի յիրեան գալը: Կոմբինացիաները հանդիսանում են ժառանգական փոփոխականության ամենաճախակի, սովորական տիպը, վոր տեսնում ենք միշտ սեռական բաղմացման կամ տրամաբաշման վեպում: Դրբիս «մենցելիզմ» և «մորդանիզմ» գլուխները նվիրված են այն որինաչափություններին, վորոնք նկատվում են կոմբինատիվ փոփոխականության գեղագում: Իսկ ինչ վերաբերում և մուտացիոն փոփոխականության, ապա դրա պատճառը ևս համարվում և արտաքին միջավայրի ներդրումը Սակայն սկզբունքային տարրերությունը մողիփիկացիաներից, վորոնք ներկայացնում են կենդանիների անհատական զարգացման ընթացքում նրանց մարմնում ստեղծված փոփոխությունները—այն ե, վոր մուտացիաներն առաջ են զալիս գեների վրա տեղի ունեցած ներգործման հետևանքով:

Ժառանգական յեզ վոչ ժառանգական հառկանիօներ: Խ՞նչն և ուրեմն ժառանգվում. — Հատկանիշները ժառանգականի և վոչ ժառանգականի բաժանելը հիմնական նշանակություն ունի: Առանց զրանցութիւն հնարավոր չեւ պարզորոց կերպով հասկանալ ժառանգականության ամենագլխավոր պրոբլեմները: Ընդսմին պետք և հիշեւ վոր այդ բաժանումն ուժի մեջ և մասում չնայած այն հանգամանքին, վոր ուեալ, կոնկրետ հատկանիշներում ժառանգականը և վոչ ժառանգականը շարունակ միահյուսվում են: Տարբերում են ժառանգական և վոչ ժառանգական հատկանիշներ, սակայն չի կարելի այդ բաժանումն ըմբռու-

նել հասարակ ձևով։ Բանն այն ե, վոր ամեն մի որդանիզմ, իր բոլոր հատկանիշներով, զարգանում ե վորոշ միջավայրում։ Ամեն մի ժառանգական հատկանիշը ստեղծվում ե վոչ թե մեկուսացած, այլ իրեն շըրջապատող պայմանների փոնի վրա ու նրանց ազդեցությամբ։

Իրոք ժառանգվում ե վոչ թե հատկանիշը, այլ սեռական բջջի համապատասխան տարրը, վոր կոչվում ե գործոն (Փակտոր) կամ գեն։ Խոկ ամեն մի հատկանիշը ֆենոտիպի տարր ե, վոր զարգանում ե զարգացող անհատի և նրա գենոտիպի ու միջավայրի փոխներգործմամբ։

Բաօւրը Վոյաժերիից հետո մտցրեց ժառանգականության շատ արժեքավոր ըմբռնում, վորը մատնանշում ե յերևույթի մի կողմը և նույնակարծիքով, կարելի յե ասել, վոր ժառանգվում ե վոչ թե հատկանիշը; Վորպես այդպիսին, այլ արտաքին միջավայրի նկատմամբ կատարվող սեռակցիայի վորոշ նորման, Բաօւրը զրա ուսանելի որինակն ե տալիս. սպիտակ և կարմիր գույները, վորոնք բնորոշում են նախածաղկի (Prilemula sinensis) յերկու ցեղերը։ Սովորական պայմաններում այդ գույները ժառանգվում են միանգամայն նորմալ կերպով, բայց յեթե կարմիր նախածաղկին աճեցնենք 8Ելսիուսի 30—40 աստիճան ջերմության մեջ, նա կտա միայն սպիտակ ծաղիկներ։ Այսպիսին պիտի, յերկու նախածաղկիների տարբերությունն ե կազմում փաստորեն վոչ թե գույնը, այլև տվյալ գենոտիպին հատուկ մի ունակություն՝ վորոշ ջերմաստիճանին պատասխանել պիգմենտ կազմելու սեռակցիայով։ Ընդումենք գենետիկան գենոտիպը տարբարուծում ե այն առանձին գեների, վորոնցից բազկացած և նա։ Գեների գիսկրետությունը (անջատությունը), այսինքն՝ նրանց բաժան-բաժան լինելը, հիմնված ե այն ամբողջ հսկայական գենետիկ փորձի վրա, վորով գենետիկը հնարավորություն ե ունեցել գործել նրանցով, վորպես իրոք բաժան տարրերով։ Սակայն գեների դիսկրետությունը (անջատությունը) բնավ չի հակասում, այլ ընդհակառակը, կատարելապես համապատասխանում ե այն հանգամանքին, վոր գենոտիպը միջավայրի վորոշ, կոնկրետ պայմաններում ձևավորվելով վորպես ֆենոտիպ, հանդես ե գալիս իրեն մի ամբողջությունուն։

Ժառանգականությունը լիվ արտաքին միջավայրը. — Արտաքին միջավայրի ամեն մի ազդեցություն իրացվում է զարգացող որդանիզմում, վոր ունի ժառանգական հատկությունների մի վորոշ գումար։ Ինչպես վոր արտաքին միջավայրը սահման ե դնում կենդանու մեջ թաղված ժառանգական հնարավորությունների իրականացմանը, այնպիս ել ավյալ կենդանու ժառանգականությունը վորոշում ե նրա այն փոփոխության սահմանները, վոր կարող ե ստեղծվել արտաքին միջավայրի գործոնով։ Որդանիզմն իր ժառանգական ամբողջ ելությամբ և այն միջավայրը, վորտեղ նա զարգանում ու ապրում ե, գտնը-

վում են փոխադարձ կապակցության մեջ, ժառանգականության և միջավայրի փոխադարձ կապը դժվար չե լուսաբանել դարձյալ լորու տարրեր գծերի որինակով, Նրանք յերեք սորտի բաժանված կինան այն գեղքում, յեթե բոլորն ել անեցվեն միատեսակ պայմաններում: Բայց յեթե ավելի մասը սորտը ցանվի առանձնապես բարենպատ պայմաններում (լավ հող, պարարտացում և այլն), աճած լորիների հատիկներն ավելի խոշոր կլինեն: Նոր վարիացիոն շարքը թերևս կունենա ավելի մեծ միջին չափ, քան խոշոր սորտը, Յեվ ընդհակառակը՝ աննպաստ պայմանների մեջ գրված ավելի խոշոր սորտը կմանրանաւ: Ահա թե ինչու այս կամ այն սորտի, ցեղի ժառանգական հատկությունների մասին խոսելիս պետք ե անպայման ավելացնել թե այս կամ այն ժառանգականությունը, այս կամ այն գենոտիպը գոյություն ունի այս կամ այն պայմաններում: Իսկ փենոտիպն ստեղծվում է վորոշ գենոտիպի և արտաքին վորոշ պայմանների հիման վրա:

Ֆենոտիպ, գենոտիպ, պարտություն:—Յեթե մենք կենդանուն մոտենում ենք նրա արտաքին և ներքին հատկությունների, կազմվածքի, կաթնային և վորուե այլ մթերատվության իրեն հատուկ հատկանիշների տեսակիտից, ապա մենք գործ ունենք նրա ֆենոտիպի հետ, իսկ նրա սերընդի ուսումնասիրումը հնարավորություն կտա հետևող անելու նրա գենոտիպի մասին: Սակայն ֆենոտիպի հիման վրա ևս կարելի յե վորոշ գաղտափար կաղմել գենոտիպի մասին: Բանը միայն այն ե, վոր այլ պատկերացումը կլինի մոտավոր, վոչ լրեվ իսկ յերբեմն ել բորբովին թյուրի: Ինչ գենոտիպ ել ունենա բեղմնավորված այն ձուն, վորից սկսում ե զարգանալ կենդանին, նրա ամրող զարգացումը տեղի յե ունենում նրան շրջապատող պայմանների ազդեցության տակ: Ահա թե ինչու ունենալով տվյալ հատկանշի միայն ֆենոտիպը, տուանց գիտենալու փոփոխականության որինաչափությունները, ֆենոտիպի տատանումների աստիճանը, նրա կախումը զանազան պայմաններից և, վերջապես, այն կոնկրետ պայմանները, վորոնց մեջ ստեղծվում ե տվյալ ֆենոտիպը, չի կարելի քիչ թե շատ հիմնավորված համարել այն հետևող թյունը, թե ֆենոտիպի համար պատասխանավորության վոր մասն ե ընկնում գենոտիպի և վոր մասը՝ շրջապատող միջավայրի վրա: Գործ ե ածվում հատուկ տերմին՝ պարատիպ: Այդ այն ե, ինչ վոր ամրող վիճակ կախված ե միմիայն արտաքին պայմաններից: Այդպիսի առանձնացնելն, ինարկե, արեստական ե: Պարզ ե, վոր յեթե կովոր որվող կերի քանակն ավելացնելուց ավելացել ե նրա կիթը, ապա կաթի ավելորդ կիլոգրամների համար մենք պարտական ենք վոչ միայն ավելի կերին, այլև թերևս կենդանու գենետիկական ունակությանը՝ պատասխանել կերին: Այնուհանդերձ այդպիսի առանձնացումը կարելի յե անել: Յերբ ուսումնասիրվում է կենդանիների մի ամրող խումբ՝ այդ խմբին հատուկ փոփոխականությամբ, ապա սակավ նշանակություն չունի այն հանգամանքը, վոր ընդհա-

Նուըր Փենոտիպային փոփոխականությունից հնարավոր և առանձնացնել փոփոխականության այն մասը, վորը կախված և գենետիկական տատանումներից (գրա մասին տես «Ճնշեսապես ոգտակար բարդ հատկանիշների ժառանգման վերլուծումը» գլուխը): Այն ժամանակ կարելի յե խոսել զենոտիպային և ֆենոտիպային փոփոխականության մասին նրանց տարրերությունը կհանդիսանա պարատիպային փոփոխականության չափը:

Դենոտիպի հիման վրա արտաքին պայմանների ազդեցության ներքո իրացվող վորոշ Փենոտիպ ստեղծելու պրոբլեմն ունի տեսական և գործնական խոշոր նշանակություն: Գործնական նշանակությունն այն է, վոր վորոնելով ժառանգման հատկությունների իրացման որինաչափություններն ու արտաքին պայմանների ազդեցությունները՝ կարելի յե մատնանշել այն, թե ժառանգման վերաբերյալ լավագույն իրացման և առավելագույն ֆենոտիպական եֆեկտ ստանալու համար ինչպեսի պայմաններ են հարկավոր: Ֆենոտիպական իրացման տեսական ուսումնասիրությունը կարենը և այնքան, վոր պարզվում է, թե ինչպես և ազդում ժառանգականությունը, ավելի ճիշտ՝ ինչպես են ազդում բեղմնավորված ձվիկի մեջ գտնվող գեներն որպանիզմի դարգացման վրա և արտաքին պայմանների հետ միասին առաջ բերում ֆենոտիպ:

Ներկայիս, այդ պատճառով, գենետիկայի մեջ տարրերում են մի հասուլ բաժին՝ ֆենոգեննետիկա, վորն ուսումնասիրում և ժառանգական իրացման պրոցեսները (առավել մանրամասնության մասին տես գլուխ VI):

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ինչպես տեսակների միջև, այնպես ել տեսակի ներսի խմբերի և առանձին անհատների միջև գոյություն ունեն նմանության ու տարրերության բազմազան ձևեր:

2. Փոփոխականության բաժանումն անհատական ու խմբային փոփոխականության և փոփոխականության բաժանումը՝ վորպես փոփոխականության պրոցես ու վորպես փոփոխականության վիճակ, չի արդարացված:

3. Փոփոխականության վորակականի և քանտակականի բաժանելը բղխում և միայն այն նկատառումից, վոր դա հարմարություն և ընձեռում վերլուծման համապատասխան մեթոդներ գործադրելիս, սակայն բնավ ցույց չի տալիս դրանց տարրերությունն ըստ եյության:

4. Փոփոխականությունը բաժանվում և վոչ ժառանգականի և ժառանգականի: Վոչ ժառանգական փոփոխականությունը, վոր առաջ

և գալիս արտաքին միջավայրի ազդեցությամբ, կոչվում և մողիֆի-
կացիոն փոփոխականություն ժառանգական փոփոխականության մեջ
մտնում են կոմըինացիաները և մուտացիաները:

5. Մողիֆիկացիաները ժառանգաբար չեն անցնում:

6. Պետք և տարբերել գենոտիպը, այսինքն ժառանգական սաղ-
մանյութի գեների գումարը և Փենոտիպը՝ որգանիզմի իրացված հատ-
կությունների գումարը:

7. Դենոտիպը կազմված և առանձին դիսկրետ (անջատ) միավոր-
ներից՝ գեներից:

8. Ամեն մի Փենոտիպ ստեղծվում է զարգացող որգանիզմի, նրա
գեներ և արտաքին միջավայրի բարդ փոխներգործման հիման վրա:

ԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Гольдшмидт. Учение о наследственности (I глава), ГИЭ, 1928 г.

2. Филиппенко. Ю. А., Генетика. 2-е изд., 1929 г.


3. Филиппенко Ю. А., Изменчивость и методы ее изучения (I глава).

4. Синот-Дени, Курс генетики (II глава), ГИЭ, 1930 г.

ԳԼՈՒԽ Ա

ԳԱՐԱՆԳԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՀԻՄՆԸ

Բայիքը յան նրա կտոռացվածքը. — Ամեն մի կենդանի արարածի մարմինը բաղկացած է փոքրիկ մասնիկներից, վորոնք հայտնի յեն բջիջներ անունով: Բջիջների մեծությունն այնքան աննշան է, վոր զբանը ուսումնասիրելու համար անհրաժեշտ ե գործածել մանրադիտակ: Մանրադիտակի ոգնությամբ և մշակման ու ներկման զանազան



Նկ. 8. Բցիցի կազմության սխեման

յության բնույթի ամբողջ բազմազանության, նրանք նման են իրենց կազմակերպության հիմնական գծերով:

Բջջիլ բաղկացած ե թրկու գլխավոր մասից՝ կիսանեղուկ պրո-
տոպլազմից և նրա մեջ գտնվող կլորավուն, ավելի պինդ կորիզից
(նկ. 8): Պրոտոպլազմի մեջ կարող են գտնվել կարծր և հեղուկ բազ-
մազան ներառություններ, իսկ կորիզն ունի ցանցային կամ թելաձև կա-
ռուցվածք, կորիզային այդ ցանցի վրա գտնվում ե հատիկավոր մի
զանգված, վոր շատ հեշտությամբ ներկվում ե և կոչվում ե խրոմա-
տին: Բջջային շատ կառուցվածքների դերը դեռ կատարելապես պարզ-
ված չեն: Հսու յերևույթին պրոտոպլազմի ներառությունը կտպված են
քիմիական այն պրոցեսների հետ, վորոնք անհրաժեշտ են բջջին սնվե-

լու և աճելու համար։ Ինչ վերաբերում է կորիզին, նրան վճռական դեր են վերագրում բջջի ֆիզիոլոգիական գործունեյության մեջ, կորիզին առանձնահատուկ դեր է խաղում բջջի բազմացման մեջ։

Առանձնիկի զարգացումը բջիջնց։—Հետևելով որգանիզմի զարգացման պատմությանը՝ հասակավոր վիճակից դեպի հետ՝ մինչև նրա սաղմնավորումը, մենք կարող ենք համեմատ այն աստիճանին, վորտեղ բոլոր բջիջները շատ նման են միջյանց։ Այդ աստիճանի վրա բջիջների թիվը շատ ավելի պակաս է, քան հասակավոր որգանիզմում։ Որգանիզմի զարգացման ընթացքում բջիջների թիվը անընդհատ ավելանում է, վորովհետև նրանցից ամեն մեկը բազմանում է բաժանումով։ Բջիջների թվի ավելացման հետ միասին տեղի յի ունենութ նրանց



Նկ. 9. Դորտի զարգացումը։ Սեռական բջիջների առանձնանալը գորտի զարգացման ամրութ ընթացքում՝ սկսած ձվից (1) մինչև հասուն վիճակը (11) (Դորդշմիզտից)։

վերակառուցումը, նրանք պարզ ու կորավունից դառնում են, ըստ ձեր ու նրբագույն կառուցվածքի՝ գեղձային, եպիտելիալ, մկանային, նյարդային և այլ բջիջների։

Կենդանու զարգացումն սկսվում է մի բջջից՝ ձվից կամ ձվային բջջից։ Բջիջը կազմվում է իգական առանձնիկի, եղի մարմնում։ Բայց վորպեսզի ձուն սկսի զարգանաւ, ընդհանրապես անընդհանուր է, վոր նա բեղմնավորվի մի այլ սեռական բջջով, այն եւ արուի սպերմով (սպերմատոզուզով)։ Բնդմնավորված ձվից, բջիջների բազմաթիվ բաժանումների միջոցով, զարգանում է մի բարդ որգանիզմ՝ բազկացած

միլիարդավոր բջիջներից, վորոնք մասնագիտացել են զանազան ուղղությամբ և կազմում են բարդ կառուցվածք ունեցող կենդանի եյակի հյուսվածքներն ու որգանները:


Սեռական բջիջները՝ ձուն և սպիրմոտոզոֆիդը, ընդունված և անվանել զամետների նոկ յերկու գամետների միավորման արդյունքը՝ բեղմանավորված ձուն, անվանում են զիգուտ:

Ժառանգական հասկուրյամմերի գեները մեռական բջիջներում (գամետներում) յեկ բեղմանավորված ձվի մաշ (զիգուտում).—Անկասկած ե, վոր բեղմանավորված ձուն որգանիզմի ապագա հատկանիշներն ու հատկությունները տալու ընդունակություն ունի Յերկու ձու կարող են արտաքուստ կատարելապես իրար նման թվայ, սակայն ամեն մեկը կտայն, ինչ պոտենցիալ կերպով պարունակում ե.

Սև և սպիտակ հավերի տարբերությունը բավականաչափ ակնառու յեւ Բայց վոչ զի կարող ձվերի արտաքին տեսքից վորոշել թե ինչնպի և տարբերվում այն ձուն, վորից հետագայում ստացվելու

յե սև թուզուն, այն ձվից, վորից ստացվելու յե սպիտակ թուզուն Յերբ մենք խոսում ենք ծնողների և յերեխաների ժառանգական նմանության մասին, գրանով հասկանում ենք վոչ թե մի սերնդի հատկությունների հաղորդումն անմիջականորեն մյուսին, ինչպես, որինակ՝ առարկաներն անցնում են մեկից մյուսի ձեռք, այլ այն, վոր տվյալ կենդանու սեռական բջիջներն ընդունակ են իրենցից զարգացող ապագա որգանիզմի ֆենոտիպում դրսնորել մի շարք առանձնահատկություններ, վորոնք հատուկ են այդ առանձնահատկությունները կրողներին:

Նկ. 10. Վորոնող կենդանու ձուն (միջատեղը)՝ կորիզով (ծ) շրջապատկած սննդառու բջիջներով (ըստ Ելենբերգերի)



Զարգացման ընթացքում գտնվող բեղմանավորված ձվի մեջ, ընականաբար, արդեն պետք ե գտնվեն այն բոլոր հատկությունները, վորոնք պետք ե ունենա տվյալ տեսակի նորկայացուցիչը՝ կովր, վոչխարը, հավը։ Սեռական բջիջները պարունակում են նրանց սաղմանյութը, որգանիզմի ապագա բոլոր հատկանիշների ինչ-վոր տարբեր ժառանգական միավորները։ Իհարկե, վոչ վորպես այդ հատկանիշները, — մենք գիտենք, վոր ձուն վոչ մի այնպիսի հատկանիշ չունի, ինչպիսին ունի հասակն առած եյակը, — այլ վորպես այդ հատկությունները զարգացնելու ունակություն։

Սեռական բջիջներում գտնվում են այն սաղմանլութերը, վորոնք պատճառ են հանդիսանում ձվից զարգացող որգանիզմում վորոշ հատկություններ առաջանալուն: Նրանք կրում են զանազան անուններ՝ «ժողովական միավորներ», «գործոններ» («ֆակտորներ»), «գեններ»: Հետագայում մենք դորժածելու յենք վերջին տերմինը՝ «գեն»¹):

Վոր ձուն պետք է ինչ-վոր ժառանգական նյութ պարունակի, մեզ համոզում են վոչ միայն անհատական զարգացման փաստերը, այլև ժառանգական հատկությունների սերնդից սերունդ հաղորդվելու մշտական բնուլթը, վորը բազմաթիվ որինակներ ունի: Այդ ցույց ե տալիս, վոր ժառանգական այն նյութը, վորը պարունակում է ժառանգականությունը կրողներ՝ գեններ, մի շարք սերունդների ընթացքում անընդհատ անցնում է մի սեռական բջիջը մյուսին:


Ժառանգական նյութն ինչ-վոր միասնական բան չե, այլ բաղկացած է գենների առանձին, զոկ-չոկ միավորներից: Հենց գենների անշատականության (զիսկը տության) չնորդիվ է, վոր մենք ի վեճակի յենք մենդելիզմի ու մորգանիզմի մեթոդներով (վորոնք տալիս ենք հետագայում) ուսումնական առանձին հատկությունների ու հատկանիշների ժառանգականությունը, կարծես դուրս ընթելով դրանք ամրող որդանիքմից:

Ժառանգականության յելակետն է բեղմնավորված ձուն: Բայց ձվարջի բազկացուցիչ վեր մասում են գտնվում գենները թջի վեր նյութն և ժառանգականության կոնկրետ կրողը: Այդ հարցին պատասխաններու համար հարկավոր և նախնառաջ քննել ձվարջի (կամ ընդհանրապես բջիջի) բաժանման պրոցեսը.

Թիզների բաժանմամբ.—Բջիջների բաժանման պրոցեսը հիմնական գծերով միատեսակ է կատարվում կենդանիների, բույսերի և մարդկանց մոտ: Այդտեղ զլավալոր գերը խաղում է կորիզը: Հանգստի վիճակում գտնվող բջուռ կորիզը ներկայացնում է մի փուչիկ, վորի մակերեսն ամբողջովին ծածկված է միահյուսված թելքը ցանցով և վորը լցված է նեղուկով: Ցանցի հանգույցներում կան բազմաթիվ հատիկներ, կենդանի վիճակում կորիզն այնքան թափանցիկ է, վոր նրա բարդ կառուցվածքը կարելի յի զիտել միմիայն հատուկ մեթոդներ գործադրելով (մասնավորապես մեզ մոտ, ԽՍՀՄ-ում, գործադրվում է միկրոլինեմատոգրաֆիայի մեթոդը՝ զուգակցված պլյունկան յերևակելու հատուկ յեղանակի հետ): Սակայն բավական ե, յեթե Փիքսենք բջիջը հատուկ ուսակտիվների միջոցով, և ապա ներկենք հատուկ ներկերով, վորոնք ներկում են բջիջի միայն մի քանի մասերը, առանց ներկելու թողնելով պրոտոպլազմը,—իսկույն տեսանելի յեն դառնում կա-

1) Գենին մենք ավելի հեռացնում յենք հատուկ գլուխ՝ VI գլուխը:

սուցվածքի վերոհիշյալ մանրամանությունները: Բջջում առանձնապես լավ են ներկվում թելերի հանգույցներում զտնվող հատիկները: Այդ հատիկների նյութը կոչվում է քրոմատին:



Նկ. 11. Բջջի բաժանման սքեմը (Գոլդզմիկարյու):

Ներկելով բջիջը նրա բաժանման զանազան ետապներում, հաջողվում է քայլ առ քայլ հետևել բաժանման ամբողջ պրոցեսին: Այդ պրոցեսը սքեմատիկ կերպով պատկերված է ստորև բերված նկարում (նկար 11):

Բաժանման սկզբում քրոմատինի հատիկներն սկսում են կուտակվել կորիզի ցանցի վորոշ կետերում: Միառժամանակ անցնելուց հետո կորիզում կարելի յետարերել քրոմատինի մի քանի առանձին դողձեր կամ կտորներ: Նրանք աստիճանաբար ընդունում են վորոշ ձեռք՝ յերկարավուն, ուղղի կամ պայտանման ձողիկների ձև, յերբեմն ել՝ զնդիկների կամ յերկարավուն մարմինների ձև: Այդ ձողիկներն ու մարմեկները կոչվում են քրոմոսմեր:

Արտաքուստ թվում ե, թե քրոմոսոմները գոյացել են քրոմատինի հատիկներից: Բայց իրոք այդպիս չեւ Քրոմոսոմներն առաջուց արդեն գոյություն ունեն կորիզում, սակայն նրանք տեսանելի յեն դառնում, վորոշետեւ նրանց վրա նստում և քրոմատինը: Քրոմոսոմները յերեան գալուց հետո բջջի ամբողջ մասցած զանգվածը կարծես հալվում և և այլևս չի ջոկվում պրոտոպլազմից: Այդ շրջանը կոչվում է պրօմագ: Հենց այդ ժամանակ ել կորիզին մոտենում և մի փոքրիկ հատիկը, վոր կոչվում և կենտրոնական մարմինի կամ ցենտրոսոմ: Ցենտրոսոմը շուտով բաժանվում և յերկու մասի, և նրանցից յուրաքանչյուրի շուրջը ճառագայթների ձևով դասավորվում և բջջի նյութը: Յերկու ցենտրոսոմներն ել՝ նրանց զբարպատող ճառագայթների հետ միասին, հեռանում են միմյանցից և կանգ են առնում բջջի հակադիր կողմերում՝ նրա բևեռներում: Ցենտրոսոմների ճառագայթյին փայլը թափանցում և ամրող բջջի մեջ և վերջիվերջո ընդունում և իվեկի ձև, վորի ամենալայն մասում կանոնավոր պսակի ձևով դասավորվում են քրոմոսոմները, իլիկի ճառագայթյունը պայմանավորված և ճճող թելիրով, վորոնք քրոմոսոմներից ընթանում են զեպի ցենտրոսոմները: Յեթև այդ պահին բջջը դիտելու լինենք բևեռից, կարող ենք տեսնել, վոր քրոմոսոմներն աստղաձև դասավորված են մի մակարդակի վրա: Բջջի բաժանման այդ ետապը կոչվում և մետածագ:

Այնուհետև սկսվում և բջջի բաժանման ամենակարևոր մոմենտը, վոր կոչվում և տեսածագ, Յուրաքանչյուր քրոմոսոմ յերկարությամբ բաժանվում և, կարծես ճղվում և յերկու կատարելապիս միատեսակ կեսի: Քրոմոսոմը յերկու մասի ճղվելուց հետո իլիկի այն թելերը, վորոնք ամբացված են քրոմոսոմների ճղված կեսերին, ձգում են քրոմոսոմները բջջի հակադիր բևեռներին Յուրաքանչյուր քրոմոսոմի մի կեսը ձգվում և զեպի մի բևեռը, իսկ մյուսը՝ դեպի մյուս բևեռը բջջի բևեռների մոտ գոյանում և դուստր-քրոմոսոմների յերկու խումբը Կատարելապիս պարզ և, վոր յուրաքանչյուր խմբում գոյացած դուստր-քրոմոսոմների թիվը հավասար կլինի մայր-քրոմոսոմների թվին: Մեր նկարը ցույց ետալիս, վոր սկզբից բջջում կաը և քրոմոսոմ, վերջիններս ճղվելուց հետո ստացվեց յերկու խումբ, վորոնցից յուրաքանչյուրն ունի դարձյալ և քրոմոսոմ:

Դուռատր-քրոմոսոմները բներներին հասնելուց հետո բջիջի մարմինն սկսում է կիսից կտրվել և բջիջի հասարակածում (մեջտեղում) սկսված կտրվածքն ավելի ու ավելի յե խորանում, մինչև վոր վերջապես բջիջը բաժանվում է յերկու մասի: Այդ ժամանակներում փոփոխություններ են կատարվում դուռատր քրոմոսոմների խմբերում: Անհետանում է ճառագայթային փայլը, քրոմոսոմների շնորջը կուտակվում է շրջապատող պրոտոպլազմից բաժանվող հեղուկը և բոլորը միասին վերածվում են կորիզի: Քրոմոսոմների ուրվագծերը դնալով ավելի անորոշ են դառնում, և վերջապես վրայի հասնում այնպիսի մի մոմենտ, յերբ նորակազմ յերկու բջիջներում մենք տեսնում ենք, այսպես ասած՝ ճանապատի վիճակում գտնվող կորիզներ» — Նրանց բնորոշ պատկերով՝ խիստ հյուսված ցանցը մանր հատիկներով: Այն պահից, յերբ յերկու խմբերի քրոմոսոմներն սկսում են նոր կորիզներ տալ, ոկրավում երջի բաժանման այն շրջանը, վորը կոչվում է սելեֆտազ:



Նկ. 12. Ցույլ քրոմոսոմների հապալիք և բումբը (Ֆիլտրչնեկութեց ըստ Կրապիների)

կարող է իր հերթին բաժանվել յերկու բջիջի նոր բաժանման ժամանակ մենք դարձյալ նույն պատկերը կտեսնենք: Բջիջի այդ տեսակ բաժանումը կոչվում է միտոզ:

Քրոմոսոմների բարի մօսականաբերյալը. — Սակայն առանձնապես կարեոր և այն հանգամանքը, վոր հանգստի վիճակում գտնվող կորիզից առաջ յեկած քրոմոսոմների թիվը կլինի նույնը, վորը յեղել և նախորդ բաժանման ժամանակ: Դեռ ավելին՝ այդ թիվը կունենան տվյալ կենդանու մարմնի և տվյալ կենդանական կամ բուսական տեսակի բնոլոր յեղայրակիցների մարմնի բոլոր բջիջների քրոմոսոմները Այդպես՝ մարդու մարմնի բոլոր բջիջներում միշտ ել կա 48 քրոմոսոմ, համի բոլոր բջիջներում՝ 32 քրոմոսոմ: Քրոմոսոմների մինույն թիվը, վոր գոյություն ունի մարմնի բոլոր բջիջներում, կատարելապես բացարկվում է նրանով, վոր այդ բոլոր բջիջները ժառանգներն են բեղմնավորված ձվի, վորն ունի տվյալ տեսակին արդեն հատուկ թվով քրոմոսոմներ¹⁾:

Կենդանու յուրաքանչյուր տեսակի մարմնի բջիջներում գտնվող քրոմոսոմների թիվը բնորոշ է տվյալ տեսակի համար, թեպես թվերն

1) Կան հատուկ աշխատաթյուններ, վորոնց ցույց են տալիս, թե լինում են գեղեցիկ, յերբ մի քանի հյուսվածքներում, մեզ անհայտ պատճեններով, քրոմոսոմների թիվը փոխվում է:

իրենք կարող են շատ տարրեր լինել նույնիսկ սխտեմատիկորեն մերձավոր խմբերին պատկանող տարրեր տեսակներում:

Զանազան տեսակների ունեցած քրոմոսոմների թվի տարրերությունը ցույց է տալիս հետեւյալ աղյուսակը.

	Քրոմոսոմների Տեսակի անունը	Քիվը մարմի բջիջներում	Տեսակի անունը	Քրոմոսոմների Բիվը մարմի բջիջներում
Առկարիդ (իրեկու տարրեր տեսակներ)	3 և 4			
Bombyx dispar	62		Վոլխաբ	54
Գորս	26		Այծ	60
Վողնի	48		Եռւն	52
Դրոզոֆիլ (Drosophila melanogaster)	8		Խոզ	40 կոմ 38
Տնային ճանճ	12		Կոտու	36
Ճագար	44		Հազ	32 *)
Զ է	60		Մարդ	48
Կով	60			

Առանձին երանումների տնիատակամուրյունը յեկ՝ բնորու ձևվը. — Քրոմոսոմների թվի հետ միասնական վոչ պակաս բնորու և նաև նրանց ձեր: Յուրաքանչյուր քրոմոսոմ իրոք ունի իր անհատականությունը:



Նկ. 13. Մարդու քրոմոսոմները (ըստ Ժիվադյանի և Անդրեսի).



Նկ. 14. Այսու աբազազի և եղ հազի քրոմոսոմային խմբերը (ըստ Ժիվադյանի)

Քրոմոսոմներից մի քանիսը յերկար են, մյուսները՝ կարճ, ձողաձև կամ գնդաձև: Բավական ե, յիթե համեմատենք յիրեք տեսակի՝ մարդու, հազի, վոլխաբի ու այծի քրոմոսոմների խմբերի (քրոմոսոմային կոմպլեքսների) ստորև բերված նկարները:

*) Մենք ունենք Ն. Ն. Սոկոլովի և ի. Ց. Ցրոֆիմովի մի նոր աշխատավորյունը, վորեղ ապացուցվում է, վոր համա ունի գոչ թե 32 քրոմոսոմ, այլ շատ ավելի՝ մի քանի գեղեցիկում հասնում է 71-ի: Հեղինակների կարծեքով, քրոմոսոմների Բիվը վորոշելու նկատմամբ դայտվյալն ունեցող այդ տատանումների պատճառն են կոմպլեքսի շատ մանր քրոմոսոմները յիրեան բերելու անբավարար մեթոդները, այնպիսի քրոմոսոմներ, վորոնք իրենց մեծությամբ մտանում են անտեսանելիության սահմաններին:

Նրանք բոլորն ել մետաֆաղ փուլի քրոմոսոմներ են՝ դասավորված լինելով իլիկի ներսում, թերթերի ձևով (գրանից ել ծագում է հասարակածային թերթիկ անունը). Յուրաքանչյուր քրոմոսոմ իր



Նկ. 15. Քրոմոսոմային կոմպլեքս՝ նոխազի (վորձ այժմ) անիբոնից (ըստ Ժիվագոյի)



Նկ. 16. Քրոմոսոմային կոմպլեքս՝ իոյի (արռ վոչխարի) սաղմի անիբոնից. Նրանցից մի քանիսը ճեղքում են (ըստ Ժիվագոյի)

յերկարությամբ յերկու մասի բաժանվելուց հետո գույներից մեկը կօշակի մի կողմ, իսկ մյուսը՝ մյուս կողմ. 16-րդ նկարում յերկում և մի քանի քրոմոսոմի ճեղքվելու սկիզբը.

Քրոմոսոմների կառացվածքը.—Քրոմոսոմի անհատականությունն արտահայտվում է նաև նրա նրբագույն կառուցվածքով, վորն այժմ մեծ թափով հետազոտում են մի շաբթ ցիտոլոգներ. Յուրաքանչյուր




Նկ. 17. Քրոմոսոմների թիվ և անփոփոխությունը՝ *Rhynnotettix*-ի մի քրոմոսոմի ձևը փոխվելու (Քրոմոսոմից՝ ըստ Ուկնրիչի).

թելաձև քրոմոսոմ բաղկացած ե բազմաթիվ մասր մասնիկներից, վորոնք կոչվում են քրոմոսոմներ. Հաջողվել ե դիտել վոր բջջի բաժանման և քրոմոսոմների ճեղքման ժամանակ վորոշ քրոմոսոմում քրոմոմերների թիվը պահպանվել ե, այսինքն մասը ե նույնը.

Մուկվայի ցիտոլոգ (բջարան) Պ. Խ. Ժիվագոն գանում ե, վոր քրոմոսոմում գլխավորը վոչ թե ներկերով գունավորվող այն մասն ե,

գորը կոչվում է քրոմատին, այլ շատ դժվարությամբ ներկվող, այսպիս կոչված՝ աքրոմատինային կամ լինինային կմախքը, վոր գտնը գում և քրոմատինային պատյանի տակ Դրանով և բացատրվում այն, վոր հանգստի վիճակում գտնվող կորիզի մեջ քրոմոսմները համարյա չեն յերևում (ասում ենք համարյա, վորովհետեւ մի քանի հետազոտողների հաջողվել ե տեսնել դրանք հատուկ մեթոդով միջոցով): Յերր բջջի բաժանումն (միտոզ) ավարտվում է, քրոմատինը կարծես ցած և հոսում, ոսահում եւ քրոմոսմների վրայից, իսկ չներկված քրոմոսմներն այլևս անտեսանելի յեն դառնում կորիզի պարունակած նեղուկի մեջ Բացի դրանից, Պ. Խ. Ժիվոգզն գտնում է, վոր քրոմոսմի կմախքը բաղկացած է վոչ թե մեկ, այլ յերկու թելից:

Նկ. 18. Քրոմոսմների «ուղեկիցները» (Քրեսլավիցիցները)



Նկ. 19. Դրազիկի ճանճի քրոմոսմները թե գեղձային բջիջների մեջ (ըստ Պայնտերի): Յերեւում և յուրաքանչյուր մասի խոշոր անհատականությունը

թեր գեղձային բջիջների կորիզի կառուցվածքը Պարզվեց, վոր ներկելու հատուկ մեթոդներ գործածելիս հաջողվել ե հանգիստ վիճակում գտնվող այդ բջիջներում տեսնել շատ մեծացրած քրոմոսմներ, վոր

Քրոմոսոմների անհատականությունն ավելի ուժգին շշատեցին մի շարք քուսաբանների աշխատությունները (Ս. Գ. Նավաշինը և Նրա գպրոցը): Նավաշինը մի քանի ձողաձև քրոմոսոմի մեջ գտավ այսպիս ասած «ուղեկիցներ» (տես Նկ. 18): Դուրս յեկավ, վոր մի քանի քրոմոսմից բարակ թելիկներով կախված են հատուկ մարմիկներ, վորոնք ներկվում են նույն ներկով, վորով ներկվում են քրոմոսոմները, և մշտապես գտնվում են նրանց մոտ:

Վերջին ժամանակներս հաջողվել ե ցույց տալ քրոմոսմների յուրաքանչյուր մասնիկի անհատականությունը: Ամերիկացի Պայնտերը հետազոտել ե դրոզոֆիլի

շատ հետաքրքրական կառուցվածք են ունեցել (Նկ. 19): Քրոմոսոմի հիմնական կազմը չի ներկվում, մոտավորապես ամբողջ յերկարության վրա միևնույն տրամագիծն ունի, սակայն առանձին մասերում ունի և վորոշ հաստացումներ Սակայն նրա վրա լայնությամբ դասավորված են մեծ քանակությամբ ներկված շերտեր, վորոնք բաղկացած են հատիկներից: Այդ շերտերն ունեն տարբեր հաստություններ և դասավորված են իրարից տարբեր տարածության վրա, վորի շնորհիվ քրոմոսոմի յուրաքանչյուր մասն ունի մշտական և միայն իրեն հատուկ բնորոշ կազմություն:

Այսպիսով, քրոմոսոմների անհատականությունը հիմնված է նրանց թվի մշտականության, նրանց հարաբերական մեծության ու ձևի և ներքին նրաբազույն կառուցվածքի վրա:

Քրոմոսոմները կազմում են ժառանգականության նյուրական հիմքը:—Մեր ասածները շնչուում են, վոր քրոմոսոմները վերին աստիճանի կարևոր դեր են խաղում: Բջջի բաժանման պրոցեսի բարդությունն ապահովում է քրոմոսոմային նյութի ճշտիվ բաժանումը յերկու կատարելապես հավասար կեսի:

Թրոմոսոմների այդ ճշգրիտ բաժանումը դիտելուց կարելի յե անել մի քանի կարևոր հետևող թյուններ, այն ե.

1) Քրոմոսոմները կազմում են բջջի կարևորագույն այն մասերը, վորոնք անպայման պետք ե անցնեն ամեն մի նորակազմ բջջի մեջ և

2) այն առանձին հատիկները, վորոնցից բաղկացած ե քրոմոսոմը, պետք ե վոր մի բանով տարբերվեն միմյանցից, յուրաքանչյուր նոր բջիջ պետք ե ստանա յուրաքանչյուր հատիկի կեսը, և այդ պատճառով քրոմոսոմները բաժանվում են վոչ թե ըստ լայնության, այլ իրենց յերկարությամբ:

Այդ բոլորը վաղուց եր հղացնում, թե քրոմոսոմներն ուղղակի կապ ունեն ժառանգականության հետ:

Քրոմոսոմների անհատականության տեսությունը ձևակերպել եր գերմանացի ցիտոլոգ Բովերի 1887 թվականին, և գեր այդ ժամանակից ի վեր քրոմոսոմները կապում եյին ժառանգականության հետ:



Յերկար տարիներ այդ ուղղությամբ աշխատանք կատարելուց հետո յենթադրությունը դարձավ համոզմունք, և ներկայումս ընդունված ե, վոր քրոմոսոմները հանդիսանում են ժառանգականության նյութական հիմքը: Քրոմոսոմների սերնդից սերունդ անցնելն ապահովում է ժառանգական հատկությունների ու հատկանիշների հաղորդումը:

Քրոմոսոմների բիվը մարմնային (տամաթիկ) յակ սեռական քաջիմեռամ:—Վերը մենք խոսեցինք ձվաբջջի մասին, վորից զարգանում են բոլոր կենդանի եյակները Ձվաբջջը գոյանում ե մոր մարմնում, բայց, ինչպես գիտենք, վորպեսզի նրանից սկսի որդանիզմ զարգանալ, անհրաժեշտ ե, վոր նա բեղմանվորվի սերմային բջջից՝ հոր սպերմատոզուիդից: Բեղմանվորման մեջ կենտրոնական տեղ ե զրավում յերկու կորիզների միաձուլումը: Յերբ սպերմատոզուիզը թափանցում ե ձվի մեջ,

դրա կորիգը մոտենում և ձվի կորիզին թերը կորիզներն իրար կողքի յեն լինում, նրանք վոչնչով չեն տարբերվում միմյանցից:

Այժմ վերադառնանք քրոմոսոմներին Մենք տեսանք, վոր տվյալ տեսակին պատկանող անհատի մարմինի յուրաքանչյուր բջիջի կորիզում քրոմոսոմների թիվը մինուոյնն եւ Յեթե հետազոտենք գեռ չհասունացած ձվային ու սերմնային բջիջները (սպերմատոզօֆիդները) դրանք իսկական ձվեր և սպերմատոզօֆիդներ դառնալուց գեռ շատ առաջ, կապարզվի, վոր նրանց քրոմոսոմների թիվը հավասար և մարմին մյուս բջիջների քրոմոսոմների թիվն Սակայն նմայնն ե արգյուք այդ թիվը հասունացած սեռական բջիջներում՝ վերջիններս բեղմնավորվելու պահին Բեղմնավորված ձուն պարունակում և և՛ ձվային, և՛ սերմնային միաձուլված բջիջների կորիզները Յեթե այդ կորիզներից յուրաքանչյուրը պարունակեր լիտակատար թվով քրոմոսոմ, որինակ՝ մարդու համար 48 հատ, առաջ բեղմնավորումից հետո զիգոտը կունենար 96 քրոմոսոմն Այն ժամանակ ձվի բաժանումով ստացված նոր որդանիզմի բոլոր բջիջները կունենային 96-ական քրոմոսոմ, սակայն փաստորեն նրանք ունեն միայն 48

Քրոմոսոմ: Այստեղից կարելի յենախագուշակել, վոր բեղմնավորման պահին թե ձվային և թե սերմնային բջիջներից ամեն մեկը պետք և պարունակի քրոմոսոմների նորմալ թիվ կեսը միայն: Վոր իրականում արդպես և կատարվում, յերեսում և բեղմնավորված ձվի բաժանումը դիտելիս, ինչպես սքեմատիկ կերպով կատարված է:



Նկ. 20. Բեղմնավորված ձվի առաջին բաժանումը (նկարված սքեմատիկ կերպով): Վերը (ձախից) բեղմնավորված բջիջում յերեսում են յերկու կորիզներ՝ մեկը գտնվում եր ձվում, իսկ յերկրորդը պատրիարքին: Հայր-բջիջի քրոմոսոմները նկարված են ու գույնով (Դուզմիզակց)

Յերը բեղմնավորված ձուն սկսում և պատրաստվել բաժանվելու, ապա՝ ինչպես և սովորական բաժանման ժամանակ, կորիզներից առանձնանում են քրոմոսոմները: Դուրս ե գալիս, վոր և՛ ձվի կորիզում, և՛ սերմնային բջիջի կորիզում կլինեն միայն չորսական քրոմոսոմներ: Կորիզների թաղանթներն անհետանում են և ութը քրոմոսոմները բոլորն ել դասավորվում են բջիջի հասարակածով: Այնուհետև տեղի յեն ունե-

նում քրոմոսոմների սովորական ճղատումը յերկարությամբ. դրա շնորհիվ առաջ ե գալիս յերկու բջիջ, վորոնցից յուրաքանչյուրն ունենում է 8-ական քրոմոսոմ: Բեղմանավորված ձվում գտնվող 8 քրոմոսոմները տարբեր ժագում ունեն Նրանցից չօրին առաջ ե յեկել ձվային բջիջի կորիզից, այսինքն՝ նրանք մայրական ծագում ունեն, իսկ սպերմատոզիդից առաջ յեկած մյուս չորս քրոմոսոմներն ստացվել են հորից: Ցեթե նկատի առնենք, վոր սպերմատոզիդի պրոտոպլազմը բեղմանավորման ժամանակ ձվի մեջ չի թափանցում, այլ ընդհանրապես փոքր ե, ապա դժվար չե յեզրակացնել վոր կորիզի քրոմոսոմներն են հանդիսանում այն միակ նյութը, վորը և՛ հորից, և՛ մորից հալասար չափով մատցում ե ձվից զարգացող սաղմի մարմնի մեջ:

Առամսում ների գույգեր. — Ինչպես վերն ասացինք, քրոմոսոմներից յուրաքանչյուրը տարբերվում է յուրատեսակ ձեռք և մեծությամբ: Վորքան փոքր լինի քրոմոսոմը, այնքան ավելի լավ ե, յերեսում այդ:


Ցեթե մենք բեղմանավորված ձվի մեջ կողք-կողքի դանվող արական և իգական բջիջների կորիզներն համեմատելու լինենք այն պահին, յերբ նրանց մեջ յերեսում են քրոմոսոմները, կհամոզվնենք, վոր մայրական քրոմոսոմներից յուրաքանչյուրը մի գույգ ունի հորից: Այդպիսով, բեղմանավորված ձվում կան տեսքով միանման քրոմոսոմների գույգեր: Հետագայում որգանիզմի ամեն մի բջջում մենք հանդիպում ենք քրոմոսոմների գույգերի, վորոնց անդամներից մեկը ծագում ե հորից, իսկ մյուսը՝ մորից (ուշադրություն դարձրեք, վոր քրոմոսոմների վերը բերված աղյուսակում զանազան տեսակների քրոմոսոմների բոլոր թվերը գույգ են):

Մենք մոտեցանք մի շատ կարևոր կետի, վորի բացատրությունը պետք ե տար Բեղմանավորմանը պատրաստ ձվերն ու սպերմատոզիդները պարունակում են իրենց քրոմոսոմների թվի կեսը, թեպես նրանցից յուրաքանչյուրը յերիտասարդ վիճակում ունեցել ե քրոմոսոմների մակատար կոմպլեկտը, ինչպես և մարմնի բոլոր բջիջները Ակներեւ, վոր յուրաքանչյուր ձվային կամ սերմանային բջիջի կյանքում կա այնպիսի մի մոմենտ, յերբ քրոմոսոմների թիվը կրկնակիրից կամ, ինչպես ասում են այժմ գենետիկները, դիվլուդոյինից վերածվում ե միապատճեկի՝ հապլոիդայինի: Բավկականին դժվար գործ ե վորոշել այդ վերափոխման մոմենտը: Նախևառաջ անհրաժեշտ ե՝ թեկուզ հիմնական գծերով, ծանոթանալիք թե ինչպես են գոյանում կամ առաջանում սեռային բջիջները՝ ձուն և սպերմատոզիդը համապատասխան սեռական գեղձերում՝ ձվարանում ու սերմանարանում:

Սեռական բջիջների գարգացումը. — Համապատասխան գեղձերում սեռական բջիջներ զարգանալիս մենք տեսնում ենք յերեք շրջան՝ բազմացման շրջան, աճման շրջան և հասունացման շրջան, ընդգործում

սեռական գեղձերում զբան համապատասխան կարելի յեւ տարբերել և յիշեք բաժին կամ գոտի՝ սաղմնավորման կամ բազմացման գոտի, աճման գոտի և հասունացման գոտի։ Սերմնարանում, հասունացման գոտուց հետո դալիս և նաև չորրորդ գոտին, վորտեղ ձեմավորվում են սպերմատոզիդները։

Սաղմնավորման գոտին սերմնարանում և ձվարանում լցված և սեռական բջիջներով, սերմնարանում՝ այսպես կոչված սպերմատոզիդաներով, իսկ ձվարանում՝ ովոզունիաներով։ Նրանք դեռ պարունակում



Նկ. 21. Սպերմազիդների և ովոզիների սրբմը կենդանիների մատ (Սինոս-Դենիկյ, ըստ Շելլի)

են դիոզլուիդ թվով քրոմոսոմներ և բազմանում են սովորական յեղանակով, սկիզբ տալով այդ բջիջների նօրանոր սերունդներին։ Այդտեղից ել ծագել ե բազմացման շրջան արտահայտությունը։

Աճման գոտում դադարում է սկզբնական սեռական բջիջների բազ-

մացումը Նրանք սկսում են նկատելի կերպով մեծանալ, ընդ վարում յուրաքանչյուր սպերմատոզոնիայից կամ ովոգնիայից աճման շրջանի վերջում ստացվում ե ավելի խոշոր սպերմատոզիտ կամ ովոցիտ:

Հասունացման գոտում, վորն իգական սեռական պրոդուկտները զարգանալիս արդեն ձվարանից դուրս ե մառմ, տեղի յեն ունենում իրար արագորեն հաջորդող յերկու միտոզները Հենց այդ շրջանի ընթացքում ե, վոր քրոմոսոմների դիպլոիդ թիվը կրկնապատիկ նվազում է գառնում և հապլոիդ:

Վորպես սպերմատոզիտների և ովոցիտների յերկնվագ բաժանման արդյունք, առաջ ե զալիս չորս բջիջ, վորոնք պատկերված են սքեմի Ներքենի շարքում (նկ. 21): Նրանց հակատագիրը տարբեր և լինում ձու և սպերմատոզուիդ ձևավորվելու դեպքում:

Բանն այն ե, վոր ձվարջիշը սովորաբար լցված է լինում սննդաբար նյութով գեղնուցով, վորն անհրաժեշտ և ապագա սաղմի սննդի համար: Հասունացման յերկու բաժանման ժամանակ դեղնուցի զանդվածը հավասար չի բաշխվում: Միայն մի բջիջն ե ստանում համարյա ամբողջ սննդաբար պաշարը և զարգանալով դառնում և հասուն ձու, իսկ մյուս յերեք շատ փոքր բջիջները (վորոնք կոչվում են ուղղուցիչն մարմնիկներ), շուտով վոչնչանում են: Իսկ սերմնային բջիջներ կազմելիս յերկնվագ բաժանումով առաջացած չորս բջիջները հավասար են իրենց մեծությամբ, հավասարապես կենսունակ են, և բոլորն ել մի շարք բավականին բարդ բաժանումներից հետո զառնում են սպերմատոզուիդներ՝ այս կամ այն տեսակի համար տիպիկական իրենց ուրվագծով, պոչի ձևով և այլն:


Խոչ վերաբերում ե քրոմոսոմներին, ապա նրանց վարքագիծը բոլորովին միատեսակ է թե արական և թե իգական սեռական բջիջները հասունանալիս:

Այդպիսով, ժառանգականության մեխանիզմի տեսակետից, յերկու պրոցեներն ել միատեսակ են:

Ռենդուկցիան բաժանում (մերօքիս). — Մինչև այն մոմենտը, յերբ սեռական բջիջներն սկսում են պատրաստվել հասունացման բաժանմանը, նրանց քրոմոսոմների թիվը մնում է նույյը, ինչ վոր մարմնի բոլոր բջիջներում: Մեր տված սքեմում (նկ. 22) կա 8 քրոմոսոմ, այսինքն՝ 4 զույյու:

Հետագայում քրոմոսոմներն այնպիսի փոփոխություններ են կրում, վորոնք այլև չեն պատահում մարմնի մյուս բջիջների կյանքում: Միատեսակ, այսինքն՝ զույյ քրոմոսոմները մոտենում են իրար և դասավորվում են մեկը մյուսի կողքին յերկարությամբ: Ցուրաքանչյուր զույյի մեջ քրոմոսոմներից մեկն ստացվել է հորից, իսկ մյուսը՝ մորից: Այդպիսով կարելի յե ասել, վոր փոխադարձաբար մերձնաւում

են միմյանց համապատասխան մայրական և հայրական քրոմոսոմները լ'սդ սմբն նրանք հաճախ միահյուսվում են միմյանց հետո Մի զույգ քրոմոսոմների միացման յերեսութը կոչվում է կռնյուգացիա։ Ապա սկսվում է բաժանման պրոցեսը. յերեան և գալիս ճառագայթաձև մի ֆիզուր, վորի հասարակածի ուղղությամբ դասավորվում են քրոմոսոմները։ Այժմ պետք եր սպասել վոր յուրաքանչյուր քրոմոսոմ յերկարությամբ կճշատվի. յերկու մասի Բայց իրոք տեղի յի ունենում քրոմոսոմների հետացումը միմյանցից՝ իրար կողք-կողք գտնվող կռնյուգանատված ամբողջ քրոմոսոմներ՝ չորսը գեպի մի կողմ և չորսը՝ մյուս կողմ։ Դրանից հետո բջիջը, մեջտեղից ակոսվելով՝ բաժանվում է յեր-




Նկ. 22. Հասունացման յերկու բաժանման սեփեմ (ապերիմուգինեղի ժամանակ)։
C—E առաջին բաժանումը քրոմոսոմների թվի անդաւկցիայով, F և D՝ յերկրորդ բաժանումը (եկվացիոն բաժանումը) (Գոլդմիզով)։

կու մասի և ստացվում են յերկու գուստը-բջիջներ, վորոնցից յուրաքանչյուրն ունի միայն 4 քրոմոսոմ, այսինքն՝ յուրաքանչյուր զույգից դուստր բջիջն է անցնում միայն մեկական քրոմոսոմ։

Այդպիսով հասունացման առաջին բաժանման ժամանակ տեղի յի ունենում քրոմոսոմների թվի նվազում (անդաւկցիա), ուստի այդ բաժանումը կոչվում է սեպուկցիոն բաժանում։ Ռեզուկցիոն բաժանումը հանդիսանում է զվարիոր մոմենտը սեպական բջիջների հասունացման պրոցեսում։ Սքեմում (նկ. 23) զուգահուաբար պատկերված են բջիջների յերկու բաժանումները՝ ստորին շարքը՝ ներկայացնում է

սովորական, այսպես կոչված եկվացիոն բաժանումը, զոր տեղի յէ ունենում մարտի բոլոր բջիջներում (ներառյալ նաև սեռական բջիջների բաժանումը՝ նրանց զարգացման սկզբնական աստիճաններում), իսկ վերին շարքը ներկայացնում է ուղղուցիոն բաժանումը: Պետք ե ուշադրություն դարձնել այն բանի վրա, զոր կանյուզում են (միանում են) միայն իրար նման քրոմոսոմները, կարծես միենույն զույգի պարտայորները: Նրանք կոչվում են հոմոլոգ քրոմոսոմներ: Յեթե վերհիշենք, զոր բեղմեավորված ձևում տեղի յէ ունենում հոր քրոմոսոմների միացումը մոր քրոմոսոմների հետ, ապա կհասկանանք, զոր յու-




Նկ. 23. Ռեզուցիոն (վերին շարք) և սովորական (ներքին շարք) բաժանման համամատությունը: Առաջին գեղեցում քրոմոսոմների թիվը նվազում է 8-ից 4 (Դուզչիդուից)

բաքանչյուր զույգը ներկայացնում է հոր և մոր իրար համապատասխանող քրոմոսոմների միացումը: Ամեն մի արագես կոչվող գիպոլիու քրոմոսոմային կոմպլեքսում մենք կարող ենք նկատել այդպիսի զույգություն (տես վերը, նկար 13-18):

Կանյուգացիայի մանրամասնություններ.—Մենք գիտակցաբար սքեմատիկացրել ենինք այդ պրոցեսը՝ վերջինս ավելի պարզ դարձնելու համար: Բայց իրոք նա շատ ավելի բարդ է: Քրոմոսոմների կոնյուգացիան ըստ յերևույթին շատ ավելի վաղ և սկսվում՝ դեռ անման զույգում: Ըստ նմին քրոմոսոմներն ու կորիֆները յենթարկվում են մի շարք հետաքրքիր, շատ բնորոշ փոփոխությունների: Այդ փոփոխությունների դեռ բոլոր մանրամասնությունները բավականաչափ պարզ չեն ներկայում (նկ. 24): Դրանցից ամենանկատելիները նրանք են, զոր կորիդի թելիկները հավաքվում են նրա պատերի մոտ խրսկծիկի ձևով: Այդ աստիճանը կոչվում է սինիգեղիս (առաջ կոչվում եր սինապիսի): Ըստ յերևույթին հենց այդ ժամանակ ել տեղի յէ ունենում քրոմոսոմների կոնյուգացիան միմյանց հետ, թեպետ հնարավոր է, զոր զույգ քրոմոսոմների միահյուսումն առաջ է կատարվում, յերբ

թելիկները զեռ բարակ են (յերբորդ աստիճանում՝ լեզուանեմները, չորրորդ աստիճանում՝ զիգոնեմները),

Համենայն դիպս սինիզեզիսից հետո նրանք ընդունում են շատ հաստ, կրկնակի ձողիկների տեսք, վորոնք ավելի ևս կարճանում են




Նկ. 24. Քրոմոսոմների կոնյուգացիայի ետապները

1—կորիզը հանգստի վիճակում, 3—լեզուանեմ, 4—զիգոնեմ, 5—սինիզեզիս, 6—պախինեմ, 7—սարեպոխինեմ, 8—զիակինեմ (Ֆէլքպչենկոյից՝ ըստ Շարպի)։

Կոնյուգացիայի վերջերին Ընդ սմին քրոմոսոմները հաճախ սկսում են ճղատվել յերկարությամբ, այնպես վոր ստացվում են բնորոշ ֆիգուրներ, վորոնք կոչվում են տետրադներ և պարունակում են չորս քրոմոսոմ, այլ վոչ յերկու չենց այդ ել ցույց ե տրված սքեմում (նկ. 21). Առաջին կարգի սպերմատոցիտներում և սվոյշիտներում կան 3-ական տետրադներ։ Առաջին բաժանման հետևանքն ե լինում կոնյուգացած քրոմոսոմների դասավորումը զանազան բջիջների մեջ։

Կոնյուգացիայի ժամանակ դույզ քրոմոսոմների միահյուսումը, վոր կարող ե տեղի ունենալ շատ ուժեղ կերպով (նկ. 25), կոչվում ե խիազմատիզիա։


Յենթազրում են, վոր ընդ սմին քրոմոսոմների խաչաձևման առանձին կետերում կարող են տեղի ունենալ խզումներ (անջատումներ), վորոնց արդյունքն ե լինում քրոմոսոմների համապատասխան կտորների փոխանակումը։ Դրա վրա հիմնված են տեսական շատ կարևոր կառու-



Նկ. 25. Խիազմատիզիա (Բենալազեցիս)

ցումներ գենետիկայի բնագավառում (դրանց մասին խոսվելու յէ 4-րդ պլանում):

Վորքան ելքարդ յեղանակով կատարվի քրոմոսոմների կոնյու-



Նկ. 26. Սորեխակերպներից մեկի սպերմատոզինեզի մը շարք պատկերներ. ա—սպերմատոզինիաների միտոզներից մեկի հասարակածային թերթիկը, ն—սարեալ-սինեմա, շ—հասունացման 1-ին բաժանման միթափազը, օ—հասունացման 1-ին բա-ժանման անաֆազը (սակայն քրոմոսոմներն արդեն ճղավվել են եկվատիրն ձևով), զ և է—հասունացման 2-րդ բաժանման յիրկու դուստր թերթիկները (ըստ Թելյասի)

գացիայի պրոցեսը, կարեոր և այն, զոր մինչև հասունացման առաջին բաժանումը հասարակածային շերտում ըստ աեսանելիության քրոմո-սոմների թիվը կրկնապատիկ պակաս կլինի, վորովհետև յուրաքան-

շուր զույգի յերկու քրոմոսոմներն եւ միացեմ մի թելիկ են կազմել բաժանման արդյունքն եւ լինում միայն յուրաքանչյուր զույգի անդամների միջյանցից հեռանալը և արդպիսով քրոմոսոմների թվի կրկը հապատիկ նվազելը: Առաջին բաժանումից հետո շատ արագորեն ոկսվում եւ յերկրորդը, վոր կոչվում եւ եկվացիոն բաժանում, սակայն դա վոչնչով չի տարբերվում մարմնի բոլոր անդամների սովորական բաժանումից: Յուրաքանչյուր քրոմոսոմ ճղատվում եւ յերկարությամբ: Ընդամեն, ինչպես գիտենք արդեն, զուստր-բջիջներում քրոմոսոմների թվի վոչ մի նվազում չի նկատվում՝ համեմատած մայր բջիջների հետ:

Տեխնիկապես շատ գժվար եւ ուսումնասիրել կոնյուգացիան, վորովիետ ցիտոլոգիական պատկերները գտնվում են մանրադիտակի տեսանելիության սահմաններում: Բացի դրանից, զանազան տեսակների մոտ պրոցեսի մանրամասնությունները տարբերվում են միմյանցից: Առա թե ինչու նրանց մեջ շատ բան գեռ պարզ չեւ:


Քրօմոսոմների զույգությամբ յևլ գեների զույգությամբ: Հապլոիդ-պրօմիկցիներ.—Մեղուլցիոն բաժանումը նվազեցնում եւ քրոմոսոմների թիվը, հասցնելով վերջինս դիպլոիդից մինչև գամետների հատուկ հապլոիդին: Բեղմանավորման պրոցես՝ արական և իգական գամետների միացումը, վերականգնում եւ քրոմոսոմների դիպլոիդ թիվը: Իրար նման հոմոլոգիկ քրոմոսոմների յուրաքանչյուր զույգի մեջ մեկն ունի հայրական ծագում, մյուսը՝ ժայրական: Դրանով իսկ ապահովվում եւ գեների անցումը հորից և մորից: Այդ պատճառով որգանիզմում գեները նույնպես զույգեր են լինում, ինչպես և քրոմոսոմները: Յուրաքանչյուր գամետ կրում եւ իր մեջ բոլոր գեների միապատիկ հապլոիդ կոմպլեկտը: Այդ նշանակում եւ, վոր հապլոիդ գամետը, ժառանգական բովանդակության իմաստով, ունի այն ամենը, ինչ վոր հարկավոր եւ ամբողջ որգանիզմն ստեղծելու համար: Յեզվ, արդարն, գոյություն ունեն հապլոիդ որգանիզմները: Այդպիսիք են պիծակի արուները, մեղուների բուերը: Նրանք առաջ են գալիս չբեղմնավորված ձվերից (առանց արվի մասնակցության), իսկ մայր մեղուն և բանվոր մեղուները՝ բեղմնավորված ձվերից:

Առա զույգ սեռական քրօմոսոմներ.—Դիպլոիդ կոմպլեկտի բոլոր քրօմոսոմների զույգության սկզբունքից բացառություն են կազմում այսպես կոչված սեռական բջիջները: Կան քրօմոսոմներ, վորոնցով տարբերվում են յերկու սեռերի ներկայացուցիչները՝ եղերն ու արուները: Մինչզեռ մի սեռի մոտ այդ քրօմոսոմները զույգեր են կազմում (2. Խ-քրօմոսոմներ), մյուս սեռի մոտ նրանք զույգ չեն: Դրանցից մեկը, վոր հարանման և մյուս սեռի զույգ քրօմոսոմներին, նշանակում են վորպես Խ, իսկ մյուսը, վոր նման չեւ վորպես Յ (նկ. 16): Սեռական քրօմոսոմների մասին մանրամասնորեն խոսվելու յև Վ գըշ-

խում նզերի և արուների քրոմոսոմները, վորոնք չեն տարբերվում միմյանցից, կոչվում են առասոսոմներ:

Ինչպես եմ կոմքիմվում հայրական յել մայրական բազումներ սերմակցիայի ժամանակ. — Դառնանք 8 քրոմոսոմների մեր սքեմին (նկ. 22):

Ինչպիս տեսանք, հասունացման առաջին բաժանումից առաջ



Նկ. 27. Հայրական ու մայրական քրոմոսոմների 8 տարրեր կոմքինացիաներ, հասունացման բաժանման ժամանակ (I—VIII), և քրոմոսոմային կազմով 16 տարրեր սերմական բջիջներ, վորոնք առաջ են գալիս դրանից (1—16) (Փոլումբուսի)

Մերնդի թվի ավելացմանը զուգընթաց, ստացվող ճեղքման շշառության աստիճանը գնալով կավելանաւ: Այդպես՝ հետաքրքիր ե, վոր յեթե գումարենք վորոնի բլթակների ըստ դեղին և կանաչ գույների կստարվող ճեղքման այն թվերը, վորոնք ստացել են շատ հետազոտողներ՝ սկսած Մենդելի թվերից, կստանանք ճեղքման այնպիսի պատկանելի թվեր, ինչպիսիք են 152824 : 50676, այսինքն՝ 3,004 : 0,996 հարաբերությունը՝ Այսաեղ սպասվող Յ : 1 հարաբերության հետ համեմատած՝ տարբերությունը կկազմի ամբողջ թվի միայն մի քա՞նի հագարերորդ մասը:

Անալիգող արամախաչումը յեզ օրա հօանակուրբանք՝ [հոմազիգուառյալն ու հետեւազիգառաւրյալն սպավելու համար.—Հետերոզիգոտների


1) Միջին սեալը հաշվում են $\pm \sqrt{\frac{p(1-p)}{n}}$ քայլութեալ

և հոմոզիգոտների նմանությունը բացատրում է, թե ինչու յերբեմն մեջնողներից ծնվում են կարմիր հորթեր։ Այդ նշանակում է, վոր տեղի յեն ունեցել յերկու այնպիսի հետերոզիգոտներ, վորոնց մոտ գերիշխող (դոմինանտ) գենների տակ թագնված են յեղել ռեցեսիվ գեններ, վորոնք տրամախաչվելիս միացել են մի անհատում։ Իսկ կարմիր կենդանիները միշտ ել հոմոզիգոտային կլինեն ըստ կարմիր գույնի գենի։

Պարզ ըմբռնելով գենոտիպի և գենոտիպի տարբերությունը, մենք հանդում ենք մի կարեռ գործնական հետեւության կենդանու արտաքինը գեռ բավական չեն նրա ժառանգական հատկությունների, նրա գենների մասին գատելու համար նույնիսկ յեթե հայտնի յեն, վոր կենդանինի ունի այս կամ այն գենը, քիչ նշանակություն չունի այն հանդամանքը, թե ավյալ գենը դանդում և հոմոզիգոտային վիճակում, թե հետերոզիգոտային։ Տվյալ ողտակար գենը հետերոզիգոտային վիճակում գտնվելիս հաջորդների մի մասը կարող է չունենալ այն՝ ճեղքաման հետեւանքով։ Այդ բոլորը ցույց են տալիս, թե անհրաժեշտ է հատկապես ստուգել այն կենդանիների ժառանգական հատկությունները, վորոնք վորեն պատճառով ամենից ավելի հարմար են թվում վորպես տրամադրողներ։ Այդ և հաջորդներին անհատապես փորձի յեն թարակելու ակզրոնքը։ Մենք ստորեւ կծանոթանանք այն գերին, վորը խաղում և անհատական վորձարկումն անասնաբուժության մեջ։

Պարզեցու համար, թե ավյալ անհատն իր գերիշխող հատկանշով հոմոզիգոտային է, թե հետերոզիգոտային, ամենից ավելի հարմար և կիրառել այսպես կոչվող՝ հետազարձ կամ անալիգող տրամախաչումը, ոյսինքն՝ տրամախաչում ուեցեսիվ գեն ունեցող հոմոզիգոտի հետ։

Ըստունենք, վոր մենք ունենք մե ցուլ և ուզում ենք իմանալ, թե նա իր սկ գույնի գենով հոմոզիգոտային է, թե հետերոզիգոտային։ Ցեթեւ այդպիսի ցուլը տրամախաչենք կարմիր կովերի հետ, ապա սահցիված հաջորդներից կարելի յեն դատեն։ Թե վերն և ավյալ ցուլի գենոտիպը։



Ցուլն Ա գենով հոմոզիգոտային լինելու դեպքում ամբողջ սեռանդը սկ կլինի (ձախ կողմի տրամախաչումը), իսկ հետերոզիգոտա-

յին լինելու դեպքում (աջ կողմի տրամախաչումը) հաջորդների մեջ տեղի կունենա ճեղքում 1:1 հարաբերությամբ:

Ներկայումս անալիզող տրամախաչումը կիրառվում է շատ բայց շափով գենետիկական անալիզի ժամանակի:

Որինակ՝ կարակուլ ցեղի վոչխար բուծողները կարակուլի խոյերը փորձարկելիս նախատեսում են նաև նրանց տրամախաչումը «կամբարի» (շեկ վոչխար) 12 եղի հետ այն 200 վոչխարից, վորոնց պետք և սերմանավորի խոյը ենոյը հետերոզիգոտային լինելու դեպքում դառների կես մասը պետք և շեկ լինի: Եգերի թիվը 12 յէ վերցրած այն պատճառով, վոր սպասվում է 6:6 հարաբերությունը, այն ժա-

$$\text{մանակ սխալը } \text{հավասար } \pm \sqrt{\frac{6 \cdot 6}{12}} = \pm 1,33\text{-ի:} \quad \text{Այլ } \text{խոսքով՝}$$

սխալը 3-ի հասնելու դեպքում ել 12 գառից 1-ը շեկ կլինի և դրանով խեկ ցույց կտա, վոր խոյը հետերոզիգոտային և (տես զրականությունը):

Մայր մեղումերի գենետիկական անալիզը բռւյանի միջոցով.—Մեղումերի բազմացման առանձնահատկությունները—մոր զիվլոյիդ և բուռերի հավորիդ լինելը հնարավոր և դարձնում, վոր նրանց մօտ անալիզող ճեղքումը միշտ կատարվի ինքնարերաբար: Յեթև մայրը վորմե Ա գենով հետերոզիգոտ և, այսինքն՝ նա Աայն (յենթազրենք՝ ա սպիտակ աչքի գենն ե), ապա նա մոտավորապես հավասար քանակությամբ և Յ պարունակող ձու յէ գոյացնում: Նրանցից առանց ընդհանուրվելու բռուեր են գոյանում, վորոնց մեջ ճեղքման հետեւանքով կառաջանան բռուեր՝ սպիտակ և մուգ աչքերով:

Դերֆինաւմը (դամինումը) յեվ երա աստիճանները. — Աև և կարմիր անտօռուններին տրամախաչլիս առաջին ծնի ճագերը սև գույն ունենու վորովհետև սև գույնի գենը կատարելապես գերիշխում և կարմիր գույնի գենի վրա, յերկրորդ սերնդում սև հոմոզիգոտները և սև հետեւ բոլորի գույնում միացվում—մի խումբ են կազմում (սև կենդանիների խումբ):

Մենդելը շատ մեծ նշանակություն եր վերագրում գերիշխումը, նույնիսկ առաջին սերնդի նմանությունը ծնողներից մեկին համարում եր ժառանգականության հիմնական որենքներից մեկը:

Մենդելի առաջին որենքը, վոր այժմ մենք անվանում ենք միաձնության կամ միակերպության կանոն, ժամանակին Մենդելն ինքը և մենդելիստներն առաջին տարիները դիտում եյին վորովն գերիշխուման որենքը, թվում եր, թե գենետիկական այն էնելույթներում, վորոնք բնորոշում են հիբրիդների առաջին սերունդը, գլխաւ վորն և առաջին սերնդի նմանությունը յելակետային ձեւըից մեկից

Առաջ Սակայն, յերբ ուսումնառիրվեցին ժառանգման ավելի ու ավելի մեծ թփով զանազան հատկանիշներ, պարզվեց, վոր թեպեա մենդելյան դեպքը տիպիկ է, բայց պարտադիր չեւ Վոլոսի այն հատկանիշները, վորոնք դիտել եր Մենդելը, ինչպես և մեր որդինակը՝ խոշոր յեղջերավոր անսատների սև գույնը, ընորոշվում են լիակատար գերիշումով, այսինքն՝ հետերոդիգոտային ձևերը, ըստ իրենց գերիշխող գենի, կատարելապես նման են հոմոզիգոտներին։ Սակայն քիչ չեն նաև այնպիսի գեղքեր, յերբ գերիշխող գենը հետերոդիգոտային առանձնիկում ավելի թույլ է արտահայտվում։

Կան վոչխարներ, վորոնք արտաքին ականջ բոլորովին չունեն Անականջ վոչխարները նորմալ վոչխարների հետ տրամախաչելիս անդրող առաջին սերունդն ունենում և կարճ ականջներ, նորմալից համարյա կրկնապատճի փոքր, և ձևով սլաքանման կարճականջ վոչխարների տրամախաչումը միմյանց հետ տալիս և ամեն տիպի վոչխարներ՝ անականջ, կարճականջ և նորմալ ականջով։ Ականջի նորմալ մեծությունը գերիշխող է (Ա), իսկ անականջությունը (Յ) սեցնիվ։ Սրանց ամրող առաջին սերունդը հետերոդիգոտային է (Ա), և Ա գենը լիակատար չափով չի գրանորում։ Յերկու հետերոդիգոտներ իրար հետ տրամախաչելիս (Ա) \times (Ա) յերկրորդ սերնդում ստացվում է առանձնիկների յերեք խումբ¹⁾, ԱԱ, այսինքն՝ նորմալ ականջով վոչխարներ, ²⁾ ԱԱ, այն և ավելի փոքր ականջ ունեցող հետերոդիգոտներ-է³⁾։ ԱԱ—անականջ վոչխարներ Հետադա ստուգումը ցույց է տալիս, վոր կիսով չափ փոքրացած ականջով վոչխարներն իրոք հետերոդիգոտային են, վորովհետև նորմալ ականջ ունեցող վոչխարները զուտ գծով բուծելիս մենք ստանում ենք քայլառակնես նորմալ հաջորդներ, անականջ վոչխարներ բուծելիս ստանում ենք բացառապես անականջ վոչխարներ, իսկ կարճականջները շարունակ տալիս են նորմալ ականջով, անականջ և կարճականջ վոչխարներ, ինչպես առաջին սերնդում Կարելի յե մի քանի սերունդների ընթացքում կրկնել այդ ոպերացիան, սակայն կարճականջ վոչխարները յերեք գուտա չեն դասնա իրենց ժառանգական այն սաղմանյութով, վորը պայմանավորում է ականջների մեծությունը։

Կարճականջ վոչխարներն անականջների հետ տրամախաչելիս ստացվում են հավասար քանակությամբ անականջ և կարճականջ վոչխարներ։

Լինում են գեղքեր, յերբ հետերոդիգոտային անհատներն արտաքում զգալիորեն տարբերվում են յերկու ծնողներից ել Զեռքի տուկունենալով հիբրիդներ՝ կարելի յե լինթագրել տվյալ հատկանշի ինքնուրույն զոյությունը և փորձել առաջ բներել հատուկ ցեղ։ Այդ վիճակումն ելին անդալուզյան յերկնապույն հավերը, Նրանց մի մյանց-

Նետ արամախաչելիս ձագերը շարունակ բաժանվում են սև, լիրկնապույն (40-րդ, նկարում գորշ են պատկերված) և սպիտակ ճաերի: Յերկնագույնները հետերողիզոտային են:

Քիչ չեն վոչ լիտակատար գերիշխման որինակները:

Տավարի մոտ նկատվում ե գույնի մի քանի գեների վոչ լիտակատար գերիշխումը՝ հետերողիզոտաների բնորոշ յուրահատուկ արտահայտությամբ Կարմիր և սպիտակ շորտնորները տրամախաչելիս ստաց-



Նկ. 37. Կարակուլ ցեղի եղ գոչեարների նորմալ յերկար ականջը (Ըստ Վասինի)



Նկ. 38. Հետերողիզոտ, ըստ անական- կառինի)

վում են գորշ խայտախարիչ ձագերը Նմանապես սպիտակ շորտնորներն ու սև արերդինանգուտները տրամախաչելիս ստացվում են գորշ-յերկնագույն հիբրիդներ:

Գերիշխման աստիճանը կարող է զգալի չափով տատանվել զանազան պատճառներով, մասնավորապես արտաքին այս կամ այն պայմանների ազգեցության շնորհիվ: Հայտնի յեն փորձեր, յերբ հետերո- ղիզոտներ բուծելով այս կամ այն պայմաններում, հաջողվել ե հետե- րողիզոտները մոտեցնել գերիշխող ծնողին կամ, ընդհակառակը՝ հեռացնել նրանից:




Նկ. 39. Եղ կարակուլի անականջությունը (Ըստ Վասինի):

Գերիշխմանը կարող է կախված լինել և սեռից: Հետաքրքիր ե յեղ- ջերայնության ժառանգման դեպքը՝ տավարի մոտ: Անեղջյուր անասու- նին յեղջյուրավորի հետ արամա- խաչելիս առաջին սերնդի առանձ- նիկներն ունենում են սպազմային յեղջյուրներ: Բայց սերնդում ճեղքումը

կատարվում և մոռավորապես հետեւյալ հարաբերությամբ՝ 1 անեղջյուր, 2 ասդմային յեղջյուրով և 1 յեղջերավոր Բայց պետք է նշել վոր յեղջյուրների զարգացման աստիճանը կախված է զործող սերմնարանի առկայությունից. այդ պատճառով, յեթե անեղջյուր անասունին յեղջերավորների հետ տրամախաչելու հետեւանքով հետերոդիգոտային եղջ կարող է բոլորովին անեղջյուր լինել ապա հետերոդիգոտային արուն սովորաբար յեղջերավոր և լինում: Նրանք յերկուան ել պարունակում են յեղջյուրների աճման սեցեսիվ գններ, բայց յեղջյուր և բուսնում այն անհատի գլխին, վոր սերմնարան ունի:

Գերիշխումը հանդիսանում և գեների փոխներգործման որինակներից մեջը, և մենք այդ լույսով ենք քննում գերիշխումն ավելի ժամանակակից են յեղջյուրների աճման սեցեսիվ գններ, բայց յեղջյուր և բուսնում այն անհատի գլխին, վոր սերմնարան ունի:

Իբակատար գերիշխումը լինելու դեպքում վոչ մի տարակույթ չի ծագում, թէ վոր հատկանիշը պետք է գերիշխող համարել և վորը



Նկ. 40. Հազիք ու և սպիտակ յեղջերի տրամախաչումը, վոր F_1 սերնդում տայիք և անդախուզյան հավելք (ըստ Կեսովի):

սեցեսիվ: Այլ բան և վոչ լիակատար գերիշխման ժամանակ: Կատարելապես միջանկյալ գերիշխման ժամանակ բոլորովին միեւնույնն է, թէ մենք վոր հատկանիշը կհամարենք գերիշխող, և վորը՝ սեցեսիվ, վարովինետև զբա համար վոչ մի հիմք չենք ունենա, բացի մեր ինքնական ընտրությունից:

Դիմիքրիկային (յերկիրիկիդային) տրամաչաւմը վարպետ Մենգելի յերազ կանոնի պահպերացում.—Մենք քննեցինք այնպիսի գեղքեր, յիրք տրամախաչման համար վերցված ձևերը միմյանցից տարրերվում ենին միմիկայն մի հատկանշով, Բայց, իհարկե, գործնականում ավելի հաճախ լինում են այնպիսի գեղքեր, յիրք յերակետային ձևերը տարրերվում են իրարից մի շարք հատկանիշներով. Այդ գեղքերում, ըստ Մենգելի, աեղի յեռնենում առանձին հատկանիշների անկախ ծառանձօւմբ: Կոնկրետ որինակով քննենք Մենգելի արդ յերազը կանոնը:

Այն գեղքում, յիրք նորմալ բուրդ ունեցող հոսողիգոտային ալրինոս ճագարները (որինակ՝ սպիտակ հակաները) տրամախաչվում են գունավոր ընեթու ճագարների հետ, վորոնց բրդում կոշտ քառամագեր չկան, այնպիս վոր նրանց բուրդն զգալի չափով կարճ և, ամրող առաջին սերունդը համասեռ կլինի՝ գունավոր և նորմալ բրդով: Յերկը սերդի ձագերի մեջ կլինեն ծնողների հատկանիշներն ունեցող կենդանիներ, այսինքն՝ սպիտակ, նորմալ բրդով կենդանիներ և գունավոր սերունդը և, բացի զբանից, առաջ կցան ծնողների հատկանիշների նոր համակցումներ (կոմբինացիաներ): Գունավոր նորմալ բրդով և սպիտակ սերունդը:

Ըստ սմին կստացվի դրսեվորված բոլոր ձևերի թվական կանոնավոր փոխարարերություն, այն եւ

Նորմալ բրդով, գունավոր	9/16
Գունավոր սերունդ	2/16
Նորմալ բրդով, սպիտակ	3/16
Սպիտակ սերունդ	1/16

Այդպիսով հաջորդների այդ չորս կատեգորիայի հարաբերությունը կլինի 9: 3: 3: 1:

Մենգելի, ուսումնասիրելով վոլոոիտ տրամախաչումը՝ նույնպիսի հարաբերություն ստացավ բավական մեծ ճշտությամբ: Հարկավ, ճառագրների վերաբերմաք յիրք առաջ են գալիս աննշան թվով հաջորդներ, ստացված հարաբերությունը բավական մոտավոր կլինի: Սակայն ներկայումս հայտնի յեն դիմիրիկային տրամախաչման բազմաթիվ գեղքեր, կազմակերպված այնպիսի ծավալով, վոր միակատար չափով ստացվում և Մենգելի մատնանշած որինաչափությունը:


Մենգելի յերրորդ կանոնի համաձայն՝ յերկրորդ սերնդում տեղի կունենա հատկանիշների յուրաքանչյուր գույյդի անկախ ճեղքումը հետեւյալ հարաբերությամբ՝ 3 գունավոր՝ 1 սպիտակին և 3 նորմալ բրդով՝ մի սերունդ:

Իրոք այդպես ել աեղի յի ունենում. գունավոր 13/16 և սպիտակ 4/16, նորմալ բրդով 12/16 և սերունդ 4/16: Խնձորես գունավորները, այնպիս ել սպիտակիներն ստացվում են և նորմալ բրդով, և սերունդ:

Ընդ սմբին թե մեկ և թե մյուս գույնի կենդանիների խմբերում վոչ սեքսի և սեքսի միջև պահպանվում է 3 : 1 հարաբերությունը: Այդ ցույց և տալիս գույնի և բրդի տվյալ հատկանիշների անկախությունը:

Անկախ բաշխման կանոնի եյտթյունը կարելի յեւ ավելի լավ ըմբռնել, յեթե դիմենք տվյալ հատկանիշներն առաջացնող գեններին Դույնի գենը նշանակված է Առվ, ալբինիզմի գենը՝ Ձ-ռվ, սեքսի գենը՝ Շ-ռվ և նորմալ բրդի գենը՝ Բ-ռվ:

Այն ժամանակ արամախաչումը կարելի յեւ գրել հետեւյալ ձեռք:



Եերկու ծնողներն ել ծագում են մաքուր ցեղերից, ուստի նրանք համարվուային են՝ առաջինն ըստ A և 1 գեների, յերկրորդն ըստ 2 և R գեների:

Առաջին սերնպում դրսեռզում են A և R գերիշխող գեները, ուստի F₁ կենդանիները գունավոր կլինեն և կունենան նորմալ բուրդ: Նրանք կրկնակի հետեւրողիդուն են:

Ինչպես մոնոհիբրիդային ճամանակ, այսուեղ ևս հիմնական հարցն այն ե, թե ինչ տեսակ գամետներ են կազմում Aa Rr առաջին սերնպի առանձնիկները Մենք դիտենք, վոր Aa առանձնիկը կտա A և a զամետներ, Rr առանձնիկը կտա R և r զամետներ: Կատարելապես պարզ ե, վոր յուրաքանչյուր գամետ պետք է պարունակի վոչ միայն գույնի գենը, այլև բրդի յերկարության գենը, ինչպես և ընդհանրապես մեկական գեն՝ տվյալ կենդանու ունեցած մյուս բոլոր գեներից: Բոլոր գամետների կես մասը կարունակի A գենը, մյուս կեսը՝ 2 գենն սմբին հավասար շանս կա, վոր A գենի հետ լինի կամ 1-ը, կամ R-ը: Այդ պատճառով A գենն ունեցող զամետների կես մասը կլինի R-ռվ, մյուս կեսը՝ 1-ռվ: Այն զամետներից, վորոնք ունեն 2, կեսը կունենա R, իսկ կեսը՝ 1. Այդ հիման վրա պետք է ոպանել, վոր 1 հիբրիդները կկազմեն մոտավորապես հավասար քանակությամբ գամետների չորս խումբ:

AR, Ar, aR և ar.

Եերկու F₁ կենդանիներ արամախաչելիս արուները կտան 4 տեսակ սպերմատոզօֆտ, իսկ եգերը՝ 4 տեսակ ձու: Դրա հետեւանքը կլինի այն, վոր առաջ կդա գամետների 16 կոմբինացիա: Նրանք բոլորն ելքով մոտավորապես հավասար կլինեն միմյանց:

Վերեկի բոլոր կոմբինացիաները կարելի յեւ ստանալ հանրահաշվային ձևով, յեթե բազմապատկենք իրարով յերեք անդամները, վոր յուրաքանչյուր առանձին գենի ճեղքումն են արտահայտում (AA+2Aa+aa) (RR+2Rr+rr):

Դամեսների պատահական միացումից առաջացած կոմբինացիաներն ամենից /ավելի հեշտ և վորոշել այսպես կոչված Պեննեսի վանդակի միջոցով/:

Պեննեսի վանդակը.—Պետք է գծել ուղղանկյունն Ուղղանկյունը պետք և հորիզոնական և ուղղահայաց գծերով բաժանել այնքան ուղղահայաց սյունակների, վորքան գամետների տիպ և տալիս ծնողները մեկը, և այնքան հորիզոնական շարքերի, վորքան գամետների տիպեր ունի ծնողներից մյուսը Սյունակների զվարին, համապատասխան շարքերի առջև գրվում են գամետների գեները. Ստացված քառանկյունն վանդակի կեներում, ըստ ուղղահայաց և հորիզոնական սյունակների, գրում են յերկու գամետների բովանդակությունը. Այդպիսով յուրաքանչյուր վանդակի կեներում գրված կլինի առաջ յեկած անհատի գենոտիպը Ստացված տվյալների հիման վրա կարելի յեւ մակարերել համապատասխան ֆենոտիպերը: Ցանկալի յեւ յուրաքանչյուր վանդակի կեներում առանձնիկի գենոտիպը գրել կոտորակի ձևով, որինակ՝

$$\frac{\text{Ar}}{\text{AR}} \quad (\text{կարելի յեւ գրել նաև ուղղակի } \frac{\text{Ar}}{\text{AR}})$$

Վորովինետ A և R գեները գերիշխող են, բնական ե, վոր հոմոզիգոտները և հետերօգիգոտներն ըստ A-ի և R-ի ֆենոտիպով (արտաքինով) միատեսակ կլինեն: Պեննետի վանդակի կեների հաշվարկումը ցույց է տալիս, վոր ըստ ֆենոտիպի կոտացվի հետեւյալ հարաբերությունը՝ 9AR:3Ar:3aR:1ar:

Դամետներ Փ-ից		AR	Ar	aR	ar
Դամետներ Ծ-ից		AR	Ar	aR	ar
AR		AR AR	Ar Ar	aR AR	ar AR
Ar		AR Ar	Ar Ar	aR Ar	ar Ar
aR		AR aR	Ar aR	aR aR	ar aR
ar		AR ar	Ar ar	aR ar	ar ar

Վանդակի կներում ստացված 26 տիպի որինակով կրկին կարելի յե համոզվել գենոտիպի և արտաքին տեսքի (ֆենոտիպի) միջև յեղած տարրերության մեջ։ Արդարեւ, նորմալ ներկված, բրդավոր կենդանիների $\frac{AR}{AR}$ մասում պատահում են գենոտիպային տարրեր առանձնիկ-ները $\frac{AR}{AR}$ և $\frac{AR}{ar}$ առանձնիկներն ըստ ֆենոտիպի միատեսակ են, ուստի այսպիսի նրանցից առաջինը յերկու գեներով ել հոմոզիգոտային և և իր նմանների հետ տրամախաչվելիս միշտ միատեսակ սերունդ կտար դուռ կլինիք իսկ յերկրորդը՝ $\frac{AR}{ar}$ -ը, նույնպիսի $\frac{AR}{ar}$ -ի հետ տրամախաչվելիս հաջորդ սերնդում կճեղքվի և' ըստ բրդի գունի, և' ըստ նրա յերկարության գենի։

Ուրեմն, պարզ է, վոր $\frac{AR}{ar}$ առանձնիկի ֆենոտիպը չի համընկնում նրա գենոտիպի հետ։

Անհրաժեշտ և նկատի ունենալ, վոր $9:3:3:1$ հաբարերությունը ճիշտ և միայն այն գեղքերում, յերբ յերկու հատկանիշներն ել կատարելապես դերիշվում են։ Այն գեղքում, յերբ գերիշխումը լիակատար չի, հետեւ բողոքուային անհատներն իրենց արտաքին տեսքով կտարը բրդենքին հոմոզիգոտներից։ Այն ժամանակ F_2 -ում ավելի շատ խմբեր կտացվեն։


Անկախ բաժինման կանոնի բռնըսումային եկմնագործումը.— F_2 գեների անկախ բաժինման այն յերկույթը, վորն առաջադրել և Մենդելը վորպես յերրորդ կանոն, շատ հեշտ է համկանալ, յեթե վերհիշենք, վոր՝ 1) գեները գտնվում են քրոմոսոմներում և

2) առանձին քրոմոսոմներ կարող են ազատորեն համակցվել միայն՝ զամենաներ կազմվելիս։

Նախորդ գլուխ 27-րդ նկարում ցույց երին տրված սեռական 16 համարավոր բջիջներ՝ հայրական և մայրական քրոմոսոմների զանազան համակցումներով, նրանք կարող են ստացվել միայն այն պատճառով, վոր յուրաքանչյուր քրոմոսոմ ինքնուրույն ամբողջություն և կազմում, Քրոմոսոմների թիվը կրկնապատիկ նվազելիս (ուղղուկցիան) մի դույրից զամենառում մնացած քրոմոսոմը կարող է զուգակցվել մյուս զույգերի յերկու քրոմոսոմներից ամեն մեկի հետ։ Քրոմոսոմների հառվարիդ խումբը պարունակում է տվյալ դիպլոտիդ կոմպլեքսի քրոմոսոմների յուրաքանչյուր զույրից մեկական քրոմոսոմի քրոմոսոմին պատահական համակցումը։

Եեթե զեները դասավորված են զանազան քրոմոսոմներում, ապա քանի վոր զանազան զույրերի քրոմոսոմներն ազատորեն համակցվում են միմյանց հետ, ուրեմն զեները ևս կհամակցվեն ազատորեն։

Խոչպես վոր վերը, մոնոհիբրիդային տրամախաչման ժամանակ, աենք հետևեցինք մի զույգ քրոմոսոմի ժառանգման ընթացքին, որի հիբրիդային տրամախաչման ժամանակ պետք է հետևել յերկու զույգ քրոմոսոմների ժառանգման ընթացքին: Մի զույգում գտնվում են գունավոր և սպիտակ բրդի ալելոմորֆ գեները, իսկ մյուս զույգում՝



նորմալ բրդի և ոեգոսի գեները: 41-րդ նկարում պատկերված և ժառանգման սքեմը՝ սկսած P-ից մինչև F₂-ը:

F₁-ի յուրաքանչյուր հետերօգիտային առանձնիկը ունդուկցիոն բաժանումից հետո կարող է տալ զամետների չորս տիպ, վարոնք F₂-ում տալիս են Պեննեսի վերոհիշյալ վահզակիկին համապատասխանող տասնվեց կոմբինացիա:

Մենդելի յերրորդ կանոնն հայրում պահպան զույգերում դաշնվող գեների ժառանգման կանոնը Մեր բերած դինիբրիդային տրամախաչումը ներկայացնում է այդպիսի ժառանգման ամենապարզ դեպքը: Ստորև մենք բերում ենք ավելի բարդ դինիբրիդային դեպքեր, սակայն հատկանիշների յերեք, չորս և այլն զույգ վերցնելիս ել Մենդելի յերրորդ կանոնն իրուժը կազմականի միայն մեզ պայմանով՝ յեթե տվյալ

Նկ. 41. Յերկու զույգ քրոմոսոմների ժառանգումը՝ դինիբրիդային տրամախաչման ժամանակ՝ (ըստ Սիննոտ-Դեննի):

հատկանիշների դեները գտնվում են իրար դաշնագան զույգերի քրոմոսոմներում: Նրանց բոլորի համար հիմք է ժառանգում գեների յուրաքանչյուր զույգում տեղի ունեցող մոնոհիբրիդային ճեղքումը:

Դիմիրբիդային անալիզով սրամախաչում. — Անալիզով տրամախաչումը դիմիրբիդային լինելու գեղքում ևս ունի մի շարք արժեքավոր առանձնահատկություններ. Բ, որ անհատը հետերոգիդուտային լինելով իր յերկու գեներով ($\frac{A}{a} \frac{B}{b}$), տրամախաչվում և կրկնակի ռեցեսիվիկ ($\frac{a}{a} \frac{b}{b}$) հետ Թանի վոր նա տալիս և գամետների չորս տիպ՝ (AB, Ab, aB և ab), իսկ կրկնակի ռեցեսիվը միայն մի տիպ (ab), ոպա F₁-ում (սովորաբար այդպիս են նշում հետադարձ տրամախաչումը) ստացվում են հաջորդների բոլոր չորս կատեգորիաները ($\frac{AB}{ab}$, $\frac{Ab}{ab}$, $\frac{aB}{ab}$, $\frac{ab}{ab}$) հավասար թվով, այսինքն՝ ճեղքումը կատարվում

ե 1:1:1:1 հարաբերությամբ:

Եթերլուծող արտամախաչումով ստացված հաջորդների 1/4-ը կունենա յերկու ռեցեսիվ գեն հոմոզիգոտային վիճակում: Իսկ F₂ ստացվելիս հոմոզիգոտային վիճակում յերկու ռեցեսիվ գեն ունեցող անհատները (վորոնք կոչվում են նաև կրկնակի ռեցեսիվներ) կկազմեն հաջորդների միայն 1/16-րդ մասը: Այսուղից պարզ է, վոր անալիզով տրամախառումն ավելի վորոշակի արդյունքներ կտա, յեթե կենդանիների թիվն ավելի պակաս լինի, քան դանանջվում և յերկրորդ սերընդում ճեղքում ստանալու համար:

Նոր գոյացումներ դիմիրբիդային սրամախաչման ժամանակ: Հավերի կատարելիք. — Մենդելի ստացած 9:3:3:1 հարաբերությունը կլասիկ հարաբերություն և Սակայն զա լինում է միայն այն ժամանակ, յերբ յերկու հատկանիշներն ել ցույց են տալիս լիակատար գերիշխում և, ինարկե, միայն F₂-ում կամ ընդհանրապես յերկու դինետերօգիդումների տրամախաչման ժամանակ: Իսկ յեթե հետերոգիդուունները մեկական գենով կամ յերկու գենով ել տրաբերվում են հոմոզիգոտները, խմբերի թիվը համապատասխանորեն ավելանում է:

Բացի դրանից, դիմիրբիդային տրամախաչման դեղքում յերկրորդ սերնդում քանակական հարաբերությունները կարող են փոխվել նույն այլ պատճառներից: Մի շաբթ գեղքերում յերկու գենն միասին դործելիս տալիս են բոլորովին այլ արդյունք, քան տալիս են առանձին դործելու ժամանակ: Պատճառում և, վոր միենույն հատկանիշը կտիտված և մի քանի այնպիսի գեններից, վորոնց գործողությունը կարող է լինել միատեսակ և վոչ միտակեսակ: Կոնկրետ որինակներով ավելի հեշտ և ըմբռնել այդ գեղքերը:


Ամենահայտնի տվյալների շարքին են պատկանում անգիտացք գիտականներ՝ Պեննիսի լեկ Բեսորնի հին ավյալները հավերի կատարի

ձևերը ժառանգելու մտսին Հայտնի յէ կատարի յերեք ձև՝ վարդաձե, վոլոսաձե (կամ պատճճաձե) և հասարակ, վորոնք կաղմում եյին յերկու դույզ ալլելոմորֆներ՝ վարդաձեր (R) գերիշխում եր հասարակի վրա (1) և վոլոսաձեր (P)³ հասարակի (p) վրա: Դրանից հետեւմ ի, վոր հասարակ կատարի Փորմուլն անպայման պետք և պարունակի յերկու գեն՝ r և p հոմոզիգոտային վիճակում որպ, վարդաձեր պետք ելինի RRPp և վոլոսաձեր՝ rrPP:

Վարդաձե կատար ունեցող հավերը RRPp հասարակ կատար ունեցող աքաղաղների հետ տրամախաչելիս առաջին սերունդը ներկայացնում եր հետերոզիգոտային Rrpp և նմանապես ուներ վարդաձեկատար (նկ. 42):

Այստեղ թ գենը վոչ մի նշանակություն չուներ, վորովհետև այդ գենով յերկու ծնողներն ել միատեսակ եյին Յերկու հետերոզիգոտային Rrpp × Rrpp, իրաք հետ տրամախաչվելիս տեղի կունենա մեղքում ըստ R գենի, և գարձյալ առաջ կզան հասարակ կատար ունեցող հավեր ու աքաղաղներ, նրանց գենոտիպը կլինի որք: Նույնը տեղի կունենա

վոլոսաձե և հասարակ կատարներ ունեցող թոշունները տրամախաչելիս: Ամբողջ F₁-ը կունենա վոլոսաձե կատարներ, իսկ F₂-ում կըստացվեն $\frac{3}{4}$ վոլոսաձե և $\frac{1}{4}$ հասարակ հաջորդներ:



Նկ. 42. Վարդաձե և հասարակ կատար ունեցող հավերի տրամախաչումը (Երուցիք, ըստ Դերբեշյաբ)

Սակայն յերբ տրամախաչվեցին յերկու ցեղեր, վորոնցից մեկն ուներ վարդաձե, իսկ մյուսը՝ վոլոսաձե կատար (նկ. 43), ստացվեցին բոլորպին անսպասելի արգլունքներ: F₁-ի բոլոր թոշուններն ունեյին մի նոր ձև, այն են ընկուղաձե կատար, վորը հատուկ և առանձին փոփոխակին՝ մալայան հավերին:

Այդպիսի ընկուղաձե կատար ունեցող F₁-ի յերկու առանձնիկ տրամախաչվեցին միմյանց հետ Յերկորդ սերնդի թոշուններն ունեյին կատարի չորս տիպ. ծնողների կատարները՝ վարդաձե ու վոլոսաձե, նոր առաջացած՝ ընկուղաձե և, վերջապես, անսպասելի կերպով յերեան յեկավ հասարակ կատարը: Այդ կատեղորիաներն ունեյին թվական հետեւյալ հարաբերությունները՝ $\frac{9}{16}$ ընկուղաձե, $\frac{3}{16}$ վարդաձե,

Այդպիսի հարաբերությունը բնորոշ և այն արդյունքների համար, վորոնք սպասվում են յերկորդ սերնդից՝ յերկու գենով ատրքեր-

վոր ծննդների տրամախաչումից: $\frac{3}{10}$ դասի մեջ մտնող բոլոր գեները պետք ե կրեն 2-ական գերիշխող գեն: Ակնհայտութեն ընկուղաձև կատար ե ստացվում այն գեղքում: յերբ համախմբվում են միասին R և P գեները: Վոր այդ արդպես ե, յերեսում ե F₁-ից, վորը պետք ե հետերոդիպոտային լինի յերկու գենով ել՝ թէ ծնողներից մեկից ստացված R գենով ե թէ մլուսից ստացված P գենով: Արգարեք F₁-ի բոլոր առանձնիկներն ունեն ընկուղաձև կատարներ: Դիմիրը բիտային տրամախաչման գեղքում F₂-ի $\frac{1}{16}$ -րդ մասը կրում է յերկու ուցեսիվ գեները հոմոզիգոտային վիճակում: Վորովհետեւ հաստատակ կատար ունեցող հավեր ստացվեցին $\frac{1}{16}$, նշանակում ե նրանց փորմուլը պետք ե լինի որք: Այդ հաստատվում ե նաև հետագայում նրանց իրար հետ տրամախաչելիս.


հաջորդ սերունդներն ունենում են
բացառապես հաստատակ կատար-
ներ:

Մի հայացք զցելով վերոհիշյալ
տրամախաչման համար Պետեհի
կառուցած վանդակի վրա, մենք
խսկույն կհամոզվենք, վոր նա կա-
տարելապես նման է դիմիրը բիտա-
յին տրամախաչման համար վեր-
գած աղյուսակին: Խնչպես ե դիմիր-
ը բիտային տրամախաչման սովորա-
կան գեղքում, մենք տեսնում ենք
այստեղ գեների անկախ բաշխումը
գամետներ կազմվելիս և գամետ-
ների ազատ համակցումը:

Այստեղ առանձնահատուկ ե

միայն այն, վոր F₁-ում յերեան ե գալիս մի բոլորովին նոր հատկա-
նիք, և ապա F₂-ում յերեան ե գալիս յերկրորդ հատկանիշը: Դրանցից
առաջինը՝ ընկուղաձև կատարը, առաջ ե գալիս մի առանձնիկում վոր-
պես արդյունք յերկու գերիշխող գենների համակցման, իսկ յերկրորդը՝
վորպես արդյունք յերկու ուցեսիվ գենների համակցման: Յերկու գե-
ներն ել ազգում են կատարի գարգացման վրա և նրանց փոխներգուծ-
ման արդյունքն ե լինում հատուկ ձեռվ կատարի առաջ գալի: Սակայն
թվական հարաբերությունների առանձնահատից վոչ մի չնդում չկա՝ ստաց-
վում ե նույն 9 : 3 : 1 հարաբերությունը:

Հարաբերությունների բարգացումը դիմիրը բիտային տրամախաչման
դեպքում 9 : 3 հարաբերությունը համեմ մնա: Լրացրացից գեներ: — Հայոնի
յին դիմիրը բիտային տրամախաչման այլ գեղքեր, յերբ հաջորդների



Նկ. 43. Վորովածեկ վարդաձև կատար ունեցող հավերի տրամախաչումը: Առաջին սերնդում ընկուղաձև կատար, յերկրորդում կատարեք չորս ձեռ 9 : 3 : 3 : 1 հարաբերությունը (Դրույգ՝ ըստ Շերբենյայի):

անսպասելի տիպերի առաջ դալու հետ միասին փոխվում են նաև նրանց թվական հարաբերությունը Թնօսը յեվ Պենմետն սպիտակ հավերի յերկու ցեղերը տրամախաչելիս անսպասելի կերպով ամբողջ առաջին սերունդը գունավոր ստացան Հետագայում այդ հավերն իրար հետ արամախաչելիս F₂ սերունդը բաժանվեց յերկու խմբի՝ գունավոր և սպիտակ հավերի: Առաջինները կազմում եյին F₂ 9/16-րդ մասը, իսկ յերկրորդները՝ մոտ 7/16-րդ մասը, այսինքն՝ ստացվել են նոր հարաբերություն՝ 9:7: Այդ արդյունքը բացատրելու համար յելակետ ընդունվեց այն յենթազրությունը, թե գոյություն ունեն գեների յերկու անկախ գույքեր: Գունավոր թուզունների 9/16-րդ մասը պետք է կրի յերկու գերեշնող գեներն ել. դրանք նշանակեցին C և P տառերով: Խոկ ինչ վերաբերում են մնացած 7/16-րդ մասին, ապա նա պետք է պարունակի 3+3+1=7 նարմուկի մնացած մասը և այդ խումբը պարունակում են առանձնիկներ, վորոնք ունեն կամ յերկու դոմինանտ գեներից մեկը կամ միայն մի սեցեսիվ գեն: Դրանից կարելի յենթեցնել թե յելակետային ծնողական ցեղերը սպիտակ եյին, վորովհետո նրանցից ամեն մեկը կրում եր յերկու ցեներից մեկը՝ կամ C-ն, կամ P-ն: Խոկ յերը դրանք տրամախաչեցին իրար հետ, հիբրիդն ուներ այդ յերկու գեներն ել վորոնք միասին գույն եյին տվեր: Այդ հիպոթեզը հետագայում լիովին հաստատվեց հաջորդ սերունդների վիրուժամամբ: Խնչպես աեսնում ենք, C և P գեների ներգործումը շատ յուրատեսակ են նրանցից ամեն մեկը ջոկ-ջոկ չի կարող գույն առաջացնել, սակայն միասին նրանք առաջ են բերում մի նոր հատկանիշ: Դա արտաքուստ հիշեցնում է քիմիական մի քանի ռեակցիաներ, յերբ յերկու անգույն նյութերի միացումից ստացվում և գունավոր նյութ: Բույսերի մեջ պիգմենտների գոյացման ուսումնասիրումը ցույց է տալիս, վոր գույնը կախված է յերկու (կամ ավելի) տարբեր նյութերի միացումից, դրանցից մեկը հանդիսանում է գույնի հիմքը՝ քրոմոգեն, իսկ մյուսը՝ ակտիվատոր (ենզիմ): Պիգմենտը կառող է կազմվել միմիայն յերկու նյութերն ել լինելու դեպքում: Այդ հիման վրա դժվար չեն ընդունել, վոր, որինակ, C գենը լինելու դեպքում կազմվում են թեկուզ քրոմոգեննը, իսկ P-ն լինելու դեպքում՝ ենզիմներ: Այդ յերկու գեներն ել լինելու դեպքում կարող է պիգմենտ ստացվել:

Հարաբերությունների բարգացումը դիմիրիդային սրամախաչման վեպերում: Խափսագ յեվ Կրիպտոմերիա: —Մի քանի գեղքերում, դիմիրիդային տրամախաչման ժամանակ սովորական հարաբերությունները խախտվում են եպիստոպ կոչվող յերեւյթի պատճառով:

Յերեւմն պատահում են, վոր զանազան ալլեմորֆ գույգերին պատկանող, բայց վորեւ մի հատկանշի վրա ապդող յերկու տարրեր գեներ

ունենաւմ են այն առանձնահատկությունը, վոր նրանցից մեկի ներդործումը թագցնում կամ, ինչպես ասում են՝ ծածկում և մլուսի ներդործումը Մենք զբանք նաև, վոր զոմինանու զենը չի թողնում, վոր ուցեսիվ գենը յերեսն դա: Աւատի եպիստաղ կոչվող յերեսույթն արտաքուստ նման է դերիշխմանը, սակայն զրանց և յական տարրերությունն այն է, վոր գերիշխումը գորություն և ունենում միւնույն զույգերին պատկանող գեների, այսինքն ալլելոմորֆների մեջ, իսկ եպիստաղը՝ զանազան ալլելոմորֆային զույգերի պատկանող գեների մեջ: Այն գենը, վոր խոչընդոտ և հանդիսանում մյուսի ներգործմանը, կոչվում է եպիստատիկ գեն այդ յերկրորդի նկատմամբ, իսկ ծածկված գենը՝ հիմուստատիկ:

Եպիստաղ լերեսույթով և բացատրվում հավերի մեջ ստացված 13:3 սխալ հարաբերությունը Սպիտակ վիանդուները և սպիտակ լեղահորները միմյանց հետ տրամախաչվելիս ստացվում են սպիտակ հաներ՝ փոքր և բժերով: Այդ սպիտակ թռչուններն իրար հետ տրամախաչվելիս ստացվում են F₁, վորի 13/16-րդ մասը կազմում են սպիտակ և փոքր պիսակներ ունեցող սպիտակ ճաներ, իսկ 3/16-ը՝ զունավոր ճաներ: Յենթագրություն կար, թե յերակետային ձևերը տարրերվում եյին 14 C գեններով Ըստ սմին C-ն հանդիսանում է զույնի գեն (C զույնը զարգանում է, իսկ և զույնը չի զարգանում), իսկ 1-ն՝ զույնի զարգացումը ճնշող գեն: Այդ հիպոթեզի համաձայն՝ սպիտակ լեպիորները ներկայացնում են 11CC, այսինքն՝ ունենալով վույնի գերիշխող գեն հոմոզիգոտային վիճակում, նրանք չեն դրսեռում այդ գենը, շնորհիվ 1 գենի ներկայության:

11CC×11CC-ի տրամախաչչումից մենք ստանում ենք F₁:

11CC—սպիտակ (պիսակներով):


F₁ ճաները տալիս են գամետների չորս տիպ, այն եւ 1C, 1c, iC, և iC: F₂, ստանալու համար հարկավոր և կառուցել Պեննետի սովորական վանդակիկու:

Դամետներ ♀-ից		IC	Ic	iC	ic
Դամետներ ♂-ից		IC	Ic	iC	ic
IC	IC	1C	1c	iC	ic
	Ic	1C	1c	iC	ic
Ic	IC	le	le	iC	ic
	Ic	le	le	le	le
iC	IC	le	iC	iC	iC
	iC	iC	iC	iC	iC
ic	IC	1C	1c	iC	ic
	IC	1C	1c	ic	ic

Այն բոլոր գեղաքերում, յերբ ներկա յի և գենը, նա ճնշում է պիդմնատի զարգացումը Նրա եպիստատիկ ներգործման պատճառով նկատելի չենի ըստ C-ի կատարված ճեղքումը Միայն ներքեւ աջ անկյունի և վանդակի ներում կա և գենը հոմոզիգոտային վիճակում: Այդ գեղաքում նրանցից Յ-ի մեջ կդրսելորվի C-ի ներգործումը Սպիտակ ԱՀ հավը (վոր պատկերված և Ք-վանդակի կում) արտաքինով նման է մրուս սպիտակներին, բայց ըստ գենոտիպի տարբերվում է նրանով, վոր ունի վոչ թե և գենը, այլ նրա ալելումորֆը՝ և-ն, իսկ գույնի բացակայությունը վորոշում է Ը գենը:

Այդ հանգամանքը մթագնում է ճեղքման պատկերը, տալով 13:3 հարաբերություն: Իսկ սովորաբար եպիստազի ժամանակ ստացվում է 12:3:1 հարաբերությունը:

Եպիստազի մի տեսակն է հանդիսանում կրիպտուերիան: Նրանց արբերությունն այն է, վոր եպիստազի ժամանակ ճնշող և հանդիսանում գերիշտող գենը ($A > B$), իսկ կրիպտոմերիայի ժամանակ՝ սեցեսիվ



Նկ. 44. Գորշ և սպիտակ մկան արամախաչումը Յերկորդ սերնդում ստացվում է 9:3:4 հարաբերությունը (ըստ Գոլդմիդտի)

գենը ($A > B$): Որինակ՝ ճագարի ալրինիզմի գենը հոմոզիգոտային լինելու դեղքում մրուսները՝ գույնի գեները չեն դրսելորվում, վորի պատճառով միանում են դիմիրիդային ճեղքման կատեգորիաները՝ ՅաՅ+ՅաՅ, այսինքն՝ ստացվում է 9:3:4 հարաբերությունը: Մկների վերաբերմամբ այլպիսի որինակ պատկերված է 44-րդ նկարում: Այդ պիսով մեր բերած հարաբերությունը՝ 13:3-ը ներկայացնում է եպիստազի և կրիպտոմերիայի կոմբինացիան:

Հարաբերությունների բարդացումը դիմիրիդիային առաջախաչման դեպքում Դավիթիկառային գևաներ: 15: 1 հարաբերությունը. —Այդպիսով F₂ սերնդում մի քանի խմբերի միացման արդյունքն են լինում զանազան շեղամմեր՝ դիմիրիդային նեղքման դեպքերում: Մի որինակ ևս հանգիստում ե 15: 1 հարաբերությունը: Դրա վրա պետք է կանգ առնել թերթում նաև նկատվում ե վոչ թե կենդանիների, այլ բույսերի մոտ:

Մատապաշար (հովվամախաղ) կոչվող հանրածանոթ մոլեխուտն ունի յերկու ցեղ՝ տարբեր ձեեր պառուներով: Մի ցեղի փոճոկները յեռանկյուն են, իսկ մյուսինը՝ ձվաձեւ: Ենթիլ տրամախաչել ե այդ յերկու ցեղերին պատկանող բույսերը F₁ բույսերի մեջ զարգանում են յեռանկյուն փոճոկիկներ: Այդ հատկանիշը զերիշխում ե ձվաձեւ փոճոկիկի վրա: Իսկ յերկրորդ սերնդում յեռանկյուն փոճոկիկի ունեցող բույսերի թիվը 15 անգամ ավելի յե, քան ձվաձեւ պտուղ ունեցող բույսերինը, այսինքն՝ ստացվում ե 15: 1 հարաբերությունը: Հետագայում ձվաձեւ փոճոկիկներ ունեցող բույսերը զարգանում են զուտ զծով: Յեռանկյուն փոճոկիկներ ունեցող բույսերի մեջ ևս մի մասը տալիս ե զուտ սերունդ, իսկ մյուսները կտան յեռանկյուն և ձվաձեւ նդատված սերունդ: Սակայն ընդունին մի քանիսը յեռանկյուն և ձվաձեւ փոճոկիկով բույսեր կտան 3: 1 հարաբերությամբ, իսկ մյուսները՝ 15: 1 հարաբերությամբ:

Այն միակ բացառությունը, վոր հնարավորություն ավեց ըմբռնելու այդ արդյունքները, հանդիսացավ այն յենթագրությունը, թե այստեղ ևս մասնակցում են յերկու զույգ գեներ: Այդ հաստատվում ե և նրանով, վոր ունեցեսիվ ձեերն ստացվում են ամբողջ F₂-ի $\frac{1}{16}$ մասի չափով և վոչ թե $\frac{1}{4}$ -ի չափով: Այդ սեցեսիվ ձեերին խկույն կարելի յե վերագրել Ըստ կառուցվածքը: Յեզ այն ժամանակ պետք ե ընդունել, վոր 15 խմբակը միացնում ե 9, 3 և 3, այսինքն՝ փոճոկիկի յեռանկյուն ձեր կազմվում ե ինչպես միմիայն Ըստ կամ Ծ-ով, այնպես ել Ծ-ով ու Ծ-ով միասին:

Քննելով այն վանդակիկը (նկ. 45), վորի վրա պատկերված են արածախաչման (F₂) արդյունքները, կարելի յե պարզել թե ինչն յեռանկյուն պտուղ ունեցող բույսերի հետագա բազմացումը միատեսակ չի ընթանում: Զե՞ վոր այն առանձնիկները, վորոնք հոմոզիգոտային են Ծ-ով, Ծ-ով, կամ միաժամանակ այդ յերկու հատկանիշով միասին, յերբեք չեն կարող տալ ձվաձեւ պտուղ ունեցող հաջորդներ: Իսկ յեթե բույսը կը ունի ևս պտղի յեռանկյունաձեռնության միայն մի գործոն, հետերոզիգոտային վիճակում, որինակ՝ յեթե ունի Ըստ կառուցվածքը, ապա այդ գեպքում կարող են համակցվել յերկու փոքր տասեր ունեցող գամետներ CD+CD, վորոնք կտան ձվաձեւ պտուղ ունեցող բույս: Ըստամին սեցեսիվ բույսերը կազմեն F₂-ի $\frac{1}{4}$ մասը: Իսկ յերկու զործոնով ել հետերոզիգոտային հանդիսացող բույսերը (CcDd),

ինչպես և F_1 բույրը իրենց հաջորդների մեջ կրկնակի ռեցեսիվներ կունենան միտյն՝ լափով:

Այս գեպքը հետաքրքիր և նրանով վոր վոչ միայն յերկու գեն ներգործում են որդանիզմի մի հատկանշի վրա, այլև միանգամայն հավասարապես փոխում են այդ հատկանիշը Խնձպես Ը-ն, այնպես ել Ը-ն առաջ են բերում պողի յեռանկյուն ձեր. Այդպիսի գեները կոչվում են դուպլիկատային: Դրանց մասին մենք կրկին կիսունք ստորև, բանական հատկանիշներին վերաբերյալ գլուխում, «պոլիմեր»

$Cd \rightarrow$	$Cd - Cd$	$Cd - Cd$	$Cd - Cd$	$Cd - cd$
$Cd \rightarrow$	$Cd - Cd$	$Cd - Cd$	$Cd - Cd$	$Cd - cd$
$Cd \rightarrow$	$cd - Cd$	$cd - Cd$	$cd - Cd$	$cd - cd$
$cd \rightarrow$	$cd - Cd$	$cd - Cd$	$cd - Cd$	$cd - cd$

գեների գոյության
կապակցությամբ, վո-
րոնք նույնպես ներ-
գործում են մի հատ-
կանշի վրա, ըստց
գործարում են իրենց
ներգործումբ:


Տրիիկրիդնեւր, Պալի-
իկրիլումնեւր.—Ծերկու ա-
ռանձնահատկություն
ներով տարբերվող ձե-
զերի տրամախաչու-
մից ստացված ար-
դյունքները քնննելուց
հետո բնականորեն
հարց և ծագում, թէ
ինչ հարաբերություն-
ներ կստացվեն յիրեք
հատկանիշներով տար-
բերվող առանձնիկ-
ները տրամախաչելիու

(տրիէիբրիգային տրամախաչում): Դրան պատասխան եր տվել դեռ Մենցիլը: Այդ գեպքում ստացվում են ավելի բարդ հարաբերություններ, սակայն այստեղ ևս պահպանում ե իր ուժն անկախ բաշխման կանոնը: Գեների անկախ բաշխումը տեղի կունենա այն գեպքում, յեթև նրանք գտնվեն զանազան քրոմոսոմներում: Փորձենք վերլուծել այդ գեպքը: Եթենիտագրենք, վոր տրամախաչվում են յերկու կենզանիներ՝ մեկը հօմոզիգոտային ե, յերեք՝ գերիշխող գենով հետեւաբար ունի AABBCC կառուցվածքը, յերկորդը հօմոզիգոտային ե յերեք ուցեսիվ գեներով ունի աabbcc կառուցվածքը: Առաջինը տալիս ե միայն մի տիպի գամետներ՝ ABC, իսկ յերկորդը տալիս ե abc: Դրանք միանալու դեպքում առաջին սերնդի բոլոր առանձնիկները հավասարապես

հետեւողիզուային կլինեն յերեք գեններով՝ Aa Bb Cc; A, B և C գենների կատարելապես զերիշխման զենդրում առաջին սերնդի բոլոր առանձնիկները նման կլինեն զերիշխող ծնողական ցեղին։ Իսկ այս կամ այն դենք վոչ կատարյալ զերիշխման զեպքում առաջին սերունդը (F₁) համապատասխանորեն կտարերպի, ձգտելով ավելի միջանկյալ հատկանիշ ստանալ ըստ տվյալ զույգի հատկանիշների։

Հասկանալու համար, թե ինչ կատեղորիսաներ կտացվեն յերկրորդ սերնդում, պետք է մանրամասնորեն պարզել AaBbCc հետեւողիզուային անհատի կազմած գամետների տիպերը։

Դեների ըստ հնարավորության ազատ համակցման պատճառով զույգի յուրաքանչյուր անդամ կարող է համակցվել այլ զույգերի ամեն մի անդամի հետ։ A գենը կարող է համակցվել և՛ B-ի, և՛ և՛ և՛ հետ։ Միանալով B-ի հետ՝ նա կարող է այնուհետև համակցվել կամ C-ի, կամ C-ի հետ։ Բոլոր հնարավոր կոմբինացիաները կրղիսեն հիտեյալ գծանակարից (սլաքները ցույց են տալիս դեների հնարավոր կոմբինացիաները գամետում)։



Այդպիսով AaBbCc ձեր կարող է տալ ութը գամետ՝ ABC, ABC, AbC, ABC, aBC, aBc, abC և abc։ Այժմ մնում է զծագը կոմբինացիաների վանդակը։ Նրա վերև և ձախ կողմում պետք է գրել գամետների այդ ութը տիպը։ Կտացվի 64 վանդակիկ։

Ցուրաքանչյուր ընթերցող կարող է ինքը վանդակներում դասավորել ստացվող բոլոր 64 զիգոտները։ Այդ զիգոտներից շատերը, ինչպես և գիշերը կտային F₂-ում, միասնակ կլինեն իրենց գենուտիպով։ Իսկ մի քանիսը, չնայած զենոտիպերի տարրերության, չեն տարրերը վիճակներից իրենց արտաքին տեսքով ֆենոտիպով։ A, B և C հատկանիշների լիակատար զերիշխման զենդրում F₂-ում կտացվի ըստ ֆենոտիպի 27 : 9 : 9 : 3 : 3 : 3 : 1 հարաբերությունը, վոր բնորոշ և տրիհերերիդ տրամախաչման համար։ Հարաբերությունը համապատասխանորեն կրաքանակ և կփոխվի, յեթե վորեն հատկանշի գերիշխումը լիակատար չլինի, կամ յեթե տվյալ գեների համակցման մի առանձին եփեկտի շնորհիվ տեղի ունենա վորեն այլ շեղում։

Կարելի յեւ տրամախաչել չորս և ավելի հատկանիշներով տարրերվող

առանձնիկները: Այս ժամանակ յերկրորդ սերնդում ճեղքում ավելի
բարդ կլիմի Առանձին սերնդի յուրաքանչյուր ներկայացուցիչ—հե-
տերոգիգոտ AaBbCcDd-ն, ունենալով չորս գեն, կտա գամետների
տասնվեց տիպ: Դրանց իրար հետ համար կցվելու հետևանքով յերկրորդ
սերնդում կստացվեն 256 զանազան գենետիկական կոմբինացիաներ: Թեպետ
գործնական կյանքում տրամախաչվում են այնպիսի առանձ-
նիկներ, վորոնք տարբերվում են միմյանցից ավելի քան չորս հատ-
կանշով, բայց սովորաբար այդպիսի դեպքերում շատ սակավ է կիրառ-
վում գենետիկական անալիզը: Չե վոր չորս գեն լինելու դեպքում յերկրորդ սերնդում բոլոր գասերի առաջ գալուն հետեւյու համար
պետք է շատ մեծ թվով F_2 ստանալ: Մոնունիբրիդային տրամախա-
չումից ստացված F_2 -ում զուտ սեցեսիֆիլսերի խումբը կազմում է բոլոր
տրանձնիկների $\frac{1}{4}$ մասը, դիմիքրիդային խաչաձևան դեպքում $\frac{1}{16}$
մասը, տրիմիքրիդային տրամախաչման դեպքում $\frac{1}{64}$ մասը, իսկ տես-
րահիբրիդային (չորս գեն) տրամախաչման դեպքում՝ միայն $\frac{1}{256}$ մասը: Այստեղ պարզ է, թե վորքան շատ առանձնիկներ պետք է հաշ-
վել յերկրորդ սերնդում տեսրահիբրիդային տրամախաչման դեպ-
քում, վորպեսզի վորոշ հավանականությամբ հանդիպենք բոլոր չորս
սեցեսիվ գեններ ունեցող հոմոլիգուտային միակ առանձնիկի՝ ասեց-
մեծ-ի: Ուստի գործնական նպատակով հաճախ ցանկալի յի լինում
գտնել: Թե F_2 -ում ինչպիսի հաճախականությամբ յերեան կդա հատ-
կանիշների վորոնք վորոշ կոմբինացիա այնպես, ինչպես, որինակ՝ նոր
մատնանշված լիակատար սեցեսիֆիլսերի յերեան գալու հաճախականու-
թյունը: 1-ին աղյուսակում (տես եջ 105) բերված ե այս փոխարարերու-
թյունը, վոր գոյություն ունի տրամախաչվող գենների զույգերի թվի և
ըստ ֆինոտիպի ու գենոտիպի տարբերվող խմբերի թվի միջև Դրանից
հետևում է, վոր տվյալ տրամախաչմանը յենթարկվող հատկանիշների
թվի ավելացմանը զուգընթաց, շատ արագորեն ավելանում է հնարավոր
կոմբինացիաների թիվը F_2 -ում, իսկ ծնողական սեցեսիվ տիպի յերեան
գալու հավանականությունը, ընդհակառակը, նվազում է: Ակներեւ և, վոր
8—10 զույգ գենների մասնակցության դեպքում անհրաժեշտ են միլիո-
նավոր առանձնիկներ, վորպեսզի հնարավոր լինի անալիգել ստուգվող
առանձնիկների բոլոր տիպերը:

Կամբինատիվ (համեմակցական) փափսխականությունը յսկ նրա հօամակուրյանը.—Մենդելի որինաչափություններն ուսումնասիրելուց հետո պարզ է զառնում, թե ինչ է ներկայացնում կոմբինատիվ (համեմակցական) փոփոխականությունը, զորի մասին ընդհանուր գաղափար եյինք տվել 1-ին զվարում։ Տրամախաչման շնորհիվ, կոմբինացիաներ են ստեղծվում ծնողական ձևերի մտցրած բազմաթիվ գեների միջև։ Ընդհանին հաջորդների մեջ առաջ են գալիք հատկանիշների նաև այլպիսի

$S_{\mu \nu \alpha \beta} h^{\mu \rho} h^{\sigma \tau} h_{\rho \sigma} h_{\tau \beta}$	$g_{\mu \nu} g_{\alpha \beta}$	$g_{\mu \nu} g_{\alpha \beta}$	$g_{\mu \nu} g_{\alpha \beta}$	$g_{\mu \nu} g_{\alpha \beta}$
$\gamma^{\mu} \gamma^{\nu} h^{\rho \sigma} h_{\rho \sigma} h_{\mu \nu}$	1	2	4	8
$\gamma^{\mu} \gamma^{\nu} h^{\rho \sigma} h_{\rho \sigma} h_{\mu \nu}$	2	4	16	4
$S \gamma^{\mu} \gamma^{\nu} h^{\rho \sigma} h_{\rho \sigma} h_{\mu \nu}$	3	8	64	8
$S h^{\mu \nu} h^{\rho \sigma} h_{\rho \sigma} h_{\mu \nu}$	4	16	256	16
$S_{\mu \nu} h^{\mu \rho} h^{\sigma \tau} h_{\rho \sigma} h_{\tau \beta}$	n	2^n	4^n	2^n
<hr/>				
$g_{\mu \nu} g_{\alpha \beta} g_{\rho \sigma} g_{\tau \delta} g_{\mu \rho} g_{\nu \tau} g_{\alpha \delta} g_{\beta \sigma}$	1	2	4	$8 : 1$
$g_{\mu \nu} g_{\alpha \beta} g_{\rho \sigma} g_{\tau \delta} g_{\mu \rho} g_{\nu \tau} g_{\alpha \delta} g_{\beta \sigma}$	2	4	16	$9 : \frac{3:3}{2} : 1$
$g_{\mu \nu} g_{\alpha \beta} g_{\rho \sigma} g_{\tau \delta} g_{\mu \rho} g_{\nu \tau} g_{\alpha \delta} g_{\beta \sigma}$	3	8	27	$\frac{27}{1} : \frac{9:9:9}{3} : \frac{3:3:3}{1}$
$g_{\mu \nu} g_{\alpha \beta} g_{\rho \sigma} g_{\tau \delta} g_{\mu \rho} g_{\nu \tau} g_{\alpha \delta} g_{\beta \sigma}$	4	16	256	$\frac{81}{4} : \frac{27:27:27}{6} : \frac{9:9:9}{6} : \frac{9:9:9}{4} : \frac{9:9:9}{1}$
<hr/>				
$g^{\mu \nu} : g^{\alpha \beta} : g^{\rho \sigma} : g^{\tau \delta} : g^{\mu \rho} : g^{\nu \tau} : g^{\alpha \delta} : g^{\beta \sigma}$	1	2	4	8
$(a+b)^n : t^k m^n b^k : 1 : \dots : k m_j l^k : k m_j l^k : k m_j l^k : k m_j l^k$	2^n	4^n	8^n	3^n

խմբավորումներ, վարո՞նք տռաջ չեն յեղել Գևների յուրակերպ համակցման շնորհիվ կարող են ստեղծվել նաև այնպիսի հատկանիշներ, վորո՞նք յելակետային ձևերի մոտ չեն յեղել (ընկուզաձեւ և կատարի որինակը), Յեվ, ընդհակառակը, մի քանի համակցումների շնորհիվ, առաջ են գալիս հեռավոր նախաճայրերին հիշեցնող ձևեր (առաջ անհասկանալի ատավիզմը), Քրոմոսոմների համեմատարար փոքր թիվը նրանց մեջ գտնվող գեներով հիմք և ծառայում հազարավոր և միլիոնավոր կոմբինացիաների համար, այսինքն՝ գենետիկորեն տարրեր ձևերի համար։ Մրանից պարզ հետևում է, վոր բնության մեջ բավականին մեծ նշանակություն ունի կոմբինատիվ փոփոխականությունը, վորի մասին խոսելու յենք եվոլուցիային վերաբերող գլխում։ Կարելի յե մի շարք որինակներով ցոյց տալ նրա նշանակությունը նաև գործնական կամքի համար։ Մենցելի որենքները հայտնի լինելուց դեռ շատ առաջ պրակտիկ անասնաբուժներն ու բուսաբուժները լայն կերպով ոգտագործում եյին միմյանցից տարրերվող առամախաչումը և այդպիսով ստեղծում եյին կինդանների նոր ցեղեր և բույսերի նոր սորտեր։

Մենցելի որենքները բազա գարձան ժառանգականության ամբողջ գիտության համար։ Նրանից հետո սկսվեց կոմբինատիվ փոփոխականության գիտակցաբար գործադրումը գործնական նպատակներով, վորի որինակները շատ-շատ են բույսերի մշակության բնագավառում (ցորեն, ծխախոտ և այլն)։ Բայց մի շարք փաստեր հայտնի յեն նաև կենդանական աշխարհում, որինակ՝ հավի «զանտելլեր» նոր ցեղը և ուրիշները (տես սինտետիկ սելեկցիայի մասին վերջին գլխում)։ Այնուհանդեմ, կոմբինատիվ փոփոխականության խսկական ոգտագործումն անասնապահության նպատակների համար, մի ոգտագործում, վոր հիմնված լինի ժառանգականության որինաչափությունների խորը դիտության վրա, դեռ նոր և սկսվում, և նրա հեռանկարները նոր՝ սոցիալիստական տնտեսության պայմաններում կանգնած են մեր առջև իրենց ամբողջ ծավալով և վիթխարիությամբ։

Մենցելիխառական (հիբրիդաբանական) վերլաւծում. — Ժառանգականությունը կառավարել սովորելու, բազմապիսի արժեքավոր վորակներն ու հատկությունները մի ցեղում միացնել կարողանալու համար անհրաժեշտ և ուսումնասիրել ընտանի կենդանիների ժառանգականությունը։ Ժառանգականության այն կանոնները, վոր գուրս և բերել Մենցելի, հարավորություն են տալիս մոտենալու կենդանուն վոչ վորպիս մի ամբողջության, այլ վորպիս միմյանցից անկախ ժառանգվող առանձին գծերի, հատկանիշների գումարին կենդանու հատկությունները, ժառանգական առանձին տարրերի, «առանձին հատկանիշների» վերածման խնդիրները և այդ հատկանիշներին համապատաս-

իսանող գեների հատկություններն ուսումնասիրելու ինդիքները լուծում
ենք մի շաբթ փորձների, դիտումների և հաշվարկումների ոզնությամբ:

Այդ և գենետիկական վերլուծումը, Գենետիկական վերլուծման
առաջին աստիճանն և այսպես կոչված մենդելիստական (կամ հիբրի-
դորանական) վերլուծումը, յերբ նախ և առաջ պարզում են, թե որգա-
նիդմի հատկանիշներից և հատկություններից վորոնք են ժառանգ-
վում Մենդելի կանոնների համաձայն:

Վորոնք հատկության մասին գոյություն ունեցող սովորական
հասկացողությունը հաճախ շատ կոպիտ ու սխալ և լինում, վերը մենք
տեսանք հավերի կարծես յերկու միատեսակ հատկությունների՝ յեր-
կու սպիտակ գույների որինակը: Այդ գույների գենետիկական վեր-
լուծումը ցույց տվեց նրանց ժառանգական տարրերը բնությունը:
Պարզվեց, վոր զրանց վորոշմանը մասնակցում և վոչ թե մեկ, այլ
յերկու գեն:

Այնպիսի, կարծես, պարզ հատկանիշ ինչպիսին և մկան գորշ
գույնը, հիբրիդաբանական վերլուծման միջոցով տարրալուծվեց մի շարք
տառանձին հատկանիշների, այն և՝ «ընդհանրապես գույների առկայու-
թյունը», «զեղին պիզմենտի առկայությունը», «պիզմենտի սեա-
նալը» և այլն:

Ժամանակակից գենետիկայի տեսակեաից այդ պիզմենտներից
յուրաքանչյուրին համապատասխանում և իր գենը, ուստի գորշ գույնն
ստացվում և միայն այն դեպքում, յերբ միաժամանակ ներկա յեն
այդ բոլոր գեներն են:

Այս գլուում բերված բոլոր որինակներն ել փաստորեն մենդե-
լիստական վերլուծման որինակներ են: Վորոնք տեսակեաից միմյան-
ցից տարրերվող յերկու կենդանիների տրամախաչման ուսումնա-
սիրումը, F₁-ի, F₂-ի կամ հակառակ տրամախաչման ուսումնասի-
րումը հնարավորություն եր ավել հետեւթյուններ անելու, թե ինչ-
պիս և ժառանգվում կամ, ինչպիս ասում են՝ մենդելիում համապա-
տասխան հատկանիշը: Այժմ մենք դիտենք, վոր յեթե տրամախաչվող
կենդանիների տարրերությունը ժառանգական և, ապա յերկրորդ
սերունդը, Մենդելի կանոնների համաձայն, իր հատկանիշներով բա-
ժանվելու յի մի քանի խմբերի՝ թվական վորոշ հարաբերություն-
ներով:

Ժառանգութեանության վերաբերյալ մեր գիտելիքների ներկա
վիճակում մենդելիստական վերլուծումն անխուսափելիորեն հարաբե-
րական իմաստ ունի: Մենդելիումը կարելի յե յերեան բերել միմիայն այն
հատկանիշների նկատմամբ, վորոնք բացակայում են թեկուզ մի քանի
անհատներում: Տվյալ բոլոր կենդանիներում գոյություն ունեցող հատ-
կանիշը հնարավոր չե տարրալուծել առանձին «ժառանգական միավոր-

ներին, ինչպես և հնարավոր չե հետեւ նրա ժառանգական հաղորդական պրոցեսին: Սկզբում մի գենին վերագրվող հատկությունը հետագայում կարելի յե վերլուծել մի քանի գեների ներգործմանը, վորոնցից ամեն մեկն ունի իր ներգործումը, իր գֆենը:

Առաջմմ դեռ շատ քիչ են վերլուծման յենթարկվել տնային կենդանիների հատկությունները: Ամենից լավ ուսումնասիրված են համն ու ճագարը Նրանց նկատմամբ արդեն կարելի յե խոսել վորակես իսկական գենետիկական վերլուծման մասին, վորը դուրս ե գալիս Մենդելի որենքների ըշանակներից (տես հաջորդ գլուխը): Իսկ ինչ վերաբերում ե, որինակ՝ տավարին, ապա մեր գիտելիքները մեծ մասմբ հեռու չեն գնում այս կամ այն հատկանիշների մենդելումը գործնելուց (ուստի գենետիկական վերլուծման այդ սկզբնական ետապը կոչվում ե մենդելիստական):

Ինչպես վոր քիմիական վերլուծման ժամանակ վերլուծողն առանձին հատկություններից անցնում ե մոլեկուլային ստրուկտուրին, այնպես ել գենետիկական վերլուծման ժամանակ առաջին խնդիրն յերեան բերել առանձին գենները: Սակայն յերեան բերելով գենը, պետք ե աշխատել ամենալրիկ կերպով վորոշել նրա ֆենը, այսինքն՝ հատկանիշների այն գործարը, վոր համապատասխանում ե տվյալ գենին: Այդ կարենը ե այն պատճառով, վոր դանազան դեպքերում գենի ֆենը կարող ե շատ տարբեր լինել (այդ հարցը հատկապես քննվում ե V1 գլխում), ուստի պետք ե գաղափար կազմել թե ինչպես դրսնորում իրեն տվյալ գենը, որգանիզմում տարբեր պայմաններում գտնվելիս:

Ապա ինդիք ե ծագում գտնել տվյալ գենի կապն առաջ ուսումնասիրված մյուս գենների հետ, մինչև իսկ սահմանելով մյուսների միջև տվյալ գենի տեղը քրոմոսոմում: Այդ հանդիսանում ե մորգանիստական վերլուծման նպատակը, վորի մասին խոսվելու յե հաջորդ գլխում:

Գենետիկական վերլուծման հիմնական մեթոդը տրամադրաչումն եւ Տրամախաչմանը մասնակցած կենդանիների առանձին հատկանիշները հաջորդների մեջ բաժանվում են այս կամ այն ձևով բաշխված առանձին տարբերի: Պատկերն ավելի կամ պահանջարկ կլինիկ նայած թե ինչ հատկանիշի հետ գործ ունենք մենք: Յեթե տվյալ գենի ֆենը տրամադրեսիվ-փոփոխական, քանակական հատկանիշ ե (ինչպես կշիռը, կաթնատափությունը), ապա վերլուծման ժամանակ պետք ե կիրառել հատուկ յուրատեսակ մեթոդիկա: Վերջինս մենք հատկապես կըննենք V1 գլխում: Իսկ յեթե հատկանիշների միջև յեղած տարբերությունը կատարելապես պարզ ե, ապա գենետիկական վերլուծումն ավելի պարզ ե: Ճշգրիտ հետևողական հանգերու համար հարկավոր ե միայն ստեղծել տրամախաչութերի ճիշտ սքեմ:

F₂-ում գոյություն ունեցող թվական հարաբերությունների ուշին ուշադիրությունը հնարավորություն և տալիս վերլուծելու ծնողների միջև յեղած տարբերությունը, այսինքն՝ գորոշելու, թե քանի զենով են տարբերվում նրանք իրարից և ինչ հատկություններ ունեն այդ գեները Մենք արդեն տեսանք, զոր մենդելյան կլասիկ հարաբերությունները հաճախ շատ են փոխվում՝ այդ յերեսությը բարդացնող այս կամ այն պատճառով (9:3:3:1-ի փոխարին՝ 12:3:1, 9:3:4, 9:7, 15:1): Հաճախ վերլուծման մեծ նարտարություն և պետք, զորպեսզի կարողանանք հասկանալ թե ինչպիսի հարաբերության հետ գործ ունենք:

Եեթե տրամախաչումից ստացվեց մոնոհիբրիդային ճեղքման պատկերը, ապա կարող ենք վորոշ հավանականությամբ ընդունել, զոր մենդելյում և մի գենու Յեղ այն ժամանակ տրամախաչման հիման վրա կարելի յև ընորոշել գենի բռնած զերքը գերիշխման նկատմամբ: Մոնոհիբրիդության մասին պետք ե հետեւնել ճեղքման հիման վրա F₂ (3:1) կամ հետադարձ ճեղքման դեպքում՝ F₃ (1:1): Վերջին ճեղքություն ավելի ձեռնառու յե, զորովհետև ժառանգների մոտավորապես հավասար թվով կատեգորիաներ առաջ դալու դեպքում (Առ և առ) արդյունքն ավելի ճշգրիտ կլինի: Բայց դրանից, ճեղքման թվերը բավական չյինելու դեպքում (իսկ Խոշոր կենդանիների նկատմամբ այդ թվերը ընականաբար մեծ չեն) կարելի յե հաջորդ սերնդում լրացնեցին նյութ ստանալ, տրամախաչելով հետերոդիգոտային: Առ անհատները նրանց սեցների յեղբայրների կամ քույրերի՝ առերի հետ, կամ թե չե՝ սեցների ծնողների հետ: Բայց մի շաբք դեպքերում, մասնաւորպես զերիշխումը պարզելիս, չի կարելի բավարարվել միմիայն հետադարձ տրամախաչումով:

Մոնոհիբրիդության դեպքում մենդելյան հարաբերությունը միշտ կլասիկ չի լինի (3:1 կամ 1:1): Այդպիսի հարաբերություն կստացվի միայն այն ժամանակ, յեթք մենք նախապես համոզված լինենք, թե ծնողները հետերոդիգոտային են: Սակայն յեթե մենք ծնողների մասին դատում ենք միայն հաջորդների մեջ տեղի ունեցող ճեղքման արդյունքներից, ապա ճեղքման հաշվի մեջ չմացնելով այն ընտանիքները, զորոնք պատահաբար, հաջորդների թիվը փոքր լինելու պատճեռով, սեցների անհատներ չեն տվել, մենք մեքենայորեն փոխում ենք հաջորդների ընդդրկված խմբի փոխհարաբերությունը, նվազեցնելով զերիշխուղ գեն ունեցող անհատների տոկոսը: Այդ հարցը մանրածանորեն մշակված և գենետիկական վերլուծման մեջ, և գոյություն ունեն ճշգրիտ փորմուներ այն ճեղքութեների համար, զորոնք, կտիտում ունեն յուրաքանչյուր անհատից ստացվող հաջորդների թվից (տես Լյութիկովի աշխատությունը՝ մեր բերած զրականության շաբքում):

Սակայն յեթե նույնիսկ մի կողմ թողնենք հարաբերությունների փոփոխման տվյալ դեպքը, քիչ չեն այնպիսի պատճառներ, վորոնք կարող են գործնականում շեղել ստացվող հարաբերությունը սպասվող կլասիկ հարաբերությունից։ Այդ պատճառով, չորհիվ պատահականության, յերբեք ճշգրիտ հարաբերություններ չեն ստացվում։ Պատահականությունների պատճառով առաջացող հարաբար շեղումների մասին կարելի յե դատել հաշվելով միայն ըմբռակադրական սխալները։ Վորքան փոքր լինեն մեր ճեղքումների թվերը, այնքան ավելի մեծ վիճակագրական սխալ կունենան նրանք և այնքան ավելի շատ կարող են լինել սպասվող և ստացված թվերի տարրերությունները։ Որինակ՝ յեթե հաջորդները բաղկացած են 150 ձագից, և մենք սպասում ենք ճեղքում 1 : 1 հարաբերությամբ, ապա ճեղքումների սպասված թվի (50 : 50) սխալը կկազմի ± 5։

Հարաբերությունները կարող են խեղաթյուրվել նաև վոչ պատահաբար, որինակ՝ ստացվող խմբերի տարրերը կենսունակության պատճառով կամ նրանց միջև բավականաչափ վորոշակի բաժանում չկինելու պատճառով, այնպես, վոր գերիշխողներից մի քանիսն ընկնում են ուցեսիթների խմբի մեջ կամ, ընդհակառակը, ինչպես նաև մի քանի այլ պատճառներով։

Բազմանվագ տրամախաչմամբ կարելի յե ուսումնասիրել առանձինը, վորոշ չափով մեկուսացնելով վերջինս։ Սակայն գործ ունենալով որգանիզմի հաճախ շատ շնչերից կախումն ունեցող հատկանիշների հետ, գենետիկական վերլուծումը պետք է կարողանա տարրալուծել հատկանիշները բաղկացուցիչ գենետիկական տարրերի, պարզել վերջինների թիվը, նրանց փոխազդեցությունը և այլն։ Այդ նպատակի համար հիմնական նշանակություն ունի զինիբրիդային տրամախաչման փորմուլը։ Մոնոհիբրիդության նման զինիբրիդության դեպքում և թե F₁-ն (արգեն մի քանի անգամ մեր քննած 9 : 3 : 3 : 1 հարաբերությամբ), թե F₂-ն (1 : 1 : 1 հարաբերությամբ) ունեն իրենց արժանիքները և իրենց թերությունները։ Թեպես այդ դեպքում ել ավելի ձեռնոտու յե տրամախաչել ուցեսիվ ձեր, ուցեսիվ վերլուծովի (անալիզատորի) հետ AaBb×aabb), այնուամենայնիվ յերբեմն պետք է դիմել F₂-ին, նախ և առաջ հենց վերլուծովը (անալիզատորը) ստանալու համար։

Վերը ցույց ելինք տվել զինիբրիդային տրամախաչման ժամանակ հարաբերությունների բարգացման դանաղան դեպքեր։ Դրա եյտելությունը հասկանալու համար գենետիկը ձեռնամուխ լինելով գենետիկան վերլուծման, պետք և լավ հիշել վորքան կարելի յե շատ դեպքեր։

Զեսքի տակ ունենալով հաջորդների զանազան կատեգորիաներին վերաբերող թվեր և հիշելով մի շարք դեպքեր, պետք է ընդու

զանազան մողելներ, մենդելիստական հիպոթեզներ և ընտրել դրանց ցից ամենահարժարները, Յեթի F₂-ում առաջ գա ֆենոտիպների ավելի քան 3 կատեգորիա, կարելի լի համոզված լինեն վոր այսուղ մասնակից և առնվազն դիհիբրիդությունը, Գենետիկական վերլուծան խնդիրն եւ պարզել թև ինչի հետ գործ ունենք մենք՝ դիհիբրիդութան, թե վորեւ աստիճանի պոլիհիբրիդության հետ, Յեթէ դիհիբրիդության հետ, ապա վեր տիպի՝ ամենապամը (9 : 3 : 3 : 1), թե բարդացած դիհիբրիդության հետ, արդյոք մի քանի կատեգորիաների միացման հետ, թե, ընդհակառակը, վոչ լրիվ գերիշման պատճառով բաժանված, ջոկ-ջոկ կատեգորիաների հետ:

Այդ նպատակով կարելի յի ոգասազործել այսպես կոչված մողուլը: Մողուլը ներկայացնում է $\frac{n}{k}$ մեծությունը, վորտեղ ուշ նշանակում եւ

F₂-ի բոլոր առանձնիկների գումարը, իսկ կ-ն՝ նպասվող հարաբերությունը ցուց ավող բոլոր թվերի գումարը: Մոնոհիբրիդության դեպքում մողուլը = $\frac{n}{4}$, դիհիբրիդության դեպքում = $\frac{n}{16}$, և այլն: Յելնելով

մողուլից, կարելի յե ցանել ահսականորեն սպասվող թվերն ու համադրել զրանք ստացվածների հետ և, ընդհակառակը՝ մողուլի վրա բաժանելով գասի յուրաքանչյուր ստացված մեծությունը և համոզվելով վոր նրանք մոտավորապես բաղմապատճեն են մողուլին, կարելի յե պարզել ճեղքման տիպը: Ընդունենք, վոր F₂-ում ստացվել եյին առանձին դասերի հետեւյալ թվերը՝ 1463, 363 և 126: Իսկույն յերեսում ե, վոր գեապքը մոնոհիբրիդային չե: Յենթագրելով, վոր գործ ունենք

դիհիբրիդության հետ, գտնենք մողուլը = $\frac{n}{k} = \frac{1952}{16} = 122$

$$1463 : 122 = \text{մոտավորապես } 12\text{-ի}$$

$$363 : 122 = \quad \rightarrow \quad 3\text{-ի}$$

$$126 : 122 = \quad \rightarrow \quad 1\text{-ի}$$

12 : 3 : 1 հարաբերությունը կատարելապես պարզ և դառնում:

Մեր բոլոր ասածները տարրական պատկերացում են-տալիս մենակելիստական վերլուծման մեթոդների մասին: Այդ մեթոդների ընազավառում կարելի յե վարժություն ձեռք բերել միայն գործնականորեն (խնդիրների կամ որինակների միջոցով): Հաջորդ գլխում մենք կշոշափենք նաև ավելի բարդ ետապք՝ մորդանիստականը: Դժբախտաբար, գենետիկական վերլուծման մեթոդները մինչեւ այժմ ել զիսինչպես հարկն եւ չեն մշակվել և մի ամերողջականության չեն վերածվել, թեպես այդպիսի աշխատանքի անհրաժեշտությունը դնարով ավելանում եւ:

Տարբեր ռեսուլտի գեմերի զրագահնութեանը՝ — Կաթնասունն ների տարբեր տեսակների մասնավոր գենետիկայի մեջ խորանալը թույլ է տալիս ներկայում խոսել համեմատական գենետիկայի մասին։ Հայտարերվել է նշանավոր զրագահնուականություն տարբեր տեսակների գեների մեջ Ալբերտորֆների միևնույն սերիաները կրկնվում են կրծողների մոտ։ Բայց յերբեմն պատահում են և ավելի հեռու տեսակների մոտ (աղյուս. 2 եջ 113)։ Հետաքրքրական և ալբինոսական սերիան կատվի և կրծողների մեջ։ Ազուտի գույները պատահում են կաթնասունների գրեթե բոլոր տեսակների մոտ։ Հետաքրքրական և սեղմին ալբելեյի սերիան, վորի մեջ պարունակվում ե այսպես կոչված նապոնական (յերկգույնի) ճագարը։ Խոզի մոտ նա պատահում է չորս ալբելեյի սերիայի ձևով՝ սկ եպիստատիկ, սկ հիպոստատիկ, վագրագույն-կարմիր։

Ընդհանրապես պետք ե ասել վոր այդպիսի յերևույթներ, ինչպես եպիստակը, կրիպտոմերիան լայնորեն տարածված են կենդանիների մեջ։

Դայուրյուն ունի^{*} արդյոյք փոչ մենգելյան (կամ փոչ հռոմեանային) ժառանգականություն։ — Շարադրելով ժառանգականության որինաչափությունները, վորոնք ներկարաւմ կոչվում են Մենդիլի կանոններ, մենք շարունակ հենվել ենք քրոմոսոմային թեսրիայի վրա։ Քրոմոսոմային տեսության համաձայն, ժառանգական հատկությանների բոլոր տարբերությունները հանգում են քրոմոսոմներում գտնվող բոլոր գենների համապատասխան տարբերություններին։ Յեթե աչքի անց-կացնենք ժառանգման վերաբերյալ այն բոլոր փաստերը, վորոնք կուտակվել են գենետիկայի ֆոնդում՝ նրա գոյության յերեսուն տարվա ընթացքում, պետք ե ընդունենք, վոր նրանց հսկայական մեծամասնությունն ուղղակի և կոնկրետ կերպով բացատրվում ե քրոմոսոմային անությունը։ Հատկանիշների մենդելյումը, այսինքն՝ նրանց ժառանգարար հաղորդվելը, մենք ուսումնակրում ենք Մենդիլի կանոնների համաձայն, այն ե՝ ուսումնակրում ենք նրանց գենների հաղորդումը քրոմոսոմների միջոցով։ Նույնիսկ այն գեպքերում, յերբ հեռավոր ձեմերը տրամախաչվելիս մենցիլում չի նկատվում, նա լիակատար կերպով բացատրվում ե քրոմոսոմային թեսրիայի լույսով, վորպես ուղղուկցիոն բաժանման մեխանիզմի խախտում, քրոմոսոմների կոնյոււգիայի բացակայում և այլն։

Բայց և այնպես կարելի յե հարց տալ, — չկմն արդյոք վոչ մենց մելյան ժառանգման դեպքեր, վորոշ տրամախաչչումների ժամանակ չե՞ պատահում արդյոք հատկանիշների այնպիսի հաղորդում, վորը ցույց տա, թէ այդ հատկանիշները մենդելյան՝ քրոմոսոմների կոնյոււգիայի բացակայում և այլն։


Կորնառամբերի գույների վարչ գիների գույների գույնականությանը (ԱՄԳԵՆԻՑ)
(Հեների նշանակումները փոխված են)

Դ և Ն	Հայոց	Մուհ.	Գորշ	Առաջն	Մի մուհ.	Հեղակ	Հայ	Կառա.	Էլ.
Ազաւոփի գույնի ալլելամորֆների սերիան									
Դեղին (G ^y)		+						+?	
Ազուտին բաց գորովայնով (G ^x)	+	+	+	+	+	+	+	+	
Ազուտին գորչ գորովայնով (G ^d)		+		+	+	+		+	
Վաշազուտին խալերով—վառ-սև գույնի (G ^c)	+	+				+			
Վաշազուտին (սև, զարչնազույն և այլն) (g)	+	+	+	+	+	+	+?		
Ալիքմոսական սերիան									
Լրիջ գույնով (A)	+	+	+	+	+	+	+	+	
Դույնի թույլ փայլում դեղին պիզմենտի պահանով (աշ)						+			
Դույնի ամերի ուժեղ փայլում դեղին պիզմենտի պահանով (ար)						+?	+		
Շինշիլա—թույլ փայլում դեղին պիզմենտի բացակարարթում (աշի)	+	+						+	+?
Բաց շինշիլա (աճ)	+	+							
Մարդեր-կունիք (բաց-դարչնազույն) ականչների, գոտների առավել մուգ գույնով (ամ)	+		+		+	+	+		
Կողումին (горностай) գույնը (աս)	+	+				+?			
Ալրինիզմ (ս)	+	+	+				+	+	
Պիզմենտը բաւացնագ գիների սերիա՝ մել-դեղին									
Աև եղիստատիկ՝ ազուտին նկատմամբ (B ^D)	+			+					+
Աև զոչ լրիջ եղիստատիկ՝ ազուտին նկատմամբ (B ^s)									
Աև հիպոստատիկ՝ ազուտին նկատմամբ (B)	+								
Յերկողույնի (այսպէս կոչված «ճապոնական» ճապոր կամ «կրյանման» ծովախողիկ (բ ³))	+	+	+	+	+	+	+	+	
Դեղին (b)	+	+?			+	+	+	+	
Գույնը բաւացնագ այլ գիներ									
Դարչնազույն (c)	+	+			+	+	+		
Յերկողույն (d)	+	+	+	+	+	+	+		
Ճարտկային գիներ									
Դոմինանս ճարտկություն (պօշտ) (K)	+	+?							
Ռեցեսիվ (dn)	+	-+	+		+	+	+	+	
Արծարափայլի գիներ									
Դոմինանս արծարափայլություն (P)	+								
Ռեցեսիվ (f)	+	+							

զեներով չեն վորոշվում: Բջջակորիզի մենաշնորհի մասին խոսելիս
մենք ասել եյինք, վոր, չնայած կորիզային, քըոմոսոմային ժառան-
գականություն կատարած զեռակշխո, զերիշառող դերէն, չի վերացվում
պղազմի հնարավոր դերը ժառանգականության մեջ: Այդպիսի դեպ-
քեր իրոք հայտնի յեն բույսերի մեջ, իսկ ինչ վերաբերում ե կենդա-
նիներին, առայժմ նրանց մեջ նման վոչ մի փաստ յերևան չի բերվել:
Mirabilis jalapa կոչվող պարագիտային բույսն ունի albomaculata
կոչվող մի խայտարգետ ցեղ, վորի տերեները վոչ թե կանաչ, այլ
գեղնավուն-սպիտակ և խայտարգետ-կանաչ գույն ունեն: Բծերը դա-
սավորված են չափազանց բազմապիսի կերպով: Խայտարգետության
ժառանգություն ուսումնասիրելիս պարզվեց, վոր նա անմիջականորեն
հաղորդվում ե քլորոֆիլային հատիկների, կամ պլաստիդների, այ-
սինքն՝ ցիտոպլազմի տարրերի միջոցով: Սակայն հետաքրքիր ե, վոր
այլ բույսերի տերեների խայտարգետության մի քանի դեպքեր տալիս
են տիպիկ կորիզային, այսինքն՝ մենդելյան ժառանգականության
պատկերը: Ընդհանուր առմամբ, թեսպես վոչ մենդելյան ժառանգա-
կանության մեջ ցիտոպլազմի մասնակցության հնարավորությունը
վոչ մի տարակույս չի հարուցում, այնուհենդեռ այդ յերեսութիւնը
մեջ շատ բան դեռ չի պարզված:

Մայրական ժառանգականության: —Մեղ մնում ե ծանոթանալ
ժառանգականության մի ձևին և, վոր դիտվել ե ձվի և սաղմի հատ-
կանիշների վրա, իսկ լերբեմն և հասակավոր առանձնիկների վրա:
Ժառանգականության այդ ձևը «մայրական ժառանգականություն»
անվանելին այնքան ել ճիշտ չեն

Այդ ժառանգականությունը սիանգամայն մենդելյական ե, սա-
կայն յուրահատուկ ե այն տեսակետից, վոր եմբրիոնի կամ ձվի
հատկանիշը, վոր փոխանցվում ե ըստ այդ տիպի, պայմանավորվում
ե վոչ թե իրեն հատուկ գեներով, այլ մոր գեներով: Այդպիսի ժա-
ռանգաման մի գեղեցիկ փաստ հայտնի լե խխունչների մոտ (թե՛
նկատվել են մետաքսարեր թիթեռնի և այլոց մոտ ևս): Խխունչի խե-
ցին կարող ե վոլորված լինել գեղի աջ կողմը և դեպի ձախ կողմը:
Այդ տարրերությունը կախված ե մի գենից (դեպի աջ վոլորվումը՝
D դոմինանտ օ-ի նկատմամբ): Ժառանգման սքեման ըերթած ե 46-ը՝
նկարում: Եթեր աջ վոլորված խխունչը (DD) տրանսխաչում են ձախ
վոլորվածի (dd) հետ, F₁ ունենում ե Dd գենոտիպ, իսկ ֆենոտիպով աջ
վոլորված ե ստացվում: F₁-ի տռանձնիկները միմյանց հետ տրամախա-
չելիս սպասվում ե ձեղքում: Գեներիկորեն F₂-ում կլինեն հետեւյալ
առանձնիկները DD+2Dd+dd, սակայն նրանք բոլորն աջ վոլորված
կլինեն, վարովիեսն նրանց մայրն ըստ գենոտիպի Dd յե յեղել՝ Ծ դր-
մինանտ գենով: Ֆենոտիպական ճեղքումը, վոր սպասվում ե F₂-ում,



Նկ. 46. Վարչովածության ժառանգումը խիստաշների մոտ: D—վարչովածությունը դեպք աջ, S—վարչովածությունը գեղք ձախ: Զախ կողմում ցույց է տրված արածութայման այն զեղքը, յերբ D—ձևուն բեղմնավորված և մ—սպերմատոզոֆուզ, աջ կողմում՝ ռեցիպրոկային արածմախչում

կստացվիք ԲՀ-ում, վորովհետև ճճ առանձնիկները լինելով ֆենոտիպուրեն դեպի աջ վոլորված՝ կտան դեպի ձախ վոլորվածներ և գենի ներդժման շնորհիվ։ Նման ճեղքութեանը ԲՀ-ում տալիս ե նաև ուցիւրուկային տրամախաչումը։ Բ1 այդ դեպքում ձախ վոլորված կլինի, չնայած Ծ-ի դոմինությանը, վորովհետև նրա մալրը գենոտիպորեն ճծուեն Տվյալ դեպքի յուրահատկությունը դժվար չե ըմբռնել, յեթե խորանանք հատկանշի եյության մեջ։ Զգի հատկությունը, վոր ընուրոշում ե ապագա խխունչի վոլորվածության տիպը, մոր գենոտիպի մի մասն և կազմում է Եերը ձուն մոր մարմնի մեջ և յեղել, նրա դեները կարծես թե արտատպվել են բոլոր ձևերի պրոտոպլազմի վրա, վորի հետևանքով ստացվում ե վոլոր որի ենտացիս ձվի զարգացման ընթացքում տեղի ունեցող բաժանման նկատմամբ։ Այդ պատճառով սերունդների հաշվարկումը ճիշտ չի դուրս գալիս. այն, ինչ մենք համարում ենք յերրորդ սերունդ փաստորեն միայն յերկրորդն եւ։

Այսպիսով նման դեպքերը ներդաշնակում են մենդելյան սրենքների հետ։

Պետք ե նկատել, վոր թեպետ առայժմ մայրական ժառանգականության վերաբերյալ դեպքերի թիվը քիչ ե, սակայն մենք կարող ենք սպասել նրա լայն տարածումը ընության մեջ։

Մենդելիզմը վարդիս հօսանք յակ օրա թմբապառւրյունը։—Մենդելի կանոնները յերկրորդ անգամ հայտնագործվելուց հետո ժառանգականության հարցերն սկսեցին ուժեղ թափով մշակվել ինչպես բույսերի, այնպես ել կենդանիների նկատմամբ։ Պարզվեց, վոր Մենդելի ձևակերպած կանոնները կամ որենքներն ընդգրկում են հատկանիշների և որյեկտների շատ լայն շրջան։ Մենդելի ուսմունքն ենպիրիկ, փորձնական բազա հանդիսացավ ժառանգականության վերաբերյալ գիտության համար և մի լայն որինաչափություն, վոր խոշոր նշանակություն ունի գործնական կենդանաբուժության և բույսերի մշակության ասպարիզում։ Ստեղծվեց գիտական մի ամբողջ հոսանք, վորն ի պատիվ Մենդելի կոչվեց մենդելիզմ։

Այն հեղաշրջումը, վոր առաջ բերեց մենդելիզմը վոչ միայն ժառանգականության ուսմունքի, այլև ընդհանրապես բիոլոգիալի բնագավառում, մեծ նմանությունը ունի այն հեղաշրջման հետ, վոր տեղի ունեցավ Փիզիկայի և քիմիայի մեջ XIX դարի ատամիակայի զարգացմամբ։ Այդպիսի մի ատամիստիկա յե նաև մենդելիզմը։ Այդ իմաստով Մենդելի որենքները նման են քիմիայի ատամիստիկայի որենքներին։ Նրանք ըստ եյության հանդիսացան մեխանիստական ոլոն բազան, վորի վրա կառուցվեցին կենսաբանությունն այնքան հարստացնող հետագա հետապոտությունները։

Սակայն մենդելիզմի բնագավառում զարգացան նաև մի շաբք

մետաֆիզիկական բնույթ կրող տարրերը գեների այն կայունությունը, վոր ցույց ե ավել լինելիք, մի քանի մենդելիստներ, մասնավորապես Նոսին, չափազանցիլով, հասցըին այն սկզբունքին, թե գեներն սկզբից ի վեր մշտական են և որդանիզմների ամբողջ և վոլուցիայի ընթացքում միայն այսպես կամ այնպես համակցվել են, չենթարկվելով եվոլուցիայի, այսինքն՝ այդ որենքը հասցըին բացահայտ մետաֆիզիկայի: Թեպես այդ գաղափարն ընդհանուր ընդունելություն շգտավ, սակայն բավական խորը թափանցեց մենդելիզմի բնագավառը և ավելի ուշ ժամանակվա զենետիկայի մեջ:

Մալրահեղ մենդելիստները գենի պատկերացումը հասցըին լիառկատար իդեալիստական մի կոնցեպցիայի, վորտեղ գենը համարվում եր մտավոր, վերացական մի միավոր: Մենդելիստները, գործ ունենավով քանիների վերացական կատեգորիայի հետ, պարզեցնում եյին ժառանգականության յերևույթները, հասցնելով դրանք սոսկ մետաֆիզիկական սքեմմերի:

Մենդելիզմի ընդունեց Վայամանին և Դե-Ֆրիզին հատուկ այն պատկերացումը, թե բոլոր որդանիզմները բազկացած են առանձին, միմյանցից բոլորովին անկախ հատկություններից կամ հատկանիշներից (որդանիզմը վորպես հատկանիշների մողալիկ), և թե լուրաքանչյուր հատկանիշ կախված է մի վորոշ գենից: Այդ տեսակետը մնանկ դուրս յեկավ, և թեպետ մենք, գեները համակցվելիս, ի վիճակի յենք վերլուծելու առանձին գեների ժամանգումը, սակայն զարգացման ժամանակ բոլոր գեների ներգործումը միահյուսվում ե շատ բարդ կերպով: Ժամանակակից գենետիկան գործ ունի միանգամայն կրնկրեատ, նյութական գենի հետ:

Դենը, սեալ կերպով, Փիդիկապես գոյություն ունեցող գենը, կազմում և քրոմոսոմի: Մի մասը, քրոմոսոմ, վոր հավիայան անփոփոխ չի մնում, այլ ընդունակ է իր պատմության պրոցեսում յենթարկվել բազմապեսի փոփոխությունների:

Դենը զարգացնում են զանազան տեսակ հատկանիշներ, սակայն նրանք հանդիսանում են ժամանգական նյութի քրոմոսոմների միայն դիսկրետ մասը, իսկ հատկանիշներն ամբողջ որգանիզմի հատկություններն են:

Ժամանգական նյութի կառուցվածքի մեջ խորանալը կործանեց այն պատկերացումը, թե բոլոր գեներն ել կարող են ազատորեն համակցվել իրար հետ: Պարզվեց, վոր անկախ համակցումը միայն մասնավոր դեպք է իր գործադրման սահմաններն ունեցող համակցման կողքին: Թե մեկի և թե մյուսի պատճառն է ժառանգական նյութի նյութական կառուցվածքը:

Մենդելիզմը նոր ետապի հասցնելու, նրան նոր բովանդակու-

թյամբ հարստացնելու և մի շարք իդեալիստական ու մեխանիստական կոնցեպցիաներ հաղթահարելու պատիվը պատկանում է մորգանիզմին, վորին անցնում ենք հաջորդ գլուխում:

ԸՆԴԱՆՈՒՐ ՀԵՏՎԱՐԻԹՅՈՒՆՆԵՐ

1. Ժառանգման հիմնական որինաչփություններն են Մենդելի յերեք կանոնները.

ա) առաջին սերնդի միակերպությունը,

բ) յերկրորդ սերնդում տեղի ունեցող ճնշումը,

գ) հատկանիշների անկախ բաշխումը յերկրորդ սերնդում:

2. Առաջին սերնդում գերիշխում են ծնողներից մեկի հատկանիշները. Գերիշխումը կարող ե լինել դանազան աստիճանի:

3. Ճեղքումը հիմնված է այսպես կոչված գամետների զուության սկզբունքի վրա, վորի համաձայն՝ սեղուկցիոն բաժանումից հետո յուրաքանչյուր զույգից գամետում մնում է միայն մի գեն առանց փոխվելու, չնայած վոր նա հիրենդում գտնվում է մյուս ալելումորթի հետ միասին:

4. Մենդելի կանոններն արտացոլում են քրոմոսոմների միջոցով գեների հաղորդման ընթացքը. Առաջին յերկու կանոնները հիմնված են մի զույգ քրոմոսոմների հաղորդման վրա, յերրորդ կանոնը՝ յերկու և ավելի զույգ քրոմոսոմների հաղորդման վրա:

5. Պետք է տարբերել ճեղքումն ըստ ֆենոտիպի և ճեղքումն ըստ գենոտիպի:

6. Գեների ներգործման միջև տարբեր փոխհարաբերությունն զոյլություն ունենալու պատճառով դիմերիզային (և այլ տեսակ) ճեղքումը կարող է մեծ չափով փոխվել:

7. Մենդելի կանոնների հիման վրա մշակվում են այսպես կոչված մենդելիստական վերլուծման հատուկ մեթոդներ:

8. Կոմբինատիվ փոփօխանակությունը լայն նշանակություն ունի թե բնության մեջ և թե մարդու գործնական կյանքում:

9. Մենդելյան ժառանգականությունը գերիշխող է հանդիսանում ժառանգականության յերեսութների մեջ, վորովհետև նա կորիզային ժառանգականություն և Սակայն գոյություն ունի նաև վոչ մենդելյան ժառանգականություն, վոր հիմնված է ժառանգականության մեջ ցիտոպլազմի կատարած դերի վրա:

Այսպես կոչված «մայրական» ժառանգականությունը նույնպես մենդելյան և հանդիսանում, սակայն յուրաաեստակ, քանի վոր այդ դեպքում ձևի կամ եմբրիոնի հատկանիշները մոր գեներից են կախված:

10. Մենդելիզմին, վորպես մի հոսանքի, հսկայական հաջողու-

թյունների հետ միասին, հատուկ են նաև մի շաբք մեթոդովզիական թերություններ (որպանիզմը վորովն հատկանիշների մոռափկան, գենը վորովն վերացական և միանգամայն անփոփոխ կատեղորիա պատկերացնելը և այլն), վորոնք հաղթահարվում են և մասամբ հաղթահարվել են դենեսիկայի հետագա զարգացմամբ:

ԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Пиннет. Менделев. ГИЭ. 1930 г. (շատ լավ են շարադրված մենդելիզմը և արտաքաշումների ամենի բարդ գեղեցիկը):
2. Гольдшмидт. Учение о наследственности. ГИЭ, 1928 г. (այս III և V գլուխները):
3. Филиппенко. Генетика. ГИЭ 1929 г. (այս V և VI դրականները):
4. Синнот-Дени. Курс генетики. ГИЭ, 1930 г. (այս III, IV և V գլուխները):
5. Кру. Генетика животных. 1929 г. (այս II և IV դրականները: II գլուխ գեղեցիզմ և նաև ընտանի կենդանիների հատկանիշների վերաբեման մենդելիստական տեսությունը):
6. Кондакин. Наследственность и среда. 1928 г. (մենդելիզմը համակատակի շարադրված և 85—124 եջերում):
7. Адамец. Общая зоотехния. Изд. 2-ое, 1931 г. (զգալի IV, այս նաև տափազմի և անհատական գումանեցիչի բացարձումը մենդելիզմի տեսակինեցից):
8. Браславец. Введение в цитогенетику. ГИЭ, 1930 г. (այս զգալի X):
9. Врийт. Учение о наследственности у с.-х животных. Сельхозгиз, 1930 г. համակատակի շարադրված և մենդելիզմը բրոնխոմայի թերթիչի հիման վրա):
10. Моргани. Структурные основы наследственности. (II, III, IV և V, գլուխները տալիս են Մենդելի կանոնները՝ բրոնխոմայի թերթիչի հիման վրա):
11. Васин Б. Н. Наследование окраски и пехик. Наследование структурных признаков. Генетика овец. I и II. Труды Центральной станции по генетике с.-х животных. Наркомзем РСФСР № 2 и 4 1928 и 1929 г. (ավարտինի վոլումների գեղեցիկ վերաբեման մասին):
12. Филиппенко. Ю. А. Частная генетика. Ч. II, изд. «Святель». 1928 г. (ավարտին զյուզատնական կենդանիների բոլոր տեսակների գեղեցիկ մասին):
13. Давыдов. С. Г. Селекция молочного скота, 3-е изд. Сельхозгиз, 1931 г. (գրքի սկզբում հեղինակը ավարտին և տալիս տափարի գանձական հատկանիշները ժամանակուն մասին):
14. Вайсберг И. Против механистической генетики. Журнал «Проблемы марксизма» 1931 г. № 2 (մենդելիզմի մարքսիստական բննադատություններ):
15. Рокицкий П. Ф. О формальном генетическом подходе к генетике с.-х. животных. Бюллетень Института животноводства за 1931 г. № 2 (պարանակում և զյուզատնական կենդանիների գեղեցիկայի ուսումնաուրիմանը ցուցարկեցնող ձեեկան, վերացական մենդելիստական մոտեցմանը բննադատությունը):
16. Менделеев Г. Опыты над растительными гибридами. ГИЭ, 1923 г. (Մենդելի կլասիկ աշխատաթյունը շատ պարզ լեզվով: Արժե, զար ամեն մի գեղեցիկ ժամանակական այլ գրքին):

17. Селекция каракульских овец, бонитировка и оценка производителей. Сборник. Москва, изд. «Советская Азия», 1983 г. (Անձրևական գույքի գենետիկական վերլուծման մասին և արտադրողների գնահատման համար նոր ուղղեցած նշանակություն մտախն)։
18. Врийт. Х. Опыты биологического исследования пород лошадей и вопросов коневрзведения. Сельхозгиз, 1983 г. (Գրքի կեզը նպագած է ձիու գենետիկային)։
19. Ильин Н. А. Генетика и разведение собак. Сельхозгиз, 1982 г. (Համարձակ ավալին եր)։
20. Дубинин Н. П. и Гептиер. Руководство по генетике и селекции кролика. Сельхозгиз. 1982 г. (Հիմաշաբար ավալիներ ճագարի գենետիկայի մասին)։
21. Лютиков К. М. Генетический анализ. В отношении медленно плодящихся животных. Журнал экспериментальной биологии за 1981 г., т. VII. (Փորձնական և առվիճ ուզգելու ճեղքման այն շեղութերը, վարոնք ստեղծվում են սահմանադրությունների թիվը փոքր մնելու պատճենի)։
22. Ромашов Д. Д. Математическое выражение законов Менделя. Журнал экспериментальной биологии за 1926 г., т. I.

ԳԼՈՒԽ 14

Մ Ո Ր Դ Ա Ն Ի Զ Մ

Հատկանիօմերի տնկախուրյան կանոնի սահմանափակումը.—Մենք արդեն մատնանշել ենք, վոր ներկայումս զգալի չափով սահմանափակված և հատկանիշների, այսպես կոչված՝ անկախ բաշխման կանոնի կամ «որենքի» գործողության շրջանը Մենդելիով պնդում եր, թե յուրաքանչյուր առանձին ժառանգական գործոն կամ, ներկայիս տերմինոլոգիայով՝ գենը, ժառանգվում է բոլորովին անկախորեն։ Սա-



Նկ. 47. Տ. Գ. Մորգան

տեսան ամերիկյան ժամանակակից խոշորագույն գենետիկ Մորգանի ու նրա զպրոցի փայլուն աշխատությունները՝ կատարված պտղաճանճի գրողորդիլի վրա (*Drosophila melanogaster*), կցվածությունը բացառությունից վերածվեց ժառանգականության ուսման նույնպիսի հիմնական սկզբունքի, ինչպես և անկախ ճեղքման սկզբունքը։


Նըրանք լրացնում են միմյանց և յերկուուր սիտսին կազմում են ժառանգականության ամենագլխավոր որենքներից մեկը:

Մի երաժշտումնում գանվող գեները օտղկապիտ վիճակում: — Գենետիկ-ների բազմամյա աշխատանքը բերեց այն յեղակացության, վոր ժառանգական հատկանիշները վորոշող նյութական մասնիկները դանը-վում են բջիջների կորիզներում, ավելի ճիշտ՝ քրոմոսոմներում: Սկզբ-բում քրոմոսոմները նույնացնում եյին ասանձին գեների հետ: Սա-կայն նման ըմբռնումը մեծ դժվարություններ եր ստեղծում, վորով-հետև ժառանգաբար հաղորդվող հատկանիշների թիվը միշտ ել զգա-լիորեն գերազանցում ե կորիզներում խոշորացույցի տակ յերեացող քրոմոսոմների թիվը: Հարկ յեղավ ընդունել վոր յուրաքանչյուր քրո-մոսոմում շաղկապված վիճակում գեներ շատ կան: Սակայն այդ գեղգում թշուտես համաձայնեցնել դա Սենդիի այն հիմ-նական դրույթի հետ, թե գեներն անկախ են միմյանցից: Յե-թե քրոմոսոմն ընդունենք վորպես առանձին գեների կոմպլեքս, ապա գեները պետք ե ծնողներից հաղորդվեն զավակներին վոչ նթե անկա-խորեն, այլ խումբ-խումբ՝ նայած նրանց պարունակմանը քրոմո-սոմում:





Սակայն մենք գիտենք, վոր կոնյուգացիայի ժամանակ զանա-նազան քրոմոսոմներում գտնվող գեները կարող են ազատորեն հա-մակցվել:

Այլ բան ե, յերբ գեները գտնվում են մի քրոմոսոմում: Այսուեղ վերահամակցում չկա, և գեներն անցնում են շաղկապված:

Նախ փորձենք սցեմով չպարզել, թե արդյոք տարբերություն կլինի, յեթե գեները գտնվում են մի քրոմոսոմում կամ յեթե գտնվեն զանազան քրոմոսոմներում: Ընդ ոմին հարմարության համար ամե-նուրեք ոգտվենք անալիզող տրամախաչումից և վոչ թե F^2 -ի վերլու-ծումից: Յենթազրենք, թե գեները զտնվում են զանազան զույգերի քրոմոսոմներում:



Բ և Յ դենքը ունեցող հետերոզիգոտը արամախաչվում և կրկը-նակի սեցեսիկ ասեմ-ի հետ Հետերոզիգոտային առանձնիկը տալիս և չորս տեսակ գամետ՝ ԲԲ, ԱԵ, ԱՅ և ԵԵ, վորովհետեւ Բ (կամ ա) դենը և Յ (կամ Ե) դենն ունեցող քրոմոսոմներն աղատորեն կոմբինվում են (համակցված են): Ստացված գամետներ՝





իսկ հոմոզիգոտային առանձնիկը տալիս և գամետների միայն մի տիպ՝




Հետերոզիգոտային առանձնիկի գամետը հոմոզիգոտային գամետի հետ արամախաչվելիս կստացվեն չորս կատեգորիայի հաջորդներ՝ 1: 1: 1: 1 հարաբերությամբ, այսինքն՝ հավասար քանակությամբ:

Ստորև բերում ենք առանձնիկների գոյացման սքեմը, նշանանակելով ֆենոտիպերն ու գենոտիպերը՝



Ֆենոտիպ AB

Ֆենոտիպ Ab




Ֆենոտիպ աԲ



Այդպես ուրեմն, մենք ստանում ենք չորս առանձնիկներ՝ չորս դանաղան ֆենոտիպեր:

Այժմ քննենք յերկրորդ, հնարավորությունը, այսինքն՝ յեթե գեները գտնվում են մի քրոմոսոմում:



Դարձյալ ընդունենք, վոր հետերոդիգոտը $A \& B$ գեներով արամախաչվում և կրկնակի ռեցեսիվ ասեճ-ի հետ, բայց վոր այդ գեպցում $A \& B$ գտնվում են մի քրոմոսոմում, նույնպես նաև $a \& b$, նրանք, գտնվելով մի քրոմոսոմում, չեն կարող ազատորեն համակցվել:




Ֆենոտիպ աօ




Բասի նրանցից մեկը կտա գամետի յերկու տիպ, իսկ յերկրորդը՝ միայն մի տիպ.
Գամետներ՝



Այստեղ կստացվեն յերկու կառեղորիայի հաջորդներ՝ 1:1 հարաբերությամբ, ինչպես ցույց է տալիս հետեւյալ սքեմը.



Ֆենոմեն AB



Ֆենոմեն ab

Մենք տեսնում ենք, վոր արդյունքների մեջ խոշոր տարրերություն կա: Դենքը ազատորեն համակցվելու գեղքում, այսինքն՝ յերբ գեները գտնվում են գանազան քրոմոսոմներում, F_1 -ում առաջ են գալիս մոտավորապես հավասար քանակությամբ առանձնիկներ, վերախճափորփած գեներով (A և b և a և B), ընդամենը չորս առանձնիկներով:

Իսկ յեթե գեները գտնվում են մի քրոմոսոմում, նրանք միմյանց շաղկապված են միում: Ab և aB կօժինացիաներ չպետք են լինեն, ուստի կստացվի անհատների միայն յերկու տիպ:

Այժմ գորեն կոնկրետ որինակով հետեւնք, թե ինչպես և կստարում գեների նման շաղկապումը:

Ճագարի սրամախաչումը՝ օտղկապված գեներավ. — Կեսլի ռւսումնասիրել եր անգիտական նորման, կարճամազ և սպիտակ բծեր ունեցող ճագարի տրամախաչումն անգորական միագույյն, յերկարամազ ճագարի հետ Անդիթական ճագարի բծավոր նախշը գերիշխում և միագունության վրա (Ե՞ն գերիշխում և շուրջ վրա), կարճամազությունը (N) գերիշխում և յերկարամազության (n) վրա, այդ գեղքում անգիտական ճագարի փորմուլը կլինի $\frac{EN}{EN}$, իսկ անգորականի փորմուլը՝ $\frac{en}{en}$:

$$\frac{EN}{EN} \times \frac{en}{en}$$

արամախաչումից

$$\frac{EN}{en}$$

կստանանք F_1 ,

Հակադարձ արամախաչման դեղքում,

այսինքն՝

$$\frac{EN}{en} \times \frac{en}{en}$$

պետք և սպասել, վոր կստացվի հաջորդների չորս տիպ՝ հավասար քանկությամբ.

$$\frac{EN}{en}, \frac{En}{en}, \frac{eN}{en} \text{ և } \frac{en}{en}$$

ըստ Փենոտիպի EN, EP, eN և en՝ 1: 1: 1: 1 հարաբերությամբ:

Այդ բոլոր տիպերն իրոք առաջ են գալիս, սակայն նրանց քանակական հարաբերությունը բոլորովին այն չե, ինչ վոր պետք եր սպասել, այն ե՝

Կետել ստացավ.

բժավոր, կարճամազ—EN սերունդների ամբողջ թվից՝ 43,5%

միագույն յերկարածազ—en > > 43,5%

բժավոր յերկարամազ—EP > > 6,5%

միագույն կարճամազ—eN > > 6,5%



Սրդյունքները ցույց են տալիս, վոր այստեղ խախտվում է ձեղքան անկախության վերաբերյալ մենդելյան կանոնը Ծնողներին նմանող ձևերն առաջ են գալիս շատ ավելի մեծ թվով, քան այն նոր ձևերը, վորոնց մի մասն ունի մի ծնողի հատկանիշները, մյուս մասը՝ մյուս ծնողի հատկանիշները Բայ յերևույթին յուրաքանչյուր ծնողի ունեցած հատկանիշները վորոց չափով կապված եյին իրար հետ և ձգտումն ունեյին ըստ հասրավորության միասին՝ հաղորդվելու հաջորդ սերնդին: Այդ յերևույթը կոչվեց «շաղկապում»: Ներկայումս ապացուցված ե, վոր շաղկապված գեները գտնվում են միանուն քրոմոսոմում:

Մեր բերած որինակում շաղկապումը, ինչպես ասում են՝ լիակատար չեր:


Թվում ե, վոր յեթե յերկու գեն գտնվում են մի քրոմոսոմում, պետք է ստացվի հաջորդների միայն յերկու տիպ, ինչպես ստացվել եր նախորդ գլխում, այն ե՝

$$\frac{EN}{en} \text{ և } \frac{en}{en}$$

կամ, յեթե նշանակենք քրոմոսոմներով՝




Սակայն իրոք մենք տեսնում ենք, վոր դեպքերի վորոց մասում առաջ են գալիք հետեւյալ կառուցքաթթն ունեցող ձևեր.



Բայց լինչպես կարող եք այդպիս ստացվել:

Հասկանարու համար, թե ինչ պատճառով հսարավոր և Եղ և ՇՆ ձեւը ստացումը, պետք և ընդունենք, վոր մի քանի գեպքերում Եղինը կարող և անջատվել N գենից և միանալ ո-ին, կամ, ընդհակառակը, N-ն կարող և անջատվել Ե-ից և միանալ ը-ին:



Տեղի յեւ ունենում շաղկապման մի տեսակ խցում, կտրում:

Մամոնացների կրօսինզովերը (Խաչուղարումը). — Կապի այդ խզումը
Մորգանը ցիտոլոգիաբար բացատրեց քրոմոսոմների կրոսինզովերի
յերեսոյթով, վոր կարող է տեսնի ունենալ այն պահին, յերբ հանու-
նանում են $\frac{EN}{ep}$ ձևի սեռական բջիջները:





Նկ. 48. Ծագարի
Ե & N գեներին ու-
նեցած քբամասնե-
րի կրոսինգով զերի
սրմը:

Կրտսինգովերը կարելի յէ պատկերացնել հետեւ վյալ կերպ. քրոմոսոմները, հասունանալով, դույժողույթ կոնյուգելիս (միացվելիս) կարող են փոխադարձաբար փոխանակել իրենց ձասերը հետեւյալ սքիմով (նկ. 48).

ա կետում տեղի յեւ ունենում խզում, և առաջեն
դալիս յերկու նոր քրոմոսոմներ՝ գեների նոր կոմբի-
նացիայով:



Դրանք են կառուցվածքն ունեցող գամետներով բիզմավորելիս տալիս են հետեւյալ կառուցվածքն ունեցող առանձնիկներ՝



Մենք տեսանք, վոր այդպիսի ձևերը կազմում են բոլոր հաջորդ-ների ընդհանուր թվի միայն $13^{\circ}/_0$ -ը կամ $6,5^{\circ}/_0$ $\frac{EN}{en}$ -ից և $6,5^{\circ}/_0$ $\frac{eN}{en}$ -ից: Նշանակում են E-ի և N-ի միջև խզում կամ կրոսինգովեր և կտարգում դեպքերի միայն $13^{\circ}/_0$ -ում, իսկ $87^{\circ}/_0$ -ում ($43,5^{\circ}/_0 + 43,5^{\circ}/_0$) գեները միացած են մնում, ուստի հակադարձ տրամախաչման ժամանակ ձևերի $87^{\circ}/_0$ -ն ունի գեների նույն կոմբինացիան՝ EN և en, ինչպես և նրանց ծնողները:

Տաղկապման զանազան առաջանայիր. — Մենք տեսնում ենք, վոր անպատճառ լիակատար շաղկապում չպետք և լինի մի քրոմոսոմում գտնվող գեների միջև Հոկայական մեծամասնություններկայացնող դեպքերում տեղի յէ ունենում միայն մասնակի շաղկապում: Որինակ՝ հայտնի յէ, վոր դրողովիլ գամետների $52^{\circ}/_0$ -ում գեները շաղկապված են մնում, և $48^{\circ}/_0$ -ում բաժանվում են, այսինքն՝ շաղկապում համարյա չկա, իսկ առնետների մեջ, ընդհակառակը՝ ալրինիզմի գենը դեղին գույնի գենից բաժանվում և $1^{\circ}/_0$ -ից ել պակաս դեպքերում, և զամետաների $99^{\circ}/_0$ -ում այդ յերկու գեները միացած են մնում: Շաղկապված վիճակում տրամախաչման մեջ յացված գեների վերահամակցման դեպքերը կոչվում են նոր կոմբինացիաներ կամ կրոսովերներ (EN և eN), իսկ այն դեպքերը, յերբ գեները մնում են նախկին կոմբինացիաներով, այն կոմբինացիաներով, վորով զանվում երին յելակետային ձևերում, կոչվում են վոչ կրոսովերներ (EN և eN):

Բնականաբար, կրոսովերային խմբերը կարող են առաջ գալ միմիայն քրոմոսոմների ամբողջությունը խախտելու և զույգ քրոմոսոմների համապատասխան մասերի փոխադարձ փոխանակության պատճառով: Ընդ սմին սկզբում մի քրոմոսոմում գտնվող յերկու գեները բաժանվում և տեղափորվում են մի զույգ կազմող յերկու տարբեր քրոմոսոմներում:

Ավելի մանրամասնորեն կանգ առնենք խաչուրման կամ կրոսինացիների յերեւյթների վրա:

Մենք գիտենք, վոր սաղմային բջիջներ կազմվելիս մի զույգի պատկանող յերկու քրոմոսոմը միշտ դասավորվում են տարբեր գու-

մեաների մեջ, այնպես, վոր առաջ շաղկապված դեները, կրօսինգովերից հետո, կզտնվեն հաջորդ սերնդի տարրեր առանձնի կներում: Անուական բջիջների (գամենաների) հասունացման պրոցեսում լինում է մի ստադիո, յերբ յուրաքանչյուր զուգո քրոմոսոմների անդամներն ընկնում են կողք-կողքի և հաճախ սերտորեն միահույսվում են իրար հետ (վերհշեցնեք խիազմատիպիան, վորի մասին խոսվել և յերկրորդ զլառում): Այդ մոմենտին, այսինքն՝ կոնյուգացիայի մոմենտին, ամենից ավելի հեշտ կերպով կարող ե տեղի ունենալ քրոմոսոմների մասերի փոխանակումը Բայտ յերնույթին փոխանակումը տեղի յ ունենում այն պահին, յերբ միահյուսված կոնյուգացվող քրոմոսոմներն անջատվում են կրօսինգովերի կետում: Անջատումից հետո մի քրոմոսոմի կտորը միաձուլվում և մյուսի համապատասխան շարունակության հետ:

Դրա շնորհիվ, քրոմոսոմը բաղկացած և լինում յերկու մասից՝ մորից առաջացած մասից և հորից առաջացած մասից:

Գենետիկորեն տեղի ունեցած կրօսինգովերը կարելի յ նկատել միայն այն գեղքում, յեթև քրոմոսոմները պարունակեն մի քանի տարրեր գեներ, ընդ վորում զույգ քրոմոսոմներից մեկը կունենա մի խումբ գեներ, իսկ մյուսը՝ այլ գեներ: Քրոմոսոմները միատեսակ գեներ ունենալու գեղքում ես յերեք տեղի. յ ունենում կրօսինգովեր, սակայն մենք չենք կարողանում նկատել նրա գոյությունը:

Այդպիսով շաղկապումը գեների ժառանգումն ե սկզբնական կոմբինացիաներում շնորհիվ այն հանգամանքի, վոր նրանք գտնվում են մի քրոմոսոմում: Սակայն կրօսինգովերի պատճառով միմյանց հետ շաղկապված գեները կարող են նաև անջատվել: Ահա թե ինչու շաղկապումը սովորաբար լրիվ չի լինում:

Շաղկապման առիջմանի կամ կրօսինգովերի նկատմամբ.—Շաղկապման աստիճանը զանազան գեղքերում կարող ե շատ տարրեր լինել: Վորքան ավելի հաճախ կրօսինգովեր և կատարվում յերկու գեների միջև, անշուշտ այնքան քիչ և շաղկապումը նրանց միջև Յեկը, ընդհակառակը՝ գեները շատ ուժեղ են շաղկապված, յեթև նրանց միջև կրօսինգովերների թիվը փոքր են:

Շաղկապումը չափելու համար հարկավոր ե հաշվել կրօսինգովերի շնորհիվ առաջացած նոր ձեռքի (կրօսվերների) տոկոսը: Դրա համար ամենահարմարն ե ուսումնասիրել հետերոցիզուտների անալիզը տրամադրանումն ըստ յերկու շաղկապված գեների՝ կրկնակիր ու ցեղերիվով՝ $\frac{AB}{ab} \times \frac{ab}{ab}$:

Հաջորդների մեջ կստացվին այնպիսիները, վորոնց գեները գտնըվում են սկզբնական կոմբինացիաներում՝ AB և ab (վոչ կրօսվերներ), և այնպիսիները, վորոնց գեները կազմել են նոր կրօմբինացիա-

Ներ՝ Բեւ և աՅ. Կրոսովկիների տոկոսը կհանդիսանա կրոսինգվերի ցուցանիշը 86թե, որինակ՝ ստացված առանձնիկների ընդհանուր թիվը կազմում է 8000, իսկ կրոսովկիներինը՝ 200, ապա կրոսինգվերի տոկոսը կլինի 2,5; Նա ցույց է տալիս շաղկապման ուժը, վորքան փոքր և կրոսինգվերի տոկոսը, այնքան ուժեղ և շաղկապումը և ընդհակառակը, այսինքն՝ շաղկապման ուժը հակառակ և կրոսինգվերի ցուցանշին:

Պարզվում է, վոր յերկու տվյալ գեների կրոսինգվերի տոկոսն ընդհանուր առմամբ մշտական մեծություն և և տատանվում և միայն միքանի արտաքին ազդեցություններից (շրջապատի ջերմությունից, առանձնիկի տարիքից և այլն); Կրոսինգվերի մի անգամ ճշտիվ վորոշված տոկոսը կարող է հիմք ծառայել գուշակելու, թե թնջղես կրաշխվեն գեները հաջորդ տրամախաչութեարի ժամանակ: Այն դեպքում, յերբ վոչ մի կրոսինգվերը չի կատարվում, շաղկապումը կոչվում և բացարձակ՝ գեները միշտ մնում են իրենց սկզբնական կոմբինացիաներում:

Տաղկապման խմբեր.—Մի քանի կենդանիներ ու բույսեր գեներակորեն բավական լավ են ուսումնասիրված: Դրանցից բազմաթիվ հայտնի գեները ունեցողների մոտ այդ գեները բաժանվում են շաղկապված խմբերի:

Ցուրաքանչյուր խմբի գեները, վորոնք մի քրոմոսոմում են գտնվում, մնում են միմյանց հետ շաղկապված: Զանգան խմբերի գեները հաջորդների մեջ բաշխվում են անկախորեն:

Գենֆատիկորեն ամենից լավ և ուսումնասիրված փոքրիկ պտղաճանճը՝ դրոզոֆիլը (նկ. 49), Դրոզոֆիլի քրոմոսային կոմպլեքսն ունի չորս զույգ քրոմոսոմ (նկ. 50), իսկ գեները բաժանվում են չորս խմբի: Ցուրաքանչյուր խմբի գեները շաղկապված են և ժառանգվում



Նկ. 49. Դրոզոֆիլի եղբ (աջ կողմում) և արուն (ձախ) (ըստ Մորգանի)

են մյուս խմբերի գեներից անկախ: Պարզվում է, վոր մի մեծ քրոմոսոմ մասնակցում և սեռը վորոշելու գործին, և գեների մի մեծ խումբ ժառանգվում և շատ յուրակերպ՝ սեռի հետ շաղկապված (առև ստորեա): Կան գեները յերկու մեծ խմբեր և, վորոնք գտնվում են ուրիշ յերկու մեծ քրոմոսոմներում: Վերջապես, շաղկապված գեների չորրորդ

խումբը շատ սուկապաթիվ է: Այդ գեները գտնվում են չորրորդ՝ փոքրիկ գնդաձև քրոմոսոմում:

Շաղկապված գեների խմբերը թվով նույնքան են, վորքան և քրոմոսոմները, և յուրաքանչյուր խումբ շաղկացած և մի քրոմոսոմում գտնվող գեներից կենդանիներից քչերն են ուսումնափրված



Նկ. 40. գրողոփելի քրոմոսոմային կոմպեքսը

այնքան լավ, վորքան զրուցիլը, Ուստի նրանց մեծ մասի նկատմամբ հայտնի յեն սովորաբար ավելի քիչ շաղկապված խմբեր, քան նրանց ունեցած քրոմոսոմների թիվն եւ Որինակ՝ հավի մոտ հայտնի յե 16 զույգ քրոմոսոմ, և միայն 9

առանձին շաղկապված խումբ, վելուն ունի յոթ զույգ քրոմոսոմ և առանձնացված են շաղկապման 7 խմբի գեներն եւ Մինչև այժմ շաղկապում յերեան չի բերվել մեր խոշոր ընտանի կենդանիների ձիու, կովի, խողի մոտ: Դրա պատճառն այն է, վոր մինչդեռ այդ կենդանիներն ունեն շատ մեծ թվով քրոմոսոմներ, առայժմ ժառանգական քիչ հատկություններ են ուսումնափրված: Նրանք դանդաղ են բազմանում, ուստի զգվար և բավականաչափ նյութ ստանալ լիակատար հետազոտման համար: Կատարելով վորեն տրամախաչում, վորտեղ ցանկալի յե հետեւյալ յերկու զույգ գեների մենցելումը, պետք և ըստանալ բոլոր ախտիքին պատկանող բավական մեծ թվով կենդանիներ, վորպեսզի համոզվինք, թե անալիզվող տրամախաչումից ճիշտ հարաբերություն՝ 1:1:1:1 ստացված և արդյոք համաձայն անկախ ճեղքման կանոնի, թե մի քանի խմբեր իրենց թվով իրապես գերակշռում են մյուսների նկատմամբ:

Առաջին զլմից վերհիշեցեք, վոր փորձի ժամանակ ստացված բոլոր մեծություններն իրենց սիմաներն ունեն: Միմիայն այն դեպքերում, յերբ ստացված մեծությունների տարրերությունը յեռակի սիմալից ավելի յի, այդ տարրերությունը կարելի յե ոեալ համարել Ուստի, յեթե ճեղքման մեր թվերը չեն զուգաղիպում՝ 1:1:1:1 հարաբերությանը, ապա այդ թվերի և անկախ ճեղքման ժամանակ սպասվող թվերի տարրերությունը պետք և բավականաչափ մեծ լինի, վորպեսզի այդ տարրերությունն ընդունենք վորպես ոեալ տարրերություն:

Մինչև վերջին ժամանակներս տեղեկություններ չկային նաև վոչխարների գեների շաղկապման մասին: Վերջերս Բ. Ն. Վասիլը մատնանշեց ուրվագծվող շաղկապում «լրացուցիչ պառեկների», «ականջների ողերի» և վզի չալ մանյակի միջև, սակայն ճեղքման թվերն առայժմ գեռ չարգաբացը ին այդ սպասումը:


Մկղբում գեների դասավորումն ըստ քրոմոսմերի ընդունվել եր վորպես հիպոթեզ, սակայն մի շարք տարիների աշխատանքով, վոր կատարել ելին գենետիկները դրոզոֆիլի վրա, ուղղակի ավացույցներ ստացվեցին այս կամ այն գենն առաջին, յերկրորդ, յերրորդ և չորրորդ քրոմոսմեներում գտնվելու նկատմամբ (տես գրա մասին հատուկ գրականությունը):

Ժառանձրկանուրյան չորրորդ որեմբը Մորգանի ունենալ է.—Մորդանի և նրա դպրոցի գտած այն որինաչությունը, վորի համաձայն մի քրոմոսմում գտնվող գեները ժառանձվում են շաղկապված, և յուրաքանչյուր տեսակում շաղկապման խմբերը սահմանափակված են քրոմոսմերի զույգերի թվով.—կարելի լե անվանել Մորգանի որենք: Այդ որենքի առաջին կեսը հանդիսանում է Մենդելի յերրորդ կանոնի լրացումը: Այդ յերկսի միացումով մենք ստանում ենք մի համապարփակ բնութագիր, թե ինչպես են վարփում գեները միմյանց նկատմամբ՝ շաղկապված կամ անկախ ժառանձման ժամանակ, նաև այն հանգամանքին, թե նրանք մի քրոմոսմում են գտնվում, թե տարբեր քրոմոսմեներում: Յեթե Մենդելի որենքը հանդիսանում է հատկանիշների անկախության որենքը, ապա Մորգանի որենքը շաղկապման ու կրոսինգովերի որենքն է:


Կրոսինգօվերի առընթե չափը ցուց և ամիս—երամասումներում գտնվող գեների հեռավորությունը. —Մի խմբի գեներ միմյանց հետ տարբեր չափով են շաղկապված: Մի քանի գեներ շատ քիչ են կրոսինգօվեր տալիս, մյուսները, ընդհակառակը՝ հաճախ:

Ինչպէս և բացատրվում այդ տարբերությունը: Այդ հարցի պատճենանով լուծվեց մի ավելի դժվարին հարց, այն ե՛ թնջախս և ն դասավորված գեները քրոմոսմեներում: Այնպիսի կարծիք կար, թե յերկու գեների միջև տեղի ունեցող կրոսինգօվերների թիվը կախված է գեներին այն տարածությունից, վոր գոյություն ունի նրանց միջև, այլ խոսքով՝ կրոսինգօվերների թիվը հարարերական և տարածությանը. վորքան հետու յեն գտնվում այդ գեներն իրարից քրոմոսմում, այնքան մեծ և կրոսինգօվերների թիվը Դրանով իսկ հիմք է արվում կառուցելու քրոմոսմեներում գեների դասավորման քարտը: Յեթե յերկու գենն Բ-ն և Բ-ն, տալիս են կրոսինգօվերի շատ փոքր տոկոս, որինակ՝ 2^0 , ապա յենթազբում են, վոր նրանք իրար շատ մոտ են դասավորված քրոմոսմում: Հոռավորությունը փոքր լինելու պատճենությունը համեմատաբար քիչ հավանականություն կա, վոր հատկապես այդ փոքր մասում կիրավի քրոմոսմը: Իսկ յերկու գեների մասում այդ փոքր մասում կիրավի քրոմոսմը: Իսկ յեթե Բ-ի և Ը-

միջն տեղի ունեցած կրոսինդովերի տոկոսը, տանը՝ հավասար և 10-ի, ապա յենթադրվում է, վոր նրանք իրարից շատ ավելի ճեռու յեն, քան Բ և Վ գեները, վորովհետեւ ավելի մեծ տարածության վրա կազմովելու ավելի շատ հավանականություն կա: Ըստունելով, վոր գեները քրոմոսոմում գասավորված են մի գծի վրա, իսկ գեների միջն տեղի ունեցած կրոսինդովելների թիվը հարաբերական և նրանց միջն յեղած տարածությանը, կարելի յև, գիտենալով Բ-ի ու Ե-ի և Յ-ի ու Շ-ի կրոսինդովերի տոկոսը, գտնել Բ-ի և Շ-ի կրո-



Նկ. 51. Քրոմոսոմների մեջավոր խաչողաբան կրոսինդովերի սքեմը (ըստ Մորգանի)





Նկ. 52. Քրոմոսոմների կրկնակի կրոսինդովերի սքեմը: Զախ կողմում քրոմոսոմները կրոսինդովերից առաջ աջ կողմում կրկնակի կրոսինդովերը առաջ աջ կողմում զեղչություն ստացվող քրոմոսոմների ուժը թյունը միմյանցից կազմուի կրոսինդ (Ֆելլայնկուից, ըստ Բերկով): Կառավարությունի այն տակնի:

վորի սահմաններում կրոսինդովերը կազմում է 10% , ընդունված և վորպես պայմանական միավոր գեների միջն յեղած տարածության: ԽՍՀՄ-ում ընդունված է այդ միավորն անվանել Մորգանի (ի պատիվ ամերիկյան գենետիկ Մորգանի): Այդպիսով Բ-ի և Շ-ի միջն ընկած տարածությունը հավասար է 8 մորգանի: Այդպիսի հաջարելումներ կատարվել են բազմաթիվ դեպքերում և որինաշափությունը ճիշտ է յեղել քրոմոսոմում գտնվող—բայց իրարից վոչ շատ ճեռու ընկած բոլոր գեների համար: Գեների միջն տարածությունն ավելի



զգալի լինելու դեպքում պատկերն ավելի բարդանում և և հաշվարկութեանը մեջ անհրաժեշտ է լինում վորոշ ուղղութեանը մտցնելը

Ուղղութեանը կրկնակի կրոսինգովների համար.—Քըոմուսոմի ամբողջ յերկարությամբ կարող ե տեղի ունենալ վոչ միայն մի խզում, այլև մի քանի խզում միաժամանակ Յեթե Բ, Բ և Ը յերեք գեները դանվում են մի քրոմոսոմում, ապա կրոսինգովները կարող ե տեղի ունենալ Բ-ի ու Յ-ի միջև, և Յ-ի ու Ը-ի միջև միաժամանակ յերկու տեղում, կոչվում է կրկնակի կրոսինգովեր:



Տեսնենք, թե ինչ կտացվի այդ դեպքում,




Հետերօգիգոտային առանձնիկը կտա հետեւյալ դամեսները՝ առանց կրոսինգովների




Ա և Յ կեների միջև մի կրոսինգովներ լինելու դեպքում՝



Յ և Ը կեների միջև մի կրոսինգովներ լինելու դեպքում՝




Ա, Յ և Ը կեների միջև կրկնակի կրոսինգովներ լինելու դեպքում՝



Գամետների այս բոլոր 8 տիպերը կմիանան միատիպ այն գամետների հետ, վոր տալիս ե մյուս ծնողը:

Հաջորդները կունենան առանձնիկների 8 տիպ՝ վոչ կրոսովերային ABC և abc, յեղակի կրոսովերային ABC, aBC, ABc, abC, կրկնակի կրոսովերային AbC, aBc:



Կրկնակի կրոսինգովերից ստացված զեգուներում գտնվող A և C դեմքները, ինչպես և Տ-ն և Ը-ն միասին գտնվում են կոմբինացիոն նույն վիճակում, ինչ վիճակում վոր գտնվել են նրանք ծնողական ձեմքներում և ինչ կոմբինացիայով ներկա յեն լինում վոչ կրոսովերային առանձնիկներում, Յեթե արածախաչման մեջ B-ն չմասնակցեր, ապա AC և BC կրկնակի կրոսինգովերից առաջ յեկած դասերը չեյին տարբերվի վոչ կրոսովերային դասերից, նույնպիսի AC-ից ու Ա-ից և կավելացնեյին վոչ կրոսովերների թիվը, դրանով իսկ նվազեցնելով Ա-ի ու Ը-ի միջև տեղի ունեցող կրոսինգովերների տոկոսը հարկավոր ուղղումը կարելի յեր ժամանել այն դեպքում, յեթե մենք վորոշեյինք ԱC-ի իսկական հեռավորությունը, դումարելով AB-ի և BC-ի հեռավորությունը:

Կրկնակի կրոսինգովերները բացատրում են փորձերի այնպիսի արդյունքները, յերբ ստացվող թվերը շեղվում են տեսականորեն սպասվող թվերից, վորոնք սպասվում են այն կարծիքի հիման վրա, թե դոյլություն ունեն միայն պարզ կրոսինգովերներ:

Ահա թե ինչու մի քրոմոսոմում գտնվող յերկու գեների իսկական հեռավորությունն ստանալու համար անհրաժեշտ է չափել մեծ հեռավորությունները, դումարելով նրանց մեջ մտնող ավելի փոքր հեռավորությունները, վորովհետև ավելի փոքր տարածությունների վրա կրկնակի կրոսինգովեր չի կարող կատարվել. Որինակ՝ յեթե քրոմոսոմում գտնվում են մի շաբաթ գեներ՝ A, B, C, D, E գենները, ապա A և E գեների բուն հեռավորությունը վորոշելու համար պետք է աշխատել չափել ու գումարել AB-ի, BC-ի, CD-ի և DE-ի հեռավորությունները:

Խմերթերինցիա. — Կա մի բարդացում ես, վորը նույնպես յերկան բերվեց դրոզոֆիլն ուսումնասիլին լիս. դա ինտերֆերենցիան եւ Հայտաբերվեց, վոր մի մասում տեղի ունեցած կրոսինգովերը խոչնոտ և հանդիսանում ինտերֆերում եւ հարկան մասի կրոսինգովերին. Որինակ՝ յեթե միմյանցից վորոշ միջին տարածության վրա, ասենք, 10 մորգանիդ հեռավորության վրա, գտնվում է յերեք գեն՝ A, B և C, ապա A-ի և B-ի միջև տեղի ունեցող կրոսինգովերը դժվարացնում է B և C կրոսինգովերը.

Այդ բացատրում են հետեւյալ կերպ: Քրոմոսոմները բավականին առաձգական են, ուստի յերբ իրար են փաթաթվում, չեն կարող շատ պինդ հանգույցներ կազմել Յեթե նրանք միահյուսվում են Ա-ի և B-ի միջև, ապա յերկրորդ վորորքը կարող է կատարվել միայն վո-

0,0	Դեղին մարմին	0,0	Առաղածեն մազեր	0,0	Անողորկ աչքեր	0,0	Կորացած թեր, անաշ-քություն
1,5	Սպիասկ աչքեր						
3,0	Հասոն թեր	4,0	Լայնացած թեր				
5,5	Խոզանազոր աչքեր						
7,5	Մատակնագույն աչքեր	11,0	Վարորդի թեր				
		14,0	Երբանի միջին վրա				
16,7	Գուրզանման թեր			25,3	Սեպի գույնի գարզագույն մարմին		
27,5	Դարչնագույն գեղին մարմին	29,0	Կարճավոտություն				
33,0	Վարդագույն աչքեր			35,0	Կարմիր աչքեր		
36,1	Մինիատուր թեր			38,5	Կրկնակի լողա-նիկներ		
43,0	Սամույլի գույն գեցի	44,5	Կարճախողանություններ	45,5	Վարդագույն աչքեր		
54,5	Կարճ թեր	48,5	Անթիռություններ	55,0	Խոզանիկներ չկան		
57,0	Երբանի աչքեր	65,0	Համարյա անթիռություններ	60,0	Կոկոնածե աչքեր		
65,0	Թերերի հզարված դամուրութե	70,0	Շատ փոքրիկ աչքեր	65,15	Մազիկներ չկան		
		77,0	Թերերի հատուկ գերբեր	72,0	Սպիասկ աչքեր		
		95,0	Ալ-կարմիր աչքեր	89,0	Առաթածեն թեր		
		105,5	Փքանակ թեր	95,7	Կարճ խոզանակ-ներ		

Նկ. 53. Դրոզոֆիլների քրոմոսոմներում (4 ուղղանյաց գծեր) գտնվող զեների դասավորման քարտը (շատ թերեր, տեղ չլինելու պատճեառով բերված և գրագոփիլի մաս յերկան բերված բոլոր գեների միայն 10°/օ-ը) (Դոլցմելից, ըստ Մորգանի).


բոշ հեռավորության վրա: Դրանով իսկ դժվարանում և միանյուսումը
Ե-ի և Ը-ի միջն

Դրոզոֆիլի եռամսումների բարեկը.—Յենելով այն դրույթից, վոր
յուրաքանչյուր քրոմոսոմը՝ գեները դասավորված են մի ուղիղ
գծով, և նրանց փոխաղարձ հեռավորությունները հարաբերական են
նրանց միջն տեղի ունեցող կրոսինզովիրի հաճախականությանը, կա-
րելի յև կառուցցել քրոմոսոմներում գտնված գեների դասավորման
քարտը: Ամենից ավելի մանրամասնորեն մշակված քարտը կան
դրոզոֆիլների զանազան տեսակների, մանավանդ drosophila melanogaster-ի համար (տես նկ. 53):

Քարտում ցույց տրված գեներից յուրաքանչյուրը (նկ. 53) կցված է չորս քրոմոսոմներից մեկին կամ մյուսին այն ուսումնասի-
րությունների հիման վրա, վոր կատարված են պարզելու համար այդ
գենի շաղկապումը չորս խմբի մյուս բոլոր գեների հետ: Քրոմոսո-
մում յուրաքանչյուր գենի տեղը վորոշելու համար չափված ե հա-
րեան, նրան մոտ դասավորված գեների կրոսինզովիրի մեծությունը,
մացնելով բոլոր անհրաժեշտ ուղղումները ինտերֆերենցիայից, կրկ-
նակի կրոսինզովիրի նկատմամբ և այնու կրոնսինզովիրի իրական այն
հաճախությունը, վոր աեսնում ենք մենք, յերեք 50% -ից ավելի
չի լինում, վորովհետեւ 50% / լինելու դեպքում մենք ունենք արդեն
անկախ բաշխում: Կրոսինզովիրի առկոսը կարող է տատանվել միայն
0-ի և 50% / ի միջն:

Սակայն քարտում կան նաև 50 մորգանիդից ավելի հեռավորու-
թյուններ: Դրանք ստանալու համար գումարում են ավելի մոտ դա-
սավորված միջանկյալ գեների կրոսինզովիրի տոկոսները: Յեթե վերց-
նենք յերկար քրոմոսոմների ծայրերին դասավորված գեները, ապա
քարտում պատկերված նրանց իսկական հեռավորությունը կազմում
է 105 մորգանիդ: Իսկ փաստորեն տրամախաչվելիս նրանք տալիս են
միայն 48,7 տոկոս կրոսինզովիր: Այդ նվազումը կախված է կրկնա-
կի կրոսինզովիրի առկայությունից: Կրոսինզովիրի միջանկյալ ցու-
ցանիշները գումարելիս ստացվում է իսկական հեռավորությունը՝
100 մորգանիդից ավելի:

Համեմատած բարեկը.—Դեռ նոր են սկսել կազմել ընտա-
նի կենդանիների քրոմոսոմների քարտերը: Մենք արդեն ասել եյինք,
թե հավերի նկատմամբ հայտնի յև շաղկապման 9 խումբը Ա. Ս. Սե-
րբրովսկին յեվ Օ. Գ. Պետրովը 12 տարվա հետազոտությունների հիման
վրա կազմել են քրոմոսոմների վրա դասավորված գեների փաքր քարտ,
վոր պատկերված և 2-րդ աղյուսակում: Այդ քարտում գետեղված ե.



բնգամենը 18 զե՞ն նրանցից 4 զե՞ն գտնվում են սեռական քրոմոսո-
մում (սեռական քրոմոսոմների մասին տես հաջորդ գլխում), վոր նըշ-
ված և նաև վրապես առաջին քրոմոսոմ։ Վոտների դեղին գույնի և
պլիմուտ-ուսկային (ուղղահայաց-չերտավոր) գույնի գեները շատ մոտ
են իրար՝ ընդամենը 8 մորգանիդ հեռավորության վրա։ Իսկ արծա-
թագույնը և պլիմուտ-ուսկայինը տալիս են $42^{\circ}/_{\circ}$ կրոսինգվեր։ Գեները
քրոմոսոմում դասավորված են հետեւյալ կարգով. գեղին վոտներ-պլի-
մուտ-ուսկային գույն—արծաթագույն, վորովհետեւ վոտների դեղին
գույնի և արծաթի գույնի գեների միջև արդեն վոչ մի շաղկապում
չի նկատվում, այսինքն՝

$A-B=8$ մորգանիդի, $B-C=42$ մորգանիդի

$A-C=50$ մորգանիդի։

Դրանցից առաջ և զալիս հետեւյալ կարգը՝

$$\overbrace{A-B}^{8} \overbrace{C}^{42}$$

50

Փոճոկաձեւ կատարի և յերկնագույն վատների գեները քրոմոսո-
մում գտնվում են մեկական հատ։ Այդ նշանակում ե, վոր
ողարզվել և այդ Գեների ժառանգման անկախությունը մյուս
գեների նկատմամբ։ Նրանցից յուրաքանչյուրը մյուս քրոմո-
սոմների ամեն մի գենի հետ ճեղքվում և ազատորեն՝ Մենքիլի
յերրորդ կանոնի համաձայն՝ Թանի ավելի հետազոտվեն հավերի գե-
ները և նրանց շաղկապումը այնքան ավելի ու ավելի կրացվի
քարտը։ Յեթև յերեան բերվի, վոր վորես գեն շաղկապված և փոճո-
կաձեւ կատարի հետ, ապա այդ գենը կտեղավորվի յոթերորդ քրո-
մոսումում այնպիսի հետավորության վրա, վորը հավասար և նրա հետ
իր ունեցած կրոսինգվերների թվին։ 15 տարի առաջ առաջ զրոյոնիլի
համար (*Drosophila melanogaster*) կազմված քարտն ավելի մեծ չեր,
քան այժմ հավի համար կազմված քարտը։ Սակայն 15 տարվա ըն-
թացքում նրա քարտի վրա անցկացված գեների թիվը 400-ից ան-
ցավ։ Թարտի ճիշտ կառուցումը բավական բարդ գործ է։ Կրոսինգվե-
րի չափված տոկոսների մեջ մի շարք ուղղութեան են մտցվում և
միայն գրանցից հետո նշանակում են տարածությունները քարտում։

Ծիռորգիական ապացույցներ կրոսինգվերի ժամանակ անդի ու-
նեցող երամասների հասկածների փոխանակումն մատին։ — Եալկապման
խցումը քացարելու համար Մորգանը յենթադրեց, վոր քրոմոսոմ-
ների կրոսինգվերը և նրանց հատվածների (կտորների) փոխանակումը

կարող և անդի ունենալ անոտական բջիջները հասունանալիս: Քրոմո-սոմային հատվածների փոխանակման պատճառով կարող ե տեղի ու-նենալ գեների վերահամակցում և այսպես կոչված կրսովվերային խմբակների սահղծումը հաջորդների մեջ կրոսինգվերի գաղափարը կազմեց ներդաշնակ ուսմունքի, Մարգանիզմի հիմքը:

Պետք ե ասել սակայն, վոր մինչև վերջին ժամանակներս քըռ-մոսումների խաչողորման յերևությը խոշորացուցալին հետազոտությամբ չեր ապացուցված: Վոչ վոք չեր դիտել քրոմոսոմների խաչողորման ու խզման պատճառով տուաջացած քրոմոսոմային հատվածների փոխա-նակումը և նրանց կրկին միանալը: Ուստի Մարգանի բացարու-թյունը միայն սրամիտ ու փայլուն հիպոթեզ եր: Այդ պատճառով գրականության մեջ մի քանի անգամ փորձեր են արվել վորև այլ ճանապարհով բացատրել գեների շաղկապման և վերահամակցման յե-րևութը: 1931 թվականին Նեերնը կարողացավ ապացուցել, վոր դրո-զոֆիլ մոտ (*Drosophila melanogaster*) իրոք գոյություն ունի կրո-սինգովեր, վորին ուղեկցում ե հոմոլոգ քրոմոսոմների հատվածների փոխանակումը: Քրոմոսոմների կտորների իրական փոխանակումն ապացուցելու համար անհրաժեշտ ե, վոր յերկու հոմոլոգ քրոմոսոմ-ներ իրարից տարբերվեն իրենց արտաքինով (հետերամորֆային, այ-լաձև լինեն): Այս ժամանակ կրոսինգվերի շնորհիվ առաջ կդան յերկու-նոր քրոմոսոմներ, վորոնք յելակե-տային քրոմոսոմներից կտարբերվեն և տեսանելի կլինեն ցիտոլոգիական պրեպարատների վրա (նկար 54):



Նկ. 54. Շտերնի փորձի լուսաբա-նութը:

Առաջնակ քրոմոսոմների հետերո-մորֆության գեպքում տեսվի ունեցող կրոսինգվերի ընդհանուր սենյակ: Բ—կրոսինգվերի (խայլորում) հոմո-լոգ քրոմոսոմների մեջև, վորոնցից մեկը ընկված է յերկու մասի, ընդ վորում անջատված կտորն ամբացել է յերկորդ քրոմոսոմի ծայրին (այդ գեպքն իրոք կտարբերէ ե): 1—յելա-կտային քրոմոսոմները, 2—խայ-լորումն մոնիթուը, 3—կրոսինգվերի պրոյունքը (ըստ Շտերնի):

Շտերնն այդպիսի հետերոմորֆ քրոմոսոմներ եր ստացել Ռենտգենի ճառագայթներից կտարբերվեն և տեսանելի կլինեն ցիտոլոգիական պրեպարատների վրա (նկար 54): Շտերնն այդպիսի հետերոմորֆ քրոմոսոմներ եր ստացել Ռենտգենի ճառագայթների ներգործմամբ (ահօ գլուխ Յ-րդ), վորի ընթացքում հա-ճախի ցիտոլոգիաբեն տեսանելի փո-փոխություններ են կտարբերվել քրո-մոսոմների կառուցվածքում: Նա-ուառանասիրության համար վերցրեց ժառանգական այնպիսի մի գիծ, վորտեղ քրոմոսոմներից մեկին ամ-բացված եր ուսը, իսկ մի այլ հո-մոլոգ քրոմոսոմ յերկու կտորի յեր բաժանված: Յերբ կրոսինգվերի կտարբերվում, ուս ունեցող յերկար քրոմոսոմի և հոմոլոգ կտորներից

մեկի միջն, ինչպես ցույց է տալիս 5-րդ նկարը, ստացվում են նոր քրոմոսոմներ։ Շաերնը տրամախաչել եր փոխված քրոմոսոմներ ունեցող զծերը և ուսումնասիրել եր նրանց հաջորդներին։

Կրոսվիերյան խճրերի ցիտոլոգիական ուսումնասիրումը ցույց տվից, վոր քրոմոսոմների կտորների վիճակնակումն իրոք տեղի յե ունեցել Շաերնն իր աշխատության մեջ ե բերում մեծ թվով նկարներ ու մանրալուսանկարչական ցիտոլոգիական պրեպարատներ, վարոնք ակնառու կերպով լուսաբանում են հոմոլոգ քրոմոսոմների կը տորների փոխանակման փաստը։

Այդպիսով, Շաերնի աշխատանքից հետո Մորդանի յենթագրությունը՝ քրոմոսոմների խաչոլորման մասին, դառնում և ռեալ կերպով ապացուցված փաստ հաջորդ հարցերը, թե վոր աստիճանի վրա յի կատարվում կրոսինգովերը, վարն և պրոցեսի մեխանիզմը, առայժմ գեռ չեն լուծվել։

Արութենի յավ եզերի կրոսինգովերի առընթարքաւնները։ — Դրոզոֆիլի քրոմոսոմների կրոսինգովերն ուսումնասիրելիս զիանականները հանդիպեցին մի որիգինալ յերեսույթի։ Կրոսինգովերը տեղի յե ունենում միայն եզերի մոտ, իսկ արուների մոտ՝ վոչ։ Մէ ժամանակ կարծում եյին, թե արուների մոտ կրոսինգովեր չկատարվելու պատճառն ե, զուցե, վոր քրոմոսոմային կոմպլեքսում գտնվում են յերկու տարբեր քրոմոսոմներ՝ X և Y (սեռական քրոմոսոմներ։ տես հաջորդ դլություն)։

Արգարե, մետաքսարեր թիթեռի մոտ, վորի եզերին (հակառակ դրոզոֆիլին) հատուկ են X և Y քրոմոսոմները, քրոմոսոմների կրոսինգովեր չի կատարվում։ Սակայն հետագայում պարզվեց, վոր մի շարք այլ աեսակներում կրոսինգովերը տեղի յե ունենում յերկու սեռի քրոմոսոմների միջն, բայց վոչ հավասարաչափ։ Այդպես, աքաղաղների մոտ կրոսինգովերն ավելի թույլ հ' համեմատած հավերի հետ¹⁾։ Gammarus խեցգետնի և մի ճպուռի մոտ, վորոնց քրոմոսոմների միջն կրոսինգովեր և կատարվում, ինչպես և մկների ու առնետների մոտ, արուների քրոմոսոմների կրոսինգովերը նույնպես ավելի թույլ ե, կամ եզերի²⁾մոտ։ Հատ յերեսույթին, ինչ վոր պատճառներ կան թերես բջիջների հենց կառուցվածքում, վորոնք մասամբ կամ ամբողջովին արգելակում են կրոսինգովերը սեռերից մեկում։ Ցեթե այդ այդպես ե,

1) Ինչ վերաբերում ե X և Y քրոմոսոմներին, նրանց միջն այնուամենայնիվ կրոսինգովեր չի կատարվում, այսինքն՝ հավերի այդ քրոմոսոմներով եզերի մոտ կրոսինգովեր չի լինում։

տպա չե՞ կարելի արդյոք արհեստականորեն թուլացնել այդ արգելակումը։ Այդպիսի ինդիր դրեց իր առջև ։ Ե. Ֆրիզենը Մոսկվայում և փայլուն կերպով լուծեց։

Նա Ռենտգենի ճառագայթների և ջերմության ներգործմամբ ուժեղացնում եր կրոսինդրովերը և կարողանում եր առաջ բերել վերջինս դրոզոֆիլի արուների մոտ։


Դեմերի խրական դասավորումը բռնօսումնեռում։ — Զպետք և կարծել վոր գեների քրոմոսոմային քարտերն ուղղակի ցույց են տալիս գեների խսկական դասավորումը քրոմոսոմների շերտում։

Թարտը միայն ցույց և տալիս գեների կարգը և նրանց փոխադարձ շաղկապվածության հարաբերական աստիճանը։ Այժմ գենետիկաների ձեռքին կան վերլուծան այնպիսի միջոցներ, վորոնց ոգնությամբ կարելի յե ուղղել այդ գենետիկական քարտերը և ուրվագծել առանձին գեների խսկական դասավորումը քրոմոսոմների յերկարությամբ։ Դրանք շատ բարդ միջոցներ են, վորպեսզի հնարավոր լիներ մի քանի խոսքով լիակատար գաղափար տալ նրանց մասին։ Դրանցից հիմնականն այն է, վոր կիրառվում և քրոմոսոմների ցիտոլոգիական ուսումնասիրումն այն դեպքերում, յերբ դուրս և ընկնում քրոմոսոմների մի մասը՝ նրանում գտնվող գեների հետ, կամ քրոմոսոմի մի բեկորը կտրվում ու ամրանում և իրեն հոմոլոգ մի այլ քրոմոսոմին (արանալոկացիա—տեղափոխություն)։ Թե կարվելը, և թե տրանսլոկացիան հաստատվում են նաև գենետիկորեն՝ ուսումնասիրելով համապատասխան գեների վարմունքը ժառանգման պրոցեսում։ Ապա ցիտոլոգիական ուսումնասիրություն են կատարում և պարզում են անջատված կամ տեղափոխված կտորների հարաբերական մեծությունը։

Այդպիսով հաջողվում և ուղղում մտցնել գեների դասավորման մեջ, ավելի մոտեցնելով վերջինս գեների խսկական ու ոեալ դասավորմանը քրոմոսոմներում, ծճ-րդ նկարի ներքեռում բերված և դրույովիլի յերրորդ քրոմոսոմի սովորական գենետիկական քարտը, իսկ վերենում՝ յերրորդ քրոմոսոմի ուրվագիծը, այնպես, ինչպես, յերեսում և նա խոշորացույցի տակ, վորտեղ նշված են առանձին գեների դասավորման տեղերը։

Նկարը վերցված և Դաբրժանսկու աշխատությունից։ Նա ցույց և տալիս, վոր գեների խիտ դասավորումը քրոմոսոմների մեջտեղում իրականությանը չի համապատասխանում։ Հստ յերեսույթին, կրոսինդրովիրը քրոմոսոմների մեջտեղում շատ դժվար և կատարվում, իսկ ծայրերին՝ հեշտ եւ Դա այնպիսի տպավորություն և գործում, թե գեներն իրար մոտ են դասավորված միջին մասում և, ընդհակառակը՝ հեռու յեն դասավորված ծայրերում։


Այդ և զրա նման մյուս աշխատությունները հաստատեցին. վոր գեների գծային դասավորումը ճիշտ է, վորովհետև քրոմոսոմի անշտաված կամ տեղափոխաված մասը մեծացնելիս յերեսում եր, վոր



նկ. 55. Դրոզոմիի յերրորդ քրոմոսոմի գենետիկական քարտն ուղղելու մի որինակ. Կետագեների վրա տառերով նշված են գեները, ներբեռմ նշանակված և նրանց հարաբերական դասավորումը ըստ գենետիկական տվյալների, վերելում ըստ ցիտոլոգիական տվյալների (ըստ Դորժանսկու):

Նրանում գեներն իրար կողքի յին դասավորված հենց այն կարդով, վորը գտել ելին կրոսինգօվերի հիման վրա:

Ընդհանուր առմամբ, քրոմոսոմներում տեղի ունեցող փոփոխություններն ուսումնասիրելու այդ ամբողջ աշխատանքն ուղղակի ապացուցում է, վոր քրոմոսային տեսության ասպարիզում մորգանիզմի սահմանած հիմնական դրույթները ճիշտ են:



նկ. 56. Գենետիկական քարտ ուղղումը Պայմաների մեթոդով. Ներբեռմ արցում և գրազոֆիլի սեռական քրոմոսոմների խոկական պատկերումը, վերելում գենետիկական քարտը. Կետագեներով ցույց են տրված քրոմոսոմների մեջ դասավորված գեների տեղերը. Քրոմոսոմների վրայով անցնող սրաքները ցույց են տալիս քրոմոսոմների բնկան տեղերը:

Մորգանիստական վերլուծման մերդեւեր.—Ինչպիս ցույց է տալիս հենց անունը, մորգանիստական վերլուծումը գենետիկական վերլուծման այն աստիճանն է, յերբ վնասում են տվյալ գենի կապը՝ շադ-

կապումը մյուս՝ արդեն հայտնի գեների հետ կամ շաղկապման արդեն հայտնի խմբերի հետ։ Շաղկապումը յերեան բերելուց հետո հնարավոր և նաև վորոշել տվյալ գենի հեռավորությունն այն մյուս գեներից, վորոնց հետ շաղկապվել են նաև

Այստեղ ևս հիմնական մեթոդն եւ հանդիսանում դիհիբրիդային տրամախաչման ոգտագործումը։ Ավելի մեծ չափով քան մենցելիս տական վերլուծման ժամանակը, այստեղ ևս նպատկահարմար եւ ոգտը վել վոչ թե F_2 -ից, այլ F_1 -ից, այսինքն՝ հակադարձ տրամախաչումից կրկնակի ռեցեսիվով։

Վոչ A և B գեների միջև կապ կա, յերեսում եւ նրանից, վոր դիհիբրիդային սովորական $1:1:1:1$ հարաբերությունը կատարելապես վորոշակի ձևափոխության երենթարկվում, այն եւ մեջտեղի յերկու կամ ծայրերի յերկու կատեղորիաների թվերը կդերապանցն մյուս յերկու կատեղորիաների թվերը։ Դորժնականում չպետք եւ մոռանալ, թե տվյալ A և B գեները գործնականորեն ինչպիսի կոմբինացիաներով մտան հետերոզիգոտային AB -ի մեջ։ Այնդեպահում, յերբ յերկու գեներն ել դուրս են յեկել մի առանձնիկից, այսինքն՝ յեթե տրամախաչումն ուներ հետեւյալ պատկերը,

$$\begin{matrix} AB & ab \\ AB & ab \end{matrix}$$

$$| \\ AB \\ ab$$

ապա Եթում վոչ կրոսովերալին դասերը կմնեն $\frac{AB}{ab}$ և $\frac{ab}{ab}$, իսկ կրոսովերայինները՝ Ab և aB ։ Այդ գեղքում A և B գեները ցույց կտան շաղկապում (յերբեմն ասում են նաև ձգողություն)։

Ընդհակառակը, յեթե գերիշխող գեներն առաջ են յեկել տարբեր ծնողներից, այսինքն՝ յեթե տրամախաչումը կատարվել է հետեւյալ կերպ՝

$$\begin{matrix} Ab & aB \\ Ab & aB \end{matrix}$$

$$| \\ Ab \\ aB,$$

տպա Fb-ում, ընդհակառակը, վոչ կրոսովերային դասերը կլինեն
 Ab aB
 ab ab' իսկ կրոսովերայինները՝ AB ab
 ab ab'

Այս գեպքում A և B գեներն իրար հետ են մղում, այսինքն՝
 մեծ մասամբ ջոկ-ջոկ են լինում և սակայ գեպքերում միասին,
 թերեւ կրոսովերային և վոչ կրոսովերային դասերի տարրերու-
 թունը ուսալ ե, շաղկապումը կարելի իւ ապացուցված համարել: Ոգ-
 տակար ե, վոր մեր տրամադրության տակ լինեն տրամախաչման
 յերկու տիպերն են, զորովնեան դրանցից միայն մեկը լինելու գեպ-
 քում կարող ենք հանգել սիալ յեղակացության, թե շաղկապում
 դոյլություն ունի, մինչդեռ իրոք շաղկապում չկա, բայց դասերի միջն
 խոկապես տարրերություն կա՝ գեների տարրեր կենսունակության,
 նրանց տարրեր արտահայտվածության պատճառով, և այլն:

Այդպիսով, շաղկապումը պարզելու համար պետք է կարողանալ
 հետերոդիգուաներ ստանալ ըստ յերկու գեների և կրկնակի ուցե-
 սիթսերի: Եթե այն ժամանակ, ի հարկե, ճեղքման բավականաչափ մեծ
 թվեր ունենալիս դժվար չի լինի համոզվել՝ շաղկապում կա, թե չկա:
 Շաղկապում լինելու գեպքում կարելի յէ հաշվել կրոսինգովերի տո-
 կուը ե, դրանով իսկ՝ գեների միջն յեղած տարրածությունը:

Հարկավ, իրենց ուժը պահպանում են մեր արած այն բոլոր
 դիտողությունները, թե միայն յերկու գեների կրոսինգովերի թիվը,
 մասնավոնդ, յմթե նա մեծ ե, բավականաչափ գաղտափար չի տալիս
 հեռավորության մասին հեռավորությունը մեծ լինելու գեպքում կրկը-
 նակի կրոսինգովերները շոշափելի տարրերություն կստեղծեն մեր
 հաշված հեռավորության և իսկական հեռավորության միջև: Այդ ան-
 խուսափելի սիալը վերացնելու համար պետք է գտնել տվյալ յերկու
 գեների միջև տեղավորված թեկուղ մի հատ յերրորդ գեն ևս Նկատի
 ունենալով, վոր գյուղատնտեսական կենդանիների հայտնի գեները
 սակավաթիվ են, հարկադրված ենք բավարարվել շաղկապման հայտա-
 բերումով և ընդունել մոտավոր հեռավորությունը, յենելով կրո-
 սինգովերի տոկոսից:

Շատ ավելի դժվար և վերլուծման յենթարկել գեների դասավո-
 րումը քրոմոսոմում: Դրա համար մեզ հարկավոր ե ուսումնասի-
 րել միաժամանակ յերեք գեն, այսինքն՝ մեր տրամադրության տակ
 ունենալ այսպիսի տրամախաչում:

$$\frac{ABC}{abc} \times \frac{abc}{ABC}$$

Ցերքեմն շատ դժվար ե լինում ստեղծել գյուղատնտեսական կենցանիների տրամախաչման այդպիսի մողել Ահա թե ինչու նպատակահարմար ե նախնական արդյունքներ ստանալ, ուսումնասիրելով գեները զույգ-զույգ, այսինքն՝ վորոշելով Ա և Բ, Ա և Ը, Յ և Ը գեների միջև յեղած հեռավորությունը Ցերթե այդ գեները գտնվում են միմյանցից միջին հեռավորության վրա ($5-20$ մորգանիդ), ապա թվերը հնարավորություն կտան դասավորել գեներն իսկական կարգով: Սակայն յերթ յերկու գեներ միմյանց մոտ են դասավորված, իսկ յերրորդը՝ հեռու, ապա հնարավոր չի լինի պատասխան տալ հարցին:

Վերցնենք, որինակ՝ այսպիսի թվեր. Ա—Յ=3, Ա—Յ=34, Յ—Յ=31, Կարծես պարզ ե, վոր գեները դասավորված են Ա—Յ—Յ կարգով: Բայց իրոք դա կարող ե այդպես չլինել Ա—Յ և Յ—Յ հեռավորության վիճակագրական սխալներն այնքան մեծ են, վոր նրանց տարբերությունն Ա—Յ-ի նկատմամբ կարող ե սոսկ պատահական լինել Յեկը, ընդհանրապես, անտեղի յե սպասել վոր ստացվող թվերն այնպիսի իդեալական բնույթ կունենան, ինչպես մեր հնարած որինակում:

Այժմ մորգանիստական վերլուծման տեսությունը չափականց լրիդ և մշակված՝ փաստական այն հսկայական նյութի հիման վրա, վոր ստացվել ե գրողոֆիլի, յեգիպտացորենի և այլ որյեկանների վրա կատարված աշխատանքով: Դժբախտաբար գյուղատնտեսական կենցանիների նկատմամբ կառայժմ մենք կարող ենք դորժագրել նրա միայն ամենաառաջին քայլերը (յերևան բերել շաղկապումը, գտնել մոտավոր հեռավորությունը և, շատ քիչ դեպքերում՝ $2-3-4$ գեների դասավորումը քրոմոսոմների յերկարությամբ): Մորգանիստական մեթոդի արմատացումը, անշուշտ, քիչ ոգուած չի տա, ուստի անհրաժեշտ ե ավելի ուժեղ թափով մշակել գյուղատնտեսական կենցանիների մասնավոր գեներափական:

Մորգանիզմի հօանակուրյանը յնչ նրա բնագառաւրյանը. — Գենետիկան, ուսումնասիրելով գեների դասավորումը քրոմոսոմներում, անցագ իր զարգացման ավելի բարձր, աստիճանին Գենետիկայի զարգացման այդ շրջանը կոչվում է մորգանիզմ, Մորգանի անունով, վորի լաբորատորիան Ամերիկայում ուսումնասիրում ե դրողոֆիլը (այժմ դրողոֆիլի ուսումնասիրությամբ զրադված են վոչ միայն Ամերիկայում և Յեվրոպայում, այլև ԽՍՀՄ-ում, այն ել բավականաշատի ինտենսիվ կերպով):

Մորգանիզմի համար բնորոշ ե այն, վոր նա գեները պատկերացնում ե զորպես քրոմոսոմների նյութական մասնիկներ: Այդ պատկե-

բացումը մի մեծ քալլ հանդիսացավ գեղի առաջ, համեմատած մենակերպմի հետ:

Մուգանի տված ուղղությամբ գենետիկան խորացավ շատ մեծ նրբությունների մեջ:Առ այժմ այդ գենետիկան դարձանում և միայն լարորատորային որյեկտների նկատմամբ, առավելապես զրոգոֆիլի վրա կատարվող աշխատանքում: Իսկ ինչ վերաբերում և խոշոր կենդանիներին, ինչպես արդեն ասացինք, նրանց ժառանգականությունն այնքան քիչ և ուսումնասիրված է, վոր նրանց հիման վրա չի կարելի նույնիսկ արծարծել գենետիկական պրոբլեմներից շատերը, վորոնք արծարծվում և լուծվում են գրողովիլի վրա կատարվող աշխատանքի բնագավառում: Իրենց ուսումնասիրվածությամբ միայն հավը և ճագարը բավականաչափ բարձր են կանոնած, ուստի նրանց նկատմամբ արդեն կիրառվում են Մուգանի զրույթները՝ գեների դասավորումը քրոմոսոմներում, խաչորումը, քրոմոսոմների քարտերը և այլն:

Ծիշտ և՝ մորգանիզմն իր զարգացման, մանավանդ սկզբնական շրջանում չխուսափեց մեթոդուղիքիական մի շարք սխալներից, վորոնք հիմք եկին ծառայում մեղադրելու այն մեխանիզմի մեջ: Մորգանի դպրոցը, ինչպես և մենդելիզմը, ընդունում եր գեների լիակատար մեկուսացումը՝ ջոկ-ջոկ դասավորված քրոմոսոմների մեջ: Վերացվում և նոր գեների առաջացման հարցը (Մորգանի ասելով՝ «ամյորի և մարդու գեների միենույն թիվը»): Դրանով իսկ ժխտվում ե գեների պատմականությունը (գեների հարցը մենք ավելի մանրամասն կքննունք երգ գլխում):

Համեմայն դեպս մորգանիզմի շնորհիվ գենետիկան հասավ շատ ավելի բարձր աստիճանի: Մորգանիզմը նյութական ամուր հիմքի վրա զրեց ժառանգման յերեսությները, Յեկ թեպետ կարիք կա լուրջ քննագատության և ավելի խորը մշակման յենթարկել մորգանիզմի առանձին զրույթները, այնուհանդերձ, նրա տված հիմնական զրույթը—շաղկապման ու կրոսինդովերի որենքը—մտավ ժամանակակից բիոլոգիայի յերկաթե ֆոնդի մեջ:

ԸՆԴԱՆՈՒԹԻ ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ճեղքման ժամանակ հատկանիշների անկախ բաշխման հետ միասին լինում են նաև շաղկապման ժառանգման գեղքերը: Մորգանը ցույց տվեց, վոր շաղկապման պատճառն և տվյալ գեների մի զույգ քրոմոսոմում գտնվելը:

2. Շաղկապումը լինում և լրիվ և վոչ լրիվ: Շաղկապումը վոչ

լրիվ լինելիս, վորոշ գեպքերում շաղկապումը խղվում և և առաջ են դալիս անհատներ, վորոնց մեջ, տվյալ գեների շրջանում քրոմոսոմների կրոսինգովերի պատճառով, տեղի լե ունենում ծնողների հատկանիշների վերակոմբինացիա:

3. Գեների յուրաքանչյուր զույգի համար կրոսինգովերի տոկոսի մեծությունը բավականին մշտական և և բնորոշում և նրանց միջև յեղած հեռավորությունը, Հեռավորությունն արտահայտվում և մորգանիդներով (1 մորգանիդը հավասար և խաչոլորման 1 տոկոսին):

4. «Ցեթե» 8, Ե և Ը ներկայացնում են յերեք գեն և յեթե ա-ի, Ե-ի ու Ը-ի շաղկապման հարաբերությունները հայտնի յեն, ապա ա-ի և Ը-ի շաղկապման հարաբերությունը կազմում և աԵ-ի ու ԵԸ-ի դումարի կամ տարբերության ֆունկցիան» (Մորգան):

Այս դրույթը հիմք և կազմում քրոմոսոմներում գեների գծային դասավորման և քրոմոսոմային քարտերի կառուցման համար:

5. Բոլոր գեները դասավորվում են շաղկապման խմբերով, վորոնք համապատասխանում են քրոմոսոմների զույգերի թվին:

6. Մեր բերած հինգ կետերը կազմում են մորգանիդմի հիմքը և մանրամասնորեն արտահայտում են Մորգանի ժառանգականության չորրորդ՝ որենքը՝ շաղկապման ու կրոսինգովերի որենքը:

7. Միայն գյուղատնտեսական մի քանի կենդանիների համար գոյություն ունեն քրոմոսոմային առաջին քարտերը (հավ, ճագար):

8. Կրոսինգովերի ժամանակ տեղի ունեցող քրոմոսոմների կառուների փոխանակման ռեալ լինելը վերջերս փորձնականորեն ապացուցել եր Նեերնը:

9. Ցիտոլոգիական այն մեթոդը, վոր գործադրվում և ներքրումումային զանազան փոփոխություններն ուսումնասիրելիս, հաստատեց գեների գծային դասավորման ճիշտ լինելը և հսարավորության ավեց ուղղութեր մտցնել գեների փոխադարձ այն հեռավորությունների մեջ, վորոնք չափված եյին գենետիկական ճանապարհով:

10. Մորգանի ուսումնասիրած որինաչափությունների հիման վրա ստեղծվեց գենետիկական վերլուծման հատուկ բաժին՝ մորգանիստական վերլուծում, վորի խնդիրն և՝ վորոշել գեների դիրքը քրոմոսոմներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Спиннот-Дени. Курс генетики. ГИЭ, 1930 (դուկ VІІ և VІІІ):

2. Морган Т. Структурные основы наследственности (դուկ VІ և XII):

Այս դրույթ կարելի յե ծանոթանալ մի շաբաթ մանրամասնությունների, այն և՝ կը սինդիկերի շափի վրա աղջող պատճառները, ինտերֆերենցիայի բացարձումը և այլն),

7. Аксентский. Материальные основы наследственности. ГИЗ Украина 1924 (часть II, том 3-й IV выпуск) «О значение наследственности цитоплазмы».

4. Морган. Теория гена. Изд. „Союзтель“, 1927, (чл. I—IV).

5. Филиппенко. Генетика. ГИЗ, 1929. (чл. IX).

6. Пениет. Менделизм. ГИЗ, 1930, (чл. XII и XIII).

7. Гольдшмидт Р. Учение о наследственности. ГИЗ, 1928 (чл. VI).

8. Кру. Генетика животных. 1928, (чл. IV).

9. Бредлавец. Введение в цитологию. ГИЗ, 1930 (чл. XIII).

10. Серебровский А. С. и Петров С. Г. К составлению плана хромосом домашней курицы. Журнал эксперим. биологии за 1930 г., т. VI, вып. 3. Дополнения к этой статье в том же журнале за 1931 г. т. VII, № 1, (августовский выпуск) и в чл. II в разделе «Хромосомы домашней курицы и бройльской курицы».

11. Дубинин и Гентнер. Руководство по генетике и селекции кроликов. Сельхозгиз, 1932. (августовский выпуск) «Хромосомы кроликов».

12. Керкис Ю. А. К вопросу о существовании явления перекреста хромосом. Журнал «Природа» 1932.

13. Дубинин Н. П. Успехи хромосомной теории наследственности. Журнал «Успехи современной биологии», 1932 г. № 1, № 2, № 3—4 (августовский выпуск) и в № 5 (октябрьский выпуск) «Хромосомы кроликов».

ԳԼՈՒԽ Դ

ԳԵՆԵԹԻԿԱՆ ՅԵՎ. ՍԵՌԱԾ

Սեռերի տարբերությունները, սեռական բջիջների՝ յերկու տիպի գոյությունը և այն, վոր այդ բջիջները կազմվում են տարբեր առանձնիկների կամ միենույն յերկսեռ առանձնիկի տարբեր որգաններում, սեռի հետ կապված բաղմաթիվ յերեսությները—հարցերի այդ ամբողջ գումարը հսկայական նշանակություն ունի նաև մեծ նշանակություն ունի մասնավորապես ժառանգականության համար։ Ժառանգականության ուսմունքում մեծ տեղ ե գրավում սեռին և նրա ժառանգմանը վերաբերող գլուխը։

Սեռերի տարբերությունները.—Բոլոր կենդանիների և բույսերի մեջ, բացի նրանցից, վորոնք գտնվում են զարգացման ամենացածր աստիճանի վրա, սեռական բաղմացումը յերկու զամետների միացումն եւ նրանցից մեկը՝ արական գամետը, սովորաբար շարժուն և չկ համեմատաբար փոքր, իսկ մյուսը՝ իգական գամետը, համարյա միշտ զգալի չափով ավելի մեծ և բույսերի մեջ հաճախ գամետների յերկու տիպն ել արտազրում և միենույն բույսը, վորն այդպիսով հանդիսանում է յերկսեռ բույս։ Կենդանիների մեծ մասում լուրաքանչյուր անհատ արտազրում է կամ իգական, կամ արական գամետներ, այդ պատճառով ել մի տեսակի սահմաններում գոյություն ունեն վորոշակի արտահայտված յերկու տիպեր՝ եզեր և արուներ։ Այդ յերկու տիպերը սովորաբար կազմվում են հավասար թվով, թեպետ բացառություններ լինում են։ Սեռերի տարբերությունները շատ հաճախ պարզ ու գորոշակի յեն։

Այդ բոլորը մեղ հիմք ե տալիս յենթազրելու, թե գոյություն ունի ինչ-վոր ճշգրիտ միականիզմ, վորի գործողության շնորհիվ տարբեր հատկանիշներ ունեցող յերկու սեռերն ել լինում են միենուն քանակով։ Այդ գործությների նկատմամբ գործություն ունեցող բացառությունները կարենոր շատ տվյալներ ընձեռեցին սկզբնական սեռական

սարքերությունների բնությունն ըմբռնելու համար, այլ խոսքով՝ սեռի վորոշման պրոբեմը պարզելու համար:

Բացի սկզբնական սեռական հատկանիշներից, գոյություն ունեն մի շարք, այսպես կոչված՝ յերկրորդ սեռական հատկանիշներ, ըստ փորոնց դիմերենցվում են լերկու սեռերը: Դրանք են՝ աքաղաղների զուգորդման որգանները, կատարի ու ականջի բլթակների ալեւի շատ զարգանալը, արու թռչունների փետուրների ավելի պալծառ գույնը, սմբակավորների յեղջյուրները, առյօւծի բաշը, տղամարդու միրուքը և այլն Այդ հատկանիշները ժառանգվում են, սակայն նըրանց արտահայտումը սահմանափակված է վորոշ սեռով, ուստի զրանք կոչվում են «սեռով սահմանափակված հատկանիշներ»: Թիվեալի այդ հատկանիշների ուսումնամասիրումը նույնպես մեծ լույս և սփռում սեռի հարցերի վրա, սակայն դրանց քննումը դուրս է գալիս բուն գենետիկայի շրջանակներից:

Սեռի բնամասային բնորդությանը՝ Սեռի վորոշման հիմնական պրոբեմը լուծելու համար շարունակ առաջազրպվել են բազմաթիվ յենթադրություններ: Այդ ասթիվ գոյություն ունեն հարյուրավոր դանագան հիպոթեզներ՝ բարդ ու պարզ, յերեխայական—նաև բավականաչափ խորը հիպոթեզներ: Ավելորդ և վերլուծել դրանք ներկայումս բիոլոգների մեծ մասն ընդունում են սեռի մի թեորիա: Հաջողվեց ակնառու կերպով ցույց տալ վոր սեռը հիմնականում ժառանգվում է այնպես, ինչպես և մենագելյան մյուս հատկանիշները, և վոր սեռի վորոշման մեջ զիմանշական բնույթին ընդունում է վերաբերյալ սեռը հատուտում են միմյանց:

Սեռի վորոշման ժամանակակիցից քրոմոսոմային թեորիայի ապացույցներն ստացված են յերկու գլխավոր աղբյուրներից՝ գննետիկական փորձերից և սեռուկան բջիջներից ցիառլոգիական ուսումնամասիրումից: Այդ տվյալները հատուտում են միմյանց:

Սեռի հետ օտղկապված հականիքների սաստմնախրումը: — Ինարկե, անմիջականորեն ուսումնամասիրել սեռի ժառանգումը վորպես այդպիսին, հնարավոր չե այն պատճառով, վոր արուն և եղբ տրամախաչվելիս մեծ մասամբ սերնդի կեսը բազկացած է լինում եղերից, մյուս կեսը՝ արուներից: Սակայն կան մի շարք հատկանիշներ, փորոնք հատուկ, միանգամայն վորոշակի ձևով կապված սեռական պրոցեսի հետո ժառանգական կապված անհատական առանձնահատկությունն այն է, վոր նրանք շաղկապված են լինում սեռը վորոշող մի քանի գենների հետ, այդ պատճառով ել կոչվում են սեռի հետ օտղկապված հասկանիքներ: Նրանց գենետիկա-

կան վարքագիծը սեւի վորոշման արդի թէուրիայի զարդացման համար ամենագլամավոր աղբյուրներից մեկը հանդիսացավ.


Աչքի օպիտակուրյան ժառանձրումը դրոգոճիլի մաս.—Քննենք այդպիսի ժառանձրականության ամենապարզ ձևը, վոր հանդիպում ենք գրողոփիլի մոտ, վորովհետև գրանից կարելի յէ ամենահեշտ կերպով գաղափար կազմել այդ հարցի մասին:

Դրողոփիլի վրա փորձեր կատարելիս Մօրգանը սովորական կարմիր աչք ունեցող ճանմերի մեջ գտավ սպիտակ աչքերով մի արուն Այդ արուն նախահայր դարձավ սպիտակաչքանի գրողոփիլների մի ամբողջ ցեղի համար Օնդի ներկայացուցիչներին նորմալ կարմիրաչքանի ճանմերի հետ տրամախաչելիս պարզվեց, վոր սպիտակ աչքանի արվի և կարմիրաչքանի եղի տրամախաչումից տարրեր հաջորդներ են ստացվում, քան կարմիրաչքանի արուն սպիտակաչքանի եղի հետ տրամախաչելիս. Փորձի արդյունքները փոխվում եյին՝ նայած թէ վոր սեռը եր պատկանում տրամախչման մեջ տվյալ հատկանիշը մտցնող ծնողը, իսկ սովորական մենդելյան ժառանձրման ժառանձրման ժամանակ վոչ մի տարրերություն չկա՝ մմյըն և մտցնում մեր դիտած հատկանիշը, թթ հարը:


Սպիտակաչքանի արուն կարմիրաչքանի եղի հետ տրամախաչելիս առաջին սերնդի (F₁) բոլոր անհատները՝ ինչպես եղերը, այնպես ել արուները, կարմիր աչքեր են ունենում (նկ. 57.). Բայում բոլոր եղերը կարմիրաչքանի յեն լինում, իսկ արուների մոտ կես մտան ունինում ե կարմիր աչքեր, իսկ մյուս կեսը՝ սպիտակ աչքեր. Այդպիսով սպիտակաչքանի արուն իր աչքերի սպիտակությունը հաղորդում ե միայն թոռներին. Այդ վերջինները չեն պարունակում աչքի կարմրության գենը, վորովհետև զուտ սպիտակաչքանի գծի հետ տրամախաչվելիս նրանք տալիս են բացառապես սպիտակաչքանի սերունդը իսկ ինչ վերաբերում ե կարմիրաչքանի եղերին, ապա հետագա ուսոււմնասիրումը ցույց ե տալիս, վոր նրանց կես մասը հետերոդիպուտային և աչքի սպիտակության գենով, վորովհետև նրանց հաջորդների մեջ եղերի կես մասն սպիտակաչքանի յեն:

Բոլորովին այլ արդյունքներ են ստացվում կարմիրաչքանի արուն սպիտակաչքանի եղի հետ տրամախաչելիս. Առաջին սերնդում բոլոր արուներն ել սպիտակ աչքեր ունեն, իսկ բոլոր եղերը՝ կարմիր աչքեր, այսինքն՝ աչքի սպիտակության գենով, վորովհետև նախաձե՛սպիտակաչքանի մորից նրա տղաներին:

Հետազում արուները զուտ են լինում, ըստ աչքի սպիտակության գենի, իսկ այդ տրամախաչումից ստացված եղերը բոլորն ել հետերոդիպուտային են. նրանց մոտ աչքի կարմրության գերիխող գենի տակ թագնված ե աչքի սպիտակության ուղղեսիլ գենը. Ցերկորդ սերնդում եղերի ու արուների կեսն ունի սպիտակ աչքեր, իսկ մյուս կեսը՝ կարմիր աչքեր:



Նկ. 57. Դրազոֆիլի կարմիրաչքանի եղի որամտխաչութեա սպիտակ-աչքանի արդի հետ.



Նկ. 58. Դրողոֆիլի սպիտակաչքանի եղի արտախաչումը կարմիրաչքանի արվի հետ:

Այդ տեսակ ժառանգականությունը վերլուծելու փորձերը բերին այն միակ բննթաղրության, թե եղը սեռի հետ շաղկապված ամեն մի հատկանշի համար պետք է յերկու զեն ունենա, իսկ արուն՝ միայն մի զեն, Մորգանն այդ բացարեց նրանով, վոր սեռի հետ շաղկապված զեները դանվում են սեռական քրոմոսոմներում, վորոնք տարրեր են արվի ու եղի մոտ:

Սեռական բարձությունը.—Ծիտոլոգները ցույց տվին, վոր արվի և եղի սեռական բջիջներում քրոլոր քրոմոսոմները հարանման չեն և իրար չեն համապատասխանում:

Որինակ՝ զանազան փայտոջիւների սպերմատոզենեզն ուսումնասիրելիս պարզվեց, վոր մի տեսակի սահմաններում կազմվում է սպերմատոզորիդների յերկու տիպ, վորոնք տարբերվում են միմյանցից իրենց քրոմոսոմներով: Մի քանի սպերմատոզորիդներ ունեն այնքան քրոմոսոմ, վորքան ունի ձուն, իսկ մյուսները՝ մի քրոմոսոմ պակաս:

Լինում են նաև այնպիսի զեպքեր, յերբ քրոմոսոմների թիվը հավասար է թե ձվերում և թե սպերմատոզորիդներում, սակայն սպերմատոզորիդների մի մասում քրոմոսոմներից մեկն աչքի յե լնկում իր մեծությամբ:


59-րդ նկարը ցույց է տալիս Protenor փայտոջի սեռական բջիջների հասունանալը: Աջ կողմում (ներքե) ցույց են տրված յերկու սպերմատիդ (ապագա սպերմատոզորիդները): Նրանցից մեկն ունի վեց քրոմոսոմ, մյուսը՝ յոթ քրոմոսոմ:

Ցենթրոֆրություն կար, թե կապ չկմ արդյոք քրոմոսոմների տարբերության և սեռի վորոշման միջև:

Գուցե սպերմատոզորիդների մի սորտով բեղմանվորված ձվերը եղեր են տալիս, իսկ մյուս սորտով բեղմանվորվածները՝ արուները:

Զանազան կենդան իների գա-

նկ. 59. Protenor փայտոջի դիպլոիդային կոմոլերը՝ ա և ե—սպերմատոզորիդներ, ս—օվագոնիաներ, դ—սպերմատոցիտների յերկորոր բաժանումը, ե և ի—յերկու սպերմատիդների քրոմոսոմները:



մատների ու մարմնի բջիջների ուսումնասիրումը ցույց տվեց, վոր այդ յենթաղրությունը ճիշտ եւ Վերցնենք, որինակ՝ նույն դրոզոֆիլը եղի մարմնի բջիջներում (նկ. 50) կա չորս զույգ քրոմոսոմ, արվի մարմնի բջիջներում նույնպես չորս զույգ քրոմոսոմ, սակայն մի զույգի մեջ տարբերություն է նկատվում: Մինչդեռ եղի այդ յերկու

Քրոմոսոմները միատեսակ են, արվի այդ քրոմոսոմներից մեկն ունի սովորական ձև, իսկ մյուսը տարբերվում է նրանով, վոր կորացված է, կարծես ուս ունի Առաջինները կոչվում են X —քրոմոսոմներ, գրանցից եղն ունի յերկու հատ, իսկ արուն՝ մի հատու Ուս ունեցող յերկորդ քրոմոսոմը կոչվում է Y —քրոմոսոմ, վորն ունի միայն արուն։ Այդպիսով զրողոֆիլի եղի քրոմոսոմային կոմպլեկտը կարելի յի պատկերել վորպես վեց սովորական քրոմոսոմ (գրանց կոչվում են առաջոտոսմներ) + 2 X , իսկ ավելի կոմպլեկտը՝ 6 առաջոտոմ + Y+Y։ X և Y քրոմոսոմները կոչվում են սեռական եռմասաներ, վորովնետե նրանք հանդիսանում են, այսպես կոչված, սեռի ցուցանիշներ, յերկու և լինելու դեպքում ճանճը եղ և լինում, իսկ մի X և մի Y լինելու դեպքում արու։

Զանազան կենդանիների սեռական եռմասումների Թորմուլը, — Սեռերի քրոմոսոմային տարբերությունը միշտ այնպիս չի լինում, ինչպես տեսանք զրողոֆիլի մոտ:

Նախ՝ բոլոր կենդանիները բաժանվում են յերկու խմբի, նրանց մի մասի մեջ, վորոնց պատկանում և զրողոֆիլը, մի շարք այլ միջատներ և կաթնասուններ, վորոնց թվում նաև մարդը, — հետերոգամետային և արական սեռը, իսկ հոմոգամետային և իգական սեռը՝ այսինքն՝ արուն ունի X և Y , իսկ եզր՝ 2 X ¹⁾ 15-րդ և 16-րդ նկարներում (զլուխ 11) պատկերված են արու այժի և արու վոչխարի քրոմոսոմային կոմպլեմները նրանց յերկսի վրա ել նշված են X և Y սեռական քրոմոսոմները: Թիթեռնիկների և թուշունների մեջ հետերոգամետային և իգական սեռը, իսկ հոմոգամետային և արականը, եզրի կառուցվածքն է $X+Y$, իսկ արվինը՝ 2 X (ուղղակի հակառակ և կաթնասունների և զրողոֆիլի հարաբերություններին):

Ապա՝ Y քրոմոսոմը արրեր տեսակներում շատ տարբեր և լինում էր արտաքինով: Յերենն նա ունենում է նույնական մեծություն, ինչպես X քրոմոսոմը կամ նույնիսկ ավելի մեծ և լինում, յերենն ել շատ փոքր:

Վերջապես կան դեպքեր, յերբ ընդհանրապես Y չկա: Այն ժամանակ հետերոգամետային սեռի փորմուլը կմնի վոչ թե $X+Y$, այլ $X+0$ կամ պարզապես X :

Պետք ե նկատի ունենալ, վոր սեռն այդպես վորոշելիս, ինչպես թիթեռների ու թուշունների նկատմամբ, սեռական քրոմոսոմները

1) Հետերոգամետային և այն սեռը ($X+Y$), վոր տալիս և յերկու սորտ գտնեա, իսկ հոմոգամետային և այն սեռը, վոր տալիս և միայն մի սորտ (բալորն ել Տիթեռների):

համար դրականության մեջ յերբեմն դորձ են ածում այլ նշաններ, այն եւ արդի համար 27, իսկ եղի համար 7+8:

Եղի յնձ տրվի զամեաները. — Տեսնենք, թե ըստ սեռական քրոմոսմների ինչպիս տեղի կունենա բեղմնավորումը կենդանիների այն խմբում, վորին պատկանում և դրողովիլը (և կաթնասունները):

Սեռական բջիջների հասունացման ընթացքում յերկու անգամ նվազում և քրոմոսմների թիվը Առաջ յերկող իդական դամետները կորառուակեն 3A+X: Իսկ արական գամեանները կլինեն կամ 3R+X կամ 3R+Y: Յեթե ձուն, վոր միջոց ունենում և 3R+X կառուցվածքը, բեղմնավորվի 3R+X ոպերմատողովդով, որդանիզմը կունենա 6A+X+X: Նա եղ կլինի: Իսկ յեթե ձուն բեղմնավորվի 3R+Y սպերմատոփիդը, ապա որդանիզմը կունենա 6R+X+Y և կդառնա արու: Ապագա որդանիզմի սեռը կախված կլինի նրանից, թե հատկապիս ինչպիսի սպերմատողովիդը և բեղմնավորված ձուն Կարելի՞ յետել, թե գոյություն ունեն եղի սպերմատողովդներ և արդի սպերմատողովդներ, այսինքն՝ արական սեռը տալիս և զանազան սորտի զամեաններ, իսկ իդականը՝ միայն մի սորտի: Այդ պատճառով ել այժմ գործ և ածվում հետեւյալ տերմինուոգիտան: Հետերոգամիտային սեռ, վոր ատլիս և յերկու սորտի գամեան՝ տվյալ զեպքում արական, և նույնատեսակ զամեաններ տվող՝ համոզամետային սեռ:

Արական և իդական սեռի թվական հարաբերությունը կախված է այն հարաբերությունից, վոր գոյություն ունի X և Y առանձնիկի քրոմոսմներ պարունակող սպերմատողովդների (կամ համապատասխանողների) միջև: Մեզ արդեն հայտնի յե սեղուկցինն բաժանման մեխանիզմի հիման վրա—թե տատջինները և թե յերկրորդները մոտավորապիս պետք և լինեն կիսուուկս: Ահա թե ինչու զարմանալի չե, վոր կենդանիների բազմաքանակ տեսակների մեջ (բացի սակավաթիվ այն կենդանիներից, վորոնք սեռ կազմելու հատուկ մեխանիզմ ունեն) սեռերի հարաբերությունը հավասար է 1:1: Դա հնաց այն հարաբերությունն ե, վոր սաացվում և համոզուեցուային անհատը հետերոզիցուայինի հետ տրամախաչելիս, ուստի յերբեմն ասում են, թե սեռերը մենցելվում են: Այդպիսով սեռը վորոշվում և բեղմնավորման մոմենտին, նայած թե վոր տիպի սպերմատողովդն և բեղմնավորել տվյալ ձուն, կամ, ընդհակառակը՝ վոր տիպի ձու յե բեղմնավորվել սպերմատողովդով, այսինքն՝ նայած բեղմնավորման այս կամ այն պատճականությանը: Բեղմնավորվող սպերմների (կամ ձվերի) մեծ թվի շնորհիվ սեռերի քանակի միջև ստեղծվում է 1:1 հարաբերությունը:

Սեռերի առաջ գալու հատուկ մեխանիզմ մեղամեթի մեջ. — Սեռերի առաջացման վերոհիշյալ մեխանիզմն ընդուրկում է կենդանիների տեսակների մեծ մասը (բացի ամենապարզերից): Սակայն մի քանի տե-

սակներ բացառություն են կազմում: Բացառության որինակներից են հանդիսանում մեղուները, պիծակները և նրանց մոտիկ մյուս միշտները: Նրանց մեջ արական սեռն ստացվում է չըեղմնավորված ձվերից: Իսկ յեթե ձուն բեղմնավորված է, նրանից առաջ կզա եգը (մեղուների մեջ բանվոր մեղու կամ մեղվամայր), ուստի և սեռերը 1:1 հարաբերությունը չեն ունենալ: Այդ հարբերությունը վորոշվում է բեղմնավորված ձվերի հարաբերական քանակով:

Աչքի սպիտակուրյան ժառանգման բացառությունը սեռական բարեկանությունից հաղորդման պատկերը աչքի սպիտակուրթյան ժառանգման բնույթի հետ, Մարգանը հանգեց այն գաղափարին, թե աչքի սպիտակուրթյան գենը գտնվում է Տ քրոմոսոմում: Իսկ ինչ վերաբերում է Կ-քրոմոսոմին, նաև, ինչպես պարզվեց, վոչ մի գեն չի պարունակում¹), ուստի վոչ մի կերպ չի խանգարում Կ-քրոմոսոմում գտնվող գեներին՝ դրսեռորդվելու: Այդ պատճառով արուն՝ սեռի հետ շաղկապված բոլոր գեներն ունենում են մեկական քանակով:


Այժմ՝ ուշադրություն դարձնենք քրոմոսոմային սբեղմների վրա (նկար 58 և 59): Տ քրոմոսոմները պատկերված են ուղիղ ձողիկների ձևով, իսկ Կ-քրոմոսոմները՝ ծոված գլխով ձողիկի ձևով: Աչքի սպիտակուրթյան սեցսեսիվ գեները գտնվում են սպիտակ քրոմոսոմներում, իսկ աչքի կարմիր գույնի գենը՝ նորմալ ալբելոմորֆը, գտնվում է սև գույնով նշված քրոմոսոմներում: Դժվար չեն նկատել, վոր կարմիր աչքանի եղն սպիտակաչքանի արվի հետ տրամախաչվելիս աչքի սպիտակուրթյան գենի քրոմոսոմը հորից անցնում է վոչ թ տղաներին, այլ միայն աղջիկներին, վորոնց աչքի սպիտակուրթյունը չի արտահայտվի այն պատճառով, վոր մորից նրանց ստացած մյուս քրոմոսոմում գոյություն ունի նորմալ ալբելոմորֆը, այսինքն կարմիր աչքերի գենը: Սակայն աչքի սպիտակուրթյան գենն ունեցող սպիտակ քրոմոսոմը ձվի միջնորդ աղջիկներից անցնում է տղաներին (ծայրագույն աշխան՝ 51-րդ նկարիւմ), վորոնց մոտ և կդրսեռորդի աչքի սպիտակուրթյունը:

Սպիտակաչքանի եղը կարմիր աչքանի արվի հետ տրամախաչվելիս աչքի սպիտակուրթյան գենն խսկույն Կ-քրոմոսոմի հետ կանցնի տղալին, վորի մեջ և կդրսեռորդի: Մենք կստանանք խաչաձել ժառանգականություն, մորից տղային:

Ցերկու տեսակ տրամախաչման դեպքում ել պետք է ուշադրություն դարձնել Բ, եղերի վրա: Նրանք յերկումն ել իրենց սեռական

1) Պետք ե ասել, վոր համարյա չի պարունակում, վորովետե կան աշխատություններ, վորոնք ցույց են տալիս, թե գրողնիկի Կ-քրոմոսոմը, նախ՝ ընդհանուր նշանակություն ունի որպանիզմի մի քանի հատկությունների գոյացման համար և, յերկրորդ՝ նրանում հայանէ յև մի՛ գեն՝ Կ-քրոմոսոմի ներքեմի ծայրում գտնվող «bobbed» գենի նորմալ ալբելոմորֆը:

Քրոմոսոմներից մեկում պարունակում են աչքի սպիտակության գնդը, վորը դրսերգում և նրանց աղաների մոտ նրանց աղաների կիս մասը, նրանք, վորոնք կտտանան «ան» քրոմոսոմ, կունենան սովորական կարմիր աչքեր, իսկ մյուս կեսը, «սպիտակ» քրոմոսոմ ստացած մասը, կունենա սպիտակ աչք: Այդպիսի եղերը կոչվում են «եղ-կրողներ»: Մարդու գենետիկայում այդպիսի «կրողներ» են կոչվում այն կանայք, վորոնց սեռական քրոմոսոմներից մեկում կա հեմոֆիլիայի (արյունանոսության) գենը: Նրանց աղաների կեսը տառապում է հեմոֆիլիայով: Այդ հիվանդության ժառանգումը, վոր առաջ հանելու կային եր, հասկանալի դարձավ այն ժամանակ, յերբ հայտարերվեց



Նկ. 60. Սև արագազի արամախաչումը պլիմուտոսի համար հետ (շերտագոր)

Նկ. 61. Պլիմուտոսի արագազի (շերտագոր) արամախաչումը սև համար (կրուից)

սեռի հետ շաղկապված ժառանդականությունը: Զիու, կովի և վոչխարի մոտ առալժմ գեր չեն գտնվել սեռի հետ շաղկապված հատկանիշներ:

Պլիմուտոսիոյին գույնի ժառանդակումը համեմի մեջ՝ մետասիստիկական սիրված են հավերի այն մի քանի հատկանիշները, վորոնք վորոշվում են սեռական քրոմոսոմում գտնվող գեներով: Բնանքնք պլիմուտոսիոյին ուղղաձիգ—շերտագոր գույնի ժառանդակումը: Այդ գույնը դիրիշխում է միատեսակ գույնի վրա:

Մինորկա ցեղի սև աքաղաղը շերտագույն պլիմուտով հավի հետ արամախաչելիս մի յուրահատով յերեսույթ և նկատվում. բոլոր աքաղաղները խայտարդես են լինում, իսկ հավերը՝ սև իսկ սև հավը և խայտարդես աքաղաղը տրամախաչելիս բոլոր հաջորդները խայտարդես են լինում. Այդ կարելի յև բացատրել, ընդունելով, վոր ինչպես շերտավոր, այնպես ել սև գույնի գեները գտնվում են սեռական քրոմոսոմներ՝ X և Y, իսկ աքաղաղը՝ վույգ քրոմոսոմներ՝ X+X. Յենթադրենք, թե շերտագույն հավի X քրոմոսոմում գտնվում է շերտավորության գերիշող գենը (սփեմում՝ 60-րդ և 61-րդ նկարում այդ X քրոմոսոմը շերտավոր և նկարված), իսկ Y-քրոմոսոմը վոչ մի գեն չունի. Աքաղաղի յերկու X-քրոմոսոմներում ել կա սև գույնի մեկական ռեցեսիվ գեն (այդ յերկու քրոմոսոմներն ել սև են նկարված). Այժմ հետեւնք ժառանգմանը, Աքլորիկները մի X-քրոմոսոմ ստանում են սև գույն ունեցող հորից, իսկ մյուս X-քրոմոսոմը՝ շերտավորության գեն ունեցող մորից, Կրստորվի շերտավոր գույնի գերիշող գենը և աքլորիկներն իրենց մայրերի նման շերտագույն կլինին. Վառիկներն իրենց մորից ստանում են Y-քրոմոսոմ, իսկ հորից՝ սև գույն ունեցող X-քրոմոսոմ. Այդ պատճառով նրանք իրենց հայրերի նման սև կլինին. Այդպիսով խաչաձև յուրահատուկ ժառանգումը տեղի յե ունեւնում X և Y քրոմոսոմների յուրահատուկ կերպով հաղորդվելու պատճառով:

Ենթագույն պլիմուտով աքաղաղը մինորկա հավի հետ արամախաչելիս բոլոր նտերը շերտագույն են լինում, անկախ նրանից, թե աքլորիկներ են նրանք; Թե վառեկներ, վորովհետև նրանք յերկու գեղքում ել իրենց հորից ստանում են շերտավորության գեն ունեցող X քրոմոսոմներից մեկը. Առաջին սերնդի եգերն ունեն պլիմուտուկային գեն պարունակող մի X-քրոմոսոմ և մի Y-քրոմոսոմ. Իսկ նորյան առաջին սերնդի արուներն ունեն մի հատ շերտագույն X-քրոմոսոմ, մի հատ ել սև գույնի քրոմոսոմ.

Մեր բերած նկարներով կարելի յե հետեւել թե ինչպես են հազորդվում յերկորդ սերնդին խայտարդետ ու սև գույն ունեցող քրոմոսոմները:

Եթե Թ հավը շերտագույն ե, F₁-ում վառեկների ու աքլորիկների կես մասը շերտագույն կլինի, իսկ յեթե P հավը սև ե, F₁-ում բոլոր աքլորիկները շերտագույն կլինին, իսկ վառեկների կեսը կլինի սև, կեսը՝ շերտագույն:

Պլիմուտուկային գենը, գերիշխող լինելու պատճառով, դրսենորվում է վոչ միայն հոմոլիգոտային, այլև հետերօղիգոտային վիճակում. Ուստի այստեղ՝ կը ողք՝ բառը չի կարելի կիրառել. Սակայն յեթե մենք գործ ունինայինք այնպիսի հավի հետ, վորը սեռի հետ շաղկապահ

ուեցեսիք գեն ունենար, ապա «կրող» տերմինը պետք էլիներ կիրառել արվի նկատմամբ, գորովհետև միմիայն մի Հ-քրոմոսոմ ունեցող եզը չի կարող կրող լինել¹⁾։

Այսպիսով, հավերի մեջ կստացվի հակառակ հարաբերություն՝ համեմատած կաթնասունների ու դրողովիլիք հետ։


Ուղղակի ապացույցներ, վար սեռի հետ օպղկապված գենները գենր վում են սեռական բրոմոսոմներում։ Սեռի հետ շաղկապված գենների՝ սեռական բրոմոսոմներում գտնվելու սկզբում շատ հավանական մի յենթագրություն եր միայն՝ հիմնված այն զուգահեռականության վրա, վորը դոլություն ուներ քրոմոսոմների և սեռի հետ շաղկապված գենների բաշխման մեջ։ Սակայն հետազայում յերեան յեկան մի շարք ուղղակի ապացույցներ, թե սեռի հետ շաղկապված գենները փեղիկապես, միանդամայն ունալ կերպով գտնվում են սեռական քրոմոսոմներում։ Այդպիսի առաջին ապացույցն ստացվեց դրողովիլից, այն և՝ Հ-քրոմոսոմների հաղորդման և դրա հետ կապված ժառանգման անկանությունների ուսումնասիրմամբ։

Անբակառություն։ — Սպիտակաչքանի եզերը կարմիրաչքանի արուների հետ արամախացելիս հաջորդները սովորաբար բաղկացած են լինում կարմիրաչքանի աղջիկներից և սպիտակաչքանի տղաներից։ Բրիջսը, սակայն, գտավ, վոր մի քանի արամախաչքումների ժամանակ սովորական խոշածե ժառանգման հետ միասին առաջ են դալիս նաև շատ փոքր թվով սպիտակաչքանի աղջիկներ և կարմիրաչքանի տղաներ։ Այդ «բացառիկ» անհատների առաջանալը բացատրելու համար նաև յենթազրեց, վոր ուղղություն բաժանման ժամանակ կարող են անկանոնություններ տեղի ունենալ Աչքի սպիտակության դեմ ունեցող յերկու քրոմոսոմներ կարող են պատահարար միասին լինել և յերկուսն ել կամ կարող են ընկնել ուղղություն տվող մարմնիկի մեջ այնպես, վորք ձուն կստացվի առանց Հ-քրոմոսոմի, կամ կարող են մաս է ձգում։ Վերջին դեպքում ձուն կունենա յերկու Հ-քրոմոսոմ և, հետևաբար, աչքի սպիտակության յերկու գեն։ Այդ յերեւյթը՝ կոչվում և անքակտություն (non-disjunction՝ անզիրեն)։ Սպիտակաչքանի եզը, վորի ձուն հասունանալիս յերեւմն տեղի յի ունենում սեռական քրոմոսոմների անքակտություն, բացի Հ-քրոմոսոմ ունեցող նորմալ զամետներից, տալիս և նաև XX և O զամետներ։

1) Անզիրայում թշնարուծության մեջ լայն չափով տարածվել և «սեռի հետ շաղկապված արամախաչումը», վորովհետև նա հնարավորություն և տալիս վորոշելու ճակարի սեռը՝ նրանց ձվեց զուրս զարու որը (այդ կարեւը և սեռները չոկ-ջոկ զամետարակելու, և վաճառելու համար)։

Յեթև XX ունեցող վամետը բեղմնավորված և Y-քրոմոսոմ կրող սպերմիով, կտացվի XXY քրոմոսոմներ ունեցող ճանճ: Նա եղ կլինի, չնայած Y-ին, վորովհետև կրում է 2X: Այդ եղի աչքերը մոր նման սպիտակ կլինեն, վորովհետև մորից ստացած նրա X-քրոմոսոմները կրում են աչքի սպիտակության գիներ:

Իսկ յեթե սեռական քրոմոսոմներ չունեցող գամետը բեղմնավորվի այնպիսի սպերմատոզուիդով, վոր կրում է X-քրոմոսոմ (նրանում պարունակվող աչքի կարմրության գինով), կտացվի մի X քրոմոսոմում ունեցող ձեւը: Արտաքինով դա կլինի կարմիրաչքանի արու:



Նկ. 62. Անքակտության սքեմը: Ցերկու համար X-քրոմոսոմ ունեցող ձուն բեղմնավորում և Y-քրոմոսոմով: Ստացվում է XXY եղը (շաբաթը ներքեմի շաբաթ, ըստ Թելյատի)

Այդպես բացատրեց Բրիջեն ստացված արդյունքները: «Բացառիկ» սպիտակաչքանի եղերի՝ խոշորացույցով հետազոտումը հաստատեց, վոր նրանք իսկապես յերկու X-քրոմոսոմ և մի Y ունեն (նկ. 63):

Այս գեղքն որինակ ե ծառայում, թե ինչպես զենքերիկական վերլուծման վրա հիմնված յինթազրությունն ուղղակի հաստատվել և ցիտոլոգիական ուսումնասիրությամբ: Դիենետիկայում արդին քիչ չեն այդպիսի դիպքեր:

Անոի հետ առդիսապիամ գիմերը առքիր կենդանիների մաս Այդ գլուխի սկզբավորումը սեռական բռնասամաւմ.—Դրողովիլի մոտ սեռի հետ շաղկապիած հատկանիշների ուսումնասիրումը հնարավորություն ավեց սեռական քրոմոսոմում՝ վորոշ կարգով դասավորել նրանց դեները:



նկ. 63.

Անրակտության հետևանքով ստացված XXY և զի քրոմոսոմային կոմպլեքսը ներքեւում վերառում համեմատության համար քերպած է եղիք քրոմոսոմների նորմալ կոմպլեքսը (ձախ կազմում) և արգի քրոմոսոմների նորմալ կոմպլեքսը (աջ կազմում):

Ցիտոլոգիական մեթոդի կիրառումն այստեղ ևս հնարավորություն տվեց ուղղելու գենետիկական քարտը: Այդ աշխատանքը կատարեցին ամերիկյան գիտնականներ Մյոլլերը լեզ Պայնեթը 1932 թվականին: Հիզինակները յերեան քերին միանգամայն անսպասելի և շատ հետաքրքր մի հանգամանքը: Գենետիկական քարտով հայտնի դեներն իրոք դրավում են քրոմոսոմի մոտավորապես կես՝ մասը (ձախ կողմը), իսկ աջ կողմը կեսը Y-քրոմոսոմի նման իներտ և կ կրում է միայն bobbed դենը, այսինքն՝ նա ըստ յերեսույթին ներկայացնում է Y-քրոմոսոմի մի կտորը, վոր մի ժամանակ միացած է յեղել X-քրոմոսոմին:

Մենք արգեն ասել եյինք, թե գրողովիլի Y-քրոմոսոմի «դատարկ» կությունը լրիվ չե: Նրանում հայտնի յե միայն մի գեն և, բացի զրանից, մի քանի ընդհանուր հատկություններ: Մասնավորապես սերունդ տարւ հատկությունը կախված է Y-քրոմոսոմից, այն ել վոչ թե ամբողջից, այլ նրա վորոշ մասից, վորի բացակայությունն արվի մեջ:

Ներկայումս արդեն հայտնի յե, վոր գրողովիլի Խ-քրոմոսոմում գոյություն ունի՝ ավելի քան 50 գեն, վորոնք աղդում են բաղմաթիվ հատկությունների և հատկանիշների վրա: Նրանք, սեռի հետ չհաղկապված սովորական գենների նման, կարող են իրար հետ կրոսինգօվեր ունենալ վորը և հնարավորություն տվեց վորոշ տեղակրում դասավորել նրանց սեռական քրոմոսոմում (53-րդ նկարում պատկերված քրոմոսոմի պլանում առաջինը նշված և սեռական քրոմոսոմը):

կան քրոմոսոմը:

պատճառ և դառնում նրա անպաղության Մի քանի կենդանիների Յ-քրոմոսմն այսպիսի գեներ և կրում, վորոնք ժառանգվում են միայն արական գծով (այդ ապացուցված և մի քանի ձկների և բղեղների նկատմամբ), ի միջին այլոց, նկարագրված են դեպքեր, յերբ մարդ ունենում և թաղանթավոր մատներ, վորոնք հաղորդվում են միայն տղամարդկանց և տղամարդկանցից:

Հավը նույնպես ունի սեռական քրոմոսմի փոքր քարտ (յերկրորդ աղյուսակում պատկերված և առաջինը): Այդ քարտի վրա նշշված և չորս գեն՝ դեղին վոտներ, պլիմուտովկային գույն, արծաթավուն գույն և դանդաղ փետրավորում):

1933 թվականին մի ամերիկյան գենետիկական ժուռնալում տպված և Մակ-Աբուրի աշխատությունը, վոր հավի սեռական քրոմոսմում նշում և արդեն յոթը գեն:

Կան տվյալներ սեռի հետ կապված գեների գոյության մասին բաղերի մոտ: Խոչ վերաբերում և կաթնասուններին, ապա, մարդուց բացի, վոչ մի կենդանու մոտ չի նկատված սեռի հետ կապված ժառանգումը:

Գինանդրումներ.—Հայանի յե, վոր պատահում են առանձնիկներ, վորոնց մարմնի մի քանի մասերն արական են, մյուսները՝ իգական: Առանձնապես ապչեցուցիչ դեպքեր են նկատվել միջատների մոտ, յերբ մարմնի ուղիղ կես մասն արական՝ և լինում, մյուս կեսը՝ իգական: Ճիշտ ե, այդ պարագիր չե և մարմնի՝ հակառակ սեռերով բռնված մասերը կարող են յերբեմն ավելի փոքր լինել (այդպիսի անհատները կոչվում են մոզայիկներ):

Դրոգոթիլի գենանդրումորֆների ուսումնասիրությունը դրոգոֆիլի մոտ ցույց տվեց սեռական քրոմոսմների ամբողջ նշանակությունը, վորովինետև նրանցով ցուցադրվեց Խ-քրոմոսոմում գանվող գեների դրսենումը: Այդպես, որինակ՝ ստացվեցին եկեր, վորոնք հետերոդիգոտույին եյին մարմնի գեղին գույնի ուղեսափ գենով (նա գտնվում է Խ-քրոմոսոմում): Այդպիսի եղերն ունեն նորմալ գորշ գույնու Բայց յեթե նրանց մեջ լինում են գենանդրումորֆներ, ապա դեպքերի կես մասում նրանց արական կեսը դեղին կլինի: Այդ կարելի յե հասկանալ միայն այն դեպքում, յեթե ընդունենք, վոր արական կեսը ըեղման վորված ձվի վաղ բաժանումներից մեկի ֆամանակ կորցրել և Խ-քրոմոսոմումը, տվյալ դեպքում այն, վոր կրում եր նորմալ գույնի գենը:

Այդ բացարությունը ճիշտ գուրս յեկավ գենանդրումորֆիկմի մի շարք դեպքերի համար: Միայն շատ քիչ դեպքերում պատկերը մի փոքր ավելի բարդ ե, սակայն գրանք ևս կարելի յե բացարձել քրոմոսմների հիման վրա:

Անհերքիլութեր, վարպետ և ենթական՝ առւտասմբ ների յեզ Հ-քրոմասաց-
ների հարաբերության խախաման. —Կենդանու սեռը վորոշ յեղանակով
կաղզած և սուսական քրոմոսոմների նորկայության հետ: Այդ քրոմո-
սոմները, վորոնք կրում են բաղմապիսի հատկանիշների վրա աղղող
մի շարք գեններ, ընդունակ են աղղելու այն առանձնիկի սեռի վրա,
վորոնդ գտնվում են իրենք, «Սեռը մենքելում ե» արտահայտությունը
դորժածելիս չպետք է մոռանալ, վոր խոսքը վերաբերում է վոչ թե սե-
ռի մի վորեե գեննին, այլ նրա շատ ավելի բարդ նյութական հիմքին՝
զենքների մեծ խումբ պարունակող սեռական ամբողջ քրոմոսոմներն: Սա-
կայն պրոբլեմի բարդությունը դրանով չի սպառվում: Կան թիթեռ-
նիկների և գրողոֆիլի վրա կատարված մի շարք վորձեր, վորոնք
ցույց են տալիս, վոր միմիայն սեռական քրոմոսոմները չեն, վոր վո-
րոշում են սեռը: Թեպետ նրանք զվաճապր պատճառներն են, սակայն
սեռը վորոշելու դորժում նշանակություն ունեն նաև առւտասոմները,
թերեւ նաև ձվի ցիտոլիզմը Առւտասոմներից մի քանիսում գտնվում
են արական սեռի վորոշիչները: Սևասկան քրոմոսոմների և առւտա-
սոմների հարաբերությունը խախավելու դեպքում այս կամ այն սեռը
նորմալ կերպով չի գագանում, և կարող են ստացվել եգերի ու ա-
րուների նկատմամբ միջնական ձևեր, այսպես կոչված՝ ինտերսեքս-
ներ (միջնասեռեր):

Բրիջեսը մանրամասնորեն ուսումնասիրել և դրողոֆիլի միջնասե-
ռության, այսինքն՝ սեռի միջնական զանազան դեպքեր:

Պարզվեց, վոր ինտերսեքսները շատ արաբեր են նրանցից վո-
մանք մոտենում են արականին, մյուսները՝ իգականին Բացի զրանից,
պատահել են առանձնիկներ, վորոնց մեջ չափից դուրս արտահայտ-
վել են կամ եղի կամ արվի գծերը: Զուղանեռ ցիտոլոգիական ու-
սումնասիրությունը ցույց տվեց, վոր ինտերսեքսների մոտ փոխվել և
Հ-քրոմոսոմների և առւտասոմների թվի հարաբերությունը: Դուրս յե-
կագի, վոր քրոմոսոմներից վամանք գտնվում են յեռակի թվով, մյուս-
ները՝ կրկնակի թվով: Այդ հիմք ավեց Բրիջեսին յեղակացնելու, վոր
դրողոֆիլի սեռը վորոշվում է Հ-քրոմոսոմների և առւտասոմների քա-
նակական հարաբերությամբ: Կարծես Հ-քրոմոսոմները կրում են իգա-
կան սեռի, իսկ առւտասոմները՝ արական սեռի տարրերի գեններ, իսկ
առանձնիկի սեռը վորոշվում է թե մեկի և թե մյուսի հարաբերու-
թյամբ: Ընդ ոմին այսակազ վեր և խաղում վոչ թե պարզապես Հ-քրո-
մոսոմների և առւտասոմների թիվը, այլ նրանց յերկսի գումարը և փո-
խադարձ հարաբերությունը: Այդ կապը կարող է լուսաբանել հետե-
վյալ այլուստակը (Հ-ը նշանակում է մի Հ-քրոմոսոմ, Ա-ն՝ առւտասոմ-
ների լիակատար հապլոիդային մի կոմպլեկտ):

Առանձնիկի սեռը	Գրամատումա- յին փորձությը	Գրամատումա- յին փորձությը
Գերաբու	X+8A	1:5
Արու	X+2A	1:2
Խաղեցնեցն	2X+8A	1:1,5
Հապլոիդ եղ	X+ A	1:1
Դիպլոիդ եղ	2X+2A	1:1
Տրիպլոիդ եղ	5X+8A	1:1
Գեր եղ	8X+9A	1:0,66

Ինչեւուեմ մնամաքիր բիբենիւրի (Bombix dispar) միջև Դոլգության հիպօրեկզ. — Գերմանացի գիտնական Դոլգությունը արամախաչում կատարեց անզույդ մետաքսարեր թիթեռների (Bombix dispar) աշխարհագրական տարրեր (յեվրոպական և ճապոնական) ցեղերի միջև։ Նրանք յուրաքանչյուր ցեղի սահմաններում տալիս են՝ իրենց սեռով նորմալ սերունդի խոկ տարրեր ցեղեր իրար հետ տրամախաչելիս նըկատվում են սեռերի խախտումներ, հաջորդների մի մասը կազմում է ինտերսեքսներ։ Յուրաքանչյուր յերկու ցեղի համար նրանց տրամախաչման արդյունքն ունի այս կամ այն սեռի միջնասեռայնության վորոշ աստիճան, վորով կարելի յե վորոշել ցեղերի սեռական դիֆերենցիացիայի կարծես հարաբերական ուժը Այդ հիման վրա Դոլգության տարրերում է «թույլ» և «ուժեղ» ցեղեր։

Գոլցմիգությը վերոհիշյալ փաստերը բացատրում է հետեւյալ կերպ. Եզերն ու արուներն ունեն յերկու սեռերի գործոններն ել՝ F-ի (իգական) և M-ի (արական) գործոնները, ընդամենք արական սեռն ունի յերկու M, իգական սեռը. մի M (քրոմոսոմների փորմուլի համաձայն, արգի մոտ՝ XX, և եգի մոտ XY). Այդ F և M գործոնները բնորոշվում են քանակական վորոշ նշանակությամբ։ Խնդը՝ Գոլգության սեռի այդ գեներ պատկերացնում են վորպես ենդիմներ։ Այդ ենդիմների սովորական հարաբերությունն այնպես ե, վոր նա ապահովում ե զարգացման ժամանակ սեռի առաջացման նորմալ միխանիզմը, այն ե՝ F Մ առանձնիկների մոտ F>M-ից, ուստի զարգանում ե եղ՝ ♀, իսկ FMM առանձնիկների մոտ՝ MM>F-ից, այդ պատճառով զարգանում ե արուն՝ ♂։ Զանազան ցեղերում F-ի և M-ի քանակական նշանակությունը տարրեր ե, ուստի կարող ե պատահել այնպիսի դեպք, յերբ F—M-ի կամ MM—F-ի տարրերությունը նորմալից պակաս լինի։ Այն ժամանակ առաջ կզա միջնասեռություն, այսինքն՝ միջնչեռ սովորական զարգացման ժամանակ գերակշռում ե վորոշ սեռի գործոնը (թեպետ զարգացման ժամանակ գործում ե նաև հակառակ սեռի

դործոնը), ինսերսեքսի զարգացումն ըստ զանազան հատկանիշների մասամբ ընթանում և մի սեռի կողմը, մասամբ ել՝ մյուս սեռի կողմը:

Առջևո՞ւսների մի՞նչ թե ավելի գնես գոյարձում ունի. —Կարելի յէ բավականաչափ տարրերություններ դանել Կողմանիդսի և Բրիջեսի հայցքների միջև Այդ տարրերություններից մեկը հետեւյալն ե. Բրիջեսն ընդունում ե, վոր գոյություն ունեն սեռի շատ գեներ, վորոնք ուզգություն են տալիս զարգացմանը արական և իգական գծերով: Վերջին տարրեների փորձնական աշխատանքներն զգալի պարզուցություն մտցրին այն հարցում, թե սեռի մի՞ գեն գոյություն ունի, թե շատ: Բրիջեսը յենթադրում եր, վոր Հ-քրոմոսոմում կան սեռի մի քանի գեներ (իգական): Սակայն գրողն Փիլի տրամախաչման մի շարք գեղգերի ուսումնասիրումը, յերբ առկա յեր վոչ ամբողջ քրոմոսմը, այլ նրա միայն մի մասը, ցույց տվեց վոր, ամբողջ քրոմոսմը չի, վոր նշանակություն ունի սեռը վորոշելու համար: Այդ փորձերից մասնավորապես բգիսում եր, վոր քրոմոսմների ծայրերին սեռը վո-



Նկ. 64. Ուկրայինական գորչ տավար. վերել, ձախ կողմում ցուը աջ կողմում՝ կով: Ներքենում՝ յեզ: Ցեղն սեռակել և կովի շըզգեստը (ըստՄ. Մ. Զավադովսկու):

բոշող գեներ չկան: 1931 թվականին Պատմերունը պարզեց, վոր սեռի գենը (գուցե և իրար կողքի դանվող մի քանի գեներ) տեղափորված և սեռական քրոմոսմի 44-րդ և 54-րդ մորգանիցների միջև:

Սակայն լեթե սեռական քրոմոսմում կա սեռի միայն մի գեն, այնուհանդերձ նա գործում և թե այլ քրոմոսմների գեների և թե իր սեռական քրոմոսմի մյուս գեների հատ միասին:

Նույն սեռական քրոմոսմում գտնվող մի շարք գեներ, սեռի հիմնական, գլխավոր գեները չհանդիսանալով հանդերձ, կարող են

ձեսափոխիչ ազգեցություն գործել սեռի վրա ։ Դորրժանսկին և Շուլցը
ցույց տվին, վոր դա իրոք այդպես եւ Նրանք վերցնում եյին, ին-
տերսեքուուալ (միջսեռային) անհատներ (2X+3A) և դիտում եյին, թե
վիր աստիճանի կամանի նրանց միջսեռայնությունը, յեթե Հ-քրոմո-
սոմների մի մասը կրկնակի լինի Պարզվեց, վոր միջսեռայնությունն
սկսում ե մոտենալ եղին Ընդ սմին վորքան ավելի յերկար և Հ-քրո-
մոսոմի ավելորդ մասը, այնքան ավելի յե փոխվում միջսեռայ-
նությունը ։ Այդ ցույց ե տալիս, վոր Հ-քրոմոսոմի յերկարությամբ
զարգացման մի շարք գեներ, վորոնք վորոշում են իգական սեռի
հատկությունների զարգացման աստիճանը և լրացնում են հիմնական
գենների ներգործումը։

Սեռական գեղձերի դեր սեռի զարգացման մեջ. — Բոլոր կենդա-
նիների մոտ սեռերի տարբերության սկզբնապատճառը թաղված և
անհատների քրոմոսոմային կառուցվածքում։ Մակայն սեռական տար-
բերությունների բուն դիֆերենցիացիան զանազան կենդանիների մեջ
կատարվում և տարբեր ձևով։ Անհատների սեռական հատկանիշների
դիֆերենցման արդյունքն ե լինում սովորաբար այն, վոր առաջ են
զալիս սեռական տեսակետից զարգացած եղ և սեռական փունկցիա-
յին ընդունակ արու։

Որինակ՝ թոշունների ու կաթնասունների դիֆերենցիացիան տե-
ղի յե ունենում սեռական գեղձերի յուրահատուկ կառավարմամբ։
Մյուսների, որինակ՝ միջատների սեռական գեղձերն ազգեցություն-
չեն գործում սեռական դիֆերենցիայի վրա։ Միջատների բեղմ-
նավորումը զարգացմանն ուղղություն և տալիս դեպի այս կամ
այն սեռի կողմը։ Իգական գենոտիպը կզարդանա գեպի եղի կողմը,
իսկ արականը՝ դեպի արվի կողմը։ Յեթե վոչնչացնենք թրթուրի
սեռական գեղձերը, թիթեռնիկի արտաքին հատկանիշները կզար-
գանան, այնպես, կարծես վոչ մի ոպերացիա չի կատարվել։
Մալինայմերը հանեց եղ թրթուրների ձվարաններն ու նրանց տեղ
գրեց արու թրթուրների սերմարանները, և ընդհակառակը Վերա-
պատվաստված սեռական գեղձերը (գոնադները) զարգացան նոր մի-
ջավայրում, սակայն դրանից առանձնիկի որոտաքին հատկանիշներն
ամենակին չփոխվեցին, այլ պահպանվեց այն սեռը, վոր հատուկ եր
առանձնիկին ոպերացիայից առաջ, չնայած վոր նրանում գտնվում եր
հակառակ սեռի գոնադ Բոլորովին այլ յերեսույթ ենք նկատում մենք
կաթնասունների ու թոշունների մոտ։ Վորձատման (նկար 64) և
գոնադների վերապատվաստման (նկար 65) արդյունքները պարզուու
կերպով ցուց են տալիս, վոր կաթնասունների և թոշունների մեջ
սեռական կառուցվածքի վորոշ ախազ զարգանալու համար անհրաժեշտ
են գործող սեռական գեղձեր։ Այդ սեռակետից շատ հետաքրքիր և

Մ. Ա. Զավադսկու աշխատանքը՝ հավերի ու այլ կենզանիների սեռը փոխելու ուղղությամբ:

Այդ աշխատանքից են վերցված մեր բերած նկարները:
Ընդհանրապես պետք է տառնք, զոր սեռական առանձնահատ-



Նկ. 65. Հավերի վորձատման և սեռական գեղձերի վերտապատճենան արդյունքները. 1. Նորմալ արագաղ, 2. վորձատված արագաղ, 3) վորձատված արագաղ՝ նրան պատվաստված ձվարաններով, 4) նորմալ հավ, 5) ամրած հավ, 6) ամրած հավ՝ նրան պատվաստված սերմարաններով (բառ Մ. Ա. Զավադսկու):

Կությունների ձևավորման վրա կարող են շատ տարրեր աղղիցուղ թյուն գործել ֆիզիոլոգիական պայմանները: Նրանց չնորմիվ կարող են կամ զարգանալ այս կամ այն սեռի հատկանիշները, կամ կարող են մի սեռ ամբողջապես վերածվել մյուս սեռի:

Հորմնային միջնուայնություն. — Դրոզովիլի և մհտաքարեր
թիթեռի վերը նկարագրված միջնուայնությունը գենետիկային
և, կամ զիգոտային, վոր բղխում և զիգոտի ժառանդական տարրերի
փոխարարերությունից:

Լինում են այլ միջնուայնություններ ևս, վորոնք ստեղծվում են
վոչ թե զիգոտը գոյանալիս, այլ շատ ավելի ուշ, վորպես արդյունք
յուրատեսակ հորմոնների ներգործման, վորոնց աղբյուրը թաղված
և դիֆերենցվող գոնադների մեջ։ Այդպիսի միջնուայնության գոյաց-
ման գործում սեռական հորմոնների կատարած գերը լավ և հետազոտվել
կովերի, այսպես կոչված ֆրիմարտինների վրա (Ֆ. Լիլլի աշխատանքը).
Ֆրիմարտիններ ասելով հասկանում են այնպիսի յերկվորյակներ, վո-
րոնց մեջ գոյանում և աննորմալ սեռական սիստեմ, չնորինիվ մյուս
սեռին պատկանող յերկրորդ յերկվորյակի մոտիկության Բանն այն
է, վոր յերկու յերկվորյակները կարող են պատկանել կամ միևնույն
սեռին, կամ տարրեր սեռի Շնորհիվ զարգացող յերկու ձվի սերտ հա-
րևանության, նրանց մեջ և շատ հաճախ առաջ ե գալիս արյան ընդ-
հանուր շրջանառություն (Նկ. 66). Այդ պատճառով ներքին սեկրե-
ցիայի տարրեր գեղձերի հորմոնները կարող են մի սեռից անց-
նել մյուս սեռին։ Յեթե յերկվորյակները յերկսեռ են, ապա, արյան
շրջանառությունն ընդհանուր լինելիս, յերկու անհատների սեռական
գիֆերենցիացիան կկառավարի այն սեռի հորմոնը, վորն ավելի առաջ ե
դրսորվել կամ ավելի ուժեղ և Վորովինեակ սերմնարանները զիֆե-
րենցվում են զարգացման ավելի վաղ աստիճանում, քան ձվարան-
ները, և արվի սեռական հորմոնն ավելի վաղ և դրսեորվում, քան
եգինը, ուստի եգ յերկվորյակի սեռական գիֆերենցումը կկառավարվի
նրա զուգակցի արական սեռական հորմոնի կառավարմանը և այդ
առանձնիկը կստանա ավելի կամ պակաս չափով արվի կառուցվածքը,
թեպետ, իհարկե, շատ անկատար։

Սեռի զարգացմանը վերաբե քառզ հակասական պրոցես. — Սեռի
վորոշման մոմենտը բեղմնավորումն եւ Արական և իգական գամետների
միացմամբ վորոշ հարաբերություն և ստեղծվում զիգոտի քրոմոսոմ-
ների մեջ, մի հարաբերություն, վորով վորոշվում և սեռը։ Մակայն
սեռի վորոշումը հանդիսանում և սեռի զարգացման միայն առաջին
ետապը։ Արդեն մեր բերած սակավաթիվ տվյալները ցույց են տալիս,
վոր սեռի զարգացումը շատ բարդ պրոցես եւ նրանում շարունակ
պայքար են մզում տարրեր տենդենցներ։ Այդ տարրեր տենդենցները
վորոշում են արական և իգական գեները։ Գոյանում են սեռական
գեղձեր, վորոնք տալիս են հորմոններ։ Սեռական գեղձերի քիմիական
պրոցեսականների՝ հորմոնների փոփոխումը կամ հեռացումը, արտաքին
միջավայրի տարրեր պայմանների ներգործումը սեռը վորոշող գոր-
ծոնների վրա—այդ բոլորը բարգացնում են սեռի վորոշման պատկերը։

Դրա հետ կոպված հարցերի ամբողջ խումբը մեծ առանձին զերարերում և արդեն վոչ թէ գենեալիային, այլ դարձացման ֆիզիոլոգիային:

Սանկայի սեռն արևատականութեն սահալու պրոբիմք.—Այն աղշեցուցիչ ճիշտ զործող մեխանիզմը, վորով յերկու սեռերը զոյանում են հավասար քանակությամբ, վաղուց ըստեալ և իր վրա տարրեր «զյուտարարների» ուշադրությունը, վորոնք միջոցներ եյին փնտում սեռն ըստ ցանկության փոխելու համար։ Հարյուրավոր արդարիսի յեղանակներ անպետք դուրս յեկան սեռի գորշման մեխանիզմի վերաբերյալ ժամանակակից դիտելիքների լույսի տակ։ Սակայն սեռերը կարզավորելու պրոբիմք ինքը չի կորցրել իր նշանակությունը։ Անասնաբուծության մի շաբթ ճյուղերի համար շատ ոգտակար կլիներ, յեթե



Նկ. 66. Տարբեր սեռերին պատկանող յերկվորյակներ կովերի մոտ։ Ձախ կողման նորմալ արուն, աջ կողման՝ քրիմարտինը։ Յերեսում է սաղմերի արյունատար անոթների միացումը (Միննոտ-թեննից՝ ըստ Կլլի)։

Հնարավորություն ունենայինք ըստ ցանկության կարզավորելու եղերի և արուների ծնունդը, ըստ կարիքի ստանալու այս կամ այն սեռն ավելի մեծ չափով։

Թանի վոր կաթնասունների սեռը կախված և սպերմատուղոիզից, բնական և, յեթե ուշադրություն դարձնենք սեռը վորոշելու այդ մոմենտի վրա։ Կարելի յե յենթագրել յերկու ուղի. մեկը—զտնել այնպիսի մի գործոն, վորով աղղելով սպերմի վրա, կարելի լինի ամբողջովին կամ մասամբ վոչնչացնել սպերմիների մի սորտը (եղ կամ արու ստանալու համար), մյուս ուղին—բաժանել X քրոմոսոմ և Y քրոմոսոմ ունեցող սպերմիները։

Առաջին ուղիով ընթացան այն հետազոտողները, վորոնք փորձում եյին գուգորդումից (կոպուլյացիայից) առաջ հեշտոցի մեջ մացնել ալիալիներ և թթուներ։ Առայժմ ստացվել են հակասական արդյունքներ։

Յերկրորդ ուղղությամբ աշխատում են պրոֆեսոր Ն. Կ. Կոլցովը և
Վ. Ի. Նեիները: Սպերմատոզօսիդները բաժանելու համար նրանք կիրա-
ռում են կատաֆորեզը՝ ելեկտրական հոսանք են անցկացնում ջրախառն
սպերմի միջով՝ սպերմի մի մասն անցնում ե դրական բեկերի կողմը,
մյուս մասը՝ բացասականի կողմը: Սպերմի յերկու խմբերի սերմնա-
վորումով կատարված ստուգումը նրանց տարրերության վորոշ նշան-
ներ ե ցույց տալիս՝ առավելապես մի սեռ ձեռավորելու իմաստով:
Դժբախտաբար փորձը կատարվել եր շատ սակավաթիվ կենդանիների
վրա, ուստի անհրաժեշտ ե, վոր նա կրկնվի:

ԸՆԴԱԱՆՈՒԹ ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Յերկու սեռի միջև վորոշ հարաբերության գորությունը կախ-
ված է սեռի վորոշման հատուկ մեխանիզմի առկայությունից, վորն
ապահովում ե առանձնիկների՝ սեռով տարրեր յերկու կատեգորիա-
ների առաջ զալը:

2. Սեռի վորոշման մեխանիզմն է հանդիսանում քրօմոսոմների
հաղորդումը: Եգերն ու արուները տարրերվում են իրենց սեռական
քրոմոսոմներով, վորի շնորհիվ հետերոզիգոտային սեռը կազմում է
յերկու տեսակ գամետ Խ-քրոմոսոմում գտնվող գամետների բեղմնա-
վորումով առաջ ե գալիս մի սեռ, վորը պարունակում ե մյուսի Y—
քրոմոսոմը: Դոյլություն ունի կենդանիների յերկու սիպ, վորոնք
իրար հակադիր են ըստ իրենց մեխանիզմի: Կաթնասունների և
միջատների մեջ (դրոգոֆիլի, ընդհանրապես ճանճեր, բղեղներ, փալ-
տոզիկներ) հետերոզիգոտային ե արական սեռը, թռչունների ու թի-
թեռների մեջ հետերոզիգոտային ե իգական սեռը: Զկների մեջ պա-
տահում ե յերկու սիպն ել:

3. Սեռերի 1:1 հարաբերությունն ստեղծվում է շնորհիվ եգացու
գամետների և արգացու գամետների թվի նույնության: Սեռի վորոշ-
ման մոմենտը բեղմնավորումն է:

4. Սեռական քրոմոսոմների յուրահատուկ հաղորդման պատճա-
ռով գոյություն ունի նաև ժառանգականության յուրահատուկ տիպ,
այսպես կոչված՝ սեռի հետ շաղկապված ժառանգականություն: Վիր-
շնո ընդգրկում ե այնպիսի հատկանիշների ժառանգումը, վորոնց
գեները գտնվում են սեռական քրոմոսոմներում:

5. Միջսեռալին անհատների ուսումնասիրումը ցույց տվեց, վոր
սեռի զարգացումը մի բարդ պրոցես ե, վորի վրա ազդում են շատ
գեներ, վորոնք վորոշում են անհատների զարգացման ինչպես արական,
այնպես ել իգական ուղղությունը: Խ քրոմոսոմները կըում են իգա-
կան սեռի գեներ, առատոսոմները՝ արական: Նրանց միջին հարաբե-

ռությանը խախտվելու դեպքում առաջ են դալիս միջնեային անհատներ:

6. Կաթնասունների սեռական գիֆերենցման պրոցեսն ընթանում և սեռական զեղձերի արտադրած հորմոնների ազդեցությամբ: Ֆիզիոլոգիական տարրեր պայմաններ կարող են զգալիորեն փոխել սեռական գիֆերենցման ընթացքը, առաջացնել միջնեռալինություն և նույնիսկ մի սեռը վերածել մյուս սեռի:

7. Հրատապ պրորլեմ և արհեստական կերպով ցանկալի սեռն ստանալը: Այդ պրորլեմն աշխատում են լուծել, ազդելով X և Y սպերմատոզիդների վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գօլդշմիդտ R. Механизм и морфология определения пола. ЕИГ 1923. (սեռի գորշման հարցերի հիմնական ամփոփում):
2. Завадовский М. М. Под и развитие его признаков ГИЭ. 1922 (հիմնային գիրը, գորի զգալի մասը հիմնակած և սեղինակի սեփական աշխատանքի վրա):
3. Морган. Теория гена. Изд. «Сентель», 1927 г. (սեռի քրոմոսոմային գորոշումը, միջնեռայնությունը, մի սեռի վերածվելը մյուսի: Հավելվածում գորոշագրաներ կան չ—քրոմոսոմի գենների մասին նույն տեղում բերված են չեղումների մի բանի գեպքեր, յերբ ցիտոլոգիական պատկերի ուսումնակրությունը հաստատեց այն նույնագուշակումները, փորոն արգած ելին գենետիկական ուսումնակրության հիման վրա՝ շաղկապահած X—եր, չորրորդ քրոմոսոմի անքակտությունը):
4. Синиол-Дени. Курс генетики. ГИЭ, 1930, գլուխ IX.
5. Морган. Структурные основы наследственности սեռ. գլուխ XIV.
6. Завадовский М. М. Внешние и внутренние факторы развития ГИЭ. 1928 (3-րդի գորշման նկարագրված և սեռական զեղձերի գեր հատկանիշների զարգացման դորում, իսկ 5-րդ զինում նկարագրված և սեռի գորշման քրոմոսոմային թեորիան):
7. Крү. Генетика животных. 1929 (սեռի գորշման հարցերը շարագրված են մանրամասներեն, թեպետ բավականին խթին ձևով, VI—VIII գլուխներում):
8. Конкан. Наследственность и среда, 1928., էջ 163—179.
9. Гольдшмидт. Учение о наследственности, ГИЭ, 1928, գլուխ VII.
10. Адамец. Общая зоотехния, 3-е изд., 1933. (229—243 եղերում մանրամասներեն բերված են այս կամ այն սեռի առաջ գալու յենթագրյալ պատճառները),
11. Пенист. Менделизм. ГИЭ, 1930 (գլուխ IX, X, XI):
12. Филиппченко. Генетика, 1929, գլուխ VIII.

ԳԼՈՒԽ VI

ԴԵՆԸ ՅԵՎ ՆՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Համեսթի յեկ գենի առքերթուրյանը.—Քննելով այն հարցը, թե
բջջի վեր մասում են գտնվում ժառանգման տարրերը, մենք յեկանք այն
յեզրակացության, վոր քրոմոսոմներն են կրում ժառանգական սաղմա-
նյութը՝ գեները։ Բեղմնավորված ձևի քրոմոսոմներում պարունակվում
են բազմաթիվ գեներ, վորոնք կապ ունեն կենդանու բոլոր հատկա-
նիշների, առանձնահատկությունների հետ։ Հատկանիշների ժառա-
նումը, նրանց մենդելումը, հաջորդների մեջ նրանց խմբավորվելն
այս կամ այն ձևով—այդ բոլորն ել հիմնված են քրոմոսոմների և նրանց
մեջ գտնվող գեների հազորգման պրոցեսի վրա։ Որդանիշմների հատ-
կանիշները վորոշվում են գեներով։

Ժամանակակից գենեստիկան պարզորոշ կերպով բաժանում ե գենի
և հատկանշի հասկցողությունը։ Հատկանիշը կենդանու կամ բույսի
մասնավոր կոնկրետ առանձնահատկությունն ե՝ զույնը, մեծությունը,
փիզիոլոգիական ու հիստորիոգիական հատկությունները և այլն։ Գեների
կը փորձի միջոցով՝ տրամաժամամբ, դիտում ե հատկանշի ժառանգումը։
Սովորաբար խոսում են վոչ թե մեկ, այլ մի զույգ իրար համապա-
տասխան և միաժամանակ հակադիր, ժառանգական հաղորդման պրո-
ցեսում մենդելով հատկանիշների մասին։ Իսկ գենը ժառանգականու-
թյան միավորն է, վորը սերնդից սերունդ և հազորդվում բջջի
միջոցով և միայն վերջին հաշվով արտաքին պայմանների հետ միասին
պայմանավորում ու վորոշում ե այս կամ այն հատկանշի ձևա-
վորումը։

Դեները մարմելի պուանձին մասերի ներկայացուցիչները չեն սեռական բջիջներում, ինչպես կարծում եյին առաջ: Դրանք այդ մասերի տարրերը, սադմերը չեն: Դենը նույրան քիչ առնչություն ունի իր առաջ բերած հատկանիշների հետ, վորքան վորեև միացման մեջ մանող քիմիական տարրը՝ այդ միացման հատկանիշների հետ:

Դենեաթիկայի զարգացման դանազան ետապներում զգալի չափով տարրերվել ե այդ յերկու հասկացողությունների մեջ զրվող բովանգակությունը: Դենի և հատկանշի միջև խիստ սահմանագծում մացը նելը նույնքան կարենոր ե, վորքան «գենոտիպ» և «ֆենոտիպ» հասկացողությունների միջև: Դրանցից առաջինը պարփակում ե իր մեջ գեները, իսկ յերկրորդը՝ հատկանիշները:

Կենի իդեալիստական յևլ մեօաճիպիկ պատկերացումը. — Մենցելիզմի շրջանում ևս գենեաթիկան դործ ուներ գեների հետ, սակայն մենցելիստների համար կարիք չկար անպալման ընդունել գեների՝ վորպես նյութական տարրերի՝ սեալ գորությունը: Իսկանմանը, վոր մացրել եր գենի գաղափարը, նրա մասին խոսում եր վորպես «ինչ-վոր բանի» մասին, վոր պարունակվում ե սեռական բջիջներում և պայմանավորում և որգանիզմի բնումավորմամբ առաջ յեկող առանձնահատկությունները: Թերես դենի այլպիսի ձևական գենեաթիկական պատկերացումն ե զլիսավոր պատճառը, վոր հարձակումներ եյին վործում գենի հասկացողության մետաֆիզիկության վրա, հարձակումներ, վորոնք տեղի յեն ունենում յերբեմն նույնիսկ ներկայումս:

Մենցելիզմ ընդունում եր գեների «գուտ ատոմիստիկան», գեներն ըմբռնում եր վորպես «ժառանգականության ատոմիներ»՝ ժառանգական նյութում: Բայց մենցելիզմի, ժառանգականությունը հանդում եր գեների համակցման, կոմբինացման: Այդ տեսակետը հանգեց զուտ իդեալիզմի, մետաֆիզիկայի՝ վորպես լուսիտականությունն և լուսի կարծիքով, ամբողջ եվոլուցիան անփոփոխ և հավիտենական գեների կոմբինացիան ե:

Մորգանական պատկերացումների բնարակ գծերը գենի մասին յևլ նրանց բերույթը նեները. — Մորգանիզմը զարգացավ վորպես զուտ եմոլիրիկական հոսանք: Սակայն տարերայնորեն նա հանգեց կոնկրետ և մատերիալիստական զրույթների:

Մորգանիստական գենետիկան մացրեց գենի մատերիալիստական ըմբռնումը: Նա սեռալիթյունը գարձրեց գենը: Հատկանիշները վորոշող գեները ժառանգվում են վորպես քրոմոսոմներում գտնվող

միանգամայն նյութական տարրեր, վորոնք ներկայացնում են այդ քրոմումների մասերը և դասավորված են գծային վորոշ կարգով, վորը կորող ենք մենք հաստատեր

Այն կոնկրետը, վոր մենք ներկայումս գիտենք գենի մասին, ստացվել ե Մուգամի գպրոցի աշխատանքների հետևանքով։ Սակայն Մուգամի պատկերացումները ևս ունեն մի շաբք թերություններ, մեխանիստական, իսկ՝ յերեսն ել մետաֆիզիկական – վերացական գծեր, վոր առաջանում են նրա եմպիրիզմից։ Մուգամն ընդունում և նյութապես գոյություն ունեցող գեները վորպես տվյալներ, սակայն նա մի կողմ և թողնում գեների գոյացման պրոբլեմը նա ասում ե՝ «Ինձ թվում ե՝ կարիք չկա ընդունել, վոր ամյորան ամելի քեչ գեներ ունի, քան մարդը»։ Այդ խնդրում նրա դիրքավորումը եմպիրիկի դիրքավորում ե, վորն սպասում ե «մի սիտուացիայի, յերը այդ հարցի դրումն անհրաժեշտ կդառնա»¹⁾։

Ինչպես և սեղծված գենի գաղափարը, Ալիքումարթմեր.—Մենք ի վիճակի չենք լիովին յերեան բերելու տվյալ կենդանու մեջ գտնվող բոլոր գեները։ Գենը նկատելու, յերեան բերելու համար անհրաժեշտ ե, վոր նա նախագծես փոխվի և նոր գեն տա, վորը հակադրվի առաջինի հետ, նրան ներհակ լինի և նրա հետ ալերմորֆ դույգ կազմի։ Յեղիներավորության գենը մենք գիտենք միայն այն պատճառով, վոր գոյություն ունի նրա հետ «համաշխափելի» կամ «համապերելի» «անհեղյուրության» գենը։ Այդ յերկու գեների գոյություն ունենալը հաստատվեց այն վարմունքով, վորը ցուցաբերում են այն գեներն ունեցողները


1) Ճիշտ է, թեև Մորգանը գենն ընդունում է իրեն սեալ նյութ (տես նաև «Մորգանիզմի նշանակությունը և նրա քննադատությունը՝ ինթավուլուս» և գենի հաւաքցողությունը գառնում և մատերիալիստական, բայց և այսպես մօրգանիզմի բազմաթիվ դրույթներ չեն ազատվում մեխանիստական և, յերեսն ել վերացական լինելուց։ Մորգանի «միանիստական և մեխանիզմիկական պատկերացումները» չեն ըդհում միայն «նրա եմպիրիզմից», ինչպես այդ թվում է հեղինակին, այլ նրանից, վոր «բուրժուազիան պահանջում է իր պրոֆեսորներից՝ լինել սեակցիոնական» (Լенին «Մատերիալիզմ և անպրոկրտիցիզ» 1920 թ. ստ. 160), կատարել նրա սոցիալական պատվերը։ Եմպիրիզմին կառչելը բղինում և նույն այդ հակառակներից։ Մորգանի՝ տարերային կերպով առաջացած մատերիալիստական գրույթներ մեխանիստական են և նրանք կմնան իրեն այլպիսին, մինչև վոր Մորգանի հայտարերած յերեսությունը գեների և նրանց գործողությունների նկատմամբ չեն։ Բարկեն մանրազնին և պատվիչ վերլուծման դիմուլիտիկան մատերիալիզմի տեսանկունից, մի պըսլեմ, վոր մուռ և լուծել խորհրդային գենետիկներին, Սան Խերիցյանին։

արամախաչման ժ սմանակի Մենք, որինակ, առայժմ վոշինչ չդիտենք տափարի թոքերի, որտեղ վորեւ գենի դոյության մասին, վորովհետեւ մեզ հայտնի չեն նրանց ալեկոմորֆ գեները, այսինքն՝ հայտնի չեն այնպիսի առանձնաբնիք, վորոնցից ժառանգվի այդ որդանների այլ կրոռուցվածք¹⁾:

Վերհիշենք հավի սեռական քրոմոսոմի պլանը: Նրանում ըստ կարդի վերջին տեղն և բանում դանդաղ փետրավորման գենը նրա ալելոմորֆն և նորմալ փետրավորման համապատասխան գենը: Ցեթե դանդաղ փետրավորվող հավեր առաջ չգային, մեզ հայտնի չեր լինի, թե վորություն ունի նորմալ փետրավորման գեն, առավել և չեյինք իմանա, թե վորտեղ և գոնվում նա:


Մենք վոչ մի հիմք չեյինք ունենա գենը քրոմոսոմի վորեւ տեղում նշելու, յեթե այդ տեղում փոփոխություն չկատարվեր:

Հավի սեռական քրոմոսոմի վերջը




Մինչև դանդաղ փետրավորման գենը յերեան դալը, մենք քրոմոսոմի այս մասում դեն չգիտենք:

Ստկայն հենց վոր յերեան յեկավ դանդաղ փետրավորումը՝



Դանդաղ
փետրավորման
գենը

մենք իրավունք ունենք ասելու, վոր ներքենի քրոմոսոմի դատարկ մասում իրավ գտնվում և նորմալ փետրավորման գենը,



Նորմալ
փետրավորման
գենը

Այդպիսով գեն հասկացողակից յունն առաջ և դալիս միմիտին նրա փափոխման կամ մուտացիայի հողի վրա: Մուտացիա չե կոչվում ժառանգական նոր առանձնահատկություններով ոժտված առանձնիկի:

1) Սրանով չի ժխտվում, վոր այսուղ թված որդանները համապատասխան գեներ կամ որանց խմբավորությունները չունեն, այլ հետեւմ և միայն, վոր գեներ այդ դեները մեզ հայտնի չեն, չարհիվ թերեւ այն հանգամնը, վոր զույն այդ գեները ժառանգման սրբայն, մինչև այժմ անհայտ բնույթ ունեն Տամ. և. Աւ.

Հանկարծակի գոյացումը (դրա մասին մանրամասնորեն տես հաջորդ դիմում): Հիմնվելով դրա վրա Ա. Ս. Սերեբրավակին մտցրեց հետեւյալ տերմինողոգիան, բազիզեն՝ այն գենն ե, վորը գոյություն ուներ քրոմոսոմում փոփոխումից առաջ, և տրանսգեն՝ փոխված գենը: Յեթե մենք ունենք գեների այդպիսի մի զույգ (ալելոմորֆներ), կարող ենք գաղափար կազմել ինչպես նորմալ փետրավորման գենի, այնպես ել գանգաղ փետրավորման գենի մասին: Գենն իմացվում և իր փոփոխում:

Քրոմոսոմային քարտերում նշված բոլոր գեներն առաջ են յեկել ժամանակին այլ գեներից, վորպես նրանց մուտացիա: Մինչև վոր գենը փոփոխման չենթարկվի, մենք ի վիճակի չենք լինի վորոշելու նրան: Այդպես և առաջ գալիս փոխադարձորեն հակագիր գեների կամ ալելոմորֆների զույգը: Քարտի յուրաքանչյուր գենին համապատասխա-



Նկ. 67. Զանազան ալելոմորֆների առաջ գալը, I—ա գենի առաջ գալը, II—B-ի առաջ գալը, III—C, c₁ և c₂ ալելոմորֆների առաջ գալը

նում ե նաև նրա ալելոմորֆը. այդ ամենից հաճախ հատկանիշների այն նորմալ վիճակին ե, վոր տեսնում ենք մենք սովորաբար տվյալ տեսակի կենդանիների մեջ: Յեթե գենը նշված և փոքրատառով, նշանակում ե նա ոեցեսիվ ե իր ալելոմորֆի նկատմամբ. յեթե նշված ե գլխատառով, նշանկում ե նա գերիշխող ե Ալելոմորֆ հատկանիշների միջև յեղած տարբերությունն արտաքին արտահայտությունն ե այն տարբերության, վորը գոյություն ունի վորեն քրոմոսոմի վորոշ տեղում (նկ. 67):

Քրոմոսոմի յուրաքանչյուր կետում կարող ե փոփոխության յենթարկվել նրա նյութը, այսինքն՝ նրա յերկարությամբ դասավորված գեները: Ամեն մի այդպիսի փոփոխության արդյունքն ե լինում նոր ալելոմորֆի գոյացումը: Քրոմոսոմի մի կետում փոփոխությունները կարող են կրկնվել շատ անգամ և իրար ալնքան ել նման չյիներ Այդպիսով առաջ ե գալիս մենույն գենի ալելոմորֆների սերիան կամ շարքը:

Պարզ ե, վոր յերկու քրոմոսոմների մեջ իրար համապատասխան կետերում զանվոր յերկու ալելոմորֆ գեներ միշտ անցնում են տարբեր գառնեաների մեջ, այսինքն միշտ փոխադարձ լիսկատար «վանումն» են յույց տալիս: Քրոմոսոմային թիորիան մշակելուց առաջ գենե-

առիկայում՝ զոյլություն ուներ ալլելոմորֆիդմի հասկացողունքը՝ կարող Այժմ այդ հասկացողությունը կատարելապես նյութական իմաստությունը առաջնական է ալլելոմորֆները միենալու գենի կերպարանափոխություններն են Զույգի յերկու քրոմոսոմում զանվոր յերկու ալլելոմորֆ գեներ այդ յերկու քրոմոսոմներում պետք եւ տեղափորվեն հենց իրար գեմ առ դեմ:

«Ներկայության՝ բացակայության» բնօրին լիվ բազմապահիկ ալլելությունները.—Յերկու ալլելոմորֆ գեներից մեկը կարող և գերիշխող լինել, իսկ մյուսը՝ ուղեսափակ:

Մի ժամանակ կարծում եյին, թե գենը ուղեսափակ վիճակում լինելու գեպքում պարզապես չկա համապատասխան գերիշխող գեն («Ներկայության՝ բացակայության» թեորիան):

Ներկայության՝ բացակայության թեորիայի ամենախոշոր իդեալը՝ լուն եր անզիփացի գենետիկ Բնօրինը, Հետագայում ներկայության՝ բացակայության թեորիան արդեն քրոմոսոմային թեորիայի հիման վրա վերածնեց Մուկվայի գենետիկ Ա. Ս. Սերեբրավսկին։ Նա հիմնվում է հնտեյալ փաստերի վրա. 1) ուղեսափակ մուտացիաների ճնշող զերկառումը, վոր կարծես վկայում է, թե մուտացիաների ժամանակ բազիզնը կործանվում և զագարում եւ գործեցուց. 2) այն հանգամանքը, վոր հնարավոր եւ կառուցնել մի շարք սկսած ամբողջ քրոմոսոմի խոշորացույցով տեսանելի կորստից, վոր լինակատար նմանություն ունի ուղեսափակ մուտացիայի հետ, մինչև քրոմոսոմի մի մասի կորուստը (խոշորացույցով դժվարությամբ նկատելի): և սովորական ուղեսափակ մուտացիան:

Յեղնելով ներկայության՝ բացակայության թեորիայից՝ պետք եր, որինակ, ընդունել վոր անասունի միայն սև գույնին և համապատասխանում Ա գենը լիսկ կարմիր գույնի գեն ընդհանրապես գոյություն չունի, և այն, ինչ վոր մենք նշում ենք փոքրատառ գոյլ, պարզապես Ա գենի բացակայությունն և լիսկ կարմիր գույնն առաջացնում եւ վոչ թե ան, այլ ինչ վոր այլ գեն:

Ներկայության՝ բացակայության թեորիայի համար առանձնապես ուժեղ հարգած եր միենալու գենի ալլելոմորֆների սերիայի հայտնագործումը (այսպես կոչված՝ բազմապատիկ ալլելոմորֆներ): Բազմապատիկ ալլելոմորֆների սերիայի լավագույն որինակն և հանգիստ նույն գրողովելի աչքերի գույնի գեների շարքը:

Դրոզովիլի աչքերը նորմալ վիճակում կարմիր են՝ դարձնագույն յերանգով: Բայց մի անգամ սատացվեց փոխված առանձնիկ՝ սպիտակ աչքերով:

Դուրս յեկավ, վոր այդ առանձնահատկությունը ժառանգական է և կողված և այն փոփոխության հետ, վորը տեղի յեւ ունեցել սեռա-

կան քրոմոսոմի ծախ կողմում, վերջում, ծայրից 1,5 մորգանիդ հեռավորության վրա: Ընդ սմին աչքի սպիտակությունը ուցնելի եր աչքի կարմրության նկատմամբ շետքայում սպիտակաչքանի ճանաների կուլտուրայում ծնվեց եռղինի գույն ունեցող (վարդագույն դեղին) աչքերով մի ճանան: Աչքի եռղինի գույնը հանդիսանում է ուցնելի հատկանիշն զորն ալբելոմորֆ և կարմրի նկատմամբ այնպես, ինչպես սպիտակը: Ավելի ուշ առաջ յեկան ճանձեր, վորոնց աչքերն ունեն յին բալի գույն, արյան գույն, կորալի, ծիրանի, փղոսկի գույն, շնկ երին, մշտակագույն, չսպիտակացրած, և յուրաքանչյուր անդամ աչքերին նոր գույնն ալբելոմորֆ եր կարմրի ու մյուս բոլոր գույնների նկատմամբ:

Նրանք բոլորն ել ալբելոմորֆ գուրս յեկան նաև միմյանց նկատմամբ, այսինքն՝ գտնվում ելին քրոմոսոմի միենույն մասում: Այդ ապացուցվեց մի շարք միջոցներով: Նոխառուաջ կրոսինգով լերի ուսումնասիրուումը ցույց տվեց, վոր աչքի վերը մատնանշված բոլոր գույների գեները գտնվում են քրոմոսոմի ծայրից 1,5 մորգանիդ հեռավորության վրա: Նշանակում ե, վոր նրանք կամ միենույն տեղը գրաված կլինեն, կամ շատ մոտ պետք ե լինեն միմյանց: Առաջին դեպքում նրանք ալբելոմորֆ կլինեն, այսինքն՝ միենույն ժամանակի միենույն քրոմոսոմում կարող ե գտնվել այդ գեներից միայն մեկը: Իսկ յեթե յենթադրենք, վոր նրանք աեղավորված են զանազան, թեպետ իրար մոտ, կետերում, տեսնենք, թե ինչ կստացվի, յեթե մենք տրամախաչենք նրանց իրար հետ, որինակ՝ սահմատակաչքանիները բալի գույնի աչք ունեցողների հետ: Նրանք ալբելոմորֆ լինելու դեպքում սպիտակաչքանիների գծում, այն կետում, վորը համապատասխանում է բայլագույն աչքի գենի տեղին, պետք ե գտնվի բայլագույն աչքի նորմալ ալբելոմորֆը, իսկ բայլագույն աչքի գծում աչքի սպիտակության նորմալ ալբելոմորֆը: Այդ դեպքում սպիտակաչքանիների և բալի գույնով աչք ունեցողների տրամախաչմից ստացված առաջին սերունդը պետք ե կարմիրաչքանի լինի: Իսկ յեթե նրանք գտնվում են միենույն տեղում, այսինքն՝ ալբելոմորֆ են, ապա առաջին սերունդը կարմիրաչքանի հաջորդներ չի տա, այլ կտնանենք այս կամ այն գենի լինակատար կամ վոչ լինակատար գերիշմումը: Դուրս լիւալ, վոր F₁ սերունդը միջնական ե աչքի գույնի զանազան ալբելոմորֆների տրամախաչման բոլոր դեպքերում, և յերբեք վերադարձ չի յիշել պետք նորմալ կարմիր գույնը: Դրանով իսկ առաջուցվում է նրանց ինկական ալբելոմորֆությունը:

Կարմիր, սպիտակ, բայլագույն աչքերի գեները կազմում են 11 ալբելոմորֆից բաղկացած մի սերիա: Այդամսի ալբելոմորֆները կոչվում են բայլագույնիկ ալբելոմորֆներ: Նրանք բոլորն ել հանդիպանում են քրոմոսոմի, միենույն մասի տարբեր վիճակները և այդ

պատճառով բրոբն և ձևափոխում են միևնույն հատկանիշը։ Կարող են ամեն տեսակ անցումներ լինել մի ալելումորդից զեպի մյուսը։ Վեղինայինը առաջ և յեկել «սպիտակից», «սպիտակն» և իր հերթին մի քանի գեղքերում առաջ և յեկել «եղինայինից», և այլն։

Հայոնի յե, վոր ալելումորդների սերիաներ ունեն նաև այլ կենդանիներ։ Մրինակ՝ ճադարների մեջ գոյություն ունի գույնի վեց գենից բաղկացած սերիա՝ լիակատարի գույն, մուգչինշիլա, բաց-շինշիլա, կարսույին գույն, մարգեն կամ կնգումի գույն, և ալրինիզմի։

Բազմապատճել ալելումորդների սերիաները հնարավոր չեն բացատրել ներկայության—բացակայության թեորիայով։ Արդարե, յեթե դրոգութիւնի աշքերի գերիշխող գույնը նշանակում է գենի ներկայությունը, ապա սերիայի գույներից վերը կենի գենի բացակայությունը և ինչնույն բացատրել գույների բազմապատճելունը։ Առօգտնն այդ հակառակությունն արտահայտեց հետեւյալ ձևով «Մի ներկայությանը չեն կարող հակադրվել մի քանի բացակայություններ»¹⁾։

Ներկայության—բացակայության գեմ խոսող վոչ պակաս կարենը փաստ և այսպիս կոչված հետազարձ մուտացիաների գոյությունը (զրա մասին տես VIII զլառում), վորոնք հնարավոր չեն բացատրել ներկայության—բացակայության թեորիայով։

Դեմուրի համեմատությունները, երանց բանակն ու մեծությունը。—«Դեմ» սերմինն առաջարկել եր Խոհաննանենն այն հաշվով, վոր նա վոչ մի հիպոթեզ չպարունակի իր բնության մասին։ Բայց ներկայումս մի քանի բան հայտնի յե նրա եյտթյան մասին։

Դեմքը ներկայացնում են քրոմոսոմների մանր մասեր, վորոնք ընդունակ են ուրույն կերպով ազգելու որդանիզմի դարգացման վրա։ Տիցի ամեն մի բաժանման ժամանակ նրանք ընդունակ են կրկնապատկերու, այսինքն՝ բազմանալու և աճելու։ Դեներին հատուկ է վորաց, յերեմն յերկարատև կայունություն, բայց վոչ անփոփոխականություն։ Դենի անփոփոխականության գաղափարը խորթ և ժամանակակից գեննետիկայի վոգուն, թեպետ ընդունվում և նրա վորոշ մշտականությունը։ Դեներն ընդունակ են յենթարկվելու փոփոխությունների, մուտացիաների։ Դենեարկալի մի շարք պատկերացումներն այժմ հիմնաված են գեններում ու քրոմոսոմներում տեղի ունեցող փոփոխությունների ուսումնասուրման վրա։


Դեները անզավորված են քրոմոսոմի ընդերքում, գծային կարգով։ Ոիշտ և, մենք չգիտենք, թե ամեն մի գեն վորոշ սահմաններ ունի արդյոք, թե վոչ։ Յերբեմն քրոմոսոմը պատկերում են վորպես մի վիթխարի սպիտակուցային մոլեկուլ (Կոլցավ)։ այդ գեղքում գենները հանդիսանում են արդ մոլեկուլի առանձին ողակները, խճերը։

1) Սերեբրովսկին Ալեկսանդրի սերիաները բացատրում են գենների մասնակի կործանումը։

Դեմերի դերը հասկաննեմերի կազմավորման մեջ, — Կենդանու ներքին և արտաքին բազմաթիվ առանձնահատկությունները մենք կապում ենք գորոշ դեմերի հետ Վորոշ գեների ներկայության արդյունքն և լինում այս կամ այն գույնի՝ կարմիր կամ սև գույնի, ամբողջական կամ խայտարգեստ նկարի դարձացումը: Մյուս գեները կապ ունեն կառուցվածքի հատկանիշների հետ՝ մարմնի այս կամ այն ձեր գարգացման հետ, յեղջյուրների, ականջի բլթակների ներկայության կամ, բացակայության, հետ, բրդի այս կամ այն տիպի գարգացման հետ և այլն: Գեների մի այլ խուժը գորոշում և ֆիզիոլոգիական այս կամ այն հատկությունների դարձացումը՝ կայունություն վորեն հիվանդության դեմ, կաթի քանակն ու վորակը, սվելի արագ կամ, ընդհակառակը՝ ավելի դանդաղ գիրանալու ընդունակությունը: Յուրաքանչյուր գենի դերը հիմնականում այն և, վոր նա վորոշ ազգեցություն և գործում կենդանու զարգացման վրա: Արդարեւ, վորոշ գեն ներկա լինելու գեպքում զարգանում և սև գույնը, նրա ալիբրմորֆը ներկա լինելու գեպքում զարգանում և կարմիր գույնը: Այդ նշանակում և, վոր գենն առաջ և ընթույթ պիզմենտ դուանալու պրոցեսների խախտում, փոփոխություն և առաջացնում այդ պրոցեսների մեջ՝ համեմատած սև կենդանիների պիզմենտի գոյացման ընթացքի հետ: Մի քանի դեպքերում գեների ներգործումը անսանելի յեւ և կարելի յեւ հեշտությամբ վորոշել, իսկ վորոշ գեպքերում ել շատ զգվար և պարզեր Գեներից մի քանիսը փոքր փոփոխություններ են առաջացնում կենդանու զարգացման մեջ, իսկ մյուսները, ընդհակառակը՝ շատ խոր փոփոխություններ, վորոնք անդրադասնում են կենդանու կյանքի վրա:

Եթալ (մահացու) գեներ.—Մի քանի գեներ այնքան սուր փոփոխություններ են առաջացնում որգանիզմում, վոր նրա զարգացումը մինչև վերջ չի հանում, վորեն աստիճանի վրա կտրվում և և այն ժամանակ որգանիզմը մահանում և Այդպիսի կորստարեր ազգեցություն գործող գեները կոչվում են լիտալ (մահացու) գեներ: Դժբախտաբար զրանք քիչ չեն պատճենում ինչպես կենդանիների, այնպես ել բույսերի մեջ: Գործնականորեն հաջողվում և հայտաբերել միմիայն սեցեսիվ լիտալ գեների գոյությունը, վորոնք իրենց կորստարեր աղղեցությունը գործում են միմիայն հոմոզիգոտային վիճակում (յերբեմն հաջողվում և անմիջականորեն դիտել ալդ յերեսույթը նաև վերիշխող գեն ունեցող անհատում, սակայն այդ գեպքում լիտալի աղղեցությունը լիտախտար չի լինի): Որինակ՝ բույսերի մեջ առաջ են դալիս առանձին տունկեր, վորոնք բույրովին զուրկ են պիզմենտից: Հարկավ, այզպիսի ալբինոսային բույսերն իսկույն փոչնչանում են: Հաշվարկումներով հաջողվում և վորոշել, վոր ալբինոսային բույսերը կազմում են ամբողջ յերկրորդ սերնդի $\frac{1}{4}$ մասը, այսինքն՝ տեղի յե-

ունենում ճեղքում և ռեցիսիթսերի ամբողջ սերնդից ստացվում է 25% ռեցեսիվ գեն, վորոնք հոմոզիգոտային են ալբինոսային գենով։ Կատարելապես ռեցեսիվ լետալ գենի ներկայությունը կարելի յերեան բերել միմիայն նրանով, վոր սերնդի մի մասն առհասարակ աշխարհ չի գալիս և այդ պատճառով փոխում են տվյալ տրամախաչումից սպասվող հարաբերությունները։ Այդպիսի դեպք առաջին անգամ հայտաբերվեց տնային մկների մեջ։ Մկան գեղին փոփոխակն աչքի յեր ընկնում մի բնորոշ առանձնահատկությամբ։ Նա յերբեք մաքուր սերունդ չեր տալիս։ Յերկու գեղին մկների տրամախաչումից ստացվող ձագերի $\frac{1}{2}$, մասը միշտ բաղկացած ե լինում գեղին մկների



Նկ. 68. Մկների լետալ գենի ժառանգումը։ Յերկու գեղինների տրամախաչումից ստացմերի $\frac{1}{2}$ մասը վոչնշանում է, ձագերի $\frac{1}{2}$ մասը գեղին և լինում, $\frac{1}{4}$ -ը՝ զոչ գեղին (ըստ Սինոռա-Դեննի)։

րից, և $\frac{1}{2}$ մասը ներկված ե լինում վորեե այլ գույնով (սե, գորշ մոխրագույն)։ Խոկ յեթե գեղին մկները տրամախաչենք վոչ գեղինների հետ, ձագերի մոտ կես մասը կլինի գեղին և նույնքանը՝ վոչ գեղին։ Այդպիսի ճեղքում ե կատարվում հետերոզիգոտները սեցեսիվների հետ տրամախաչելիս։ Դրանից՝ հետեւմ ե, վոր բոլոր գեղին մկները հետերոզիգոտներ են ($Aa \times aa = \frac{1}{2} Aa + \frac{1}{2} aa$)։ Խոկ յերկու Աա հետերոզիգոտներ տրամախաչելիս պետք ե սպասել, վոր կստացվեն $\frac{1}{4} AA$, այսինքն՝ զուտ գեղիններ $\frac{1}{4} Aa$ —գեղին հետերոզիգոտներ և $\frac{1}{4} aa$ զուտ վոչ գեղիններ։ Բայց իրականում առաջին խումբը չի ստացվում և պետք ե յենթադրել, վոր Ա գենը լետալ և հոմոզիգոտային վիճակում։ Ավելի ճշգրիտ հետազոտումը ցույց տվեց, վոր սաղմերի մեջ ըստ յերեխուլթին գոյություն ունեն յերեք գասերն ել, սակայն նրանց մի մասը, այն ե՝ զուտ գեղինները, վոչնշանում են դեռ մոր արգանդում (նկ. 68)։

Տնային կենդանիների մեջ ևս հայտնի յեն մի շարք գեներ, վորոնք նվազեցնում են կենսունակությունը և նույնիսկ առաջնեն բերում կենդանու մահացումը։ Հայտնի դեպք ե՝ բուլղոզանման հորթը


Նորդեղիայի տելեմարկային անասունների մեջ: Նա ունի կարճ գլուխ, կարճ զունչ և կարճ, ծուռ գուներ, վորոնք անկարող են պահել կենացանուն (նկ. 69): Այդ դեպքը հետազոտելիս պարզվեց, վոր այն ցուլը և բոլոր կովերը, վորոնցից ծնվել են այդպիսի այլանդակներ, առաջ են յեկել նիկլաս անունով ցուլից: Պարզվեց, վոր նիկլասն իր սեփական աղջկա հետ տրամախաչվելիս նույնպես բուլղոգանման հորթեր և տվել նշանակում են հենց նա յե յեղել բուլղոգութեան գենը կրողը: Ավելի խորը վերլուծումը հաստատեց, վոր իրոք զոյտություն ունի հոմոզիգոտային վիճակում զարգացման աննորմալություններ առաջացնող սեցեսիվ գեն, աննորմալություններ, վորոնք արտաքուստ



Նկ. 69. Բուլղոգանման հորթեր և բուլղոգանման հորթի գանգ (ըստ Վրիդակ)

դրսորդում են բուլղոգանմանությամբ: Բատ յերեսույթին զարգացման խախտումն առաջ և զալիս ներքին սեկրեցիալի գեղձի^{*} հիպոֆիզի վիազելուց: Բուլղոգանման հորթերը կարող են ծնվել բայց վորով-հետեւ նրանք ի վիճակի չեն վատքի վրա կանգնելու, շատ շուտով մահանում են: Նիկլաս ցուլն այդ գենով հետերոդիգոտային եր ($\frac{N}{n}$): Բնական ե, վոր նորմալ կովերի ($\frac{N}{N}$) հետ տրամախաչվելիս ամրազ սերունդը նորմալ եր և հետերոդիգոտային թագուն վիճակում կրում եր ո մահացու գենը: Յերկու հետերոդիգոտաներ պատահաբար տրամախաչվելիս ($\frac{N}{n} \times \frac{N}{n}$) հաջորդների մի քառորդը հոմոզիգոտային կլինի ո գենով ($\frac{n}{n}$): Հենց դա կլինի բուլղոգանման հորթ:

Մեղ մոտ ԽՍՀՄ-ում Լյուտիկովն այլպիսի գեն եր զտէլ ըետու-
ժեվյան անասունների մեջ նա ցեղական մատյաններից յերևան
բերեց, վոր ձագերի մեծ տոկոսը մահանում ե, և ցույց տվեց, վոր
այդ մահացու հատկանիշը ժառանգվում ե կանոնավոր կերպով: Ան-
նորմալ հորթերը նմանում ենին բուլղոզների, սակայն գոյություն-



Նկ. 70. Նիկաս ցուլը, վոր ունեցել և բուլղոզների գեն (ըստ Վըխովի):

ունեյին շոշափելի վարիացիաներ՝ սկսած այլանդակության ցայտուն
կերպով արտահայտված ձևերից մինչև արտաքուստ համարյա նոր մաշ-
բայց թույլ ու անկենունակ հորթերը:

Լյուտիկօվի կարծիքով այդ գենը վորոշ ազգեցություն և գործում
հետերոզիզոտային վիճակում, այլ խոսքով՝ կատարելապես ուցե-
սիվ չե:

Բուլղոզանմանության գենը հոմոզիգոտային վիճակում ներկա-
լինելիս կենդանին այնուամենայնիվ ծնվում ե, ուստի ավելի ճիշտ
կլինի, յեթե անվանինք նրան վոչ թե լետալ, այլ կիսալետար:

Տավարի մեջ հայտնի յե նաև այնպիսի դեպք, յերբ գոյացել և
շատ ավելի կորստաբեր գեն նրանդիքայում կա անասունների մի հա-
տուկ ցեղ՝ գեքստեր: Նա ծագել և տեղական կերրի ցեղի անասուն-
ներից և ըստ յերևույթին առաջ և յեկել մուտացիայի միջոցով (դրա-
մասին առև հաջորդ դիմում):

Մինչգետ կերրի անասունները շատ ուշ են հասունանում, պըրիմի-
տիվ և աղքատ են մսային հատկություններով, գեքստեր անասուն-
ները շատ արագ են գիրանում և աչքի յեն ընկնում իրենց մսուառ-
թյամբ: Նրանց բնորոշ հատկանիշն ե նաև կարճությունը:

Առաջ դեքստերները մ' գույք գծով չելին բաղմացվում, այլ մըշա
տրամախաչվում եյին կերպիների հետ, և այդպես բաղմացնելիս զոչ
մի դժվարություն չեր ծագում Բայց յերք անցյալ դարի վերջերին
փորձեցին դեքստեր անասունները բաղմացնել դուռ գծով, իրար հետ-
արամախաչելով, դուրս յեկավ վոր հորթերի 20—25° օը մահանում և
արդանդում, հղիության չորրորդ ամսում, և կովը վիճում և Այդ
վիճված հորթերը ևս արտաքուստ բուլղոգանման են: Այլանդակու-
թյան պատճառը Կրոմ բացարում և հիպոֆիզում տեղի ունեցող
փոփոխություններով: Դեքստերի գենը տելեմարկյան անասունների
բուլղոգանմանության գե-
նից արբերվում և նրա-
նով, վոր առաջինն ավելի
ուժեղ և ներգործում և
արդպիսով մահացնում և
զետ ծնվելուց առաջ Բացի
զրանից, նաև զրանորվում և
հետերոդիգոտային վիճա-
կում (հետեւարար նա դե-
րիշառ ե), և դիրանալու
բարձր ունակություն և ա-
ռաջացնում դեքստերների
մոտ:

Բացի զրանից, առվարի
մոտ հայտնի յեն բավական թվով այլ գեններ՝ ավելի կամ պակաս լե-
տալության հիմքով:

Հարավային Շվեդիայի հոլանդական անասունների մեջ գտնվեց
անմաղության գենը: Ցեթե այդ գենը գտնվում և հոմոզիգոտային
վիճակում, ծնվում և համարյա անմաղ հորթ և մահանում և ծնվելուց
անմիջապես հետո: Սակայն վոչխարների անմաղության այլպիսի
գենն այնքան մեծ մահացության եփեկտ չի տալիս (Պատղավա): Շվե-
դիայում գտնվեց մի այլ գեն ևս, վոր հոմոզիգոտային վիճակում
առաջ և բերում վերջավորությունների ատրոֆիա: Կենդանին առջեկ
վերջավորություններ բոլորովին չի ունենում, իսկ հետեւ վերջավո-
րություններն ատրոֆացած են: Զետ ներքենի ծնոտը, իսկ վերեկնը շատ
անկանոն և Պարզվեց, վոր այդ գենը Շվեդիա յե բերվել Հունա-
դիայից՝ Գալլյուս անունով մի ցուլի միջոցով¹⁾:

Նկ. 71. Դեքստերի անմաղություն դեքստերային գենով (ըստ կրուի)



1) Առաքը ե, վոր մարդը ևս ունենում և արդպիսի ժամանակական այլան-
դակություն: Մի քանի տարի առաջ մի շարք թերթեր գետեղել եյին մի լուսանկար:
Վերջինս պատկերում եր մի բնամանիք, վորտեղ յերեխանները, ինչպիս և նրանց հայրն-
ու հորեղբայրը վերջավորությունների փոխարքեն կոնդել ունելին:

Ամերիկայում, Հոլլանդիան-Ֆրիզյան անասունների մի քանի հո-
տերում գտնվեց մի գեն, վոր առաջ եր բերում կաշվի մի գեֆեկտ՝
կաշի չեր լինում մի քանի տեղերում, և այդ անկաշիությունը չեր
բուժված: Այդ թերությունն ունեցող հորթերը շուտով մահանում
եյին: Տոհմագրության վերլուծումը ցույց տվեց, վոր այդ կենդանի-
ները ծագում են հոլլանդիան-ֆրիզյան մի ցուլից, վոր 1871 թվա-
կանին բերվել եր Հոլլանդիայից: Նման յերեսույթներ հայտաբերվեցին
նաև Հոլլանդիայում նույն գծով, վորին պատկանում եր Ամերիկա տար-
ված արտադրողը:

Կաթնառաւ շրտնորների մի հոտում յերեան բերվեցին հորթեր,
վորոնք գիշերն ընդունակ չեյին տեսնելու Գիշերային այդ կուրու-
թյունն ել ժառանգական դուրս յեկալ:

Հավերի մեջ հայտնի եյին մի քանի լստալ գեներ: Որինակ՝
կարճոտության գենը լիտալ (մահցու) և հոմոզիգոտային վիճակում:
Թաքուր գծով բազմացնելիս կարճոտանիները յերբեք միատիպ սերունդ
չեն տալիս: Զագերի յերկու յերրորդ մասը լինում ե կարճոտանի, մի
յերրորդը՝ նորմալ Այն ճաները, վորոնց կարճոտանիության գենը
գտնվում է հոմոզիգոտային վիճակում, մահանում են ձվից դուրս գա-
լուց առաջ Կարճոտանի հավերին սովորական տքաղաղների հետ արա-
մախաչելիս ճաներն ունենում են 1:1 հարաբերությունը:

Խճառ՝ պետք ե ուսումնասիրել լետալ գեներ: —Բավկանաչափ կա-
րմոր նշանակություն ունի ընտանի կենդանիների լիտալ գեների
ուսումնասիրումը կենդանիների ցեղերի մնասակար գեներով վարա-
կումը տնտեսական մեծ վնաս ե հասցնում: Իսկ լիտալ գենը կարող է
շատ տարածված լինել, ինչպես ցույց են տալիս հետեւյալ թվերը: Հա-
րավային Շվեդիայի խայտարկետ ու անասունների ցեղագրական
մատյանում արձանագրված ե ընդամենը 8,795 ցուլ: Դրանցից Գալ-
լուսի գծին, վոր ուներ ատրոֆացած վերջավորությունների գեն,
պատկանում է 2881 ցուլ, իսկ Պրինց Ագուֆ ցուլի գծին, վոր Շվեդիա
յի մատըրել անմաղության գենը, պատկանում է 2065 ցուլ նշանակում
և Շվեդիայում փաստորեն շատ գժվար ե գանել այնպիսի մի կենդա-
նի, վորը ցեղակից չլինի այդ յերկու ցուլերից մեկին:

Հաճախ պատահում են ընտանիքներ, վորոնք ունենում են բարձր
արտագրողականության կենդանիներ: Սրանք իրենց գենոտիպում
կարող են կրել մի շարք անցանկախ գեներ, վորոնցից անհրաժեշտ
աղատմել: Յարուլավյան ցեղի հայտնի ուեկորդային կով Զոլոտայան,
վորի մաքսիմալ որակիթը հասնում եր 38 կգ-ի, իր սերնդում այլան-
դակության յերկու դեպք ե տվել — ծնուաների պանորմալ կառուցվածք,
այնպես, վոր հորթերն իրենք իրենց սնվել չեյին կարող:

Պարզելով, թե ինչպես են ժառանգվում այդ բոլոր այլանդակու-

թլուններն ու աննորմալությունները՝ կարելի յե դժել նաև նրանց դիմ պայքարելու ուղին։ Պատք և ճշտիվ հաշվառել յուրաքանչյուր արտադրողի ժառանգական առանձնահատկությունները և հիմնավորապես խոտանում կատարել Մեծ չափով կիրառելով ազգակցական արամատիաշումը, պետք և ստուգել մատղաշներին և ընտրություն կատարել ջոկել լետալ գենից ազատ կենդանիներին։ Ցուկբի լետալ գենից մաքոր լինելն ստուգելու համար նրանց պետք և տրամախաչել ըստ այդ գենի հետերոզիգոտային կովերի հետ։ Իսկ ինչ վերաբերում և կովերին, ապա, Լյուտիկովի կարծիքով, շատ ավելի դժվար և յերեան բերել նրանց մաքրությունը լետալ գենից։ Համենայն դեպք չի կարելի բավարարվել միայն վերջ տալով ազգակցական բաղմացմանը։ Այդպիսով միայն կզաղարի լետալ գեն ունեցող հորթերի ծնունդը, սակայն գենը, վորաքս այդպիսին, կմաս թագնված վիճակում և կշարունակի տարածվել անասնաբուժական հարեւան այն շրջաններում, վորաքս ուղարկվում են բարեկավող ցուլերը¹⁾։

Ենից ազգնուրյան ևն գործում լետալ գիները։ —Գենետիկական տեսակետից լավ ուսումնասիրված այնպիսի որդանիզմներում, ինչպիսիք են, որինակ՝ յեղիպտացորենը կամ դրույթիլը, հայտարերված են հարյուրավոր լետալ գեների նրանք առաջ են բերում որդանիզմի մահացումը նրա զարդացման վորեն տատիճանում։ Վորոշ լետալների պատճառով վոչնչանում են բնեղմանվորված ձվերը, մյոււնների պատճառված ճանճի գործիքը և այլն։

Յերբեմն հաջողվում և նաև վորոշել մահացման անմիջական պատճառը։ Դրույթիլի լետալ գեներից մեկն ուսուցքներ և գոյացնելում վորչերի որդանիզմում։ Բուլղովանմանությունը կապում են հիպոֆիզում տեղի ունեցող վոփոխությունների հետ։

Հայտնի յե, վոր կենդանիների և բույսերի մի քանի ցեղեր

1) Լետալ գեների ուսումնասիրությունը մեր ընտանի կենդանիների մեջ խոշոր դորձնական նշանակություն ունի, քանի վոր մեր կենդանիների մեջ ևս պատճառում են այլանդակություններ, վորոնք պարզաբեր լետալ գեների ազդեցությունը կամ անմազականությունը պրինական արանց շարքը կարելի յե գասել մերկությունը կամ անմազականությունը, վոր պատճառում և մեր անդաման տառարի մոտ ևս Պատճառում են նաև ձնունդի այլանդակություն։ Այսպիսի հորթերը ծնվում են մահացած կոմմ մահանում ևն ձնվելուց հետո։ Պատճառում և, վոր առանց արտաքին վորեն աննորմալության, ձնվելը (հորթ, պաջի, ուշ, զառ և այլն) ծնվում են մահացած։ Այս զնոպներում ևս չե բացասական անհայտ լետալ գեների ադդեցությունը, թեև, ինարկե, այդ կարող և այլ պատճառաներից տառաջանառը։

Տարեկը լետալ գեներ պետք և ստանել և այլ կենդանիների մաս, ուսուի նման գեների ուսումնասիրում մեր բարը տեսակի (տամար, զմելշ, վաշխար, այծ, խոզ և այլն) կենդանիների մոտ պետք է զառնէ հրատապ խնդիրների շարքը։ Առանձնապես հարկավոր և հետեւ ներմուծվող ազնվացելու կենդանիների սերտանդներին։ Ծան. Խ. Յեր.

աչքի յեն ընկնում իրենց զգալի մահացությամբ։ Շատ հավանական է, վոր դա կախված ե այդ ցեղերում գոյություն ունեցող կիսալեռալ և լետալ գեներից։ Լետալ գեները շատ բազմապիսի ազգեցություն են գործում հատկանիշների վրա։ Դրա եֆեկտներից մեկն ե կենսունակության նվազումը։ Այստեղ ևս մենք ունենք մի շարք աստիճաններ՝ սկսած կենսունակությունը շատ քիչ թուլացնողներից մինչև իսկական լետալ գեները։

Վերջապես, ինչպես տեսանք, գոյություն ունեն մի քանի գերիշխող գեներ, վորոնք հոմոզիգոտային վիճակին անցնելիս առաջ են բերում անհատի մահացումը, այսինքն՝ միաժամանակ վարվում են վորպես ուղեսխիլ լետալներ, հետերոզիգոտային վիճակում նրանց լետալության եֆեկտը չի գրանորվում։ Իսկ գենի տեսանելի ներգործումը յերևան և գալիս այս կամ այն գերիշխող հատկանշի ձևով։

Մի գենի ազգեցությաւնը մշտակ ներգործման վրա։ — Մենք սովորաբար վորոշ գեն կապում ենք այս կամ այն հատկանշի հետ, բայց, ըստ եյության, յուրաքանչյուր գենի ներգործումը միշտ կապված ե այլ գեների ներգործման հետ։ Ինարկե, մյուս գեների ազգեցությունը ավյալ հատկանշի իրականացման վրա կարող ե շատ տարբեր լինել, սկսած այնպիսի գեպքից, յերբ գենոտիպի մեջ յերկրորդ գենը մացնելը շատ թույլ հաղիկ նկատելի ազգեցություն ե գործում առաջին գենի ներգործման վրա, մինչև այնպիսի գեպք, յերբ նոր գեն մացնելը շատ մեծ չափով փոխում ե գենի նախկին եֆեկտը։ Այն գենը, վոր աղդում ե այնպիսի հատկանշների զարգացման աստիճանի վրա, վորոնք գորոշվում են առաջինից անկախ այլ գեներով, կոչվում ե ձևափոխող գեն (մոդիֆիկատոր գեն)։ Կարող ե գոյություն ունենալ վորսե ճարտկության (խայտաբղետության) հիմնական գեն, վորն ալլելոլորֆ լինի միագունության նկատմամբ։ Ճարտուկ կենդանիների մեջ կարող են շատ մեծ տարբերություններ լինել սպիտակ բծերի քանակի ու մեծության տեսակետից։ Յերբեմն ճարտկությունն այնքան ուժեղ է լինում, վոր կենդանին ամբողջովին սպիտակ կերպարանք ե ունենում և միայն աչքերի գույնից կարելի յե տարբերել այդպիսի ճարտուկ կենդանուն ալբինոսներից, այսինքն՝ գույնի գենից բոլորովին զուրկ կենդանիներից (ալբինոսների աչքը կարմիր ե լինում)։ Մյուս կողմից՝ ճարտուկ կենդանին կարող ե ամբողջովին գունավոր լինել, բայց միակ սպիտակ բծից։ Մայրահեղ ձևերի միջև գոյություն ունի անցումների անընդմեջ շարք (նկ. 72)։ Անցման այդ ձևերը բացառքը պատճենական էն ձևափոխող գեների (մոդիֆիկատորների) լրացուցիչ ներդրմամբ, գեների, վորոնք ազգում են զարգացող պիզմենտի քանակի վրա։ Ձևափոխող գեները կարող են ժառանգացող պիզմենտի անկախ բուն ճարտկության գենից և լինել ամեն մի կենդանու մեջ,

Ներտույալ նաև այնպիսիներին, վորոնք ամբողջովին միագույն են և զուրկ են ճարտկության գենից: Սակայն նրանք կարող են դրսնորդել միայն ճարտության գեների ներգործման ֆոնի վրա:

Ավելացրապիս յեվ գենոփակական միջավայր. — Ակզրում գենետիկները յենթադրում ենին, թե ամեն մի գեն շոշափում է որդանիզմի միայն մի հատկանիշը: Հենց այդ՝ ամենից ավելի նկատելի արտահայտությամբ ել անվանում եյին տվյալ գենը Բայց իրոք գենի արտաքին տրտահայտությունը կարող է չլինել նրա վոչ միայն միակ ներգործումը, այլ նույնիսկ լինել վոչ ամենակարևոր ներգործումը:



Նկ. 72. Շագարների ճարտկության տարրեր աստիճանները

Հայտնի յեն այդպիսի բազմապատիկ ներգործման բավական թվով դեպքեր, յնը մի գենն ազդում է մի քանի տարրեր հատկանիշների վրա:

Այդ եղբնի այսպես կոչված պլեյտորոպական ներգործմը: Պլեյտորոպիան շատ տարածված յերեսույթ եւ իր ներգործմամբ: ըստ յերեսույթին վերին աստիճանի ուրույն և սպեցիֆիկ ամեն մի գեն ազդում է կրանքի մի շարք ընդհանուր պրոցեների: Կյանքի յերկարատակության, կենսունակության և այլ հատկանիշների վրա:

Յեվ, ընդհակառակը՝ ամեն մի հատկանիշ կախված է շատ գեներից: Մենք պարզ լինելու համար միշտ ասում ենք՝ շեկ գույնի գեն, կարճ ականջի գեն: Բայց իրոք շեկ գույնը կարող է գոյանալ միմիայն մի շարք այլ գեների ներկայությամբ, վորոնք վորոշում են ընդհանուրպես պիզմենտի գարգացումը, կարգավորում են պիզմենտի տեղադրումը վորոնշ քջիջներում, և այլն:

Այժմ արդեն կատարելապես ակներեն և գենետիկական շրջապատի նշանակությունը հատկանշի ձեռվորման ժամանակ: Միե-

նույն հատկանիշը, վոր կարծես թե մի հատուկ գենով չափա-
պանց շատ վարիացիաներ կունենա՝ նայած գենոտիպական մի-
ջավայրին; Չափազանցություն չի լինի, յեթե ասենք, վոր ամեն մի
դարձացող հատկանշի վրա ազդում են բեղմնավորված ձվում գտնվող
բոլոր գեներն եւ գլխովին, Գեներից մի քանիսն ազդում են ուժեղ
կերպով և վճռական նշանակություն ունեն հատկանշի կազմավոր-
ման համար, մյուսներն ավելի թույլ են ազդում և ընդունակ են քիչ
չափով միայն հատկանիշը փոխելու, իսկ մի քանիսի ազդեցությունը
չնչին եւ կ կարող ե նույնիսկ աննկատելի լինել Այդ բոլորն առիթ
տվեց գենետիկայի մեջ մտցնելու «գենետիպական միջավայր» տեր-
մինը (Ա. Ս. Զեսվերիկով): Այդ միջավայրը, զարգացող որդանիգիլը
միջապատող արտաքին միջավայրի, արտաքին պայմանների հետ
միասին, մեծ նշանակություն ունի հատկանշի կազմավորման համար:

Պեյուրոպիկայի և գենետիկական միջավայրի ուսմունքն արդի
գենետիկայի մեջ ճիշտ պատկերացում մտցրեց գենի ու հատկանշի
փոխարարելության բարդության մասին:

Դեմք յեկ մենք մենք—Խնչպես վոր մենք գործ ենք ածում «գենոտիպ»
և «Փենոտիպ» բառերը, այնպես ել կարող ենք գործածել ոգեն և «Փեն»
տերմինները Բանն այն ե, վոր տվյալ գենից կախված ե վոչ միայն
պարզապես հատկանիշը՝ վորպես արդարիսին: Ֆենը մի հատկանիշ է կանգի-
սանա միայն այն գեղագում, յեթե գենը վերին ստոինանի յուրահա-
տուկ, սպեցիֆիկ ե և նրանից կախված ե իրոք միայն մի հատկանիշ:
Եթե իրար հետ համեմատելու լինենք Առ և առ կենդանիները, տպա-
նըանց հատկանիշների տարբերություրը կհանդիսանա Ա զենք: Բայց,
իրոք՝ գենից սովորաբար կախված են բազմաթիվ տարբեր առանձնա-
հատկություններ, հատկանիշներ, Փիլիպոդիմական հատկություններ:
Առա թե ինչու «Փենը» վորոշում ե որդանիգմում աեղի ունեցող վո-
փոխությունների ամբողջ գումարը, վոր կաեսնենք մենք այն գեղա-
գում, յեթե փոխված ե տվյալ ֆենի գենը: Պատկերավոր ասած՝ ֆենը
կարծես գենի տեսանելի դեմքն ե: Ա. Ս. Սեւերովիկին հետաքրքիր
հասկացողություն մտցրեց՝ Փենային պատուհանը Այդ այն կոնկրետ
հատկանիշները, որդանները, հյուսվածքներն են, վորոնց վրա կարելի
յե տեսնել տվյալ գենի ֆենը: Որինակ՝ աչքը ֆենային պատուհան
ե այն գենների համար, վորոնք ազդում են աչքի գույնի վրա: Աչքա-
զուրկների մեջ այդ պատուհանը կարծես փակ լինի Յուրաքանչյուր
գեն ունի իր բնորոշ ֆենը, սակայն այդ ֆենը կարող ե շատ փոփո-
խությունների յենթարկվել բազմաթիվ ներքին և արտաքին պատ-
ճառներից: Երա համար կարող են լինել կարծես զանազան պատու-
հաններ՝ մեծ ու փոքր, շատ և քիչ պատուհաններ: Եթե մեզ հաջող-
ութիւ այս կամ այն պայմաններն ընտրելու ֆենի մի մասը և
դրսերել այն հատկանշի վրա, վորի վրա մինչև այժմ չի նկատվել

ապյալ գենի ներգործումը, այդ նշանակում է, վոր մենք կարծես նոր պատուհան ենք բացում տոլյալ գենի համար Ամեն մի գեն, հանդիսանալով վորոշ գենի բնութագիրը, միևնույն ժամանակ կախում ունի ուրիշ շատ զենորից, վորոնք ուժեղացրել են ֆենի մի մասը, թուրացրել են մյուսը, թափուն են դարձրել մի այլ մասը:

Դենի ներգործման դասը.—Սակայն մի կոնկրետ հատկանշի նկատմամբ ևս գենի աղղեցության պլորենիմ այնքան ել պարզ չե լուծվում: Գենի աղղեցությունը սովորաբար կարելի յև նկատել մարմնի միայն վորոշ մասերում: Ճարտարագետնության (խայտաբղետության) գենն ապապիզմենացում և առաջ քերում միայն մի քանի կետերում: Դրույթիվ խողանիկներն անհետանում են միայն մի քանի տեղերում և այնու կենդանու մարմնի վրա գենի ունեցած ներգործման ըրջանը մենք կարող ենք անվանել գենի ներգործման դաս:

Դերիօխում.—Հատկանշի ձեսվերման մեջ գենի կատարած գերը չի կարելի մյուս գեներից տանաձնացրած դիտել: Իրաք, միշտ գոյություն ունի գեների փոխազդեցություն: Փոխազդեցության տիպիկ որինակն և գերիշխումը: Մենիկը հայտաբերեց լիակատար գերիշխման յերեսությը: Հետագա աշխատանքները հնարավորություն տվին հանգելու այն յեղբակացության, վոր գերիշխումը գեների փոխազդեցության արտահայտությանն և և շատ բարդ մի պրոցես: Լինում են գերիշխման տարբեր տառիքաններ, վորոնք կախում ունեն ինչպես որդանիզմում, այնպես ել որգանիզմից գուրս գտնվող շատ աղղեցություններից:


Լիակատար գերիշխման որինակներ եր բերել գեռ Մենիկը՝ վուլուի վրա իր կատարած փորձերից: Սակայն հայտնի յեն շատ զեղաքրեր, յերբ գերիշխումը լիակատար չի լինում: Սպիտակ լիգնորները (հավեր) դունավոր ցեղերի հետ տրամախաչելիս ստացվում են համարյա սպիտակ հաջորդներ, բայց հետերոդիլուն այնուամենայնիվ կարելի յև տարբերել՝ սակավաթիվ մուգ բծերի ներկայության շնորհիվ: Կարմիր և սպիտակ շորանորն անասուններին տրամախաչելիս տառաջին սերունդն ստանում ե համարյա ճիշտ միջին խայտաբղետ գույն: Սև և բծավորոսպիտակ անդալուլյան հավերին տրամախաչելիս ստացվում են միջնական յերկնագույն ժառանգություն:

Հստ յերեսութին, լիակատար գերիշխման դեղքերն զգալի շատ փակաս են, քան վոչ լիակատար գերիշխման գեղքերը: Լիակատար գերիշխումը միայն ծայրահետո գեղքը և գերիշխող ու ուցեսնիվ գեների այն փոխազդեցության մեջ, վորի արդյունքը մենք տեսնում ենք այս կամ այն հատկանշի իրականացման ձևով:

Գերիշխման աստիճանը կարող ե փոխվել այս կամ այն պայմանների շնորհիվ: Կարող ե եյտան նշանակություն ունենալ որդա-

Նիգմիների հենց կառուցվածքը, նրանց ժառանգական հատկությունների գումարը («գենետիկական միջավայր»): Հայտնի յեն գեղպեր, յերբ գենետիկական մի շրջապատճեմ գենը վարդում և վորպես լիակատար կամ համարյա լիակատար գերիշխող, իսկ այլ գենների շրջապատճեմ նա իր վարդեցողությամբ մոտենում և ուղեսիվության: Նույն կատեգորիային ե պատկանում այն հայտնի փաստը, վոր վորոշ կախում կա գոչխարների սեռի և յեղջերավորության գերիշխման միջև: Պարզվեց, վոր յերբ արամախաչվում են վոչխարների յերկու այնպիսի ցեղեր, վորոնցից մեկի յերկու սեռն ել յեղջյուրներ ունի, իսկ մյուսի արուներն ել, եգերն ել լեղջերազուրկ են, արու հաջորդները յեղջերավոր կլինեն, իսկ եդ հաջորդները՝ յեղջերազուրկ: Ակնհայտ ե, վոր արուների որդանիզմում յեղջերավորությունը գերիշխում ե, իսկ եգերում նա ուղեսիվ ե, մի բան, վոր հաստատվում ե հետագա վերլուծմամբ¹⁾:

Գերիշխման աստիճանի վրա մեծ ազդեցություն ե՝ գործում նաև արտաքին այն միջավայրը, վորի մեջ գտնվում ե զարգացող կենդանին կամ բույսը: Այդ տեսակ մի քանի փաստեր հայտնի յեն բույսերի



Նկ. 73. Դրոզոֆիլի նորմալ (ա և ս) և անորմալ (բ և դ) փորուկը (Մորգանից)

մեջ: Շատ մանրամասնորեն և ուսումնասիրված, թէ ինչպիսի կախում ունի զբողոփիլի աչքի մեծության գենի գերիշխման աստիճանը շրջակա միջավայրի ջերմաստիճանից: Դրոզոֆիլին ունի մասամբ գերիշխող «Վար գենը»: Դրոզոփիլները նորմալ վիճակում ունեն մեծ, կլոր, բարդ, աչքեր, վորոնց փասետների թիվը տատանվում է 800-ի շուրջը: Իսկ Վար գենն ունեցող ճանձերն ունեն նեղ ժապավենաձև աչքեր՝ 50—80 փասետներով: Հետերոզիգոններն ունեն միջին թվով փասետներ՝ 400—450 հատու Պարզվեց, վոր վորդերի զարգացման ժամանակ ջերմաստիճանը բարձրանալու գեղքում հետերոզիգոնների փասետների թիվը փոխվում եւ: Այդպիսավ ուրեմն, կանխումն կա ջերմաստիճանի և գենի գերիշխման աստիճանի միջև:

1) Իբրևանում գոչխարների մեջ յեղջերավորության ժամանգումն ավելի բարդ է: Շատ-շատերն առարկում են վերոնշյալ տեսակետին: Դրա մասին տես Բ. Ն. Վասիլի աշխատաթյունը (ովելի վերջում բերված գրականության ցուցակում):

Գերիշխման հետ միասին գեների փոխազդեցության արտահայտությունն և հանդիսանում է պայմանագր, վոր արտաքում շատ նման և առաջնին, բայց նրանից տարբեր և ըստ ելության:

Գերիշխող և սեցեսիվ գեները հանդիսանում են միևնույն ալլելամորֆ գուրդի գեները: Իսկ նպատակը և հիպոստազը վերաբերում



նկ. 74. Զերմանաֆանի ազգեցությունը կզաքային ճագարի պիզմանավորման վրա: Համար կողմում նորմալ գույնով հազար, աշխատ կողմում մի ճագար, վորի կանաչի մազերն անել են տարբեթյան ցածր աստիճանի պարմաններում (Մ. Մ. Զավադսկակուց ըստ իլինի):


Են վոչ ալլելամորֆ գեների փոխարարելությանը: Որինակ՝ քրոմոսոմի դանաղան կետերում (և նույնիսկ զանազան քրոմոսոմներում) տեղավորված են յերկու զին: Նրանք աչքի յեն ընկնում այն առանձնահատկությամբ, վոր յերբ նրանցից մեկը զբակորում և իր ներգործումը, յերկորպրդի ազգեցությունն աննկատելի յեւ նրանցից առաջինը կոչվում և եպիստատիկ, իսկ յերկորպրդը՝ հիպոստատիկ:

Դեմերի ներգածումը յակ արամին միջավայրը: Դեմի դրսեվորումն ու արամայացումը: — Այս կամ այն գենի ներգործման աստիճանը կարող և կախումն ունենալ շրջակա միջավայրի արտաքին պայմաններից:

Կևսանիների բնակավայրն զգալի ազգեցություն և գործում նրանց գենուսիպերի արտահայտման վրա: Միևնույն ցեղին պատկանող վոչխարների մազը, չափը, մասի վորակը կարող են շատ տարբեր լինել՝ նայած կլիմային, մննդին, գրունտին և այլն:

Դրողոփիլի փորուկի աննորմալ ձևի (abnormal abdomen) գենը կախված է կերի խոնավությունից: Ցեղեւ կերը խոնավ և, առաջ և զալիս անկանոն ձևով փորուկի Զոր կեր գործածելիս անկանոն փորուկի հատկանիշն արագուստ չի գրանցվում, թեև կուղ անհատները գենուսիպորեն փոխված

նկ. 75. Կզաքային ճագար: Մարմին դանաղան մասերում ցույց և տրված արտաքին ջննմության այն աստիճանը, վորից ցածր՝ անող մազի մեջ կուտակվում և ու պիզմանավը (Մ. Մ. Զավադսկակուց, ըստ իլինի)



լինեն, այսինքն՝ ունենան անորմալ անկանոն պայմանները գենուսիպորեն փոխված են, վոր այդ գենի մասնակցությամբ տրամախաչում կատարելով,

պետք ե պահպանել նրա գրանուրման նպաստավոր պայմանները, այսինքն՝ կերպ բավականաշափ խոնավությունը (նկ. 73):

Դրողոֆիլին ունենում ե մի գեն, վոր առաջ ե բերում կրկնակի վոտներ կամ վոտների մասեր: Այդ գենը զրսեորվում ե միայն ջերմության ցածր աստիճաններում՝ մոտ 10—12°C, իսկ սովորական ջերմության մեջ այդ հատկանիշը չի արտահայտվում և նրա ժառանգման յեղանակը մթագնում ե:

Նույցը յել իինը շատ հետաքրքիր փորձեր են արել, պոկելով կամ ածիլելով սպիտակ մազերը կզաքսային ճագարի մարմնի դանագան մասերում: Այնուհետև սարցնելով մարմնի այդ մասերը՝ նրանք ստեղծեցին այնպիսի պայմաններ, վոր սպիտակ մազերի փոխարեն անեցին սև մազեր: Մարմնի դանագան մասերը ուեակցիայի տարբեր չափով ելին պատասխանում ջերմության այս կամ այն աստիճանին (նկ. 74, 75): Այդպիսով, ջերմության ազդեցությամբ հաշողվամ եր փոխել կզաքսային գույնի գենի ներգործումը:

Հատկանշի արտահայտման աստիճանի վրա կարող ե ազդել նաև հասակը (տարբեր):

Կենդանու որգանիզմում գոյություն ունեցող գենը դըսեռըլում և վոչ անպայման կերպով: Դենի գրսեռման համար անհրաժեշտ ե ինչպես գենը շրջապատող, այնպես ել արտաքին միջավայրի պայմանների վորոշ կոմքինացիա: Դեների այդ կախումն արտաքին պայմաններից առանձնապես լավ ե յերեւում Փիզիոլոգիական հատկությունների գեների որինակով: Կաթնառվության վրա ազդող գեները, համապատասխան պայմաններ չենելու դեպքում, չեն գրսեռը:

Կենդանիների բարձր հասակը, մաստվությունը և այլն չեն դրսեռվի, յեթե կենդանիները գտնվեն կերպ և կլիմայական աննպաստ պայմաններում:

Տվյալ գենի առկայությունն որգանիզմում, նույնիսկ հոմոլոգիկոտային վիճակում չի առանցվում, վոր այդ գենը կըսեռըլի վորոշ եփեկտի ձևով: Վորոշ պայմաններում գենը կարող ե չըրսեվորվել (գեների վոչ լրիվ դրսեռումը):

Պետք ե տարբերություն դնել գենի դրսեռման և արտահայտման միջև: Գրսեռում ասելով հասկանում ենք հենց այն փաստը, վոր առանձնիկի որգանիզմում գոյություն ունի ավյալ գենով պայմանավորված հատկանիշ, իսկ գենի արտահայտումն ե նրա արտաքին եփեկտի աստիճանը:

Նկատի ունենալով, վոր շատ գեների դրսեռումը և արտահայտումը մեծ կախումն ունի արտաքին պայմաններից, պետք ե ձգտել գենետիկական փորձերը կատարել արտաքին անփոփոխ պայմաններում:

Անշախ և ներգործում դեմք զարգացման վրա: Ժենովինեաթկա.— Ե՞նչպես և ի՞նչ ուղիներով են ներգործում գեները հատկանիշների ձևափորման վրա: Մեզ հայտնի յեւ յերեռյթների շղթայի յերկու ծայրը՝ մի ծայրում գեները, մյուս ծայրում՝ հատկանիշները: Գեներում փոփոխություններ տեղի ունենալու գեպքում փոխվում են նաև հատկանիշները: Սակայն վորոնք են այն միջնական ողակները, զոր դանդում են բրոմոսոմներում տեղափորկած գեների և հատկավոր որդանիզմի բազմաթիվ բարդ հատկանիշների միջնեւ:

Այդ պրոբլեմի բուծումը հանդիսանում է գենեներիկայի այն հաւատուկ ուղղության խնդիրը, վոր կոչվում և փենոգենետիկա (Հեկիեր) կամ մորֆոլոգինետիկա (Մ. Մ. Զավադովսկի):

Հեկիեր ժամանակին ուրվագոծել եր վերլուծման մի հետաքրքիր ծրագիրը նա գտնում եր, վոր գենոգենետիկան պետք և ուսումնասիրի հասակավոր որգանիզմի հատկանիշների ծագումը, կարծես հետ գնալով գեղի նրանց զարգացման պատմությունը: Թայլ առ քայլ պարզեւով զարգացման ժամանակ անդի ունեցող բոլոր միջնական պրոցեսները և այդ ժամանակ ծագող բոլոր միջնական հատկանիշները, կարելի յեւ գերջապես հասնել այն կետին, վորեղ առաջին անդամ դրսեռը վում է առարերությունն ըստ ավյալ հատկանշի՝ համեմատած այն առանձնիկների հետ, վարոնց որգանիզմում այդ հատկանիշը չի զարգանա: Ինքը չեկիերը մի շարք կոնկրետ որինակներով ցույց տվեց, թե ինչպես զանազան հատկանիշների համար այդ մոմենտը, փենոկրիտիկական փուլի (ֆազի) մոմենտը՝ ինչպես անվանում ե ինքը, շատ առընթեր և լինում ըստ ժամանակի, այնքան, վոր մի քանի հատկանիշների համար նա գեն գտնովում է զարգացման առաջին ետապներում: Հետադայում պիտք և պարզել փենոկրիտիկական ետապի այդ փոփոխությունների ներքին պատճառները չեկիերի ուղղությունը շատ հետաքրքիր և: Ըսթանաբար նրա մատնանշած ուղիով, յերբեմն հաջողվում է մի շարք հատկանիշների համար պարզել թե ինչն և կազմում նրանց գոյություն հիմքը: Գույների սակագույմը հաջողվում և բացարել բջիջների տարրեր քիմիկականությամբ: Վեբթարի ենուաների մի շարք առանձնահատկությունների զարգացումը հաջողվում և բացարել բջիջների խոշորացումով, վերջինս իր հերթին կախված և բջջակորիզի խոշորացումից, վոր հատկանշը և բրոմոսոմների թվի կրկնապատկման: Ըսթ հանրապես չեկիերի մեթոդով հատկանիշների զարգացման խորն ուսումնասիրում կարող և ունենալ նաև բավականաչափ զործնական նշանակություն, քանի վոր զիտենալով հատկանշի զարգացման ընթացքը, կարելի յեւ գտնել նրա վրա հերգործելու ամսնաւելիսկտիվ յեղանակները:

Թեղեւ փենոգենետիկան վորպես ամբողջական գիտություն գեռ

դոյլություն չունի, սակայն արդեն այժմ ել քիչ շեն այնպիսի աշխատություններ, վորոնք զանազան կողմերից են մոտենում նույն այդ պրոբլեմին, գենոտիպի հիման վրա ֆենոտիպը ժառանգաբար իրականացնելու, ստեղծելու պրոբլեմին Հեկերթի ուղղությունը հանդիսանում է ֆենոդնեալիկայում այժմ դոյլություն ունեցող բազմաթիվ ուղղություններից միայն մեկը:

Ֆենոգեննետիկայի հիմնական ինդիքտն և համարվում ուսումնասիրել այն ուղիները, վորով ներգործում և գենը զարգացման վրա: Այդ ուսումնասիրութն, ըստ եյության, հնարավոր և կատարել մի շարք շեղակի մեթոդներով՝ ուսումնասիրելով առանձին գենների (մանավանդ լիսալ գենների) ֆենոտիպական եփեկտը, պարզելով արտաքին պայմանների ազդեցությունը գենի ֆենոտիպական եփեկտի վրա, ուսումնասիրելով միևնույն գենի զանազան ալլելոմորֆները, գենների զանազան կոմբինացիաները, պլեյոսրոպիայի յերևությունը, գենների բարձրացնը և այլն:

Գնալով՝ ավելի ու ավելի փաստեր են կուտակվում, վորոնք ցուց են տալիս, թե ինչպես վորոց գեններից են կախված որգանիզմի զարգացման ամենանուրբ կողմերը, զարգացման ընթացքն ամենավաղ ետապներում և ներբջջային բարդ պրոցեսները (քրոմոսոմների բաժանումը, կրոսինգվերը և այլն):

Ֆենների մի ամբողջ շարք ազդում և ինչպես ամբողջ որգանիզմի, այնպես ել նրա առանձին մասների աճման վրա, այլ իսուքով՝ ազդում են բջիջների բաժանման տեմպի և ուղղության վրա: Մի շարք գեններ ազդում են որգանիզմի վորոց սեակցիաների արագության փոփոխման վրա:

Ուսումնասիրելով ներմության ազդեցությունը մի շարք գենների եփեկտի վրա, հաջողվեց ցույց տալ, վոր դենը ձևագոյացման ոեակցիայի վրա ազդում և վորոց ժամանակաշրջանում, վորը տարբեր և դանազան գենների համար, որինակ՝ դրույթիվի աչքի ֆասետիկների թիվը նվազեցնող գենի ոեակցիան տեղի յե ունենում որգանիզմը՝ զարդանարուց հետո: Ըստսմին ջերմության աստիճաննը փոխվելիս համապատասխանորեն փոխվում և նաև գենի եփեկտը՝ ձևագոյացման սեակցիայի արագությունը: Այդ փաստերը հաստատում են «ըբիոքիմիական» հետեւյալ հիպոթեզը, վոր վերաբերում և հատկանշի ձևավորման վրա գենի ցուցաբերություն մեխանիզմի, այն են՝ գենն առաջ և բերում քիմիական ինչ-վոր նյութ՝ ենդիմ, կատալիզատոր, վորի գերը ձևագոյացման վորոց ոեակցիաների արագությունը փոխելու և Այդ տեսակետն ամենաընդհանուր ձևով զարգացրեց Դոլդոմիդը: Նա կոչվում է ծառանգանաւրյան Ֆլուորդիական քերտիա: Դոլդշմետոն այդ թեորիային հանդեց անդուր մետաքսարեր թիթեռն սեռի վորոշման մեխանիզմի և նոր թիթեռի

Դիեմիուղիայի առաջարիպում իր կտառարած աշխատանքի հիման վրա (աևս նախորդ գլուխը): Նա նախ սեսի գեները, առաջ ընդհանրապես զեները պատկերացրեց վորպես ենթիմերը, վորոնք կարող են գտնվել որպանիզմում զանազան քանակությամբ: Ենդշմիտքը բաղմապատիկ ալերումորֆիզմի յերեսութը բացարում և վորպես միենալիք զենի բանակի փոփոխում:

Դոլդշմիտի թերթան բավականաշափ կարեռը ընդհանրացում եւ նա, ինարկի, հեռու յև անթերի լինելուց: Խուրչ առարկումներ առաջացնում են Գոլդշմիտի մի շարք զրույթները, մասնավորապես այն, թե զենը մի ենթիմ և յենթարկվում ևսուկ քանակական փոփոխությունների: Մի շարք դեպքերում Դոլդշմիտքի կոնցեպցիալում մենք տեսնում ենք, վոր նա փորձեր և անում ժառանդական իրականացման բարդ պրոցեսները բացատրել վորպես պարզ Փիզիկո-քիմիական պրոցես-ռեակցիաներ: Այսուամենայնիվ չի կարելի չխռատվանել, վոր մի շարք պլուրիմների բաժնումը կապված և Դոլդշմիտի գաղափարները յեթե վոչ ամբազզովին, զեթե մասամբ ոգտագործելու հետ: Այդ մտքով Դոլդշմիտի թեորիան, մասնավանդ զենի ներգործումը վերլուծելու տեսակետից, կարելի յև համարել վոչ վատ աշխատանքային հիպոթեզ, վորը հարկավոր և ավելի խորացնելու հաշտել:

Մի շարք աշխատանքներ ժասամբ հաստատում են Դոլդշմիտքի այս կամ այն միաբար Որինակ՝ Ա. Շերնը, ուսումնասիրելով գրողոֆիլի ծօնելի մի քանի ալլերութների և ֆենետի կուտակումը, ցույց տվեց՝ թե վորքան շատ կուտակվեն դրանք, այնքան ավելի մոտ և հատկանիշը գերիշխող ալլերութի առաջ բերած նորմալ վիճակին, այլինքն՝ յուրաքանչյուր ալլերութի կարծես ավելացնում և հատկանշի վրա ազգով նյութի մի ժամը: Պարզվեց, վոր այդ փաստը տարածված և լայն չափով: Նույն զերն են խաղում մի շարք սեցեսիվ զեներ, վորոնք ընդհանուր անունով կոչվում են նիպամոֆներ:

Յեղիպատացորնի վրա կատարվել են մի քանի հատաքրքիր փորձեր, վորոնք ցույց են տալիս զենի համեմատաբար պարզ քիմիական ներգործումը: Այսպես Բրինկը ցույց տվեց, թե մոմականության զենը, վոր ազգում և սուլայի հատկանշի վրա, սոլայի տիպ և առաջ բերում զիս ծագկափոշու մեջ (հետերոզիդոսային առանձնիկը տալիս և փոշեհատիկի յերկու տիպ), ընդումին զենի սկզբնական եֆեկտը, ըստ յերեսութին, այն և, վոր գոյանում և մի ենզիմ (ամիլազ), վոր տարրեր և մոմականության զենի գոյացրած ենդիմիք: Մանգելսպաթը նույն այդ յեղիպատացորնի վրա կատարած փորձով ցույց տվեց, վոր հնդոսաբերմի գեղին գոյանի զենն առնչություն ունի և վիտամինը պարունակվելու հետ: Յեւ վորովհետեւ յեղիպատացորնի ենդոսապերմը տրիպ-լիպիդ և, հարաբեր յեղավ ստանալ ենդոսապերմ, առանց զեղին գույնի

գենի, մի գենով, յերկու գենով և յերեք գենով։ Ըստամին դուրս յեկավ, վոր վիտամինի պարունակութը չափվում է 0.2,25.5 և 7,5 մլվերով։ Այդ ցույց ե տալիս, վոր գեղին գույնի գենն ուղղակի պտտամխանատու յե Ա վիտամինը պարունակվելու համար։

Գոյություն ունի մի հսկայական բնագավառ, վորտեղ կատարվող աշխատանքը բավականաշափ կարեոր նշանակություն ունի մեր ֆենովենետիկական պատկերացումների զարգացման համար. դա գեների փոխներգործման ընագավառն ե, վորը փաստորեն սկիզբ ե առել մենդելիզմից։ Պետք ե աշքի առաջ ունենալ, վոր «գեների փոխներգործում» տերմինով հասկանում ենք վոչ թե գեների՝ վորպես այդպիսիների, փոխներգործումը, այլ նրանց առաջ բերած բազմաթիվ պլույնների փոխներգործումը։ Սոլյորաբար, մենդելիզմի, մորգանիզմի մեթոդներով, վորոնք պարզաբանում են գեների միջև գոյություն ունեցող փոխնարարերությունը, բնավլ յերևան չի բերվում գեների փոխներգործման հիման վրա բարդ հատկանիշների իրականացման կոնկրետ մեխանիզմը, վորը հանդիսանում է գենոգենետիկական վերլուծման խնդիրը։

Այսպես ուրեմն, գենի և նրա ներգործման մասին գոյություն ունեցող ժամանակակից պատկերացումները վճռաբար մերժում են այն միտքը, թե յուրաքանչյուր գեն ներգործում ե առանձին, մյումներից անկախ։ Թեպես գեները գտնվում են քրոմոսոմների վորոշ կետերում, սակայն որգանիզմի զարգացման վրա ներգործում են միասին։ Որպանիզմը ներկայացնում է մի ամբողջական սիստեմ՝ զարգացման աստիճանների յերկար շղթայի արդյունք, մի զարգացում, վորի բոլոր մումենուներին անընդհատ փոխներգործում ե տեղի ունենում գեների և արտաքին միջավայրի միջև։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ժամանակակից գենետիկան վորոշակի սահման և գծում գենի և հատկանշի միջև։

2. Յ0 տարվա ընթացքում գենի հասկացողությունը չափաղանց կոնկրետացել ե, դառնալով Խօնանեթի «ինչ վոր բան»-ից ժամանակակից գենետիկայի քրոմոսոմի մի անդամասը։

3. Մորգանիզմը բազմապատիկ ալելոմորֆիզմի և հետագարձ մուտացիայի յերևություների հիման վրա կործանեց ներկայության բացակայության այն թեորիան, վորն ստեղծվել եր մենագելիզմի շրջանում։

4. Մորգանյան ուղղությունը կոնկրետացրեց նյութական գենին վերաբերող մեր գիտելիքները, սակայն նա ևս պարունակում է մի շարք մեխանիստական տարրեր։

5. Фундаментальная биология. Ученые и их работы в области генетики и генетической инженерии

Биотехнология и генетика в биотехнологии и генетике

6. Установлены методы генетического анализа и генетическая инженерия

7. Установлены методы генетического анализа и генетическая инженерия

ФИЗИЧЕСКАЯ БИОЛОГИЯ

1. Альбитский. Материальные основы наследственности. ГИЭ Украина, 1924. г. (Установлены методы генетического анализа и генетическая инженерия)

2. Рокицкий П. Ф. Ген и признак. Журнал экспериментальной биологии за 1931 г., т. VII, вып. 2 (установлены методы генетического анализа и генетическая инженерия)

3. Завадовский М. М. Внешние и внутренние факторы развития, ГИЭ, 1928 г. (установлены методы генетического анализа и генетическая инженерия)

4. Кр. Генетика животных 1929 г. (также V глава)

5. Конрадин. Наследственность и среда, ГИЭ 1928 г. (установлены методы генетического анализа и генетическая инженерия)

6. Моргани. Теория гена, 1927 г. (установлены методы генетического анализа и генетическая инженерия)

7. Синнот-Дени. Курс генетики, ГИЭ, 1930 г. (установлены методы генетического анализа и генетическая инженерия)

8. Моргани. Структурные основы наследственности (также XIX глава)

9. Серебровский А. С. Проблемы гена. Журнал «Под знаменем марксизма» за 1928 г. № 9—10 (установлены методы генетического анализа и генетическая инженерия)

10. Серебровский и Дубинин. Искусственное получение мутаций и проблема гена, «Успехи экспериментальной биологии за 1929 г., т. VIII, № 4 (установлены методы генетического анализа и генетическая инженерия)

11. Дубинин Н. П. Природа и строение гена. Журнал «Естествознание и марксизм» за 1929 г. № 1. (Աղբնակը տալիս է մի շարք շատ հետաքրքիր և նոր պատկերացութեան գենի մասին, քրոմոսոմի՝ վորպես ամբողջության հետ նրա ունեցած հարաբերության մասին, սակայն ընդունում է ներկայության—բացակայության միաւ թեորիան, պատկերացնելով գենի փոփոխման պրոցես՝ վորպես ամբողջովին կամ մասամբ գույք ընկնելով պրցես):
12. Завадовский М. М. Гены и их участие в осуществлении признака. Журнал «Естествознание и марксизм» за 1929 г., № 3.
13. Вайсберг И., Против механистической генетики. Журнал «Проблемы марксизма» за 1981 г., № 2 (Ներկայության—բացակայության թեորիայի և գենեռիկայում արտահայտվող նրա ժամանակակից ուցեղի թեորի մարդաբանական քննազարդությունը):
14. Тоже № 4 (գենի բնության նկատմամբ Մորգանի ունեցած հայացքների մարդաբանական քննազարդությունը):
15. Колыцов Н. К. Физико-химические основы морфологии. ГИЗ 1929 г. (գրքի վերջում հեղինակը զարգացնում է քրոմոսոմի՝ վորպես սպլитակուցային վիթխարի մոլեկուլի մասին իր ունեցած պատկերացումը):
16. Брийт, Учение о наследственности у с.-х. животных. Сельхозгиз, 1980 г. (այս և լուսաբանված դյուլատանական կենդանիների լետալ գեների հարցը):
17. Лютиков К. М., Летальный фактор бестужевского крупного рогатого скота. Труды Всесоюзного съезда по генетике, 1929 г. т. VI. (այս աշխատության մեջ նկարագրված է գրքում հիշատակված լետալ գենը):
18. Мор и Брийт, Бесшерстность—новый рецессивный летальный ген у коров. «Вестник животноводства» за 1928 г. № 8 (Լետալ գենի նկարագրությունը):
19. Васин Б. Н., Наследование структурных признаков. Генетика овец. II. Труды Центральной станции по генетике с.-х. животных № 4 (բացամրվում է յեղջերավորության ժամանակումը, վոր չի համընկնում դրեւում ընթափած այն տվյալներին, թե գերիշխումը կազ ունի մենի հետ):
20. Прошлагов А. Н. Ген и признак в онтогенезе. Журнал «Успехи современной биологии», т. III, вып. 2, 1934 г.
21. Камшилов М. М., Генотип как целое, журнал «Успехи современной биологии» за 1924 г., т. III, вып. 2.

ՏԵՇԵՍԱԾԿԱՆ ՈՂԴԱԱԿԱԾՐ ԲԱՑԻ ՀԱՅԿԱՆԻՇՆԵՐԻ ԺԱՌԱՎԱԿՈՒՄԸ

Առաջակական յեզ բանակատկան հատկանիւններ.—Դինեաթիկական հետապոտումների ժամանակ մենք հանդիպում ենք փոխադարձորեն իրար հետ կապված բազմաթիվ հատկանիշների: Ցերք մենք ձեռնարկում ենք այս կամ այն հատկանշի հետպոտումը, նախ և առաջ պետք է վորոշենք, թե ինչով և տարբերվում նա մյուս հատկանիշներից, յերեա՞ն բերենք նրա՝ հատկությունները, վորակը, առանձնահատկությունները, նրա զարգացման զանազան վորակերն ու ետապները:

Սակայն ճանաչելով հատկանշի վորակական տարբերը, մենք ճանաչում ենք նրա միայն մի կողմբ: Մեր հաջորդ քայլը պետք է լինի ճանաչել նրա քանական կողմը:

Որյեկտիվ իրականության մեջ վորակական և քանակական կողմերը միասնություն են կազմում, նրանք յերկուսն ել որյեկտիվորեն հատուկ են տիեզերքի այն ռեալ իրերին, վորոնք ճանաչում ենք մենք զիտական այս կամ այն մեթոդներով:

Տվյալ հատկանիշը վորակական կողմից վորոշելիս մենք գենեաթիկայնեւ ոպագում ենք այսպիսի հակազդումներից—ականջի բլթակներ կան, թե վոչ, զույնը կարմիր և, թե սև, կատարը վորոնաձեւ և, թե սովորական, և այլն: Ալտերնատիվորեն ժառանգվող այդ բոլոր փոփոխությունները հակազդիր հատկանիշների հետ համեմատելիս հեշտությամբ տարբերվում են իրարից: Նրանց ժառանգումը կարող է բարգանալ այս կամ այն պատճառով, զործոնների համակցումով, նրանց շաղկապումով և այլն, սակայն սովորաբար շատ հեշտ և լինում կլասիֆիկացիայի յենթարկել գրանք: Հեշտ և վորոշել և հաշվել մեղքման ժամանակ ստացվող հիմնական խմբերը:

Տվյալ հատկանիշը քանակի տեսակետից ուսումնասիրելիս մենք դորձ ենք ունենում թվական մեծությունների հետ, վորոնք արտահայտում են կենդանիների կենդանի: Քաշը, բրդի յերկարությունն ու նրբությունը, կաթնատվությունը, մսատվությունը, ձու ածելուունա-

կությունը և այլն։ Ամեն մի այդպիսի հատկանիշ զգալի տառանում-ներ և ունենում, վորը շոշափելի կերպով բարձացնում և անհատներին վորակապես տարբեր խմբերի բաժանելու գործը։ Որինակ՝ շատ գժվար և բաժանել։ բոլոր կենդանիներին բարձրահասակ և ցածրահասակ խմբերի, վորովհետև անհատների բավականաչափ մեծ խումբ ուսումնասիրելիս այս կամ այն սերնդում պատահում են բոլոր միջնական հասակները՝ ոկսած շատ բարձրից մինչև շատ ցածրը։

Յեթե զուգորդենք քանակական հատկանշով տարբերվող յերկու անհատներ, որինտեղ՝ «ծանրը» և «թիթեղը», ապա առաջին սերնդի անհատներն ամենից հաճախ լինում են միջակ, իսկ յերկորդ սերնդում կսացվեն և «ծանր» և «թիթե» անհատներ, և միջնական բոլոր տառանումները։ Մենք չենք կարողանա վորոշել այն ճեղքումը (3:1 կամ 9:3:3:1 և այլն), վորը սովորաբար այնքան պարզորդ կերպով տեսնում ենք Բարում՝ վորակապես տարբեր ցեղերը արամախաչելիս։

Այդ պատճառով քանակական հատկանիշների ժառանգման յեղանակները պարզելու համար անհրաժեշտ և գործադրել տարբեր, ավելի բարդ մեթոդներ, վերըուժման նկատմամբ ունենալ այլ մոտեցում։

Գորակական և բանակական հատկանիշների ժոռանգման միաևսում մնխանիզմը թե մեկ և թե մյուս հատկանիշները ձևավորվում են ժառանգական գործուների և արտաքին պայմանների փոխազդեցության հիման վրա։ Թե մեկ և թե մյուս հատկանիշների վերըուժման նպատակն եւ գտնել հատկանշի դոյացման թե դիսավոր և թե յերկորդական պատճառները։

Քանակական հատկանիշներն ավելի բարդ հատկանիշների տպավորություն են գործում։ Մի ժամանակ ընդունում եյին, թե Մենակի կանոնները նրանց նկատմամբ չի կարելի կիրառել, ուստի փորձեր եյին անում ինչ-վոր հատուկ որինաչափություններ գտնել նրանց ժառանգման մեջ։ Ներկայում գեներիկներն ընդունում են, վոր քանակական հատկանիշներն եւ ժառանգվում են Մենակի կանոնների համաձայն։ Հարցը վերաբերում է յերեսությի միայն ավելի կամ պակաս բարդությանը, և այն բանին, վոր անհրաժեշտ և հաշվի առնել պատկերը բարդացնող բազմաթիվ գործոնները։

Ցուցաբանյալ համամօին հատուկ և վարակական ինչ բանակական բնուրագրումը, — հատկանշի ամեն մի քանակական շարք, վորպես իր հետագա դարձացման արդյունք, կարող և տալ վորակական տարբերություն։ Վորակական ամեն մի տարբերություն պարունակում և քանակականի տարբերը։

Դրա համար կարող են լավ որինակ հանդիսանալ դրողոփիլի աչքի տարբեր գույները։ Մենք արդեն ասացինք, վոր գոյություն ունի աչքի գույնի բազմապատիկ ալելումորֆների մի սերիա, վորը պարու-

նակում և ավելի քան տասը գեն (նոզինային, կորալային, արնապույն և այլն): Նրանց մեծ մասը բավականին լավ և դժուռը ունեմ: Պետք և կարծել, թե վորակական այդ տարբերությունները հիմնված են պիգմենտի սոսկ քանակական ավելացման կամ նվազեցման վրա, սակայն անվիճելի յէ, վոր, բացի զրանից, հիշյալ տարբերությունների հիմքն և կազմում պիգմենտների վորակական տարբերությունը: Յն. Ի. Բալկանիայի չհրտապարակված տվյալներից հետեւմ և, վոր իրենց դույնով շատ մոտ «Ճիրանկույն» և «Բաղադույն» գեններն ըստ յիշրույթին տարբերվում են պիգմենտների դասավորության յեղանակով: «Բալկանիայի» գեղին պիգմենտը դասավորված և գիֆուզարար, իսկ ճիրանկույնինը՝ ասավելապես յեղաներին: Հետաքրքիր և, վոր աչքի «սեպիա» և «կինոբար» դույների մուտացիաների տարբերությունը (այդ գեններն ալլելոմորֆային չեն) հիմնված և պիգմենտների վորակական տարբերության վրա, այն և «սեպիան» համարյա չունի կարմրի պիգմենտ, իսկ «կինոբարայինը» չունի գեղինը:

Վորակական հատկանիշները վոչ միշտ ավելի հեշտ են վորոշվում, քան քանակականները: Կան վորակական այնպիսի հատկանիշներ, վորոնք չափազանց գժվար և պարզաբանել նրանց զարգացման վրա զանագույն չափով ազդում են մի քանի գեններ, և նրանք վերին աստիճանի փոփոխական են արտաքին միջավայրի պայմանների ազդեցությամբ: Իսկ քանակական մի քանի հատկանիշներ կախում ունին միայն մի զույգ դեներից, և F₂-ում նրանց մեջ կատարվող ձեղքման կլասիֆիկացիան վոչ մի գժվարություն չի հարուցում: Բանակական այզպիսի հատկանիշներ լավ որինակն են վորոսի բարձրությունը, վորն առումնասիրել և Մենդելը, Յերկրորդ սերնդում Մենդելին ստացավ հետեւյալ կանոնավոր ճեղքումը:

3 բարձր՝ 1 ցածրի նկասմամբ:

Բանակական հատկանիշների ժառանգման ուսումնասիրումը ձեռնարկելու: Համար նախ պետք և կարողանալ վորոշել ու նկարագրել զրանքը: Այդ կարելի յէ անել նախ և առաջ չափման միջոցով: Իսկ չափման արդյունքները պետք և մշակել բիոմետրիկական յեղանակով: Մենք լավ գիտենք, վոր քանակական վորեւ հատկանիշներ գենով հոմօգիտապային անհատների խմբում նրանք բոլորն իրար նման չեն: Որինակ՝ համի ածանությունը, նույնիսկ գուտ, հոմոլոգուտային ցեղի սահմաններում, տատանումներ կունենա՞ն այսած այս կամ այն անհատի կյանքի ու զարգացման շատ պայմաններին: Յեթե մենք տրամախաչենք տարբեր ցեղերի պատկանող և ըրգի տարբեր նրբություն ունեցագ յերկու վոչխար, ապա մեզ շատ քիչ բան կատակապիս այդ կինոգանիների բրդի նրբությանը վերաբերող թվերը նրանք կարող են պատահական լինել: Պետք և զիտենալ, թե վոր սահմաններում և տա-

տանկում բրդի նըրսությունը առաջին և յերկրորդ ցեղին պատկանող այդ վոշաբների ամբողջ խմբումն Ապա պետք ե գիտենալ, թե վոր միջին մեծությունն իրոք բնորոշ ե տվյալ խմբերի համար։ Ահա թե ինչու քանակական հատկանիշներն ուսումնասիրելիս պետք ե նկատի առնել ըստմետրիկական կոնստանտները (մշտականները)՝ միջինը, փոփոխության քառակուսային շեղումը և նորա կոնֆիգուրացիա:

Հատկանշի նկարագրման ու վորոշման յերկըրորդ մոմենտը, վոր անհրաժեշտորեն պետք է նախորդի գենետիկական վերլուծմանը, վորակական կլասիֆիկացիա մատցնելն է։ Պարզ է, վոր միմիայն քանակական մոռագույնը բավական չեն։

Վերցնենք, որինակ՝ վոչխարների բրդի նույն այդ նրբությունը:
Բրդի բոլոր տարբերից՝ սկսած ամենանուըք ազգամազից մինչև ամենակոշտ քիստը, ըստ բարակության կարելի յե շարք կազմելու Բայց
ազգամազի և քիստի միջև կա նաև վորակական տարբերություն,
տարբերություն կառուցվածքի և գոյացման նկատմամբ Յեթե առանձին վերցնենք քիստի խումբը, վորպես ամբողջովին քանակական շարք, մենք թերևս նույնպես սխալ գործած կլինենք, յեթե չբաժանենք քիստի այն տարբեր խմբերը, վորոնք գուցե տարբեր ծագում ունեն: Նույն քիստի սահմաններում պետք ե փորձել առանձնացնել տարբեր սիպերը, յելնելով հենց կորագծերի բնույթից: Ազգամազի և քիստի միջև տեղ ե բռնում միջնական մազը: Նա իրոք միջնական ե ըստ բրդի նրբության, բայց վորակապես նա տարբերվում է քիստից ու ազգամազից և արդ չի կարելի մոռանալ:

Կաթնատվությունը վերլուծելիս մենք նույնպես չենք կարող հաշվառել կաթնատվության բոլոր յուրաքանչատուկ տիպերը, յեթե նկատի առնենք կթի մեծության սոսկ քանակական շարքը: Նույնիսկ մի կողմէ թողնելով կաթնատվության գանազան գործոնները, ինչպիսիք են՝ մննդի տրակտը, արյունատար անթների սիստեմը, կաթնապեղձը, վորոնք կարող են հանդիսանալ այս կամ այն կաթնատվության պատճառը, անհրաժեշտ ե դիֆերենցիալ ուսումնափրությունն ըստ լակտացիոն կորագծի բնույթի, ըստ առավելագույն կթի և այլն: Կաթնատվության քանակական շարքը պետք է շերտավորել և առանձնացնել նրանում վորակական կողմերը:

Ամեն մի քանակական հատկանշին մոտենալիս պետք է կարուղանալ նաև վորակապիս տարրեր կողմեր գանել նրա մեջ:

Տնակոսապես աշճիքավոր առանձնահարկաւրյաւնների մեծ մասը բանական հատկանիութե են։ Նրանց բարդուրյունն ու կախումը ժողովագույնամասությանց յակ միջավայրից։ Հնտանի կենդանիների բազմաթիվ հատկություններից, զորոնք կազմում են գենետիկայի ուսումնասիրության առարկան, պետք է դիմավոր ուշադրությունը նվիրել տնտե-

սառպես արժեքավոր առանձնահատկություններին։ Դրանց թվին են պատկանում՝ կաթնատվությունը (ավելի ճիշտ՝ կաթնառատությունը և կաթնայուղությունը), մեծությունն ու մսությունը, բրդությունը, ածանական հատկանիշներ են։ Բացի գրանից, այդ հատկանիշների գոյացման համար փոչ պակաս կարենը նշանակություն ունեն նաև արտարին միջավայրի գործոնները։ Ժառանգականության և միջավայրի հարաբերական դերը շատ դեպքերում գեր բավականաչափ չի ուսումնասիրված, սակայն կարելի յն չտարակուսել, վոր գենետիկական, ժառանգական պատճառներն ելական գեր են խաղում տնտեսապես ոգագար համականիշների կազմավորման մեջ։ Հայտնի յե, վոր կարելի յե առանձնացնել բազմապիսի, իրենց ժառանգական հատկություններով համեմատարար կայտն, ինչպես ասում են՝ մաքուր սորտեր ու ցեղեր։

Ամենայն հավանականությամբ շատ քիչ են այնպիսի դեպքերը, յերբ վորեն յերկու ցեղերի տարբերությունը համանման հատկանիշներից մեկով ունենա հասարակ գենետիկական հիմք։

Առայժմ մեզ հայտնի չե վորեն այնպիսի դեպք։ յերբ հավերի ածանության կամ կովերի կաթնատվության ու մսության ժառանգություն սպասիչ կերպով ուսումնասիրված լինի գենետիկական կողմից։

Կաթնատվությունը մի շատ բարդ հատկանիշ եւ Նըստում կարելի յե մատնանշել մի շարք կողմեր. ա) մի տարում կամ լակացիոն շրջանում ստացված կաթի ընդհանուր քանակը. բ) կթի մեծագույն քանակը. գ) կաթի վորակը, մանավանդ նրա պարունակած յուղի տոկոսի տեսակետից։ Առանձին ցեղերի և փոփոխակների միջև բացորոշ տարբերություններ կան՝ ըստ կաթնատվության և յուղի տոկոսի։ Ցեղերի սահմաններում պատահում են բարձր կաթնատվություն և յուղի մեծ տոկոս ունեցող գծեր, վոր ցույց և տալիս, թե այդ համականիշները հաղորդվում են ժառանգաբար Սակայն գենետիկական պատկերը քողարկվում և նրանով, վոր կաթնատվությունը հակայական կախում ունի արտաքին պայմաններից՝ կերից, անառուններին պահելու պայմաններից և այլն։ Թեսպես կաթնատվությունը հանգիստնում և սեռով սահմանափակված մի հատկանիշ, այսինքն՝ դրակորդում և միայն մի սեռում, այնուամենայնիվ կաթնատվության հատկությունները հազորդում են թե մայրը և թե հայրը հավասարապես։

Եերկայսւմն բավականաչափ նյութ կա, վորը ցույց և տալիս, թե մի շարք ցուլերի աղջիկները զգալիորեն ավելի կաթնատու յեն, քան նրանց մայրերը և, ընդհակառակը, կան ցուլեր, վորոնց աղջիկները, համեմատած իրենց մոր հետ, շատ ավելի քիչ կաթ են տալիս։ Թե

առաջինները և թե յերկրորդները շատ մեծ վարիացիաներ ունեն: Այդ ամենը ցույց և տալիս, վոր կաթնատվության տեսակետից այդ ցույցին ժառանգականությունը, միևնույն ցեղի սահմաններում, շատ տարբեր և լինում: Ուստի բնականորեն բզիում և գործնական այն հետեւությունը, թե կաթնատվությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ և ոգտագործել միմիայն բարձր կաթնատվության տարրերը ունեցող ցուկերին Բավական չե վորպես բարելավողներ ընտրել տվյալ մեծարժեք ցեղի բոլոր ցուկերին անխտիր, այլ հարկավոր և ընտրել նրանցից այնպիսիներին, վորոնք իրոք արժեքավոր են իրենց ժառանգականությամբ: Դրան կարելի յե հասնել՝ այնորեն կիրառելով ցուկերի անհատական սուուզումը (տես վերջին գլուխը),

Կովի տված կաթի ընդհանուր քանակի հետ միասին, վորի սոսին արդեն խոսեցինք, շատ մեծ նշանակություն ունի նաև նրա կաթի պարունակած յուղի քանակը: Հայտնի յե, վոր գորոշ ցեղերի պատկանող կովերը յուղալի կաթ են տալիս, իսկ մյուս ցեղերինը՝ սակավայուղ, ուստի բնական ե, իբրև ընդունենք, վոր գոյություն ունեն նաև այնպիսի գեներ, վորոնք ազդում են կաթի յուղի տոկոսի վրա:

Կաթնատվության հետ միասին տնտեսական մեծ նշանակություն ունի կենդանու մտառությունը (կամ ընդհանուր քաշը): Տառվարի և վոչխարների առանձին ցեղերը հատկապես բուծմել են մոռտության ամենամեծ ցուցանիշներ ստանալու նպատակով և այդ պատճառով մեծ արժեք են ներկայացնում: Մեզ մոտ համեմատաբար այնքան ել շատ չեն մսատու ցեղերին պատկանող կենդանիները, ուստի մոի պրոբեմը լուծելու միջոցների միջ առաջին տեղերից մեկն և դրավում սովորաբար մանր՝ տեղական ցեղերի մետիսացումը հատկապես մսատու, կուլտուրական ցեղերի հետ: Այդպիսով հաջողվում և մեր անասունների մասինը սերնդից սերունդ հագեցնել մսատության գենով և ավելացնել նրա մեծությունը: Մետիսացումը ճիշտ կաղմակերպելու համար կարևոր և պարզորոշ պատկերացում ունենալի, թե ինչպես են ժառանգվում այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են մեծությունը կամ մսատությունը:

Վորոշ քաշ և չափ ունեցող կենդանու կազմավորման վրա աղոյում են վոչ միայն արտաքին պայմանները՝ աճման, զարգացման, մննդիք և այլ պայմանները, այլև կենդանու ժառանգական բնությունը: Սակայն մենք մինչեւ այժմ շատ քիչ բան գիտենք, թե վորոնք են մեծության հատկանիշի գենետիկական պատճառները, գենետիկական ինչպիսի հիմքի վրա յեն կառուցված՝ բարդ, թե՛ պարզ:

Իհարկե՛ չի կարելի մոռանալ, վոր այդ հատկանիշներն ուստամասիրելու բոլոր փորձերի ժամանակ անհրաժեշտ և ճշգրի հաշվի:

առնել արտաքին պայմանները, Մենք լավ գիտենք, թե զորքան մեծ կախում ունի կենացանու քաշը նրան պահելու պայմաններից, մասնաւորապես՝ սննդից:

Դենուտիպալին տարբերություններն ուստամասիրելու համար անհրաժեշտ եղանց համար ստեղծել հավասար պայմանները Յեկ, ընդհակառակը, արտաքին պայմանների աղղեցությունը պարզելու համար անհրաժեշտ ե վերցնել միատեսակ գենուտիպեր: Այդ տեսանկյունով արտասահմանում և Խորհրդային Միության մեջ կատարվում են մեծ աշխատանքներ մարզու յերկվորյակների վրա (մի ձվից առաջացած): Դրանց ոգնությամբ պարզվում ե գենուտիպի և արտաքին պայմանների ահակարար կշիռը:

Հետաքրքիր ե, վոր, ըստ Մոսկվայի բժշկա-բիոլոգիական ինստիտուտի ավագանների, ելեկտրոկարդիագրամի փոփոխության ընսույթը (սրտի ելեկտրականության հոսանքի գրանցումը) ճշշող մեծամասնության դեպքերում պայմանավորված է զենուտիպով: Գերմանական գիտնական ուղղութերը յերկվորյակային մեթոդը լայնորեն սկսել ե կիրառել առվարի նկատմամբ: Նա մի շարք տարիներ ուստամասիրում եր յերկվորյակների զույգեր, զիտելով նրանց աճը, իսկ հետագայում, նաև կաթնատիպությունը: Պահելով նրանց միանման պայմաններում Կրամանիւն ստանում եր աճի, կաթնատիպության և այլ զարմանալի նմանություն: Պայմանները փոխելով, կարելի յեր լինում վորոշել, թէ ինչ սահմանի յի համառում զենուտիպով նման կենդանիների տարբերությունը:

Ճագարի բարի յակ ականջի յերկարության ժառանգումը վարպետական համամիտօների ժառանգումն ախպիկ որինակ: — Կեսըլը ճագարների մանր ցեղերը՝ լեհական և ուստական (կղաքասային) ճագարները արամախաչեց խոշոր ցեղի՝ ներկայացուցիչների՝ բեղդիական ճագարների հետ: Նա չափեց ճագարների քաշը և ականջի յերկարությունը՝ լեհական ճագարի միջին՝ 85 միլիմետր, իսկ ուստական ճագարինը՝ համապատասխանորեն՝ 1800 զրամ ու 95 միլիմետր և բեղդիականինը՝ 3600 ու 145 միլիմետր: Ցուրաքանչյուր ծնողական ցեղի սահմաններում պատահում և անհատական վարիացիս, վոր մոտավորապես միաւեսակ և բոլոր ցեղերում:


Ինչպես տեսնում ենք, միջին թվերը տարբերվում են շատ զգալի չափով:

Լեհական և բեղդիական ցեղերի ներկայացուցիչների արամախաչութից ստացված առաջին սերնդի Ա-ն (միջինը) ներկայացնում եր ծնողական տիպերի միջինի միջնականը Առաջին սերնդի փոփոխականությունը համեմատաբար մեծ չե, մի քիչ ավելի յի քան ծնող-

ներինը. Յերկրորդ սերնդում միջինը նույնն է, ինչ վոր F_1 -ում, սակայն բնորոշ է, վոր փոփոխականության թափը համարյա կրկնապատճել ավելանում եւ:

F_2 -ի վարիացիոն շարքը մոտենում է ծնողական ցեղերի վարիացիոն շարքերի ծայրերին, թեզետ այնուամենայնիվ չի հասնում ծնողների վարիացիայի սահմաններին:

Այս որինակը շատ տիպիկ է քանակական հատկանիշների հսկայական մեծամանության համար: Յերբ քանակական հատկանիշների ժառանգումը վերլուծելիս ուզում են պարզեց թե ժառանգական ինչպիսի պատճառներ են վորոշում այն տարրերությունը, վոր գոյություն:



Նկ. 76. Լեռական (P) և բեղդիական (P₁) ճագաբների տրամախաչումը (ըստ Կեսալի) ունի ավելի կամ զակաս չափով տվյալ հատկանիշն ունեցող ցեղերի միջին, նրանց տրամախաչում են: Ընդումին դիտում են հետեւյալ յերեւուկթիները. 1) գերիշխման բացակայությունը և ժառանգման միջնական տիպը (միջնական տուածին սերունդը), 2) F_1 -ում փոփոխականության մեծ չափով ավելանալը՝ համեմատած F_1 -ի հետ, 3) ծնողական տիպին մոտեցող (բայց սակայ անզամ լիակատար չափով) տիպերի յերևան զալը F_2 -ում, այսինքն՝ ընդգրկելով ծնողների վարիացիոն շարքերի բոլոր դասերը:

Ժառանգման բացարումը միշտնի գեների մասնակցության համապատճենվ. — Ծնողական մաքուր ցեղերի (նաև տուածին սերունդի) փոփոխականության չափանիշը մոտավորապես ցույց է տալիս, թե հատկանիշն ինչ չափով է յենթարկվում միջավայրի տատանվող պայմանների աղգեցությանը: Իսկ F_2 -ում փոփոխականության մեծ չափով

ամիելանալը ցույց և տալիս, վոր այդտեղ, բացի զբանից, ձեղքում և կատարվել ըստ ինչ-վոր գեների:

Վերհիշենք զի՞նիրիդային կամ տրիհիրիդային տրամախաչման որինակը: Վորքան ավելի բաղմաթիվ զեներով եյին տարրերվաւմ տրամախաչման համար վերցված լեռակետալին տիպերը, այնքան ավելի բաղմապիսի ձեւը եյին ստացվում յերկրորդ սերնդում, այլ խորօվ՝ այնքան ավելի յեր լինում F_2 -ի փոփոխականությունը: Սակայն արիհիքրիդային և այլ տրամախաչում կատարելիս կային տարրեր հատկանիշների վրա ազդող զանազան գեների F_2 -ը փոխվում եր զանազան հատկանիշներով: Մեր վերցրած զեպքում խոսքը վերաբերում է մի հատկանշին: Աւատի պիտաք և հանգել այն մոքին, թե ճաղարների քաշի ու ականջի յերկարության որինակում ճեղքումը կատարվում և ըստ մի քանի գեների, փորոնք ազդում են միենալույն հատկանշի, ույլալ դեպքում՝ քաշի և ականջի յերկարության վրա, մեծացնելով կամ փոքրացնելով հատկանիշը:

Այն պատկերացմանը, թե քանակական հատկանիշների մեծ մասի ժամանգումը կախում ունի նման կերպով ներգործող, բայց անկախ գեների գումարումից, հանգեցին այն հնատաղուղղները, վորոնք ուսանել մանրակիրա կերպով աշխատել են քանակական հատկանիշների բնագավառում, այն եւ Խարք, Նիլսոն-Նիլեն և ուրիշները, Նիլսոն-Նիլեն այդ տեսակետը ձևակերպեց բազմապատիկ գեների հիպոթեզ անունով: Սակայն ավելի լավ կլինի, վոր այդպիսի գեներն անվանենք միահանգան կամ սղոլիմեր գեների:

Յերրորդ դիմում մենք խոսեցինք հովվամախազի (δ տապաշարի) պատուղների ձեւը ժամանգելու մասին: Ենթի, վոր ուսումնասիրել եր այդ գեղքը, յեկալ այն լեռակացության, վոր գոյսություն ունեն պատուղների յեռանկյունի ձեւը վորոշող յերկու զերիշխող գեն: Երանցից ամեն մեկն ըստինքյան տուած և բերում պտուղների յեռանկյան ձեր երանք նույն եվեկան են տալիս նաև միասին ներգործելիս: Այդ որինակում զեները ներգործում են միենալույն հատկանշի վրա և ըստ յերեսույթին մրատեսակ, սակայն եվեկու չի ուժեղանում նրանց ներգործման զումարումից: Յենթաղբենք, թե տրամախաչմանը մասնակցում են յերեք զույգ գեն՝ A_1 , A_2 և A_3 .

$$\begin{aligned} P : & A_1 \ A_1 \ A_2 \ A_2 \ A_3 \ A_3 \times a_1 \ a_1 \ a_2 \ a_2 \ a_3 \ a_3 \\ F_1 : & A_1 \ a_1 \ A_2 \ a_2 \ A_3 \ a_3 \end{aligned}$$

F_2 -ի արդյունքները պետք և ստանալ Պեննեսի վանդակի միջոցով (ψ երջնիս կառուցումը թողնում ենք պարապողին):

Այդ արդյունքները մենք կդրենք պատրաստի ձեռվ, և վորովնեմ յենթաղբվում ե, թե գեները ներգործում են մրատեսակ, բոլորու-

զին կարեոր չե, թե զեներից վորն և առկա՝ առաջին, յերկրորդ, թե
յերբորդ Ա-ն, Բոլոր տիպերը մենք կխմբենք ըստ Ա-ի թվի: Տալիս
ենք պատրաստի արդյունքները: Դրանք հետեւալներն են՝ F₁-1

$$\text{AAAAAA} + 6 \text{AAAAAa} + 15 \text{AAAaa} + 20 \text{AAAsaa} + \\ + 15 \text{AAaaaa} + 6 \text{Aaaaaaa} + 1 \text{aaaaaaa:}$$

Ստացված հաճախականությունների շարքը՝ 1+6+15+20+15+
+6+1-ը հանդիսանում ե նյութանի: բինոմի կոեֆիցիենտների շարքը
(1+1)⁶: «Ե» ցուցանիշը համապատասխանում է վեց ալելումորթների
կամ յերեք զույգ գեների մասնակցությանը: Ալելումորթների ամեն
մի այլ թվի համար դժվար չե հաշվել առանձին դասերի հաճախակա-
նությունը, այսպիս կոչված՝ Պասկալի յեռանկյունու միջոցով:

1	$(1+1)^0$
1 1	$(1+1)^1$
1 2 1	$(1+1)^2$
1 3 3 1	$(1+1)^3$
1 4 6 4 1	$(1+1)^4$
1 5 10 10 5 1	$(1+1)^5$
1 6 15 20 15 6 1	$(1+1)^6$ և այլն:

Այս յեռանկյունում յուրաքանչյուր թիվ կազմում ե իրենից վե-
րև գտնվող յերկու թվի զումարը: Այս յեղանակը շատ հարմար և
ճեղքումները հաշվարկելու համար, զորքան գենով ել կատարված լինեն-
դրանք:

Ստացված շարքը շատ յերկար ե, և թեպետ միջին F₂-ը և F₁-ը
նույնն են, սակայն F₂-ի փոփոխականությունն զգալի չափով բարձր եւ
նա ընդգրկում ե ծնողական մի տիպից մինչև մլուսը տատանվող անհատ-
ների Ընդգրմին մենք տեսնում ենք, զոր ինչպես AAAAAAA ձեր, այս-
պես ել աաաաա ձեր, յերեան են գալիս յուրաքանչյուրը հաջորդի-
միայն 1/64-րդ մասում, ուստի համեմատաբար սակավաթիվ հաջորդ-
ներ ուսումնասիրելիս հեշտությամբ կարող ե պատահել, վոր այդ ծայ-
րային ձերը չհանդիպեն: Ահա թե ինչու F₂ վարիացիոն շարքը կարող
ե նաև չընդգրկել ծնողական տիպերի ծայրային աջ և ձախ ձեերը
Վորքան ավելի զույգ գեներ են մասնակցում տվյալ քանակական
հատկանիշը վորոշելու գործին, այսքան սակալ անդամ կվերականողն-
վեն F₂-ում յելակեատյին տիպերը: Գեների քանակը կարելի յի մո-
տավորապես յենթագրել, յենելով յերկրորդ սերնդի այն անհատների
թվից, վորոնք հիշեցնում են ծնողական տիպերից վորոնք մեկը: Մենք
զիտենք, զոր յեթե հատկանիշը վորոշելու գործին մասնակցում ե յերեք
զույգ գեն, ծնողական յուրաքանչյուր տիպ վերականոնվում ե F₂-ի
բոլոր անհատների մոտ 1/64-րդ մասում, յեթե մասնակցում ե չորս
զույգ գեն՝ 1/256-րդ մասում, յեթե մասնակցում ե հինգ զույգ գեն:

² 1955-րդ մասում, և այլին ՅԵԲՆ ԲՀ-ը սակավաթիվ և գեներել թիվը մեծ չէ, ծնողական տիպի անհամաներ կարող են բռնորովին չափավորվել:

Այդպիսով ավյալ սքեմի գործադրման պայմանները հետևյալն են.

2) բորբ պղոյթմեր գեներն ազդում են ավյալ հատկանշի վրա. 2) յուրաքանչյուր դուրսի գոմբինանու գենը հանդիսանում է հատկանշի ուժեղ գացնող (պլյուս-գեն), 3) պլյուս-գեները համասար եփեկու են առաջ բերում, 4) առանձին գեների եփեկաները դումարգում են, 5) հատկանշի արտահայտումը նետերողիվոտի մոտ համասար և համոզիվոտների մոտ առաջացող արտահայտման կեսին, 6) ալյալ կենցանու քանակական հատկանշի մեծությունը կախված է պլյուս-գեների քանակից:

Յեկանելով այդ պայմաններից՝ կարելի յէ
բացատրել ճագարի քաշի ժառանգումը ևս Արդ
հիօլոթեղի ճիշտ լինելը հասատվում է հասագա-
տրամախաչութիւնը:

Տարբեատվարքան. կախումը ուստ գիներից—
Քիչ փորձեր չեն արվել կաթնառատությունը և
կաթնայուզոտությունն ուսումնասիրելու համար։
Արինակ՝ այդպիսի փորձեր են կատարվել Այս-
վայր և Մէնայի փորձակայաններում։ Պարզվեց,
որ կամիրին զանազան ցուլքրով բնդմավորելու
մի քանի ցուլքրի սերունդն զգալի չափով ավելի
կաթնառատա եւ։ Որինակ՝ տարեկան միջին հաշ-
վով 1500 կիլոգրամ կաթ տվող կովերին բնդմա-
վորել ելին ցածրադիրային խայտարգես ու ցեղի
ցուլքով։ Նրանց աղջիկներից չորսը տալիս ելին
տարեկան միջին հաշվով 2900 կիլոգրամ կաթ,
այսինքն՝ չորսն ել տալիս ելին հումարյա կրկ-
նապատճիկ ավելի կաթ, քան նրանց մայրերը։ Այդ
աղջիկներին զարձյալ ցածրադիրային խայտա-
րգես ու ցուլքրի հետ արամախաչելուց սաաց-
վեց 5 հորթ, վորոնք մի շաբթ լակտացիոն
տարեկաների ընթացքում տալիս ելին տարեկան
միջին։ Համար 4528 եկամուռ էր իւնի 2—5

Նմանորինակ մի ալ փորձի ժամանակ առաջ

Նկ. 77. Գծանկար, վոր
ցուցյա և ստիլոս, թե ինչ-
պիսի համարականու-
թյուն ունեն F_2 -ում այն
գառագուն իմբրերը, ո-
րոնք ստացվում են յե-
րբ զուրկ դոլմերը գե-
ների արարակի բարդ ձևող-
ներից (Այնուահեշ-
աց)

¹⁾ Հիշտ համեստթյունների հանդելու համար այդպիսի փորձեր պետք է կուտա-
յի ամենի ուղև մասնաբանել:

զյունքների հետ միասին, ստացվեց մի հետաքրքիր բացառությունը ծովկերից մեկի աղջիկները ավելի կաթնատվության շատ ցածր թվեր (1820 կիլոգրամ), վորոնք մոտ եյին նրանց մայրերի համար բնորոշ թվերին (1744 կիլոգրամ): Այդ ցույց և տալիս, վոր մինչեւ մյուս տառվերն իրենց բարձր կաթնատվության գեները հաղորդում եյին իրենց աղջիկներին, տվյալ ցույցն ըստ յերեսութին զուրկ եր դրա տարրերից:

Հոլանդական և գյորնզեյ ցեղերի մետիսները միշին թվով տալիս եյին 3930 կգ կաթ, իսկ հոլանդականը տալիս եր 4297 կգ և գյորնզեյը՝ 2537 կգ կաթ:

Դրանից կարելի յե յեղակացները վոր իրոք գոյություն ունեն բարձր կաթնատվության գեներ, վորոնք մասամբ գոմինանտ են, վորովնետք F₁ մոտենում ե կաթնառատին Մենք ի վիճակի չենք վորուշելու վոչ կաթնատվության վրա ազդող գեների թիվը, վոչ ել առավել ևս յերևան բերելու, թե այդ էկաթնատվության գեները՝ հնչպես և բնչ չափով են ավելացնում կաթնատվությունը:

Կաթի յուղոտության հատկանշի ժառանգման մասին հայտնի լի, վոր առաջին սերունդը յուղի պարունակման տոկոսով միշնական ե, թեպետ ավելի շուտ մոտենում ե ցածր տոկոսայինին (յուղի փոքր տոկոսի գերիշումը): Յերկրորդ սերունդը համարյա չի տարբերվում տուաշնից, մի հանգամանք, վոր ցույց և տալիս գենետիկական բարպետյունը, տվյալ հատկանշի վրա ազդող շատ գեների ներկայությունը:

Դանիայում կամարել են ջերսեյան և դանիական ցեղերի տրամակալման փորձեր և հետազոտել են հետազարձ տրամակալմանը: Հետազոտությունը ստացված կովերը յուղի պարունակման տոկոսով շատ եյին մոտենում յելակետային (դանիական) ցեղին, իսկ կովերի մոտ 1/4 մասի կաթը պարունակում եր նույնքան յուղ, վորքան ջերսեյան ցեղը: Դա հիմք և տալիս յենթազերելու, վոր տվյալ գեղաքում յուղատության հատկանիշը ժառանգվել և շատ պարզ ոքեմով, թերևս նույնիսկ յերկու զույգ գեների սքեմով: Ցուրաքանչյուր այսպիս կոչված մաքուր ցեղում կան կաթի պարունակման վրա ազդող մի շարք տարբեր գեներ: Յեթե մի վորոշ ցեղի սահմաններում հետազոտենք այն ընդունակությունը, վոր ունեն դանապան արտադրողներ՝ կաթի յուղատության տարբերը ժառանգարար հաջորդելու գործում, ապա շատ խոշոր տարբերություններ կդանենք:

Վերը մենք բերինք կաթնառատության ամերիկյան տվյալներ: Կաթի յուղատությանը վերաբերող նույնպիսի տվյալները ցույց են տալիս, վոր, որինակ՝ տասը ցույց աղջիկները տալիս են միշին հաշվով յուղի ավելի մեծ տոկոս, քան իրենց մայրերը, իսկ տասներեք

ցուլիք աղջիկները՝ իրենց մայրերից ցածր տոկոս Մի քանի ցուլ ավելի յեն բարձրացնում իրենց աղջիկների կաթի յուղոտությունը, և յուները՝ պակաս Այն ցուլերը, վորոնք բացառական ազդեցություն են գործում աղջիկների կաթի յուղառատության տոկոսի վրա, պետք է վասակար համարվին բազմացնելու համար, վորպիս այնպիսիք, վորոնք վոշ միայն չեն կրում յուղառատության գեներ, այլ ընդհանակառակը, մոցնում են կաթի յուղոտությունը նվազեցնող ժառանգական տարրերը Ասկայն առանձին գեղքերում աղջիկները տալիս են նետեյալ պատկերը Մի ցուլի 19 աղջիկներից չորսի կաթը պարունակում եր յուղի ավելի բարձր տոկոս, քան նրանց մայրերինը, մակի կաթին ուներ յուղի նույն տոկոսը, վոր ուներ մայրը (6% լրիվ), մի ուրիշը՝ ընդամենը $0,2\%$ -ով պակաս, իսկ մյուսների կաթի տոկոսն ավելի ցածր եր: Ուստի շատ հավանական է, վոր թեպետ տվյալ ցուլի աղջիկների կաթը պարունակում եր միջին հաշվով զգալիորեն պակաս քանակությամբ յառաջ քան մայրերինը, անուամենայնիվ նա ունեցել ենակ յուղառատության վորոշ գեներ և նետերողիդոտային վիճակում:

Գերմանացի գենետիկները (^{Պատավը} և ուրիշները), աշխատելով ամերիկացիներից մի քիչ առարեր մեթոդներով, նույնպես յեկան այն յեղակացության, վոր կաթնատվությունը վորոշվում է մի քանի գեններով յերեք զույգ գենով՝ կաթնատվության համար և յերկու զույգ գենով և՝ յուղառատության համար:

Ինչպես ակնում ենք, վերոհիշյալ աշխատանքների արդյունքը շատ ել մեծ չի:

Ճիշտն ասած՝ կապիտալիստական տնտեսության առանձնահատկությունները հնարավորություն չեն տալիս նետազոտության մեջ ավելի խորանարու Ամբողջ վերլուծումը վերջանում է նրանով, վոր մատնատվում են կաթնատվության շատ գեներ և թույլ փորձեր են արվում նրանց թիվը վորոշելու համար:

Քանի ժառանգումը պալմեր գեների և ասակետից. — Քաշի ժառանգումն ուսումնասիրելու բնագավառում ավելի շատ աշխատանք է կատարվել, քան կաթնատվության ժառանգումն ուսումնասիրելու ասպարիզում: Վատ աշխատանք չի կատարվել հավի վրա, ճագարի վրա: Համեմատաբար քիչ աշխատանք է կատարվել տավարի մասյին հատկությունների ժառանգումն ուսումնասիրելու ուղղությամբ: Տարրեր ցեղերին իրար հետ արամախաչելիս սովորաբար ստացվում են արամախաչվող տիպերի նկատմամբ միջնական հաջորդներ: Այդ բոլորը ցույց ե տալիս մարմնի ձևերի ժառանգման գենետիկական բարձրությունը, ցույց ե տալիս եքսաերեային հատկանիշների ժառանգման բարգությունները բառիս լայն իմաստով: Յեզ դա հասկանալի յե, փորովհետեւ դժվար է պատկերացնել վոր կենդանու մարմնի ընդհա-

Նուը տիպը, հյուսվածքների, ներքին սեկրետայի գեղձերի բարդ կոմպ-
լեքսը, վոր կախված և բաղմապիսի որդանների զարգացումից, և
այլն, ժառանգվի գենետիկան վորեւ պարզ սքեմով:

Ճիշտ ե, յերենն թվում եր, թե մի քանի հատկանիշների ժա-
ռանգմանը մտանակցում են փոքր թվով գեներ, Կրոնը, վոր ուսում-

Соудасы														
Рамбуль
F ₁ Первое поколен.
F ₂ Второе поколен.

Сын . 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29

Նկ. 78. Կրծքի վանդակի լայնության ժառանգումը սոսուազառնյան և ռամբուլի
վանդարներն իրար հետ արամախաչելիս (յուրաքանչյուր ժառակուսին նշանակում և
մի անհատ) (ըստ Վրիգոսի)

Նասիբել եր հոլանդական անասունների եքստերյերային առանձնա-
հատկությունների ժառանգականությունը, ցույց տվեց, վոր մի քանի
չափեր ժառանգվում են համեմատարար պարզ ձևով:

Վրիգոսը տալիս և վոչխարների յերկու ցեղի՝ ռամբուլյերի և
սոսուազառնի տրամախաչման արդյունքները Ուսուտպահիրվել և կրծքի
վանդակի լայնությունը: Սոսուտպառն վոչխարների կրծքի վանդակին
ավելի լայն է (միջին հաշվով 25,8 սանտիմետր), իսկ ռամբուլեներինն
ընդամենը 20,2 սանտիմետր եւ իրականում այդ լայնքը շատ դժվար
տատանումներ ունի, այսպես, վոր մի ցեղի ծայրային պլյուս-վարիանտ-
ները զուգադիպում են մյուսի մինուս վարիանտների հետ: Խնչվես
հայտնի յե, այդպիսի փոփոխականությունն ընդհանրապես շատ և
դժվարացնում վերլուծումը: Բայց դուրս յեկավ, վոր ավյալ դեպքում
առաջին սերունդը մտնում է նեղկրծքանիների խմբակի մեջ: Այդպիսով

պարզվեց, վոր ռամբուլյեյի նեղ կուրծքը գերիշխում և սոռւտդառներ լայն կրծքի վրա Յերկրորդ սերնդում ճեղքում ստացվեց: Էլ վոչխարից 31-ի կուրծքը նեղ եր ռամբուլյեյի տիպով, իսկ 10 վոչխարինը՝ լայն (նկ. 78): Ճիշտ է, չի կարելի ասել, վոր այդ ճեղքումը կատարելապես վորոշակի յեր, վորովհնոտե լայն կրծքի և նեղ կրծքի բաժանելը պայմանական եր, սակայն Վրիդտ այնուհանդերձ հսարավոր և համարում ըսդուներ վոր մասնակցում և գեների միայն մի զույգ:

Այսպես կոչված դոպելլենդերները, վորոնք ժամանակ առժամանակ յերեան են դալիս տավարի զանազան ցեղերում և աչքի յեն ընկնում առանձնապես ուժեղ արտահայտված մսային ձևերով, Վրիդտի կարծիքով՝ նույնակա առաջ են դալիս գեների միայն մի զույգից:

Հավերի տարբեր մեծության յերկու ցեղերը՝ համբուրգյանը և սերբայտը, տրամախաչելիս, ստացվեցին այնպիսի արդյունքներ, վո-

	(Եռակ)	(Պանցիցուն)						
F ₁	.	.	■ ■ ■
F ₂	■ ■ ■	■ ■ ■	■ ■ ■	■ ■ ■	■ ■ ■	.

Նկ. 79. Սերբայտ-բենտամյան և համբուրգյան հավերի արամախաչման արդյունքները (ըստ Վրիդտի)


րոնք վոչ մի գեղքում չի կարելի բացատրել, յելնելով՝ մի զույգ գենի պարզ սքեմից: 79-րդ գծանկարը ցույց է տալիս այդ տրամախաչման արդյունքները: Յերակեատային գծերն ունելին հետեւյալ քաշը՝ համբուրգյան հավերը՝ մոտ 1200—1300 զրամ, սերբայտ-բենտամը՝ մոտ 700—800 զրամ: Առաջին սերունդը միատեսակ եր և յուրաքանչյուրը կշռում եր միջին հաշվով մոտ 1200 զրամ: Իսկ յերկրորդ սերունդը շատ բազմապիսի դուրս յեկավ: Ստացվեցին անհատներ, վորոնք համբուրգյանից շատ ավելի խոշոր եյին ե, ընդհակառակը՝ այնպիսիները, վորոնք բենտամներից փոքր եյին, թեսկետ, այնուհանդերձ, հաջորդների մեծ մասը միջնական չափ ուներ: Նման ճեղքման պատկերը կարող եր աեզի ունենալ միմիայն մի քանի գեներ մասնակցելու գեղքում: (նկ. 80, 81 և 82): Պեննեան ու Բելլին փաստորեն հենց այդպիս ել բացատրում են այդ գեղքը, սակայն նրանք տվյալ գենի համար ըն-

գունում են մի քանի միանշան գեների ներկայությունը, կարծես
կտարելազիս պարզ ե այն պատկերացումը, թե յերևույթը գենետի-
կորեն բարդ բնույթ ունի, թե նա պայմանավորված և մի քանի
գեներով: Հաջորդ տրամախաչումները հաստատում են այդ: Այդպես՝
յերկրորդ սերնդի փոքր աքաղաղը փոքր հավի հետ տրամախաչելիս



Նկ. 80. Համբուրգյան աքաղաղը և բնուսամյան հավը (ըստ Վրիգակի)

ստացվեցին շատ մանր հաջորդներ: Միջնական զույգերը տրամախա-
չելիս գծերից մեկը տվեց միատեսակ ճաներ, վորոնք պահպանել ելին-
երենց ծնողների մեծությունը, այսինքն՝ պատահաբար հոմոգիգոտու-
թյուն եր ստացվել տվյալ հատկանշի մի քանի գեներով: Խոկ մյուս-



Նկ. 81. Համբուրգյան հավը (ձախ կողմում) և F1 հավը (աջ կողմում) (ըստ Վրիգակի):
զույգերը ճեղքումներ տվին, այն ել տարբեր ճեղքումներ, ըստ յերևույ-
թին, նայած թե ինչպիսի և վորքան գեն ունեցին նրանք:

Ամենից շատ աշխատանք ե կատարվել ճագարների մեջ, քաշը-
ժառանգելու բնագավառում: Առաջինը հրապարակվեց Կեսարի աշխա-


տանքը դեռ 1900 թվականին (ի միջի այլոց՝ դեռ Նիլսոն-Ելենի կողմէց պոլիմեր գեների սկզբունքը մշակելուց առաջ), առաջ հրապարակվեցին մի շարք այլ աշխատառություններ (Պեննես, Կովեցա): Առաջարի-



Նկ. 82. Փորր և մեծ հոմիկը F₂-ում (ըստ Վ. Բիգանի):

քաշի ժառանգման ամենավորոշակի պատկերը տալիս և Պիգի աշխատառությունը, վոր հիմնված և փաստական ընդարձակ նկութի վրա (նկար 83):

Մենք տեսնում ենք F₁-ի միջնականության և F₂-ում տեղի ունեցած ճեղքման ախտիկ պատկերը Դժվար և ասեք թե վորքան զե՞ն ե-



Նկ. 83. Քաշի ժառանգումը ճագնաբների մեջ (ըստ Պիգի)

հասնակցում այդտեղ, համենայն գեպո՞ մի քանի զույգը Բայց այդ սքեժում ես, վոր այդքան, կարծես, պարզորոշ ե, կան մութ կետեր: Որինակ՝ Պիզը ցույց տվեց, վոր Բ₂-ի ամենածանր անհատներին տրամախաչիս Բ₂-ում, այնպես ել մի շարք հաջորդ սերունդներում, քաշն աստիճանաբար նվազելով մոտենում ե Բ₂-ի միջին քաշին: Մինչդեռ թվում ե, թե քաշի գերիշխող գեներով ամենից ավելի հարուստ անհատներին տրամախաչելով պետք եր սպասել, վոր կստացվի ճագարի ավելի կամ պակաս չափով կայուն՝ խոշոր ցեղ:

Այս մի որինակը ցույց ե տալիս, վոր քաշն այնքան ել հասարակ կերպով չի ժառանգվում, ինչպես ըդուռ և պոլիմերիայի հիպոթեզից, այլ բավկանաչափ բարդ յերեսույթ ե:

Միանան գեների հիպոթեզի բնադատությանը: — Զի կարելի չընդունել, վոր միանշան գեների հիպոթեզը սքեմատիկ ընույթ ունի: Պոլիմեր գեների նկատմամբ կատարվող բոլոր հաշվարկությունների ժամանակ սովորաբար ընդունվում ե, վոր տվյալ բոլոր գեները մոտավորապես միատեսակ են ներգործում, վոր նրանցից յուրաքանչյուրի թվի տվելացումը մոտավորապես միենալույն չափով ավելացնում ե տվյալ հատկանշի մեծությունը: Հենց դրա վրա ել հիմնված են այն բոլոր փորձուլները, վոր դուրս են բերել Կեսար, Ռայյը և Սեւերալսկին: Մաթեմատիկական ֆորմուլները կապում են տրամախաչմանը մասնակցող գեների թիմն առաջին և յերկրորդ սերնդի բիոմետրիկական կոնստանտների հետո Ներկայումս վոչ մի տարակույս չկա, վոր ամեն մի հատկանշի կազմավորման վրա ազդեցություն են գործում բազմաթիվ գեներ: Սակայն թնջ են ներկայացնում քանակական միենալույն եփեկտը տվող այդ գեները, թենիւղ նրանք լինեն 4,5 կամ 6 զույգ: Չե վոր ամեն մի գեն վորակական ու քանակական բազմապիսի ազդեցություն ե գործում: Այդ նկատառությունները ցույց են տալիս, վոր չպետք ե գործածել այնպիսի անորոշ մի տերմին, ինչպիսին և ամիանշան գենը: Ներկայիս մի քանի փաստական տվյալներ ցույց են տալիս, վոր քանակական հատկանշիների գեները միմյանցից տարբերվում են և իրենց ներգործման ուժով, և գերիշխման տատիճանով Այդ հանդամանքը բարդացնում ե քանակական հատկանշիների ժամանակումը վերըուծելու պրոբլեմը և միենալույն ժամանակ պահանջում ե շատ ավելի կոնկրետ մոտեցում ցուցաբերել ուսումնասիրվող քանակական հատկանշին¹⁾:

Մեր խնդիրն ե՝ առանձնացնել յուրաքանչյուր գեն և ուսումնասիրել նրա անհատական ներգործումը:

1) Այնուամենայնիվ անհրաժեշտ ե մասնանշել, վոր կըսող և գոյություն ունենալ իսկական պալիմերիա, վարպետ հետևանք գեների բազմացման՝ պոլիպուդիայի գեղցում:

Ազգանունային (սիզնալային) գևերի մերովը.—Այդ ուղղությամբ՝
առաջին քայլը պետք է անել, ուսումնասիրելով այն շաղկապումները,
վորոնք տեղի յեն ունենում քանակական հատկանիշների գեների և
վորակական վորոշ հատկանիշներ տռաջացնող գեների միջն:

Եելնելով ժառանգականության քրոմոսոմային թեորիայից՝
պետք է սպասել վոր միենալոյն քրոմոսոմում գտնվող գեներն իրար
հետ շաղկապված են լինում: Ուստի անհնարին չե, վոր արտաքին
վորնե հատկանիշ ժառանգվի սերտորեն կապված տնտեսապես ոգտա-
կար այս կոմ այն տռանձնահատկության հետ:

Յեթե հաջողվի յերեան ըերել քանակական հատկանիշների այդ-
ովիսի շաղկապումը վորակականների հետ, վերջիններս կարող են ծառ-
սայել վորպես տվյալ քանակական հատկանշի մի տեսակ աղդանշան
(սիզնալ): Այդ հիման վրա Սերեբրովսկին առաջարկեց «աղդանշանա-
յին» (սիզնալային) գեները տերմինը Վերջինս չե կարելի տարածել—
ինչպես անում են գոմանք—հատկանշի շաղկապման այլ գեղքերի,
որինակ՝ «կաթնասապության հատկանիշների» վրա: Յեթե կենդանին,
տաննք՝ հազն ունի քրոմոսոմների քարտում նշված արտաքին հատ-
կանիշների մի քանի գեներ, ապա պետք է առաջինների հետ միասին
քարտում նշել նաև քանակական հատկանշի գեները: Հետագայում
համապատասխան քանակական այն հատկանիշները, վորոնց գեները
քրոմոսոմում գտնվում են ուսումնասիրվող քանակական հատկանշի
գեների կողքին, կհանդիսանան նրա աղդանշողները:

Ազգանշանային գեների գաղափարն առաջին հայացքից նման է
գոտտեինիքական այն հին պատկերացմանը, վոր գոյություն ուներ
կենդանու արտաքին գծերին նրա «շապկի» և անտեսական հատկու-
թյունների կապակցության նկատմամբ, թեևետ այս վերջին պատկե-
րացումը, վոր, ինչպես հայտնի յե, պահպանվել եր մինչեւ վերջին
ժամանակներս, ըստ եյտթյան բոլորովին հակազեր և աղդանշանային
գեների գաղափարին:

Տոհմային անասնաբուծության համար կենդանիներ ընտրելիս
շատ մեծ ուշադրություն եյին դարձնում տավարի գույնին, հավի փե-
տուրներին և այն: Վորեն ըիդ ունեցող կենդանուն խոտանում եյին,
ցեղի ստամաններում ընտրությունը կատարում եյին միմիայն արտա-
քին վորոշ հատկանիշների հիման վրա: Դրանով իսկ իրենց տնտե-
սական հատկություններով արժեքավոր շատ կենդանիներ մորթվում
եյին միմիայն այն պատճառով, վոր նրանք չունեյին ստանդարտի
պահանջած գույնը Շապկով, արտաքին ստանդարտով եյին տարգում
կենդանիների բոլոր տեսակների նկատմամբ, վորով հսկայական վնաս
հասով անասնաբուծությանը: Բատ լերևույթին, ներկայումս, կենդա-
նիների գույնը գեներելիքորեն ուսումնասիրվելուց հետո, կարելի յե կա-

տարելապես վնրոշակի ասել, վոր շապիկը սոսկ մի ցուցանակ ե, այն ել վոչ միշտ բնորոշ այս կամ այն ցեղի համար և անմիջական առնչություն չունի մթերատվության հետ Տիպիկ գույնի բացակայությունը բնավ չի կարող արգելք լինել, վոր մթերառատ կենդանին մացվի տոհմային մատյանի մեջ:

Այն ընդհանուր դրույթը, թե մթերատվությունը վորոշ շապկի հետ կազմած չե, ամենաին չի հակասում այն հանգամանքին, վոր մի քանի առանձին գեղգերում կարող ե այս կամ այն գույնն աղղեցություն գործել հատկանշի վրա, ասենք՝ կաթնատվության վրա, վոչ թե այն պատճառով, վոր նրանց միջև ուղղակի կապ կա, այլ այն պատճառով, վոր այս կամ այն արտաքին հատկանիշը կարող ե կազմած լինել կենսունակության ընդհանուր թուլացման հետ: Մի քանի հեղինակներ նշում են նման փաստեր՝ մարմնի վրա առանձնապես սպիտակ գույնը չափազանց շատ լինելու առթիվ: Նրանք մատնանշում են, վոր բաց գույնի կենդանիներն ավելի քիչ կայուն են հիվանդությունների հանգեցու բնական ե, վոր կենսական հատկությունների ընդհանուր թուլացմամբ զարտուղի կերպով կանդրագառնա նաև մթերատվության վրա: Սակայն այստեղ ուղղակի կախում չկա, ուստի չի կարելի տոհմային անասնաբուծության բնագավառում կենդանիների ընտրություն կատարելիս հենվել վորնե արտաքին նշանի ներկայության կամ բացակայության վրա:

Մթերատվության հատկությունների մասին դատելու համար պետք ե հիմք ծառայեն ուսալ կիթը, քաշը, ածանությունը և այլն:

Նմանապես կարող ե կորելյացիոն վորև կախում գոյություն ունենալ եքստերյերային առանձին հատկությունների և մթերատվության միջև (Մթեղետ այդ գեղգում կորելյացիայի կոնֆիցիենտները, վորպես կանոն, շատ ել մեծ չեն):

Բայց այդ բնավ չի նշանակում, թե շաղկապում չի կարող լինել այս կամ այն գեների միջև, թեպետ նկատի ունենալով, վոր տափարն ունի մեծ թվով քրոմոսոմներ (30 գույգ—տես գլուխ II), քիչ հավանական ե, վոր տնտեսապես ոգտակար հատկանիշների գեները շաղկապվեն պատճառաբար վերցված վորնե արտաքին առանձնահատկության հետ:

Իսկ աղցանշանային գեների վորոնումն անհրաժեշտ ե շարունակել վորքան ավելի ուսումնասիրվի կովի, վոչխարի, հավի գեներիկան, այնքան հաճախ կենդանիքների շաղկապման գեղգերը:

Ավելի լավ ուսումնասիրված ոբյեկտների նկատմամբ արդեն հայտնի յեն շաղկապման վորոշակի հաստատված փաստեր: Որինակ հաջողվեց պարզել, վոր շաղկապում կա լորիների սերմերի քաշն ավելացնող գենի և սերմերի կեղեկի պիգմենտացիայի չ գենի միջև, տոմաթեսի պտղի քաշն ավելացնող գենի և նրա մաշկի դեղին գույնի գենի միջև:

Ամերիկացի Ռւզերֆն ուսումնասիրեց դրոզովիլի ձվի մեծության ժառանգումը։ Նրան հաջողվեց ցույց տալ, վոր դրոզովիլի մի շաբք հետաքրքրական փաստեր են հայտնի, յերբ արտաքին հատկանիշների գեները կազմած են լինում ոգտակար և վասակար հատկանիշների չետ։ Կրալինգերը տրամախաչել եր լեզնորն և ֆավերոլ հավերի ցեղերը միմյանց հետ Նա պարզել ե, վոր կոկցիդիաների հանդեպ ունեցած դիմացկունությունը լեզնորների մոտ ավելի մեծ է, քան ֆավերոլների մոտ։ Հետազարձ տրամախաչման արդյունքները (լեզնորների հետ) անալիգելիս պարզվեց, վոր գրանց մահացության և ֆավերոլներից ստացված գեների քանակի միջև (սպիտակ վոտներ, մորուք, պոլիգակտիլիս և այլն) կապ կա։ Այդ ցույց և տալիս, վոր այն քըուժումներում, վորտեղ գասավորված են այդ գեները, գտնվում են նաև դիմացկունության կամ վոչ դիմացկունության գեները (կոկցիդիոզի նկատմամբ)։

Ոսսենք խոզերի մոտ հայտաբերել և վայրի գույնի (ագուտի)՝ վոր հատուկ և վայրի խոզերին՝ և ժանտախտի հանդեպ դրամորվող դիմացկունության միջև շաղկապման մի բարենպաստ զենքը։ Ճիշտ և կրօնախերը գտնում ե, վոր հազիվ թե լեզնորն այնպիս պարզ լինի, ինչպես Ոսսենքն և պատկերացնում, թե իրը շաղկապում դոյցություն տնի վայրի գույնի և ընդհանրապես ամուր կոնստիտուցիայի միջև։ Վիճերը հետաքրքրական միաք արտահայտեց առանձին խմբերի շաղկապման հաստատման մասին։ Բանն այն ե, վոր վերջին տարիներս արյան ժառանգման նկատմամբ շատ ավյախներ են կուտակվել, մասնավորապես հայտնի յեն ավյախներ, թե ինչպես մի կենդանու արյան շիճուկն ադլյուտախնում և մյուս կենդանու արյան կարմիր մարմնիկները։ Մարզու մոտ մինչև վերջին ժամանակներս հայտնի ելիքն բառ ադլյուտախնացիայի արյան միայն 4 խռովը, վորոնց ժառանգման մեջ մտնակցում են յերկու զույգ գեն։

Ներկայումս հայտաբերվել են ադլյուտինովեների (նյութեր, վոր զանվում են արյան կարմիր գնդիկների մեջ) գարձալ նոր տիպեր, այնպիս, վոր արյան խմբերի քանակը փաստորեն ավելի մեծ է (մինչև 36, զույց և ավելի)։

Արյան խմբեր գտնվել են և գյուղատնտեսական կենդանիների մոտ (գաչխար, խոզ, տավար)։ Դրանց մոտ արյան անհատականությունը շատ մեծ է։ Այդ կախված և տարբեր ադլյուտինովեների մեծթիք (15—20), Յեթե յուրաքանչյուր ադլյուտախնովեն կախված և ժառանգման առանձին գործոնից, ապա ստույգ վորոշելով զրանց ժառանգումը (իսկ ժառանգվում են նրանք վորպիս զոմինանուներ)՝ կարելի կլինի նշել (և անվանել) առանձին քրոմոսոմներ՝ ըստ արյան համապատասխան գենի, վորը կհանդիսանա սիզնալ։ Զորս քրոմոսո-

մում ել գոյություն ունեն ձվի մեծության վրա աղդող զեներ, վորայէ գեները տարբերվում են իրենց ներգործման ուժով և ժառանգվում են սահմանված գենետիկական որինաչափություններով:

Վերջին հանգամանքը շատ կարևոր է, վորովհետև ցույց ե տալիս, թե ժառանգման նկատմամբ վոչ մի տարբերություն չկա վորակական և քանակական հատկանիշների միջև ՄիԱՆՈՒՅՆ ժամանակը ՌԱՄԵՆԻ աշխատանքը հաստատում ե մեր ասածը, թե պոլիմեր գեների մասին գոյություն ունեցող պատկերացումը պետք ե արմատապես փոխել և անհրաժեշտ ե կոնկրետ կերպով ուսումնասիրել յուրաքանչյուր առանձին գեն:

Մի քանի հետազոտողներ աղդանշանային գեների կերառումն սպառիչ մեթոդ են համարում տնտեսապես ոգտակար հատկանիշներն ուսումնասիրելու համար: Այդպես Ս. Գ. Պետրովը հնարավոր եր համարում մոտենալ համերի ածանության ուսումնասիրմանը, ոգտվելով զանազան քրոմոսոմներում գտնվող աղդանշանային գեներից: Նա գտնում եր, վոր հավի համար, վոր ունի 16 զույգ քրոմոսոմ, կըպահանջմենին մոտ 100—130 լավ զրակորվող գեն, վորպեսզի հնարավոր միներ ոգտագործել նրանց վորպես հատկանշանային Մինչև այժմ հայտնի յե, վոր հավի ունի մոտ 25 այդպիսի գեն, ուստի անհրաժեշտ ե ուսումնասիրել 100 գեն ևս և բաշխել նրանց քրոմոսոմներում: Այս ժամանակ հնարավոր ե յերեան բերել ածանության շաղկապումը համապատասխան քրոմոսոմների հետ, վորից հետո գծվար չի լինի սեմլիցիայի յենթարկել հավետին ըստ ածանության:

Տվյալ կենդանու գենետիկայի գարգացման վորոշ ետապում աղդանշանային գեների մեթոդը կարող է ոգուար բերել և հնարավորություն կտա առաջ գնալու Սակայն պետք ե սխալ համարել ժամանակին հրադարակ նետված այն լոգունզը, թե գենետիկայի հիմնական խնդիրը միայն քրոմոսոմների քարտը կառուցելն ե: Հարկավ, զյուդատնեսական կենդանիների համար քրոմոսոմների պլանը կազմելը հսկայական հաջողություն կլինի գենետիկայի համար: Սակայն պետք է նախազգուշացնել միակողմանիությունից, այսինքն՝ այն մտքից, թե տնտեսական հատկանիշներն ուսումնասիրելիս հարկավոր չե պարզել նրանց զարգացման կոնկրետ պատճառները, ուսումնասիրել այդ հատկանիշների բաղկացուցիչ մասը կազմող առանձին մասնավոր հատկանիշները և նրանց ժառանգումը:

Ուստի անհրաժեշտ ե մշակել տնտեսապես ոգտակար հատկանիշների ժառանգման կոմպլեքսային այնպիսի ուղիներ, վորոնց մեջ՝ մենդելիստական և մորգանիստական մեթոդների հետ միասին, մասնաւոր բազմապիսի ֆենոգրանետիկական և այլ մոտեցումներ:

Կարբնատվությունը վորպիս բարդ հասկանիու։ Խ՞նչ բան և էկարբնատվության դիմք։ — Կաթնատվությունը քանակական տիպիկ հատկանիշներ, վոր չափվում և կթվող կաթի ընդհանուր քանակով։ Միևնույն ժամանակ դա շատ բարդ հատկանիշներ, և Այն պայմանավորվում և մարտովության որգանների սիստեմի, արյունատար անոթների սիստեմի և այլ որգանների գործունելությամբ։

Խ՞նչպիս կարելի յե պատկերել կաթնային արտադրողականության կախումն որգանների այս կամ այն կոնկրետ սիստեմից։ Մենք զիտենք, վոր կովի տված կաթի քանակը վորոշ չափով կախված և նրա սպառած կերի վորակից և քանակից։ Յեթե կաթ կազմելու նյութ չինի, կաթ ել չի լինի։ Սակայն կերը գոհացուցիչ կերպով կարող և յուրացվել միայն այն գեղքում, ինթե լավ են զարգացած կենդանու հատկապիս այն որգանները, վորտեղ տեղի յեն ունենում մարսումն ու յուրացումը ինարկե, նշանակություն ունի վաչ միայն մարսողության ամրող արակտի չափը, այլև նրա հետ կապված գեղձերի ամրող սիստեմը։ Ապա՝ կաթ արտադրելուն ծառայող մննդարար նյութերը մատակարարում ե արյունատար սիստեմը։ Ուստի կարենոր և այն հարցը, թե ինչ չափով են զարգացած կենդանու արյունատար անոթները, կարենոր և նրա անտառմիայի և հիստորիկայի հարցը, հենց արյան հատկությունները, նյութերի փոխանակումն ամրողջովին վերցրած, և այլն։

Կաթնատվության գրսնորումը պայմանավորող հատկանիշների յիրրորդ կոմպլեքսն և ներքին սեկրեցիայի գեղձերի սիստեմը։ Նրանք ազգում են թե նյութերի ընդհանուր փոխանակման վրա և թե առանձին որգանների աշխատանքի վրա։

Վերջապես՝ կաթնագեղձն ինքը։ Յեթե նույնիսկ և արյունատար, և մարսողական սիստեմները, և ներքին սեկրեցիայի գեղձերը—բոլորն եւ գործեն առավելագույն կաթնատվության ուղղությամբ, այնուամենայնիվ դա տեղի չի ունենա, յիթե բավականաշափ չի զարգացել կաթ մշակող որգանը։ Ավելորդ և ապացուցել թե վորքան կարենոր նշանակություն ունի կովի կուրծքը, թե նրա մեծությունն ու ծավալը և թե հյուսվածքների հարաբերությունը¹⁾։

Այդպիսով, գոյություն ունեն առնվազն չորս կոմպլեքս հատկանիշներ, վորոնց զարգացման աստիճանից և կախված կաթնատվության գրսնորումը։ Նրանցից ամեն մեկը բազմապիսի և բարդ կերպով և ազգում կաթնատվության առանձին տարրերի վրա։ Որգանների և հյուսվածքների այդ սիստեմներից յուրաքանչյուրը վորսե կոնկրետ

1) Կըծի արդ հատկություններից բացի, պետք ե առանձնապես ուշագրության առնել կաթնագեղձի վորակը, նրա ակտիվությունը, նրա «աշխատանակությունը», վոր տարրեր կենդանիների մաս կարող և տարրեր լինել, ինչը այս կողմի վրա, զժախտաբար, շատ քիչ ուշագրություն և զարգացում։ Սան, և. Ցեր,

դեպքում կարող ե վորոշել կաթնատվության աստիճանը։ Հենց այդ դեպքում նա կհանդիսանա կաթնային արտադրողականության զվարվոր, հիմնական պատճառը, իսկ մյուս բոլոր առանձնահատկությունները կլինեն նրա ուժեղացմանը կամ իրականացմանը նպաստող լրացուցիչ առանձնահատկություններու լնդամին նրանք, իհարկե, հավասար նշանակություն չունեն, վորակապես տարբեր են, մեկն ավելի քեզգում, մյուսը՝ պակաս։

Վերոհիշյալ անասումա-փիզիոլոգիական սիստեմները վորոշվում են գենետիկական պատճառներով և նրանցից ամեն մեկը կախում ունի մի շարք գեներից։

Կաթնատվության ժառանգումը պարզելու գործին կարելի յէ դիֆերենցիալ մոտեցում ցուցաբերել—ուսումնասիրել որգանների այս կամ այն կոնկրետ սիստեմների ժառանգումը՝ կաթնատվության համար նրանց ունեցած նշանակության տեսակետից։ Պետք ե մատնանշել, վոր կապիտալիստական տնտեսության և կապիտալիստական դիտության պայմաններում կաթնատվության գենետիկական հազիվ թե կարողանա դուրս դալ մեխանիստական շրջանակներից։ Այստեղ հետազոտողները կարող են հիմնվել միայն մասնավոր տերերին պատկանող անասունների շատ փոքր, առանձին խմբերի ուսումնասիրման վրա, և դիտվող արդյունքները մի քիչ պարզաբանելու համար նրանք հարկադրված են պարզեցնել կաթնատվության յերևույթները, խցկելով վերջիններս ձևական գենետիկական հիպոթեզների լրջանակի մեջ իսկ կաթնատվությանը վերսէհշյալ ձևով կոնկրետ մոտեցում կարող ե ցուցաբերվել միմիայն սոցիալիստական անասունությության և մեր պլանային գիտության պայմաններում, վորն ի վիճակի յէ աշխատանք կատարել միասնական սքեմով, մեր սոցիալիստական հատվածի անասունների ամենալայն մասնիկների բաղայի վրա։

Վերջին տարիներս քաշի ու աճման ժառանգման հարցերում մենք հանդիպում ենք նոր մոտեցումների, վորոնք տալիս են մի շարք նոր փաստեր և գծում են վերլուծման նոր հետանկարներ։

Աձման գեների կլասիֆիկացիան ըստ Ռուբիֆի։—Դեռևս կեսում հին աշխատություններից հետևում եր, վոր աճման վրա ազդող գեններն ընդհանուր են, այսինքն՝ ազդում են մարմնի բոլոր մասերի վրա։ Մակայն կենդանիների ժամանակակից ամենախոշոր գենետիկներից մեկը՝ Ռայլը, 1918 թվականին վերլուծելով կեսուի թվերը, յեկավ այն ենդրակացության վոր մի քանի վոսկրների և վոսկրների խմբերի դարձացումը կոնտրոլում են ընդհանուր գեններից անկախ, աճման յուրահատուկ, սպեցիֆիկ գեններ։ 1932 թվականին Ռուբը հրապարակեց մի աշխատություն, վոր հիմնական եր ճագարների ու հավերի աճման վերաբերող նյութերի մշակման վրա։ Նա հատուկ մեթոդներով հաշվել

և կոռելյացիայի կոնֆիցիենտը և հանգել և հետեւյալ յեղբակացություններին, գերազանցող ազդեցություն են գործում առման ընդհանուր գեները, բայց գոյություն ունեն առանձին խմբային գործոններ՝ գլխի համար, ինչպես և ավելի մասնավոր ազդեցություն գործող գեներ (*խմբային գործոններ*)¹⁾ առաջին ու հետին վերջավորությունների համար, թուշունների թերերի համար։ Վերջապես, կան նաև հատուկ գեներ, փարոնք ներդրում են ավելի սահմանափակ մասերի վրա։

Գրինի աօխատանքը. —Մէկների վրա Գրինի կատարած մի շարք աշխատություններ դդայի առաջադրություն են հանդիսանում ամի վերտուծման խնդրում։ Գրինը տրամախաչել և մկների յերկու տեսակները՝ սովորականը (*Mus musculus*) և համարյա կրկնապատճեկ փոքր մուկը՝ չինականը (*Mus bactrianus*)։ Հետազարձ տրամախաչման ժամանակ նա հաշվառել ե գույնի և գեների յերեք անկախ գույցի մենացը։ Նրանք դասավորված եյին այնպես, վոր խոշոր մուկն ուներ յերեք ուեցնախվ, իսկ փոքրը՝ յերեք վերիշխող։ Միաժամանակ նա հաշվառել եր քանակական յերեք հատկանիշ՝ քաշը զանազան հասակներում և ամբողջ մարմնի ու նրա առանձին մասերի մեծությունը։

Ուսումնախիելով կոռելյացիայի կոնֆիցիենտը մկների յերկու տեսակներին վերաբերող նյութի հիման վրա և *F₁*-ում, Գրինը հանդում և նաև այն յեղբակացության, վոր գոյություն ունեն զարգացման թե ընդհանուր գործոններ և թե մարմնի առանձին մասերի զարգացման վրա ազդող յուրահատուկ գործոններ։ Իսկ հետազարձ տրամախաչման հիման վրա Գրինը ցույց է տալիս, վոր զարչնագույն պիգմենտի գենը կրող քրոմոսոմը կրում և նաև այն գենները, վորոնք ավելացնում են կմախքի ընդհանուր չափը, քաշը և մի քանի մասնավոր չափեր (վերջավորությունների), իսկ պիգմենտի թուլացման գենը կրող քրոմոսոմն ազդում և միայն մարմնի յերկարության և պոչի յերկարության վրա (վերջնիս վրա՝ պակաս հավանականությամբ)։

Այզպիսակ Գրինն աշխատում և, ազգանշանային գենների մեթոդով, առանձնացնել և ուսումնախիել անման վրա ազդող գենները։

Խոյուրյուն ունեն²⁾ արդյոյն փառկրների աձման յիշ մկանների աձման վրա ազդող իննուրույն գեններ¹⁾. — Բարձր աստիճանի մաստու և կաթնառաւ կովերի կառուցվածքի տարբերություններն ուսումնախիելիս յերեան բերվեց, վոր յերկսի կմախքի զարգացումն ել շատ նման և, բայց մեծ տարբերություն կա նրանց «մսուտության» մեջ («մսուտություն» տերմինը, իհարկե, հեռու յե ապեցիֆիկ լինելուց)։ Ցելնելով

1) Խարկե՝ վառկըների ու մկանների «ինքնուրույնություն» գոյություն շունի, բայց նարցն այնպես և գրվում, վոր գեններն ազգում են որպանների գիֆերենցման բնայթի վրա, ուժեղացնելով մկանների զարգացումը և այլն։

արդ փաստից, Դրեգորին փորձեց տարբերություն սահմանել մկան-ների զարգացման և կմախքի զարգացման վրա ազգող գեների միջև Այդ նպատակով նա ուսումնասիրեց յոթ ցեղ (մատու և կաթնառաւոտ): Դրեգորին հանգեց այն յեղակացության, վոր կմախքի յերկարությունը և մկանների զարգացումը կոնտրոլող ընդհանուր գործոնների հետ միասին գոյություն ունեն մկանների զարգացման գեներ՝ անկախ կմախքի գեններից: Նրանց մեծ մասն ընդհանուր ե, բայց ըստ յերե-վույթին գոյություն ունեն նաև սպեցիֆիկ գեններ:

Դրեգորին յեկ Հոսոք ցաւյց տվին, վոր ճագարների խոշոր և մանր ցեղերը տարբերվում են զվյուտատիոն կոչված նյութի թանձրու-թլամբու Այդ հիման վրա Դրեգորին կարծում ե, վոր անասունների մսա-տու ցեղերը կաթնատուններից տարբերվում են քիմիական այն սուր-ստանցիայի քանակով (թերևս նույն այդ գլյուտատիոննի), վոր ստեղծ-վում ե արդանդային կյանքի շրջանում և խթանում՝ և մկանային հյուսվածքի զարգացումը:

Դրեգորին միտքը մեղ մտցնում և ֆենոգեննետիկական հարցերի շրջանը: Ուրեմն բնչպիսի ուսալ աղղեցություն են գործում կմախքի, մկանների և այլ մասների ընդհանուր, մասնավոր և սպեցիֆիկ գենները:

Ֆենոգեննետիկայի նօտակուրյանը բարգ հատկանիօնորի վերլուծման ժամանակ:—Քաշի որինակով մենք համոզվում ենք, վոր ֆենոգեննետի-կան և ֆենոգեննետիկական մոտեցումը հակայական նշանակություն ունեն բարգ հատկանիշներն ուսումնասիրելու համար: Արդարե, այն-պիսի մի բարդ ֆենոնչպիսին և մեծությունը կամ քաշը, ստեղծվում և զարգացման ընթացքում տեղի ունեցող տեսկան փոփոխություններով: Դժգար չե գտնել այնպիսի որինակներ, յերբ մի գենի տարբերություններն ստեղծում են ամբողջ մարմնի կամ նրա առանձին մասների աճման տարբերություններ (որինակ՝ անկոնյան կարճուն վոչխարները՝ հա-մեմատած նորմալ վոչխարների հետ): Ուսումնասիրելով զարգացումը չեկիերի մեթոդով մենք կարող ելինք հասնել այնպիսի մոմենտի, վորից առաջ մենք տարբերություններ չեյինք դանի տվյալ գենով զանազանվող յերկու ձևերի միջև:

Բնական ե, վոր խոսելով անման արգության և զրա հետ կապ-վոծ՝ մեծության, քաշի մասին, մենք պետք ե հաշվի առնենք արտա-քին պայմանների հսկայական դերը: Մենք արդեն ասացինք, վոր այդ հանգամանքը կարող ե շատ գժվարացնել հետազոտումը: Թեպետ յուրաքանչյուր տեսակի, ցեղի, տոհմի համար վորոշ մեծությունը կարևորագույն բնութագրերից մեկն ե, սակայն նա առնմը բնութա-գրում ե միայն վորոշ պայմաններում (կերակրման ու պահպանման պայմանները): Հայտնի յե, վոր կերակրման փոփոխումները չափա-

դանց փոխում են անման ընթացքը՝ Այդ պատճառով տվյալներ կտն, վոր սովորաբար ուշահաս համարվող մի քանի ցեղեր, առատ կերակը գեցիւում գեպքում բավականին չուտ են մեծանում: Այդպիսի փորձեր կատարվեցին կիրդիղան և կալմիկյան անասունների վրա, վորոնք մեկնելու յիրկու տարեկան հասակում այնպիսի քաշ ունեյին, վորին չելին հասնում սովորաբար 8—10 տարեկանները:

Ուստի պարզ է, վոր յուրաքանչյուր առանձին կոնկրետ դեպքում պետք է գտնել, թե տվյալ ֆենոտիպն ինչպես և փոփոխվում արտաքին պայմանների ազդեցության տակ, վորպեսզի հնարավոր լինի ընտրել ֆենոտիպի լավագույն դարգացումն ապահովող պայմաններ:

Այսուամենայնիվ, կենդանիների ժառանգական հատկությունները վորում են այն ծալրագույն մեծությունը, այն սահմանը, վորին հասարավոր և հասնել արտաքին միջավայրի վորոշ պայմաններում: Ահա թե ինչու անասնաբուծության մեջ չի կարելի բավարարվել միայն պայմանների բարելավմամբ, այլ պետք է ձգտել բարելավել ժառանգական հատկությունները, այսինքն՝ առավելագույն չափով կուտակել այնպիսի գեներ, վորոնք ազդում են անման, կաթնատվության և այլ հատկությունների վրա:

Վորոնք են ուրիշն անման վրա ազդող գենները: Մենք արգեն հաստատեցինք, վոր զրանք շատ են: Ուստի նրանց ընության վերաբերյալ սկզբնական հիպոթեզը պոլիմերիայի հիպոթեզն եր: Ներկայումս մենք գտնում ենք, վոր զանազան գենների ներգործումը հավանութեն միատեսակ չեւ Ռայչը, նկատի առնելով մարմնի առանձին մասների զարգացման գործում անման գենների կատարած դերը, սահմանեց այն զրությը, թե տարբեր գեններ ունեն սպեցիֆիկության տարբեր աստիճաններ, մենք կասեցինք՝ ներզործման կարծես տարբեր «գաշտեր»: Մի քանիմա՞ ընդհանուր գենները, ազդում են ամբողջ մարմնի վրա, մյուսները՝ մասնավորները և սպեցիֆիկներն ազդում են մարմնի ավելի սահմանափակ շրջանների վրա:

Զափազանց կարենք և պարզել, թե զարգացման վրա կոնկրետ կերպով ինչպես են ազդում անման գենները: Այն, ինչ վոր գիտենք այժմ կենդանիների մեծության տարբերությունների մասին, ցույց ե տալիս, վոր արդ տարբերությունները կարող են առաջ զալ զանազան յեղանակներով: Մի շարք վեպքերում տարբերությունները վորոշվում են զարգացման շատ վաղ աստիճանում: Կեսելը և Գրեգորին ցույց տվին, վոր ճաղարների մեծ և փոքր ցեղերի եմբրիոնները տարբերվում են շատ վաղ, դեռ բաստուլայի տարիճանում: Եմբրիոններն իրար նման են մեռում բեղմափորումից հետո մինչև 40 ժամ, իսկ այնունետեւ խոշոր ցեղերին պատկանող ճաղարների բջիջները բաժան-

մում են ավելի մեծ թափով։ Այդպիսով տարբերությունը կախված է բջիջների բաժանման տարբեր արագությունից¹⁾։

Կարելի յե հարց տաս թե զվարապես ինչպի և վորոշում խոշոր և մանր ցեղերի տարբերությունը բջիջների մեծությամբ, թե նրանց թվով։

Կեսը և Դրեզորդն բջիջների մեծության մեջ տարբերություն չգտան, բայց հայտնի յեն նաև հակառակ, այնուհանդերձ ավելի սակագնեալ փաստեր, յերբ որդանի փոքրությունը կախված է բջիջների մեծության նվազումից (զբողոքիլի թեր), Հետաքրքիր ե, վոր բջիջների մեծությունն ավելանում և քրոմատինի մասսան ավելանալիս, այդ պատճառով ծավալը մեծանում և պոլիպոդիայի և հետերոպլոտիայի գեղցում։

Մի քանի դեպքերում, ինչպես, որինակ՝ շաքարի ու կերի ճակընդեղի նկատմամբ, տարբերություններ են ցույց տրված բջիջների մեծության միջև, բայց եմբերինալ հյուսվածքներում աճման կետերում այդպիսի տարբերություններ չկան։ Դրանից հետեւում ե, վոր թերևս խոշոր ցեղերում բջիջները կարող են ավելի յերկար ժամանակ շարունակել իրենց աճումը և այդպիսով հասնել ավելի մեծ չափի։

Հետևաբար, ֆենոգեննետիկական մոտեցումը հնարավորություն և տալիս զգալի չափով կոնկրետացնել աճման գենների ընդհանուր ըմբռնումը, ցույց տալով նրանց ազդեցությունը բջիջների մեծության վրա, նրանց բաժանման տեմպի վրա և այլն, մի խոսքով այն բոլոր առանձին տարբերի վրա, վորոնք առաջացնում են աճման տարբեր արագություններ։ Ընդամեն մի շարք դեպքերում պետք և ցույց տալ այն յուրահատուկ, սպեցիֆիկ դերը, վորը կատարում են գենները զարգացման այս կամ այն մօմենտը վորոշելու մեջ։

Աճման գենների այն կաստիֆիկացիան, վորը տվել և Ռայաք՝ կարիք ունի ֆենոգեննետիկային մեկնաբանման։ զուցե ընդհանուր դործոններն այն գեններն են, վորոնք ներգործում են զարգացման ամենավաղ աստիճանում, զուցե մի քանի գենների սպեցիֆիկ ներգործումը մարմնի վորոշ մասի կամ հյուսվածքի վրա կարելի յե ընդունել վորպես քիմիական վորոշ ողակ՝ գենի ներդրման մեջ և ալին։

Վերածման առընթե մերոպների կիրառման անհամեստությունը։ — Տնտեսագես ոգտակար բարդ հատկանիշների վերլուծման մեթոդների մասին մեր ասածներից բղխում և հետեւյալ շատ կարևոր յեղակացությունը, յուրաքանչյուր մեթոդ առանձին վերցված չի կարող սպառիչ կերպով բնութագրել ուսումնասիրվող բարդ հատկանիշի ժառան-

1) Տարբերությունները, ճշշտ ե, արտաքուստ արտահայտվում են աճման արագության մեջ, սակայն արագությունն ինքը հանդիսանում է միայն վորպես հատուկ վորոշեցիք, Սահ. և. Յեր.

դումը: Յեզ թեպեա անհրաժեշտ և յերնույթն ռառումնափել իր մեթոգներով, այսուամենայնիվ միմիայն զանգան մեթոգների սինթեզն է, վոր հնարավորություն կտա իրոք առաջ զնալու անտեսական պրակտիկայի համար այնքան կարեոր հատկանիշների ռառումնափերման մեջ, ինչպիսիք են կաթնառատությունը, մսատվությունը և այլն: Դնեսերիկական և ֆենոպենետիկական վերլուծման մեթոգները չի կարելի միմյանց հակադրել այլ պետք ե վոր նրանք լրացնեն իրար:

Ճիշտանդուրյունների հանդեպ կենցանիների դիմացկության (ռեվիսենտուրյան) ժառանգումը. — Գյուղատնտեսության պրակտիկայի համար առանձնապես կարեոր հանգամանք և հանդիսանում գյուղատնտեսական կենդանիների դիմացկունության աստիճանը զանգան հիվանդությունների հանդեպ: Համաձարակային զանազան հիվանդություններ խոշոր վնասներ են հասցնում մեր անասնապահությանը. սակայն այդ վնասը կարելի յեր մեծ չափով նվազեցնել կամ իսպառ վերացնել յեթե հաջողվեր ստանալ այնպիսի կենդանիներ, վորոնք ի րոն չենթարկվելին վարակման:

Արդյոք հնարավոր և այդ բանը:

Մենք այժմ զիտենք, վոր մի տեսակի սահմաններում գոյություն ունեն առանձին խմբեր, ցեղեր և այլն, վորոնք բավականաչափ դիմացկուն են տեսակին հատուկ հիվանդությունների նկատմամբ (հնդկական տափարը, ալճիրյան վոչխարները, Փիլիպպինյան պրիմիտիվ խողերը և այլն):

Ամենից շատ տվյալներ գոյություն ունեն մկների, առնետների, ծովախողեկների և ճագարների մասին:

Ընտրության միջոցով հաջողվել և ստանալ բազմաթիվ մկներ, վորոնք դիմացել են մկան տիֆի վորոշ գողային: Լավ հետեանքներ ստացվել են նաև հավերի նկատմամբ: Ընտրված գծերում ճտերը գիտացկուն են դուրս յեկել սպիտակ փորլուծի գեմ:

Մի շարք գեպքերում հաջողվել և ցույց տալ վոր դիմացկունության գենետիկական բնությունը շատ պարզ և, համախ հանգում և միայն մեկ գենի (մկների մոտ՝ դիմացկունությունը ստափիլուկուկային վարակման գեմ, հավերի մոտ՝ թուչունների դիղենտերիայի և այլն):

Այդ, ինարկե, խոշոր գործնական նշանակություն ունի: Այդ նշանակում և, վոր գենետիկական ստույգ մեթոդներով, գենետիկական ճիշտ տրամախաչութեների միջոցով հնարավոր և ստեղծել դիմացկուն ցեղեր:

Դիմացկունության ռառումնափերության նկատմամբ կատարած աշխատանքների ժամին զաղափար կազմելու համար բերենք գլխավոր ավյալները ճագարների դիմացկունության մասին՝ վարակիչ վիճման

հանդեպ, Այդ աշխատանքները մի շարք տարիներ կատարվում են Ամերիկայում, Վիսկոնսինի կայանում (Կոյո, Հավլեյ, Մանթեսա): 14 և 20 որվա հղի ճագարներին պատվաստել են Բանգի բացիլները, վոր ստացվել եյին խողի վիժված եմբրիոնից: Պատվաստների փորձերի հիման վրա բոլոր եգերը բաժանվել են յերկու խմբի՝ դիմացկունների, այսինքն՝ այնպիսինների, վորոնք տալիս եյին գոնե մեկ կենդանի ձագ և անդիմացկունների, այսինքն՝ վիժողների կամ միայն մահացած ձագեր ծնողների: Յերկու ուղղությամբ ել կատարվում եր ընտրություն: Հետևանքն այն յեղավ, վոր ստացվեցին մի շարք գծեր, վորոնք տալիս եյին առավելապես դիմացկուն կամ վոչ դիմացկուն անհատներ:

4—5 սերունդների ընթացքում ընդամենը ուսումնասիրվել ե 224 եղ ճագար, Դիմացկունության և վոչ դիմացկունության հատկանիշների ժառանգման բնույթի մասին տվյալներ ստանալու նպատակով տարբեր գծերի միջև կատարվել են արամախաչումներ, վորոնք տվյալներ հետեւյալ արդյունքը.

Տրամախաչումների սերունդները	Ուսումնասիրվել թիվը	Վարչական ցեցին	
		Դիմացկուն	Վոչ դիմացկ.
F ₁ (♂ դիմացկուն գծեր × ♀ վոչ դիմացկուն)	11	10	1
F ₂ (F ₁ × F ₁)	7	4	3
Հետազարձ (♀-ը F ₁ -ի բարեկարգություն) .	4	2	2

Թեև թվերը քիչ են, բայց և այնպես տվյալները վկայում են դիմացկունության դոմինանտության մասին:

Նույն ուսումնասիրել ե տիֆի հանդեպ մկների դիմացկունության ժառանգումը: Մկներին սրսկել են ախֆի բացիլներ, Արդյունքը տարբեր գծերի համար տարբեր և յեղեր Մի գծի նկատմամբ (Նվինգ) կատարվել ե ընտրություն ըստ դիմացկունության: Իրար հաջորդող վեց սերնդում մահացության հետեւյալ սովորություն են հայտարերվել. մինչև ընտրությունը՝ 82,3, առաջին սերնդում՝ 64,3, յերկրորդում՝ 45,8, յերրորդում՝ 39,8, չորրորդում՝ 36,3, հինգերորդում՝ 32,6, վեցերորդում՝ 24,7: Ուրիշ խոսքով՝ ընտրության միջոցով ստեղծվել ե բավականին դիմացկուն գիծն Նման արդյունքներ ստացվել են և մյուս գծերի միջև Մի այլ գծի F₁-ը տվել ե մահացության 78,3%: Բայց յերբ F₁-ը արամախաչվել ե դիմացկուն մկների հետ, զրանց սերունդը տվել ե մահացության միայն 37,4%: Այդ ցույց և տալիս, վոր դիմացկունությունը մասնակի դոմինանտ ե հանդեպ անդիմացկունության:

Այս ամենը ցույց ե տալիս, վոր ընտրությունն անտանաբուժության մեջ անհրաժեշտ ե կիրառել վոչ միայն անտեսապես ոգտակար

հատկանիշների նկատմամբ, ինչպես որինակ՝ կաթնառվության, ժամանակության և այլն, այլև զոչ պակաս չափով անհրաժեշտ և ընտրություն կատարել և զիմացկունության ուղղությամբ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԵՏԵՎԱԼԻԹՅՈՒՆՆԵՐ

1. Հատկանիշները վորակականի և քանակականի բաժանելը սոսկ պայմանական և, վորովնետք ամեն մի հատկանիշն հատուկ էնթի վորակական և թե քանակական կողմերը: Բայց այդպիսի բաժանումը կատարում են՝ նկատի առնելով հատկանիշի փոփոխության և տրանսգրեսիվության աստիճանը: Տնտեսապես ոգտակար հատկանիշները (կաթնառատությունը, քաշը և այլն) տիպիկ քանակական, բայց շատ բարդ հատկանիշներ են, վորոնք պարունակում են նաև վորակական տարրեր:

2. Քանակական հատկանիշների ժառանգման տիպիկ պատկերը, այն և՝ F_1 -ի միջական բնույթը, փոփոխականության ավելանալը F_2 -ում, բացատրվում է շատ զեների մասնակցությամբ (պոլիմերիայի հիպոթեզը):

3. Մորգանիստական մեթոդի կիրառման նպատակն եւ առանձնացնել առանձին գեները և տեղափորել նրանց քրոմոսոմներում.

4. Մինդելիստական և մորգանիստական մեթոդները բավական չեն ժառանգման ամբողջ բարդ պատկերը պարզեցնելու համար: Անհամարժեց և զրանք սինթեզել այլ մեթոդների, մասնավորապես ֆենոպենետիկական մեթոդների հետ:

5. Հատուկ տեսք և զրավում հատկությունների՝ հիվանդությունների հանդեպ ունեցած զիմացկունության զենետիկական անալիզը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Синиот-Дени. Куре генетики, ГИЭ, 1930 г. (լազ և բացատրված, թե ինչպես պետք է պոլիմեր գեների հիպոթեզով մոտենալ քանակական հատկանիշների զենետիկայի ուսումնասիրմանը):

2. Адамец. Общая зоотехния, 2-е изд., 1931 г. (անտեսապես ոգտակար հատկանիշների ժառանգումը բնավում և առավելապես պոլիմեր զործուների տեսութիւնը):

3. Гольдшмидт. Учение о наследственности, ГИЭ, 1928 г. (IX գլուխ լատակի կերպով զարգար և տալիս պոլիմեր գեների մասին):

4. Пенист. Менделлизм, ГИЭ, 1930 г. (XIV գլուխ տրված և պոլիմեր գեների հիպոթեզը):

5. Кру. Генетика животных 1929 г. (պոլիմեր գեների մասին տես գլուխ II):

6. Вридт. Учение о наследовании с.-х. животных, Сельхозгиз, 1930 г. (այլաշներ անտեսապես ոգտակար հատկանիշների ժառանգման մասին, հեղինակը գեկավարվում է զիմացկունության միանշան գեների հիպոթեզով):

7. Филиппенко Ю. А., Частная генетика, ч. II, изд. „Сентель”, 1928 г. (տագարին և գոյարիներին վերաբերող գլուխ ովայաներ կան կաթութեավության և ծառապության ժամանական մուին)։
8. Давыдов С. Г., Селекция молочного скота, З-е изд., Сельхозгиз, 1981 г. (զբար սկզբում համարում ամփոփաներ կան կաթութեավության և ծառապության ժամանական մասին)։
9. Давыдов С. Г., Некоторые новые данные по наследованию молочности у крупного рогатого скота. Бюллетень Института животноводства за 1931 г., № 1 (Նորագոյն ավյաների քննադատական ամփոփումը)։
10. Бурдев А. В., К вопросу о наследовании молочных и мясных свойств у крупного рогатого скота. Известия ГИОА за 1929 г., том VII, № 3—4.
11. Патов К., Дальнейшее изучение наследования молочной продуктивности у крупного рогатого скота. Реферат П. Лепера “Социалистическое животноводство”, за 1930 г. № 9—10 (Կաթութեավության ժամանական վերաբերյալ ովյաների ամփոփումը, վոր բնորոշում և այլ հարցի վիճակը զերմանական գենետիկների մասին)։
12. Петров С. Г., Направление работ по генетике кур в ближайшие годы. Журнал „Советское птицеводство” за 1931 г., № 1 (Հեղենակը չերմագին պաշտպանում և անտեսապես ոգտակար հատկանիշների ուսումնաբարում ազգանշային գեների մեթոդի Հոգվածը պարունակում և մի պլան՝ հարվ զերմանական ուսումնաբարելու համար)։
13. Диомидов А. М. К вопросу об организации научно-исследовательской работы по изучению наследования обычной и жирномолочности у крупного рогатого скота. Бюллетень Всесоюзного института животноводства за 1931 г., № 2.
14. Рокицкий П. Ф., О формально-генетическом подходе в генетике с.-х. животных. Бюллетень Всесоюзного института животноводства за 1931 г. № 2 (Քննադատում և կենդանիների անտեսապես ոգտակար հատկանիշների հետապնդման ձևական ուղիները)։

ՄՈՒՏԱՅԻԱՆԵՐ

Ժառանգականության յերեսույթները դիտելիս հեշտությամբ կարող ե ստեղծվել այնպիսի պատկերացում, թե ժառանգական հատկություններն անփոփոխ են: Արդարեն, վզքեն գույն սերնդից սերունդ և հաջորդպում Մենդելի կանոնների համաձայն, մենդելում ե, զրաերգում ե, կամ մասում ե թագուն վիճակում հոմոգիգուային կամ ռեցեսիվ լինելու գեղքում, սակայն ժառանգական իմաստով չե փոխվում ե չի կորչում: Դրա հիմքն է կազմում վորոշ գենների անխախտությունն ու մշտականությունը: Այդպիսով գենի մասին այնպիսի զարաֆար ստեղծվեց, թե նա ինչ-վոր ընդմիշտ սահմանված կայուն մի բան ե (լ.օսոի):

Ժառանգաբար փոխած ձևերի դրանքում են դեպքերը: — Ժառաները վազուց ի վեր հակասում եյին այն զաղափարին, թե ժառանգական հատկանիշներն անփոփոխ, մշտական են:

Մի շարք սերունդներում կենդանիների կամ բույսերի վորոշ ցեղեր զիտելիս յերբեմն նկատում եյին, վոր առաջ են դալիս առանձին անհատներ, վորոնք տարբերվում են իրենց յեղբայրակիցներից և այդ տարբերությունները հազորդում են իրենց հաջորդներին: Դեռևս Դարվինը նկարագրել եր այդպիսի մի շարք գեղքեր և զրանք անվանել եր «Բուիչքներ»: Վոչխարների նկատմամբ հայտնի յեր մի ստույգ գեղք, յերբ հանկարծակի առաջ եր յեկել մի նոր ձև: XVIII դարի վերջերին ամերիկյան մի ֆերմերի հոտում առաջ եր յեկել կարճ ու ծուռ վուներով և կորացած կռնակով մի գառնուկ, վորն իր արտաքինով հիշեցնում եր տաքսա շանը: Նրա սերունդը տվեց վոչխարների անկոնյան ցեղը, վոր ներկայումս վերացել ե: Ալդ ցեղի վոչխարները կարճուառներն պատճառով ի վիճակի չեյին թռչել նույնիսկ ամենացածր ցանկապատի վրայով: Դարվինը մատնանշում ե նաև սերթիւ կունք սիրամարդների յերեան գալը: Հայտնի յե, վոր բույսերի մեջ յերեան եր յեկել ծիծեռնախոտի (ԿИСՏՈՒ) մի նոր ձև, վորին նույ-


Նիսկ տեսակային հատուկ անուն արվեց Հաջողվեց հաստատել, վոր նու առաջ և յեկել սովորական ծիծեանախոտի սերմերից, առաջին անգամ 1590 թվականին՝ Գերմանիայի Հայութերք քաղաքում:

Ենունեա յեկ մուտացիայի բերդիան.—Հոլանդացի բուսաբան դեմերզը հատուկ ուշադրություն դարձրեց այն ինանգամանքի վրա, թե ինչ նշանակություն ունեն նորմայից անակընկալ կերպով կատարվող և ժառանգաբար հաղորդվող այդ շեղումները: Իր ուսումնասիրած ենուտերա (Oenothera lamarkiana) բույսերի մեջ շատ անգամ առաջ ելին գալիս փոխված ձևեր, վորոնք հետագայում հաղորդվում ելին ժառանգաբար: Առաջ յեկավ ենուտերի մի վիթիարի ցեղ, շատ կարճ վարանդրով, ապա՝ գաճաճացին մի ցեղ՝ տերեների վրա կարմիր յերակներով և այլն: Դեմերզը այդպիսի փոփոխություններն անվանեց մուտացիաներ, իսկ նոր հատկանիշներ կրողներին՝¹ մուտացներ: 1901 թվականին դեմերզը լույս ընծայեց մի աշխատություն՝ «Մուտացիոն թերիա» վերնագրով: Այդ աշխատության մեջ նա մուտացիաները՝ ժառանգաբար հաղորդվող խիստ փոփոխությունները վորոշակի սահմանազեցեց մոդիֆիկացիաներից՝ միջին մեծության նկատմամբ կատարվող այն մանր շեղումներից, վորոնք իրենց ընությամբ ժառանգական չեն և առաջ են գալիս արտաքին պայմանների բազմապիսի ազդեցությունների շնորհիք: Մոդիֆիկացիաների մասին մենք արդին խոսել ենք առաջին գլխում: Նրանց վոչ ժառանգական լինելը կազմում և այն ընորոշ գիծը, վորով տարբերվում են նրանք մուտացիաներից, ալսինքն՝ այնպիսի փոփոխություններից, վորոնք տեղի յեն ունենում վոչ միայն արտաքինում, այլև ժառագական կառուցվածքում, գենոտիպում: Դեմերիզից հետո սկսեցին մուտացիաներ գըտնել շատ կենդանիների ու բույսերի մեջ՝ սկսած պարզ կազմակերպված բակտերիաներից մինչև մարդու Ընդամենքն հետաքրքիր ե, վոր ենուտերի Շուտացիաները, վորոնց վրա հիմնվել եր ինքը դեմերզը, շատ բարդ ծագում ունեն: Ներկայումս գենետիկայում մեծ գրականություն կա զրա մասին, և Շուտացիաների վերաբերյալ բանավեճը՝ մինչև այժմ ել չի վերջացեր Սակայն մուտացիան ըստինքյան շատ տարածված յերեսություն է, հեշտ չե ապացուցել վոր տվյալ գեղքում մենք գործ ունենք հատկապիս մուտացիայի հետ, այսինքն՝ ժառանգական հատկությունների խիստական փոփոխության հետ, և վոչ թե առաջ թագում հետերոդիգոտային վիճակում գտնվող ուցենսիվ գեների դրսուրման հետ: Միմիայն գերիշտող մուտացիաների յերեսն դալը կարելի յե քիչ թե շատ ճիշտ ապացուցեր:

Դեմերիզի մուտացիոն թերիան, բներելով ուշադրությունը ժառանգական փոփոխականության յերեսության հակառական գերիսաց գենետիկայի պատճության մեջ, չնայած նրա մի շարք սխալ

զրույթներին և եվոլյուցիոն հայացքների մեխանիստական բնույթին:
Դեռ մեր ձեզ ձեռակերպեց մուտացիոն փոփոխականության 8 որենքը:
Դրանցից վերջինն առում է, թե մուտացիայի յենթարկվելու ուժակությունը յերեան և գալիս պարբերաբար, թե տեսակների կյանքում պարբերաբար առաջ են գալիս մուտացիոն ժամանակաշրջաններ, յերբ որում են մուտացիաների շաղութկումներ։ Դրանց հիմնական պատճառը դեռդիզին հայտնի չեր, բայց նա կանխատեսեց արտաքին պարբանների մեծ գերը մուտացիոն փոփոխականության մեջ, որպանիզմի այն ներքին փոփոխությունների հետ միասին, վոր շեշտել և ինքը։

Մուտացիաներ զյուղաբնեսական կենդանիների մեջ. —Վորոշ թվով



Նկ. 84. Ազգբնական բնիկ ցեղ՝ կերպին (վերեւ վում) և գերատեր-կերը մուտացիան՝ վորոշակի արտահայտված կարճ վերջավորություններով և միտ արտազրելու ավելի մեծ ունակությումը (ներքեւ վում) (Ազտամելից)։

փաստեր կան նաև զյուղա անտեսական կենդանիների մուտացիաների նկատմամբ։ Հին որինակ և հանդիսանում վերը հիշատակված անկոնյան վոչխարը՝ 1919 թվականին նորվեգիայում նորից առաջ յեկավ նույնականի մի ձև։ Վերջինս նկարագրել եր Վ. Ի. Պատր (նկ. 94): Պարզվեց, վոր վոչխարի անկոնյան ընույթը կախված է մի սեցեսիվ գենից։ Վոչխարի այդ ձևի առաջին և յերկրորդ անդամ յերեան գալու միջև անցել եր 128 տարի։ Ի հարկե, հնարավոր չե պարզելու, թե այդ գենը յերկրորդ անդամը յերեան յեկավ անկան կերպով, թե՞ նորվեգիայում հոմոզիգոտային վիճակի մեջ մտավ թագուն սեցեսիվ գենը։

Մի ժամանակ մուտացիա ելին համարվում նաև մոշանյան վոչխարները, վորոնք ունելին շատ յեր-

կար, մետաքսանման բուրգ և առաջ ելին յեկել մի գառնուկից՝ ֆրան-

սիայի Մոշան Փերմայում՝ 1828 թվականին։ Անկոնյան և մոշանյան վոչ-խարներին նկարագրել եր գեռ Դարվինը։ Սակայն 1912 թվականին Նատուրֆիլտը հրապարակեց մի հաղորդագրություն, վորտեղ քննելով մոշանյան վոչխարների վերաբերյալ բոլոր ավյաները, յեզրակացնում է, վոր դա յերեկի վոչ թե մուտացիա յե, այլ հատկանիշների մի կոմբինացիա, վոր առաջ ե յեկել մերինուների և մի այլ ցեղի արամախաչումից։

Նախորդ գլխում մենք մատնացույց եյնք արել տավարի բուլ-գողակերպության լետալ գենը։ Նա նույնպես առաջ ե յեկել մուտացիոն յեղանակով և սկզբում գտնվել ե հետերոզիգոտային վիճակում դեքստեր ցեղի ձևով (Նկ. 84)։ Դերիշխող մուտացիա դեքստերը հետերոզիգոտային վիճակում արտահայտվում ե վերջավորությունների կարճացումով և միևնու արտադրելու ավելի մեծ ունակությամբ։ Իսկ հոմոզիգոտային վիճակում նա, ինչպես տեսանք, մահանում է։

Առաջ յեկած գերիշխող մուտացիան այնունետե կժառանգվի բավական կայուն կերպով։ Այդ հանգամանքն այնպիսի տպավորություն ե գործում, թե գերիշխող գենը հաղորդող անհատն «անհատական պոտենցիա» ունի։


Ֆիզիոլոգիական հատկանշի հետաքրքիր մուտացիա յե նկատել Արենաթները։ Բավականին յուղալի կաթ ունեցող ($3 - 4\%$) շվեզական մի ցեղում առաջ ե յեկել մի կով, զորի կաթի յուղը շատ քշացել եր ($2,4\%$)։ Դուրս յեկավ, վոր յուղի տոկոսի նվազումը ժառանգական ե՝ հաջորդների կաթի յուղը նույնպես կազմում եր $2,7\%$, Հստ յերեսութին, յուղի քանակի վրա ազդող գենը յենթարկվել և մուտացիոն փոփոխության։

Մուտացիայի նօանակուրյամբ գործական անասնաբաւծության համար, Գործնական անասնաբաւծության համար մուտացիաները մեծ նշանակություն ունեն, վորովհետև այդ հողի վրա առաջ են գալիս ընտանի կենդանիների բազմաթիվ ցեղեր։ Որինակ՝ մուտացիաների միջոցով առաջ են յեկել տավարի, վոչխարների ու այծերի յեղշերազուրկ ձեռերը, ապա այծերի, վոչխարների, ծովախողերի, ճագարների մուտացիոն ծագում ունեցող ցեղերից, միակնդակ խողեր և այլն։ Մուտացիոն ծագում ունեցող ցեղերից են նաև դմակավոր և ճարպապոչ վոչխարները։

1) «Անհատական պոտենցիա» կռչվող զոստեինիկական հասկացողությունը լավ և բացատրվում ժառանգականության ժամանակակից ուսումնացով։ յեթե կենդանին հոմոզիգոտային ե մի կամ մի քանի գեղիշող գեներով, վերջիններս անպայման կդրսերզվեն նրա սերունդների մեջ։

Մուտացիաներն անսարակույս վոչ պակաս նշանակություն ունեն բռնշների նոր տեսակների ստեղծման գործում:

Լետալ մուտացիաները կարեոր են իրենց, այսպես ասած, բացառական նշանակությամբ: Նորազույն հետադոտությունները ցույց են տալիս, վոր դրանք կենդանիների մեջ ավելի հաճախ են գրյանում, քան յենթազրպիլ և մինչև այժմ: Մի շաբթ դեպքերում դրանով կարելի յեւ բացատրել անսպազությունը: Վոր հաճախ համարվում է ազգակցական բուժման վիասակար հետեանք:




Նկ. 85. Պինցզառուսի տավարի ցեղում առաջացած յեղջերազրկությունը (ըստ Ազամինցի):

Միննույն տեսակի ներկայացուցիչների ամբողջ հսկայական բազմապիսությունը հենց սկզբից գոյություն չի ունեցել այլ ստեղծվել և ավյալ տեսակի պատմության վորոշ մօմենտներում: Ընտանի կենդանիների բազմաթիվ ցեղերն ստեղծվել են նրանով, վոր մարդիկ, ոդովիլով առաջ յեկած ժառանգական շեղումներից, մուտացիսներից, հետագայում ամրացրել են դրանք հաջորդ սերունդների մեջ: Այսուհետեւ, մուտացիոն զանազան փոփոխություններ համակցվել, զուդակցվել են զանազան կերպով, վորով վերջիվերջո առաջ են բեկել բազմաթիվ ցեղեր, ցեղաաներ և տոհմեր:

Նոր ցեղերի ստեղծման պրոցեսն այժմ ել շարունակվում է, ինարկե, վորովհետեւ անտեսական տեսակետից արժեքավոր մուտացիաներն ամրացվում են: Նոր արժեքավոր հատկություններ ունեցող անհատները բազմացվում են, տալով նոր գծեր և ցեղեր:

Գրազմելի մուտացիաները Մուտացիաների կասխճիկացիան. — Մուտացիաների, նրանց տիպերի, նրանց առաջ զարու որինաչափությունների ուսումնասիրումն սկսեց արագ քայլերով առաջ զնալ

1911 թվականից հետո, յերբ ամերիկյան գիտնական Տ. Սորգանի լաբորատորիայում սկսվեց պտղաճանճի՝ զբողոքիլի ուսումնասիրումը: Դրոզոֆիլների մեջ արդեն հայտնի յեն մի քանի հարյուր մուտացիաներ, վրորնցով փոխվել են ճանճի համարյա բոլոր հատկանիշները (նկ. 86): Դրոզոֆիլի մուտացիաների ուսումնասիրումը հասրաժա-



Նկ. 86. Պաղաճանճի՝ գրողոֆիլի զանազան մուռացվածքը (ըստ Գոլդմինսկի)

մային կառուցվածքի փոփոխման մեջ։ Իսկ քրոմոսոմներում տեղի ունեցող այդ փոփոխությունները խառնու են շատ տառեկո լինելու

Գենոտիպի ժառանգական փոփոխությունները, նախ՝ կարող են պայմանավորվել քրոմոսոմների թվի փոփոխություններով և նրանց առանձին մասերի զանազան վերախմբավորումներով։ Մուտացիաների այդ խումբը կարելի յէ անվանել քրոմոսոմային մուտացիաները կամ սրերացիաներ (անոնրմալություններ)։ Եթեկորդ՝ կարող են փոխվել քրոմոսոմի յերկարությամբ զասավորված առանձին գենները։ Հենց այդպիսի մուտացիաների մասին վօրոնք կոչվում են օրանօգենետիաներ, մենք կոսել ենք նախորդ զվարում և մատնանշել, վոր վորեւ զենի մասին պատկերացում և ստեղծվում այն ժամանակ, յերբ նու փոխվում են։

Քրոմոսոմային մուտացիաները ևս կարող են շատ բազմապես

Անելու Մի քանի դեպքերում բազմապատիկ թվով ավելանում և կոմպլիքսում քրոմոսոմների քանակը Բրոմոսոմների նախկին դիպլոիդային (2n) կոմպլիքսը դառնում և տրիպլոիդային (3n), տեսրապլոիդային (4n) և այլն (նկ. 89): Այդ յերեսույթը կոչվում և պոլիպլոիդիա: Յերբեմն 2 կամ 3 տեսակները միմյանցից տարբերվում են իրենց քրոմոսոմների բազմապատիկ թվով:

Մի քանի դեպքերում քրոմոսոմների նորմալ կոմպլիքսին ավելանում են այլ քրոմոսոմներ կամ, ընդհանառակը, քրոմոսոմներից մի քանիսը կորչում են (հնակերովլութիւն):

90-րդ նկարում պատկերված են ենոտերի քրոմոսոմները: Պարզվեց, որ նրա մուտացիաներից մի քանիսը, որոնց մասին մենք արդեն խոսել ենք, գոյանում են քրոմոսոմների թվի փոփոխման շնորհիվ:




Նկ. 88. Միտկնզակ խոզի վարքը և վարքի կամիրը՝ համեմատած նորմալ խոզի հետ (ըստ Դորբովի)

մոսումների շուռ գալը (ինվերսիա) և այլն:

Քրոմոսոմներում տեղի ունեցող այդ բոլոր փոփոխությունների արդյունքն և լինում այն, որ առաջ են գալիս նոր հատկանիշներ, կամ համապատասխանողին խախտվում և հների ժառանգումը: Հետագա ցիտոլոգիական հետազոտությունը ցույց է տալիս, թե իրոք ինչպիսի փոփոխություն և աեղի ունեցել քրոմոսոմներում:


Դրոզոֆիլների մեջ առաջ յեկող տրանսգենացիաների ուսումնասիրումը հնարավորություն ավեց կառուցել քրոմոսոմների քարտերը,



Նկ. 87. Անըսուբդ զառ (ըստ Պոպովայի)

Ամբողջ քրոմոսոմների ավելացման կամ կորսարի դեպքերի հետ միասին փոփոխությունները կատարվում նաև քրոմոսոմների մասերում՝ առանձին կտորների տեղափոխվելը մի քրոմոսոմից մյուսի մեջ (տրանսլոկացիա), քրոմոսմի ավելի կամ փոքր մասի դուրս ընկնելը (սղեֆիշնսին, դելցիացիաներ), քրո-

վորոնց մասին խոսել եյինք IV գլխում։ Ամեն մի տրանսգենացիա տեղի յե ունենում քրոմոսոմի վորոշ կետում կամ մասում։ Ուսում-



Նկ. 89. Կետերով լիդիայի և պոլիպուխիդիայի սքեմը։ A—քրոմո-
սոմների գիպոզիդ կոմպլեքսը, B—հետերովոլիդիա՝ ավելորդ և մի
քրոմոսոմ, C—քրոմոսոմների արիզոլիդ կոմպլեքսը

նասիրելով նոր հատկանշի ժառանգումը մյուս հատկանիշների կո-
պակցությամբ՝ հաջողվում է վորոշել քրոմոսոմի այն տեղը, վորտեղ
կատարվել և տրանսգենացիան, և վորտեղ գտնվում է մուտող գենը։




Նկ. 90. Ենոտերի քրոմոսոմները։ 1—*Oenothera lamarckiana*՝ 14 քրոմոսոմի,
2—28 քրոմոսոն ունեցող) *gigas*-ի մո-
տոցիան, 3—*semigigas*՝ 21 քրոմոսոմի,
4—*Oenothera lata*՝ 15 քրոմոսոմի
(Ֆիլիպինկայից)։

Այն բոլոր մուտացիաները, վո-
րոնց մասին խոսեցինք, հան-
դիսանում են այդ տիպի մու-
տացիաներ, վորովհետև հաջող-
վում է հետեւ նոր յերեան յե-
կած գենի մենդելման։ Բացմա-
թիվ կենդանիների միջոցով
ուսումնասիրելով, թե ինչպես են
տեղի ունենում մուտացիաները
և մասնավորապես տրանսգենա-
ցիաները՝ հաջողվեց գտնել այդ
յերեւոյթի մի շարք քննորոշ
հատկությունները։


Մուտացիան պրօքեսը յակ նրա բնորո գծերը.—Դրոզոֆիլների մեջ
տեղի ունեցող բազմաթիվ մուտացիաների ուսումնասիրումը ցույց
տվեց, վոր, նախ՝ մուտացիաներն առաջ են գալիս շատ ավելի հաճախ,
քան կարծում եյին առաջնուն, յերկրորդ՝ նորմալ պայմաններում մու-
տացիաների առաջացման տոկոսը տվյալ տեսակի կենդանիների մեջ
բավականին անփոփոխ է։ Մուտացիաների խռաջ գալն այնպիսի մի
պրոցես է, վոր տեղի յե ունենում վորոշ հաճախականությամբ կամ
տրագությամբ։ Մովորական լաբորատորական պայմաններում բար-
մացնելս գրողոֆիլի 8—10 հազար հետազոտվող անհատների մեջ

առաջ և գալիս մի մուտացիա: Բայց յեթե նկատի ունենանք, վոր մուտացիաներն իրենց արտաքին արտահայտությամբ կարող են շատ տարբեր լինել՝ սկսած ուժեղներից ու լավ նկատվողներից մինչև չափազանց մանրները, վորոնք հեշտությամբ աննկատելի յեն նույն աննշան հատկանիշների վրա, ապա մուտացիաների խիսկական հաճախականությունը շատ ավելի մեծ պիտի լինի: Ալտերնատիվ և Մյուլերի հաշվարկումները ցույց տվին, վոր դրույթիլի Խ-քրոմոսմների մոտ մի տոկոսում (մի քիչ պակաս) առաջ և գալիս լիտալ մուտացիա: Համ



Նկ. 91. Դուրս ընկնելը և ինվերսիան: Ձախ քրոմոսմն ամենուրեց նորմալ և. Ա—քրոմոսմն մի մասի ընկնելը եւ և զեների հետ միասին. Բ—վերին ծայրի ընկնելը. Ը—դուրս և յեկել ստորին ծայրը ժ, զ և է զեների հետ միասին:

յերեսույթին լիտալ մուտացիաներն ամենից հաճախ են պատահում: Դարբի յե ընդունել, վոր սպերմիներում կամ ձվերում զանվող սեպական 100 քրոմոսմներից առնվազն մեկի մեջ առաջ և գալիս մու-



Նկ. 92. Ցորնի քրոմոսմների հապլոյիդ խմբերը՝ ա—միահատիկ (Triticum monococcum), բ—կարծր ցորեններից մեկը (Triticum durum), ս—փափուկ ցորեններից մեկը (Tr. vulgare) (Ֆիլոպլանկոյից, ըստ Կելլարի):

տացիս: Յեթե նույնիսկ մյուս կենդանիների մեջ մուտացիաների համախականությունը պակաս է, այնու հանդերձ այդ բոլոր թվերը ցույց

հն տալիս, թե բնչպիսի հակայական դեր կարող են խաղալ մուտացիաները տվյալ տեսակի կամ ցեղի պատմության մեջ, յեթե միաժամանակ զուգակցվի նաև բնական կամ արհեստական ընտրությունը:

Միենույն մուտացիաները՝ թե տրանսդենացիաները և թե քրո-մուտմային արերացիաները, կարող են կրկնվել շատ անգամ: Մորգանը դրողովիլ գենետիկայի վերաբերյալ տվյալներն ամփոփելով (1925 թ.) մատնանշում ե, վոր քրոմոսոմների մի քանի կետերում մուտացիաներ են առաջ յեկել մի քանի տասնյակ անգամ: Առանձնապես հայտնի յէ սեռական քրոմոսոմում այն տեղը, վոր գտնվում է նրա ձախ ծայրից 1,5 մորգանիդ հեռավորությամբ: Այդտեղ գտնվում է աչքի գույնի գենը («սպիտակաչքանիություն»), վորի մասին հիշատակել ենք արդեն մի քանի անգամ: Բայց Մորգանի, քրոմոսոմի այդ կետում ավելի քան 25 անգամ փոփոխություններ են կատարվել ընդ վորում գոյացել են 11 տարբեր ալլելուրֆներ: Իրոք այդ թվերը կարելի յե գաղլիորեն ավելացնել Բնորոշ ե, վոր բազմանվագ մուտող կետերի հետմիամբ կան նաև այնպիսի կետեր, վորտեղ մուտացիաները տեղի յինունեցել 1—2 անգամ: Այդ հանգամանքը կարծես մատնանշում ե, թե քրոմոսոմների առանձին մասերի կայունությունը, նրանց փոխվելու ունակությունը տարբեր աստիճանունի:

Նկ. 95. Տրանսլոկացիայի սքեմը:
I—վոչ համեստ յերկու քրոմոսոմ մինչև տրանսլոկացիան: II—արանուկացիայի յե յենթարկելու և օգնելու պարունակող մասը

տարբեր տեսակների և ցեղերի մեջ տարբեր ե:

Դանիվել են այնպիսի գեններ, վորոնց մուտաելու ընդունակությունը շատ մեծ է (մուտարիլ գեններ):

Միենույն գենի տրանսլոկացիան կարող է տեղի ունենալ զանազան ուղղություններով:

Վորեմ գենի մուտացիան կարող է յերբեմն կրկնա մուտել զետիլ յելու կետային գրությունը (նակադարձ մուտացիաներ) հետեւյալ սիերով:

A→A₁→A:


Հարկավ, մենք իրավունք չունենք պնդելու, վոր ամեն մի հետապորձ մուտացիայի ժամանակ առաջ և գալիս առաջնային նման:

ալելմորֆի, Բայց իրոք՝ յերնի լիակատար կրկնություն չի կատարվում, թեպես մնաք ի վիճակի չենք տարբերելու հին և նոր Ան:

Այդպիսի կերպարանափոխությունները կարող են նույնիսկ ավելի բարդ լինել Որինակ՝ մուտացիոն յիշանակով առաջ և զայլիս գենի մի ալելոմորֆ, հետագայում նա մուտում և տալիս և մի նոր ալելոմորֆ, վորն իր հերթին վերադառնում և սկզբնական գրության:

A → A₁ → A₂ → A

Հետաքրքիր և, վոր միմյանց
նմանող մուտացիաներ կարող
են առաջ զալ տարրեր տեսակների
մեջ: Հայտնի յին, վոր այդպիսի մի
շաբք մուտացիաներ իրոք առաջ
են գալիս քրամոսների միևնույն
կետերում, այսինքն՝ հանդիսա-
նում են զանազան տեսակների
հոմոլոգ մուտացիաները: Հարա-
նման կամ անոլոց մուտացիա-
ներ հայտնի յեն ընտանի շատ
կենդանիների մոտ, թեպետ
նրանց հոմոլոգ լինելն ապա-
ցուցված չին Որինակ, տավարի,
վոչխարների ու յեղջերուների:



Նկ. 94. Վոչխարի վերջավորու-
թյունների կարճանալը (վերելում) —
արտօն կոչվոծ՝ նոր անկոնյան վոչ-
խար, և ներքինում՝ զերուների մեջ
(ապար) (ըստ Բառուքի):

շեղինաղրկությունը¹⁾, ձիերի, տավարի, վոչխարների, շների ու հա-

1) Հայտնատնի գյուղատնաեսական կենդանիների մեջ արձանա-
գրված են հետեւյալ մուտացիաները. տավարի յեկրտակուրյանը —պատահում և թե-
եղերի և թե արուների մեջ. հանգես և գալիս, ըստ յերեւոյթին, համոզիրում վճակում:
Տավարի պաշտառյանը —հորթերը ծնվում են առանց պայմ' պաշարմատով: (տես Ch.-
Erixian, Einige Neubildungen bei Bos Taurus in SSR Armenien. Zeitschr. f. Tierz. u.
Zücht.—biologie 1931). Տավարի յեկառարյանը —արձանացրված և մի գեղք, յերբ Աղ-
բարայիշեղատից մի հորթ ծնվել և յերեք վատով, առաջին աջ վոան իսպառ բացու-
կայել և հորթը յերեք վատով ապա ման եր զալիս միշտ նման մի գեղք նկարու-
թրված և նաև «Проблема живот.» ամսագրում, 1936 թ., թ. Աղոչխարի յեկառարյաննե
արձանացրված և «Коммунист» թերթում (Եկրան), 23 մարտի 1937 թ., թ. 67.
Գումարի յերկարությանը —արձանացրված և մի քանի դեպք: Տավարի և գումարի յեր-
կարություններ արձանացրված և և Աղբբեշանում: Ման և. Յեր.

կերէ մեջ կարճությունը, առվարի վոչխարների, խողերի, պշների, կատուների, ծովախողերի ու հավերի մեջ ատաների միանում, ձագարների, վոչխարների, խոշոր յեղերավոր անասունների, մկների մեջ անմազությունը և այլն:

Ըեցեսիվ մուտացիաները սովորաբար ավելի հաճախ են լինում, քան դամինանաները:

Մուտացիա կարող է տեղի ունենալ որդանիզմի կյանքի պատմության տարբեր մոմենտներում: Յեթե մուտացիան տեղի յեւ ունեցել գամետում կամ սաղմային շրջանում, նրան անվանում են գամետային մուտացիա: Այն ժամանակ որդանիզմը, ամբողջովին վերցրած, կը եմ նոր հատկանիշը, և նոր գենը կդառնվի նրա սեռական բջիջներում: Իսկ յեթե մուտում է զարգացող որդանիզմի բջիջներից մեկը, նոր հատկանիշը ձեռք կը երեն մարմին միայն այն մասերը, վորոնք կը արգանան մուտող ըլեջից: Յեթե, որինակի, այն բջիջներից մեկում, վորից դարձանալու յեւ դրողովիլի աչքը, տեղի կունենա աչքի սպիտակության մուտացիան, ապա աչքի այն մասը, վոր զարգանալու յեւ այդ ըջից, կունենա սպիտակ անգույն ֆասետներ, իսկ աչքի մասաւ ամբողջ մասը կարմիր կլինի (նկ. 95): Այդպիսի մուտացիաները կոչվում են՝ սոմային մուտացիաներ:


Յեթե սոմային մուտացիաները կոչվում են՝ սոմային մուտացիաներով են բացարում կենդանիների՝ մարմին կը լրա անկանոն բծեր գոյանալը:

Արենականությն մուտացիաներ առաջացնելը: — Մենք արդեն ասացինք, վոր նորմալ պայմաններում մուտացիաներն առաջ են գալիս (բնության մեջ կամ լարորատորիայում) վորոշ հաճախականությամբ: Բնականորեն հարց և ծագում չի կարելի արդյոք արհեստական նաև պարհով մուտացիա առաջացնել: Յերկար ժամանակ չեւ հաջողվում վոչ մուտացիաներ առաջը մէ մասն սպիտակ ջացնել: Վոչ եւ նույնիսկ նրանց հաճախական (ե) (ըստ Մյուլերի):

Նկ. 95. Դրողովիլի աչք սամային մուտացիան առաջացնելու հերկար ժամանակ չեւ հաջողվում վոչ մուտացիաներ առաջը մէ մասն սպիտակ ջացնել:

Մինիայն 1927 թվականին ամերիկան ժամանակակից խոշորագույն գիտնական Մյուլեր հազորդեց, թե իրեն հաջողվել և բազմաթիվ տարբեր մուտացիաներ ստանալ դրողովիլիների մեջ, ներգործելով նրանց վրա նենտպենի ճառագայթներով:

1) Տվյալ գեղըսում խոշը վերաբերում է որմանովնացիաներին, վրասկնեան շրջանում այս բարեց խոներն առաջ եյին բերվել շատ ավելի վազ:


Ճիշտ ե, դեռ նրանից ել առաջ մի քանի քիմիական նյութերի, խնջորես և ռենտգենյան ճառագայթների ներզործմամբ հաջողվել եր սառանալ քրոմոսոմային արերացիաներ՝ քրոմոսոմների թվի փոփոխում, սակայն Մյոլիսից առաջ տրանսգենացիաներ, այսինքն՝ առանձին գենների փոփոխում չի ստացվեր

Բայց Մյոլիսը զրոյզոֆիների մեջ ստացավ մուտացիաների բուօր տիպերը՝ թե տեսանելի գենային մուտացիաներ (վորոնք արտահայտվում են արտաքին վորոշ հատկանշով), թե խտալներ և, բացի դւանից, զանազան քրոմոսոմային մուտացիաներու նաև ռենտգենյան ճառագայթների ազգեցությանն եր յենթարկում արուներին և այդպիսով ներգործում իր հասուն սպերմիների վրա։ Ապա նա տրամախաչում եր այդ արուներին եգերի հետ, վորոնք չեյին յենթարկում ներգործման, և ուսումնասիրում եր նրանց հաջորդներին։

Նա շատ յուրահատուկ մեթոդիկա յեր կիրառում, վորակեսզի կարողանա կատարելապես ճշտիվ հաշվառել միմիայն սեռական քրոմոսոմում տեղի ունեցած փոփոխությունները և մասնավորապես այն բոլոր լետաները, վորոնք առաջ են դալիս սեռական քրոմոսոմում ռենտգենի ճառագայթների ազգեցությամբ։ Պարզվեց, վոր Ռենտգենի ազգեցությամբ մուտացիաների առաջացման հաճախականությունն ազիլանում և համարյա 150 անգամ։ Մուտացիաների առաջ եյին դալիս քրոմոսոմի տարրեր կետերում, Ընդամենին պահպանվում եր մեր մատնանշած յերևույթը, վոր քրոմոսոմի զանազան կետեր մուտառում են զանազան հաճախականությամբ։ Յեթե մենք սեռական քրոմոսոմի յերկարությամբ զանազան բարձրության սյունիկներով նշենք քրոմոսոմի զանազան մասերում առաջ յեկող մուտացիաների հաճախականությունը, կստանանք 96-րդ նկարում բերված աստիճանավոր դիագրամը Բնորոշե, վոր մուտացիաների հաճախականության նույնութիւնը պիսի պատկեր կստացվի, իբրև այդպիսի դիագրամ կազմենք առանց ռենտգենյան ճառագայթների ազգեցության։ Ընդամենին ցցվածքներն ու փոսերը կզուզադիպեն։ Այդ ցույց ե տալիս, վոր յերկու զեպքում ել պահպանվում ե քրոմոսոմի վորոշ մասերի մուտելու մեծ ունակությունը՝ համեմատած յուս մասերի հետ։

Մյոլիսից փորձերից հետո սկսեցին ռենտգենյան ճառագայթների ազգեցությամբ մուտացիաներ առաջ բերել նաև այլ որյեկտներում՝ մի շարք բույսերում և մի քանի կենդանիների, առավելապես միջատների մեջ։ Կաթնասունների մեջ միայն մկներից աջողվեց վորոշ արդյունքներ ստանալ, բայց, գժբախտաբար, շատ անուշու արդյունքներ, Դեռ 1923 թվականին Լիսոլը և Բազգը փորձել կատարեցին ռենտգենյան ճառագայթներով մկների վրա ներգործելու ուղղությամբ, 1928 թվականին այդ փորձերը կրկնեց Գոբրուկուսկայա-Զավադսկայան։

Հստ յերևույթին, փորձերի այդ յերկու սերիայում ել առաջ են յեկել ժառանգական փոփոխություններ (նկ. 97, 98, 99), սակայն չեր կարելի վստահ լինել, թե դրանք իրոք ճառագայթների աղքեցությամբ են առաջ գալիս: Ուստի պետք է ընդունել, վոր բարձր դարձացում ունեցող կենդանիների նկատմամբ մինչև այժմ ել չե հաջողվել քիչ թե շատ ստույգ արդյունքներ ստանալ:



Նկ. 96. Մի գրաֆիկ, վոր ցույց է տալիս դրոզոֆիլի սեռական քրոմո-սմի ասրբեր մասների մուտացիայի հաճախականությունը (ըստ Մյուլերի)

Սնելի ավելի ուշ կատարած աշխատանքներն ապացուցեցին, վոր Ռենագինի ճառագայթների ազդեցության տակ մինների մոտ առաջանում են տրանսլոկացիաներ:

Շատ կարճ ժամանակամիջոցում արհեստականորեն մուտացիա առաջացնելը դարձավ մի շարք գեննետիկական հարցեր մշակելու համար, մի կողմից՝ մի նախընտրյալ մեթոդ, իսկ մյուս կողմից՝ հանոգիսացավ գեննետիկայի մի մեծ, նոր բաժինը՝ իր հարուստ գրականությամբ: Մի շարք աշխատություններ նվիրված են այն հարցին, թե ինչ կապ կա մուտացիաների և սենտգենյան ճառագայթների ենթագիտայի միջև: Պարզվեց, վոր առաջ յեկող մուտացիաների քանակն ուղղակի հարաբերական են՝ ողի իոնացման աստիճանին, վոր առաջացնում են ճառագայթները: Ահա թե ինչպես ե աճում սեռի հայ կազմած լեռաշների տոկոսը՝ ունտղենյան ճառագայթների քանակի (գողաների) ավելացումով.

Թանակը ունացվենայան
ժիավորներով

(0 կոնստանտ)

304

673

1215

2186

3038

Սեռի հետ կապված

լեռալների անկառը

0,50


1,67

5,19

8,28

11,47

14,40



Տեսք. 97. Սեռի հետ կապված մուտացիաների բանակի աճուրդը սեղմակնյան ճառագայթների գործակները մեծացնելու հետևանքով

Նկ. 97. Սեռի հետ կապված մուտացիաների բանակի աճուրդը սեղմակնյան ճառագայթների գործակները մեծացնելու հետևանքով

Առաջազրպված և մի նոր պրոբլեմ՝ փոխել մուտացիոն եֆեկտը լրացուցիչ գործակների՝ ծանր մետաղների աղերի, ջերմության և այլ միջացներով։ Ստունդլերը բույսերի վրա իր կատարած փորձերով ցույց տվեց, վոր մուտացիաներն ավելի հաճախակի լեն առաջ գալիս, չեթե սերմերի մեջ թափանցեն ծանր մետաղների աղերը։ Մուտացիոն եփեկոր ահսակեաից վոչ պակաս նշանակություն ունի հենց օրգանիզմի ֆիզիոլոգիական վիճակը։ Պարզվեց, վոր տարբերություն կա ծրագ և հանգստի վիճակում գտնվող սերմերի մուտացիաների միջև, վոր մուտացիան կախում ունի ճառագայթների ազդեցությանը յենթարկված սեռական բջիջների հասունության աստիճանից, հասակից, վոր մուտացիայի վրա ազդում և սովածությունը և այլն։ Գառնվեցին անընդհատ մուտող հատուկ գիներ, այսպես կոչված՝ մուտարիլ գեները Պարզվեց, վոր իրար մերձավոր զանազան տեսակները մուտացիոն տարբեր ունակություն ունեն (համեմատել են զարու, ցորնի զանազան ահսակները) և այլն։

Ունակենի ճառագայթների, իսկ ավելի ուշ՝ նաև ռադիումի ու նրա ճառագայթների կիրառման հետ միասին շարունակում եյին

փնտուել աբուաքին միջավայրի այնպիսի նոր գործոններ, վարանց կիրառմամբ հաւրավոր լիներ աղդել ժառանգական հատկությունների վրա, Վերջին ժամանակներս Գերմանիայում Գոլդմիդտի ու Խոլլոսի և ԽՍՀՄ-ում Ռուկիցիու աշխատություններով ցույց տրվեց բարձր ջերմության ազդեցությունը ժառանգական փոփոխականության վրա Ներգործելով դրոգոֆիլի վորդերի վրա ավելի բարձր ջերմությամբ (87° C), հաջողվեց ժառանգական փոփոխություններ առաջ բերել նրանց հաջորդների դանաղան հատկանիշների մեջ։ Ստացված ար-



Նկ. 98. Աշերի ժառանգական անուբանը բարձրացներ, վորդեր գործել են նենողենի հառագայթների ազդեցությունը յինթարկված մկների սերնդում (ըստ Վասովի և Բագրուի)։

Նկ. 99. Բըդի կարճանաւը անուղենգած մկների սերնդում, Կարճ բուրգը ցույց է արված նկարի սպիտակ մասերում (ըստ Վասովի և Բագրուի)։

դյունքները մեծ չափով տարբերվում եյին այն չպատկերից, վորտավիս եյին նենողենի հառագայթների ազդեցության նկատմամբ կոտարված փորձերը Մինչդեռ նենողենի հառագայթների ազդեցությամբ առաջ եյին գալիս ամեն տիպի մուտացիաներ, ներառյալ նաև լիտալիներ (նույնիսկ պուազելապես դրանք), ավելի բարձր ջերմությունն առաջ եր բերում համեմատաբար սակավաթիվ փոփոխություններ, ըստ այս վերջիններս կրկնվում եյին բազմից Ընդամենք փոփոխություններն իրենք զգալի չափով ավելի թույլ եյին և հաճախ բավականին անկանոն եյին ժառանգվում։ Վերջապես, ջերմության եֆեկտը՝ հակառակ նենողենի հառագայթներին, շատ փոփոխական եւ Մի շաբաթներում բարձր ջերմությունը վոչ մի ազդեցություն չի գործում ժառանգական հատկությունների վրա։

Խոլլոսի աշխատությունը նոր հարց արծարծեց, այսպիս կոչված՝ վարու ուղղություն ունեցող մուտացիաներից հարցը Խոլլոսը, ներ-

գործելով մի շաբթ սերւնդների վրա բարձր ջերմությամբ, իր թեսացել և մինուույն զենի մի շաբթ փոփոխութեան՝ սկսած նրա թռյը ալլելումոր ֆններից մինչև ավելի ուժեղ փոփոխութեանը, այսինքն՝ վորոշ ուղղություն ունեցող մուտացիոն եֆեկտ, հակառակ այն բանի, վոր գիտենք մենք մուտացիաների մասին, այն եւ զենք փոխվում երացապիսի ուղղություններով: Դժբախտաբար ուրիշ հետազոտողներ գեր չեն կրկնել և չեն հաստատել այդ աշխատանքը:

Վերջերա մի շաբթ գիտնականներ հայտարկել են մի հետաքրքրական յերևույթ բույսերի մեջ (տապաջին անդամ Ս. Ս. Նազարյանը): Յերկար տարիներ պահված (հնացած) սերմերը խիստ արտահայտված մուտարիլ հատկություն են ձեռք բերում: Առաջ են զալիս աննորմալություններ քրոմոսոմների մեջ, տրանսլոկացիաներ և այլն, ինչպես այդ տեղի յեւ ունենում թարմ սերմերի մեջ ջերմության կամ սենտիգնան ճառագայթների աղդեցության տակ: Այստեղից կարելի յեւ յեղբակացնել, վոր ծերանալուն զուգընթաց, սերմերի մեջ առաջ են զալիս քիմիական կամ ինչ վոր այլ փոփոխություններ, վորոնք աղդելով քրոմոսոմների և գենների վրա, առաջ են բերում մուտացիաներ:

Ժառանդական հատկությունների վրա ներգործելու նոր գործոններ փնտուելը ներկայումս գեննեսիկայի հաստապ խնդիրներից մեկն եւ Տեսականորեն զա շատ կարենոր եւ, վորովհետեւ հնարավորություն և առաջ ավելի խոր մոտեցում ցուցաբերել գենին և նրա եյությանը: Ոենտգենյան ճառագայթներով ներգործելու աշխատանքն արգեն շատ և նպաստել զենքնետիկայի հիմնական պրոբլեմների մշակմանը: Բայց արհեստականորեն մուտացիա տուաջ բերելը վոչ պակաս նշանակություն կարող և ունենալ նաև գործնական անամնաբաւծության համար:

Արհեստականութեն տռաջ բերված մուտացիաները յեզ անտօնաբաւծությունը: — Գյուղատնտեսական կենդանիների արժեքավոր ցեղեր ստեղծելու համար անհրաժեշտ և ունենալ վորքան կարելի յեւ շատ մուտացիաներ, վորպեսզի հնարավոր լինի ընտրել դրանցից ամենահաջողները Բնականորեն հարց և ծագում, թե չի՞ կարելի արդյուն կիրառել արհեստականորեն մուտացիա տուաջացնելու մեթոդը՝ ոյու-



Նկ. 100. Գլխի լեռականոնորմայությունը, ըեւ վերջինս յնքան և յեկել նաև ստուգիչ խմբում (ըստ Կոտալի և Բագդասի):

զատնտեսական կենդանիների մեջ մասսայաբար մուտացիաներ ստանալու համար: Միանգամայն անվիճակի յի, վոր գյուղատնտեսական կենդանիների գենետիկան այդ ուղին կրոնի, և հավանորեն շատ շուտով: Այդ տեսակետից շատերը մեծագույն հույսեր են դնում ունտգենյան ճառագայթների գործադրման վրա: Արդեն փորձեր են կատարվում համապատասխան չափեր (գողաներ) գտնելու՝ կաթնասուն անստունների վրա ազդեցու համար (վոչխար, ճագար): Սակայն համապատասխան չափը գտնվելուց հետո ևս գեր հեռու կլինենք մեղանհրաժեշտ մուտացիաներն ստանալուց: Ներկայումս ունտգենյան մեթոդի ընդհանուր գնահատականն այն ե, վոր Ռենտգենի ճառագայթների ազդեցության տակ ամենից հաճախ և գեղաքերի մեծագույն մատում առաջ են գալիս կենսունակությունը նվազեցնող մուտացիաներ (լետալներ, քրոմոսոմային աննորմալություններ և ալլն): Թվերի փոխարկելով կարող ենք ասել, վոր այդ նշանակում ե, վոր յեթե մենք հարյուր կենդանիներց կարողանանք ստանալ փոխված, մուտագիտ կրող մի կենդանի, ապա զեղքերի միայն 1 տոկոսում կամ նույնիսկ ավելի քիչ տոկոսում ստացված մուտացիան կլինի վոչ թե լետալ մուտացիա կամ կոպիտ քրոմոսոմային արերացիա, այլ արտաքին և ֆիզիոլոգիական հատկանշի այնպիսի փոփոխություն, վոր հնարավոր և այս կամ այն չափով ոգտագործել գործնականորեն: Այդպիսով, ունտգենյան ճառագայթների նման ներգործման ուժեղ մեթոդ կիրառելիս ևս պետք է մեր տրամադրության տակ ունենանք հազարավոր յենթափորձկենդանիներ, ոխիսկ անելով ստանալ նրանցից մի քանի տասնյակ լետալներ՝ և միայն յեղակի կենդանիներ՝ մեղ ոգտակար այնպիսի մուտացիաներով, վորոնք կնպաստեն բրդաւզության, մասավության, կաթնատվության ուժեղացմանը կամ գույնի փոփոխանը, և այլն:

Մեր սասածից հետեւում ե, վոր նախքան այս կամ այն մեթոդը գործնական կյանքի բնագավառը փոխադրելը, անհրաժեշտ ե լով պարզել նրա յուրահատկությունը: Դրա համար անհրաժեշտ ե ընդարձակ և խորը փորձեր կատարել գյուղատնտեսական զանազան կենդանիների մեջ արհեստականորեն մուտացիաներ առաջ բերելու ուղղությամբ: Լաբորատորիաներում լայն չափով ե կիրառվում Ունենալի ճառագայթներով մուտացիաներ ստանալու մեթոդը: Դրանով իսկ հող և պատրաստվում այդ մեթոդները գյուղատնտեսական պայմաններում կիրառելու համար: Մինչեւ այժմ այդ մեթոդը լայնորեն չի գործադրվում գլխավորապես այն պատճառով, վոր նա կապված ե բազմաթիվ լիտալ փոփոխությունների տրանսլոկացիաների և այլ բացասական շեղումների գոյացման հետ: Խնչ վերաբերում ե բարձր ջերմության ազդեցությանը, ապա այդ մեթոդը կիրառվելու գեղքում մուտացիաները մեծ մասամբ թույլ են լինում, ալինքն ուժեղ չեն ազդում:

Հենուունակութիւնն վրաւ Սակայն տեսականորեն այդ մեթոդը դեռևս անբավարար և մշակված և գիտահետազոտական մնջ աշխատանք և պահանջում:

Այդպիսով պետք է ընդունել, վոր զենետիկայի տրամադրության տակ գտնվող ներգործման յիշանակները բավականաչափ շատ մինչուաներ ունեն: Դրանից, ինարկե, չի հնարեւմ, վոր պետք է հոռեան լինել զյուզատանտեսական կենդանիների մնջ գործնական նպատակներով մուտացիաներ առաջացնելու հնարավորության նկատմամբ: Այդ յիրկու մեթոդներն եւ (Ընհնտգեն, ջերմություն) կարելի յի փոխադրել խոշոր կենդանիների վրա (կով, վոչխար, խող), սակայն հիշյալ մեթոդների յուրահատուկ բնույթը, ինչպես և դրանցից իերկորդի (ջերմության ներգործման) բավականաչափ ուսումնասիրված չլինելը մեզ հարկադրում են առայժմ չտարգիւլ նրանց մասսայական կիրառմամբ: Անառնարուծության ինստիտուտը (Ռուկիցկին և նրա աշխատակիցները) ներկայում փորձեր և կատարում վոչխարների ու ճաղարների մնջ արհեստականորեն մուտացիաներ առաջացնելու ուղղությամբ, ներգործելով սպերմայի վրա Ընհնտգենի ճառագայթներով:

Թեորետիկ գենետիկների միտքն ուղղված է արհեստականորեն մուտացիաների գոյացման նոր մեթոդներ գտնելու կողմբ: Այն, ինչ վոր հայտնի յի այժմ արհեստականորեն մուտացիաներ առաջացնելու նկատմամբ, հնարավորություն և աւլիս մի քանի եյտական հետեւթյուններ անել: Բայ յերեսութիւն, գոյություն ունեցող և հնարավոր մեթոդներից յուրաքանչյուրն ունի բնորոշ, միմիայն իրեն հատուկ առանձնահատկություններ՝ ժառանգական հատկությունների վրա ներգործելու և եփեկտ առաջացնելու իմաստով: Այդ ուղղությամբ անհրաժեշտ և նորանոր հետազոտություններ կատարել: Դրանց մշակմանը դուքը նիմաց կը պացին նոր, ավելի լայն հեռանկարներ՝ խնամանարուծության մնջ արհեստականորեն մուտացիաներ առաջացնելու մեթոդի կիրառման համար:

Զեսքերեռվի հատկանիօնների ժառանգումը: —Միջավայրի կողմից զենի վրա առջելաւ յերեք հնարավորաւրյաւն: Արհեստականորեն մուտացիաներ առաջացնելու վերջին տարիների փաստական տվյալները ցույց են տալիս, վոր արտաքին միջավայրի գործոններն ընդունակ են աղղելու ժառանգական հատկությունների վրա, ընդունակ են դրանք փոխելու: Սակայն այն հարցը, թե ինչպես և աղղում միջավայրը ժառանգական փոփոխության վրա, բնավ չպետք և շփոթել այսպես կոչված՝ ձեռքբերովի հատկանիշների ժառանգման հարցի հատ դրանք միանգամայն տարբեր յերկու պրոբլեմներ են: Միջավայրը կարող է առաջացնել թե ժառանգական և թե վոչ ժառանգական

ժողովությունները։ Ներկայումս գենետիկակրիս վոչ զոք չի տարածում, զոր հնարավոր և մուտացիաներ ստանալ արտաքին պայմանների ներգործմամբ, և այդ ուղղությամբ քիչ աշխատանք չի կատարված։ Բայց ժամանակակից գենետիկան կտրականապես ժխտվում է ձեռք բերված հատկանիշների ժառանգումը և սխալ և զտնում հենց ինքը՝ պրոբլեմը։



Նկ. 101. Սոմային ինգուլցիայի (Ա), զուգանեռ ինգուլցիայի (Բ) և սեռական բջիջների վրա պատկեր (Ը) պեմը

Կարելի յե պատկերացնել միջավայրի կողմից որդանիքմի վրա ազդելու և այդ ազդեցությունը ժառանգաբար հաղորդելու յերեք հնարավորություն։

Առաջին հնարավոր գեպքը. միջավայրն ազդում է մարմինի բջիջների, սոմային բջիջների վրա, բայց չի ազդում սեռական բջիջների վրա։ Այդպիսի փոփոխությունների ժառանգաբար անցնելը հասկանալու համար պետք է ընդունենք, զոր սեռական բջիջների վրա ազդում են (ինգուլցիա) սոմային (մարմինի) բջիջները։ Այդպիսի յենթադրյալ հնարավորությունը կոչվում է սոմային ինգուլցիա։ Յեթե ժառանգաբար հաղորդվելին վարդության, որինակ, մարզանքի արդյունքները կամ անհատական կյանքի ընթացքում մշակված պայմանական ռեֆլեքսները, մենք կունենայինք սոմային ինգուլցիայի տիպիկ որինակը։ Ձիու վոտների մկաններն ուժեղանում են մարզանքի ազդեցությամբ։ Այդ ուժեղացումը մկաններից կարող եր հաղորդվել ժառանգական նյութի՝ քրոմոսոմների համապատասխան տեղը, այնուել համապատասխան («աղեկված») փոփոխության յենթարկել մկանի վրա ազդող գենը, և դրա շնորհիվ կրտացվեր սերունդ՝ աղեկված ձևով փոփոխած մկաններով։ Զավակները կնմանվելին միջավայրի ազդեցությամբ փոխված ծնողներին։ Յեթե այդպիսի յերևույթ տեղի ունենար (վորն իրոք տեղի չունի), մենք կունենայինք ձեռք բերված հատկանշիներով։ Հաղորդումը ժառանգաբար

Յերկրող դեպքը. յենթագրենք, զոր միջավայրն ազդում է միաժամանակ և սոմային, և սեռական բջիջների վրա, աղեկված փոփոխություններ առաջացնելով թե առաջների, թե մյուսների մեջ։ Որինակ՝ յեթե տաքացումն ավելացնում է կենդանու կաշվի պիզմենտացիան և միաժամանակ աղեկված սեռական բջիջների վրա՝ փոփոխություններ և առաջացնում պիզմենտացիայի վրա ներգործող գե-

ներում, այն ժամանակ հաջորդները նոուխցան պիզմենտացված կլի-
նեն, գորքան և նրանց ծնողները Այդպիսի աղջեցությունը կռչվում
և զուգահեռ ինդուկցիա:

Վերջապես, իրրուղ հնարավոր գեպքը միջավայրը ներգործում և
սեռական բջիջների վրա, ձևափոխելով նրանց մեջ գտնվող զեները,
իսկ սոմային բջիջներին կամ ամենեին չի շոշափում արտաքին
միջավայրի ներգործումը, կամ արդ ներգործումը բոլորովին այլ ադ-
գեցություն և գործում (վոչ աղեկված): Այդ յերրորդ գեպքում հա-
ջորդները, չորրորդիվ այն հանդամանքի, վոր նրանց ծնողների սեռա-
կան բջիջների գեները փոխվել են, ժառանգաբար փոխված կլինեն և
ծնողներից տարբեր Այստեղ անհատական կյանքում ձեռք բերված
հատկանիշների ժառանգման մասին խոսք չի կարող լինել, վորովհե-
տեւ ծնողներն այդ նոր հատկանիշները չեն ստանում:

Առաջին յերկու գեպքը՝ զուգահեռ և սոմային ինդուկցիան, հան-
դիսանում են կյանքում ձեռք բերված հատկանիշների ժառանգական
հաջորդման գեպքեր, վորոնք ներկայումս կատարելապես ժըխտ-
վում են:


Այդ յերկու գեպքի համար ել ընորոշ և այն, վոր ընդունվում և
սեռական բջիջներում և մարմնում տեղի ունեցող փոփոխությունների
աղեկվատությունը (նույնությունը): Իսկ վերօնիշյալ վերջին հնարա-
վորությունը այն, վոր սեռական բջիջներում տեղի ունեցող փոփո-
խություններն աղեկվատ չեն մարմնում տառաջացող փոփություն-
ներին, —սովորական և հանրաճանաչ այն ուղին ե, վորով արտաքին
միջավայրը ներգործում և սեռական բջիջների վրա և առաջ և բերում
ժառանգական նոր փոփոխություններ:

Զեռք բերված հատկանիշների ժառանգման վերաբերյալ կատար-
ված փարձեր.— Զնայած վոր ժամանակակից գենեստիկայում ձեռք բեր-
ված հատկանիշների ժառանգման հարցը լուծված և բացասականընթեն,
զոտաեխնիկների լայն շրջաններում մինչեւ այժմ ել նախիվ հավատ և
տարածված, թե ձեռք բերված հատկանիշները ժառանգվում են (ավե-
լի ճիշտ կլինի հատկապես հավատ անվանել այդ վերաբերմունքը, վոր
հավասարապես հատուկ և թե մեր շատ հեռավոր նախահայրերին, և
թե վերջին ժամանակների բազմաթիվ եմպիրիկներին): Ուստի
որեւէ և համաստակի կանգ առնել ձեռք բերված հատկանիշների
ժառանգման ոգտին խոսող այն «փաստերի» վրա, վոր բերում են
սովորաբար նրա պաշտպանները:

Այդ պրոբլեմը լուծելու համար շատ փորձեր են արվել, սակայն
չկտ վոչ մի փաստ, վոր համոզիչ կերպով վկայեր, թե ժառանգումը
առելի յեւ ունենում սոմային կամ զուգահեռ ինդուկցիայի տիպով և,

ընդհակառակը, կան հակառակ նշանակություն ունեցող հսկայական թվով փաստեր:

Թագմաթիվ փորձեր են կատարվել պատվաստելու մի անհատի սեռական տարրերը նախապես ամլած (վորձատած) և մի քանի այլ հատկանիշներ ունեցող այլ անհատին, վորպեսզի հնարավոր լինի ապացուցել սոմային հատկանիշների աղջեցությունն այն հաջորդների վրա, վորոնք առաջ են յեկել առաջին անհատից պատվաստված սեռական բջիջներից:



Նկ. 102. Կեսութիւնների փորձերի սքեմը: Ալլինոս մայր ծովախողիկը, վորէն պատվաստել ելին սև եղերի յերկու ձվարան, արամախոչ վել եր ալբինոս արվի հետ և աղել եր և սերունդ (Կըռուց)

Կլասը *Bombix dispar*-ի մետաքսարեր թիթեռի գեղին և նորմալ թրթուրների գոնադները (սեռական գեղձերը) պատվաստել ե ուժ թրթուրներին: Այդպիսով ստացված թիթեռնիշների սև եղերը, վորոնք ունեյին ցեղին կամ նորմալ սեռական գեղձեր, արամախաչվեցին ողբերացիսյի չենթարկված նորմալ արուների հետ: Յեթե տեղի ունենար սումային ինգուլցիա, ապա սև թրթուրից զարգացած թիթեռնիշների մարմինը պետք ե ներզործեր պատվաստված սեռական գեղձերի վրա և աղջիկ թրթուրների հաջորդների վրա: Սակայն այդ արամախաչումով ստացված 400 թրթուրներից վոչ մեկը սև չեր: Այդ ցույց ե տալիս, վոր մարմին սև գենոտիպը սև չի դարձել պատվաստված դոնադների ցեղին և նորմալ գենոտիպերը, այսինքն՝ սոմային բնդուկցիա տեղի չի ունեցել:

Կլասի փորձերից 18 տարի առաջ նույնպիսի փորձեր են արել Կեսութիւնների և Ֆիլիպոս (նկ. 102): Հեռացվեց հինգ ամսական ալբինոս ծովախողի ձախ ձվարանը և նույն տեղի մոտ պատվաստվեց մոտ մի ամսական գուռու, սև ծովախողի ձվարանը Մի շարթից կատարվեց:

յերկրորդ ռովերացիան՝ հեռացվեց ալրինոսի յերկրորդ՝ աչ ձվարանը և նրա տեղ պատվաստվեց մի այլ, սև ծովախոռնի ձվարանը: Զվարանները կատարելապես բռնեցին և աճեցին: Սև ձվարանները ունեցող այդ սպիտակ ծովախոռնը մի քանի անգամ տքամախաչէից ալրինոս արվի հետ, վորից ունեցավ յերեք կենդանի ձագ և յերեք թերանամ ձագ (նա մահացավ ծննդաբերությունից առաջ՝ թաքերի բորբոքումից): Նրանք բոլորն ել սև ելին, եղ ձագերից մեկին արամախաչեցին իր ալրինոս հոր հետ, և այդպիսով ստացվեցին ալրինոս ու սև ձագերը: Ստացվեցին նույն արդյունքները, վորոնք պետք եր սպասել իսկական սև եղն ալրինոսի հետ արամախաչելուց իսկ կեսը և Ֆիլիպոր արամախաչել ելին ալրինոս եղ ծովախոռնը, բայց միայն «սև» ձվարաններ ունեցավը Դրանից հետեւում և, վոր սև եղ ծովախոռնի ձվարանն իր ժառանգական հատկությունները չի փոխել ալրինոսի ժամանում դունվելուց: Այդ ձվարանի սեռական բջիջներում սև դույնի զենքը, մարմնային ալրինոսային բջիջների աղղեցությամբ, ալրինոսային դույնի զենք չդարձավ:

Մազնեւսի փորձերը ճագարների և Գետրի փորձերը հավերի վրա իրը թե դրական արդյունքներ տվին: Սակայն այժմ այդ փորձերը մեծ տարակուսանք են հարուցում և բոլորովին այլ բացատրություն են ստանում, իսկ Գետբնապերտի ու Եսուցի կողմից հավերի վրա և Կալրենսի կողմից բաղերի վրա կատարված փորձերը կատարելապես հաստատում են սոմային ինդուկցիայի բացակայությունը:

Մի շարք տարիների ընթացքում սոմային և դուզահեռ աղղեցության լավագույն ապացույցն ելին համարվում կամմերերի փորձերը:

Կամմերերը փորձեց փոխել սալամանդրերի բազմացման յեղաւնակը, փոխադրելով նրանց փոփոխված միջավայրի կա յերկու տեսակ յելքրապական սալամանդրը: առաջին տեսակն եք քավոր սալամանդրը: նա տալիս է 30—40 ձագ, վորոնք ապրում են ջրում մինչև իրենց խոփկները (քիմուխաները) կորցնելը և ապա անցնում են ցամաք: Յերկրորդ տեսակն ես սև սալամանդրը: նա տալիս եմ միայն յերկու ձագ, վորոնք իրենց ծնված որերից ցամաքային կենդանիներ են: Կամմերերը ցամաքային սև սալամանդրերին պահում եր այնպիսի պայմանաներում, վոր նրանք աստիճանաբար վարժվում ելին բարձր ջերմության ու խոնավության, և զտավ, վոր այդ պայմաններում ծնվող ձագերի թիվը ավելանում են յերկսից հասնում են յերեքի և նույնիսկ չորսի են, բացի դրանից, նրանք ծնվում ելին պակաս դարձացած, զեռ խոփկներով: Ընդունին իրը թե ջերմության և խոնավության այլպիսի պայմաններում դաստիարակված սալամանդրերը տալիս ելին ավելի քիչ հասունացած հաջորդները, վորոնք նույնպես ունելին ավե-

լի շատ ձագեր տալու տենդենց: Արդպիսով, ըստ Կամմերերի, սև սալա-
մանդրը ձեռք և բերում հաջորդներին հաղորդված սովորություններ և
բժագործության գծեր: Յեզ, ընդհակառակը՝ բժագործ սալամանդրերին
յենթարկելով ցրտի և չըրության՝ Կամմերերը գտել ե, վոր նրանք
երբ թե տալիս եյին ավելի սակավաթիվ ձագեր՝ զարգացման ավե-
լի ուշ ասականներում: Այդ արդյունքները Կամմերերը բացատրել եր
դուքանեռ ինդուկցիայով:

Սակայն հնարավոր ե, վոր ամեն մի սալամանդրը ընդունակ է
բազմանալու այս կամ այն լեզանակով, նայած շրջապատող միջավար-
ուրի ջերմաստիճանին, և նրանց մոտ վոչ մի նոր հատկություն չեր ա-
ռաջանում: Բացի դրանից, ստացվել եր փոխված ձևով միայն մի
սերունդ, վորն ինքը կարող եր ազդված լինել գոյսթյան փոխված
պայմաններից: Հարկավոր եր հետազոտել թե փոխված բնադրը
կպահպանվի՞ արդյոք հաջորդ սերունդներում:

Կամմերերի այդ փորձերը, վորոնց նպատական եր փոխել նույն
բժագործ սալամանդրերի գույնը գետնի դեղին կամ սև գունի համեմատ,
յենթարկվեցին մանրազնին ստուգման: Կամմերերն աշխատում եր
ապացուցել վոր սև հատակի վրա դաստիարակված սալամանդրերն
իրենք սեացել են և այդ նոր ձեռք բերված գույնը հաղորդել են
իրենց սերունդներին: Խսկ դեղին ֆոնի վրա սալամանդրերը գեղնել են
և նրանց հաջորդները նույնպես ավելի դեղին են յեղել Այդ փորձերը
մի շարք տարակուսանքներ առաջացրին: մանավանդ վոր Կամմերերի
հազարդագրություններում համարյա վոչինչ չի ասված յելակետա-
յին նյութի հատկությունների և փոփոխականության մասին: Ներբար
կրկնեց այդ փորձերը, ճշաելով մեթոդիկան: Նա սև և դեղին ֆոնի
վրա դաստիարակեց վոչ թե հասակն առած սալմանդրեր, այլ նրանց
ձագերը: Աև ֆոնի վրա մեծացած ձագերից իրոք վոր զարգանում
եյին ավելի սև սալամանդրեր, խսկ դեղին ֆոնի վրա մեծացածներից՝
ավելի դեղին սալամանդրեր: Բայց հետագա զարգացման ընթացքում,
չնայած վոր սալամանդրերը գտնվում եյին համապատասխան ֆոնի
վրա, նրանց գույնը մոտենում եր բնականին: Դրա հիման վրա
Ներբար հանգում և այն լեզրակացության, վոր սալամանդրի գույնի
փոփոխումը վոչ միայն ժառանգական չի, այլև ձագը հասակն առնե-
լուց հետո ստանում ե իր նորմալ գույնը: Հավանորեն Կամմերերի
փորձերը կատարվել են գենետիկական տեսակետից վոչ բավականա-
չափ ստուգված նյութի վրա, և այդ պատճառով նրանց արդյունք-
ներն ապացուցիչ չեն: 1919 թվականին Հերբաթի առաջին աշխատու-
թյունը լույս տեսնելուց հետո մի քանի գիտնականներ խորհրդական-
եյին արել այն կապակցությամբ; վոր Հերբաթի մոտ փոխվել եր փոր-
ձի նույնիսկ մեթոդիկան: Սակայն Հերբաթ կրկնեց իր փորձերը և

1924 թվականին լույս ընծայեց մի նոր աշխատություն, վորտեղ հաստառում եր իր ստացած նախկին տվյալները:

Տարակույս հարուցեցին նաև գողոշի վրա Կամմերերի կտարած փորձերը: Բարձրացնելով ջերմաստիճանը, Կամմերերը հարկադրում եր գողոշներին ձու ածել վոչ թե ցամաքում, այլ ջրում: Ըստ Կամմերերի, այդ փոփոխված բնազդը բավականին արագորեն ամրանում է վոչ միայն այդ նույն կենդանիների մեջ, այլև նրանց սերունդների մեջ, վորոնք արդեն նորմալ պայմաններում, առանց վորեւ արտաքին ներգործման, ուղղակի ջրի մեջ և յին ձու ածում: Իր թե փոխվում է նաև արվի բնազդը, ինչպես և բնդմանիրման յեղանակը, և այդ կապակցությամբ արուների մատների վրա զարգանում է մի կոշտուկ, վոր հաղորդվում և ժառանգաբար:

Այդ գեղքը կարելի յե բացատրել նույն յերեւյթով, վորով բացատրեցինք մենք սալամանդրի բնազդի փոփոխման փորձը: Այս տեղ ևս բանը նոր բնազդ գոլանալը չե, այլ այն հին բնազդի դրսերումը, վոր հատուկ և յեղել գողոշի նախահայրերին, ինչպես և ուղղակի ջրում ձու ածող ամֆիբիաների մեծ մասին: Այդ նկատառումը զրկում և փորձը պիտական վորեւ նշանակությունից, վորովնետե նախահայր անհրաժեշտ և ուսումնասիրել տվյալ բնազդի փոփոխականությունը գողոշի ասմաններում: Սակայն ետք մերեւի այդ փորձը պետք ե հիշատակել այն պատճառով, վոր դրա հակագումած և մի վազրերգական գեղք՝ գիտության պատմության մեջ: 1926 թվականին ամերիկյան մի ժողովնալում լույս տեսավ Նորիլ: մի հոգվածը Այդ հոգվածում նօրիլ հայտարարեց, թե նա հետազոտել և փորձի յենթարկված արու գողոշը և գտել ե, վոր այն տեղը, վորտեղ գտնվում է կոշտուկը, ներսութիված և տուշ, վորը սիսալ կերպով այնպիսի աղավորություն եր թողնում, թե կոշտուկի տեղը ուե գույն ունի Կամմերերը չղիմացավ, յերբ նրան մեղադրեցին կեղծարարության մեջ, և ինքնասպանություն գործեց: Այդ ժանր գեղքը, վոր արդյունք եր մի անթույլարելի հալածանքի՝ ուղղված ձախ, ուղիղ կող գաղափարներով համակված զիտնականի զեմ, ինչպիսին եր Պ. Կամմերերը, վորոց չափով զժվարացնում և նրա աշխատությունների ճիշտ գեղանատումը: Ճիշտ չե անջատել մեր անձնական համական գեղքի այդ անկեղծ զիտնականն ու համոզված մատերիալիստը (վորն իր մահից քիչ առաջ ԽՍՀՄ եր փոխազդրվել աշխատելու) նրա պիտական հետեւությունների ճշտությունը գնահատելուց: Այնուամենայնիվ պետք ե մատնանշել վոր Կամմերերի փորձերը կտ արվել են փորձանյութի առանց գենետիկական բավականաչափ ստուգման և համոզիչ չեն նրանց համար, ովքեր լրջորեն են զբաղվում ժառանգականության հարցերով:

Զեսմբերովի հատկանիօմերի «Ժառանգումը» հակառակ և զեմեն-
սիկսկան հիմնական պատկերացումներին.—Ճշշտն ասած՝ կարելի յեթ
հատուկ փորձեր չանել սոմային և զուգահեռ ինդուկցիայի հարցը
լուծելու համար։ Բանն այն է, վոր կյանքում ձեռք բերված վորոշ հատ-
կանիշների վոչ ժառանգումն ապացուցում են կենդանիների և բույսերի
վրա կատարված բոլոր այն բաղմաթիվ գենետիկական փորձերը, վորոնը
ներկայում արգեն ընդդրկում են միլիոնավոր անհատներ։ Առաջին-
ապացույցն այն է, վոր մոդիֆիկացիան չի ժառանգվում։ Ցուրաքան-
չյուր մոդիֆիկացիա հանդիսանում է մի շեղում միջին մեծությունից,
վոր տեղի յե ունեցել կյանքի ընթացքում։ Այդ պատճառով, մոդի-
ֆիկացիայի ժառանգման հարցը հանդիսանում է նույն այդ ձեռք-
բերովի հատկանիշների ժառանգման հարցը։ Այժմ, Խանամսենի աշխա-
տություններից հետո, վորոնց մասին խոսվեց առաջին գլխում, վոչ-
վոք չի ժառանգում, վոր մոդիֆիկացիաները հաջորդներին չեն հաղորդ-
վում։ Կեսարն և Ֆրիթապը կարող եյին փորձեր չանել ապացուցելու հա-
մար, վոր մարմնի սև գույնի գենն սպիտակ գույնի գեն չի դառնում։
Եթե նա գտնվի «Պատիտակ» մարմնում։ Դրա համար բավական է դի-
մել ճեղքման կանոնին։ Հետերոպիգոտային բազմաթիվ կենդանիներ և-
բռայսեր են անցել անասնաբուծի, բուսաբուծի և, վերջապիս, փորձա-
րար գենետիկի ձեռքից։ Յեկ բոլոր գեղքերում ել նկատվել է, վոր
ծնողներից ստացված ժառանգական տարրերը բաշխվում են հաջորդ-
ների սեռական բջիջներում։ առանց վորեւ ազդեցություն գործում են նրանց վրա։
Յենթագրենք, վոր մենք սև ցուլը արամախչում ենք կարմիր-
կովի հետ, չիբբիդը սև կլինի։ Յեթե այդպիսի հիբրիդը արամախա-
չենք հոմոզիգոտային կարմիր ձեփ հետ, կստացվեն սև և կարմիր հա-
ջորդներ։ 1:1 հարաբերությամբ։ Այդ հարաբերությունը հասկանալի
կլինի, յեթե ընդունենք, վոր հիբբիդի սեռական բջիջների կես մասը
պարունակում է սև գույնը վորոշող գեն, իսկ մյուս կեսը՝ կարմիր
գույնը վորոշող գեն։ Այլ խոսքով՝ կարմիր գույնի գենը հիբբիդային
սև կենդանու մեջ չի առդպիել սև գույնի գենից։

Յեղիքավորության գենը կրում է հետերոպիգոտային անեղ-
ջյուր կովը, սակայն դրանից ավյալ կովի հաջորդների յեղիքուրները
չեն նվազում։

Մեր բոլոր ասածները ցույց են տալիս, վոր սոմային և զուգա-
հեռ ինդուկցիայի նկատմամբ գոյություն ունեցող պատկերացումներն
անհամատեղելի յեն գենետիկայի հետ Գենետիկան, ընդունելով մի-
ջավայրի ազդեցությունը գեների վրա՝ ժիտում և միջավայրի աղեկ-
վառ ազդեցությունը սոմայի և սեռական բջիջների վրա։

Սոմային և զուգահեռ ինդուկցիայի մեր պատկերացը մեխա-

Նիդմը հակառառում և արդի այն բոլոր պատկերացումներին, վոր ունենք
մենք քրոմոսոմների, վորպես ժառանգական հատկությունները կրող-
ների մասին, դենի և հատկանշի փոխարարերության մասին և
այլն:

Քրոմոսոմային թեորիան, վորի վրա հիմնված և ժամանակակից
զենեաֆիկան, հաստատված փաստ և ըստ սոմային ինգուլցիայի
զրույթի, պիոնք և ընդունել, վոր մարմինի յուրաքանչյուր մասը, հյուս-
վածքը կամ որդանք նվազագույն չափով անդամ փոխվելիս տալիս և
յուրատեսակ ազնատներ, վորոնք հազորդվում են սեռական ըջիչներին
և ընդունակ են ներգործելու քրոմոսոմի վորոց, չափազանց փոքրիկ
մասի՝ այդ հատկանիշը վորոշող մի կամ մի քանի գենների վրա: Յե-
թե ո, որինակի, արտաքին միջավայրի աղղեցությամբ կը կնապատիկ մե-
ծանում և կովի կուրծը, զրա հետևանքը պետք է լինեն այնպիսի պրո-
ցեսներ, վորոնք փոփոխություններ կարաչացնեն համապատասխան
քրոմոսոմների հատկապես կրծի մեծությունը վորոշող գեններում: Ընդ-
ոմին գենների փոփոխումն անողայման պետք և ընթանա կրծի մեծաց-
ման, այլ վոչ թե փոքրացման ուղղությամբ և կատարվի այնպես,
վոր հաջորդների կրծի չափը համապատասխանի ծնողի ունեցածին:

Մի քանի հեղինակներ (Սերեբրովսկի, Ազու և այլք) ճիշտ են
ձաւնանշնում, վոր մարմառում և սեռական ըջիչների գեններում տեղի
ունեցող փոփոխությունների այդպիսի աղեկվածություն ընդունելով՝
արամարտնորեն ողեաք և հանգենք սկզբնական նպատակահարմարու-
թյան գաղափարին, միտերկայի:

Գուգանես ինգուլցիայի ընդունումը հիմնված և նույնազիսի աղեկ-
վածության վրա: Դրա համաձայն պատրաստի, գիֆերենցված սոմա-
յին ըջիչներում և միակ սաղմային ըջիթի գեններում կատարվող փո-
փոխությունները գուգանես են և իրար համապատասխան: Այդ կարելի
յի բացարել միմիշայն հրաշքով:

Լամարկիուների սեռական սխալները. — Զեռքբերովի հատկու-
թյունների ժառանգման ուսմունքը հանդիսանում և այսպես կոչված՝
լամարկիոմի հիմնական սխալը, մի ուսմունք, վոր որ զանիղմերի
և վորուցիան բացարում և արտաքին միջավայրի դործոնների ուղղա-
կի աղղեցությամբ: Լամարկիստների տեսական հիմնական սխալն այն
է, վոր նրանք չեն ընդունում արտաքին միջավայրի աղղեցության
վորակառես տարբեր ձեւները: Լամարկիստներն ընդունում են, վոր ար-
տաքին միջավայրից գեննուախզի ստացած աղղեցությունը նույն շար-
ժուով հազորդվում և նաև գեննուախզին, ընդվորում բոլորովին ան-
տեսում են սեռական ըջիչների վորակական եյությունը: Աղղեցու-
թյունների մեծ մասը, վորոնք միանգամայն բավական են սոման
փոխելու համար, գենների վրա աղղելիս ի վիճակի չեն փոխելու նրանց

բնությունը նըւ իսկ այն ազգեցությունները, վորոնք բավականաչափ ուժեղ են գենի բնությունը փոխելու համար, այդ փոփոխումը պետք է կատարեն այլ կերպ, վորչ այնպես, ինչպես ֆենոտիպում:

Չու զանեռ ինդուկցիան պահանջում ե, վոր վորակապես տարբեր միջավալքերի վրա կատարվող միատեսակ ներգործումը գրսնորվի կատարելապես միատեսակի Բալց իրոք, որինակ, ունտգենյան ձառագայթները, ներգործելով զրոյնֆիլի վրա՝ թափանցում են մինչև քրոմոսոմները և փոփոխությունների յեն յենթարկում զեները, իսկ ֆենոտիպում այդ դեպքում ստացվում են բոլորովին տարբեր փոփոխությունները, վորոնք վոչ մի ընդհանուր կետ չունեն հաջորդների հատկանի իշների մեջ հետազայում տեղի ունեցող փոփոխությունների հետ, ՅԵՎ ծնողների մեջ, և՛ հաջորդների մեջ արտաքուստ միատեսակ փոփոխություն լինելու դեպքում (որինակ՝ ծնողի աչքում գոյացալ սպիտակ բիծ, իսկ հաջորդի աչքերն սպիտակ դուրս յեկան), մենք տեսնում ենք բոլորովին պատահական զուգադիպություն: Այդպիսի պատահական զուգադիպության դեպքեր են դիմել Գոլդմիդը և այս դրբի հեղինակը, յերբ ծելսիումի 37 աստիճանի ջերմության ներգործան յենթարկելով զրոյնֆիլի վորդեր՝ բազմաթիվ փոփոխություններ ստացան նրանցից առաջացած ճանճերում: Ճանճերից մի քանի սիսը փոփոխություններ եյին տալիս իրենց սերունդների մեջ, ընդուգորում առաջ յեկած փոփոխությունները յերբեմն նման եյին այն փոփոխություններին, վորոնք առաջ յեյին գալիս ծնողների մոտ: Այդ բայցարգում ե սոսկ պատահական արտաքին նմանությամբ¹⁾:

Սոման յեկ սեռական քիչները Գենոտիպ յեկ Ֆենոտիպ: — Գենետիկան, վանելով զուգահեռ ու սոմային ինդուկցիայի լամարկիստական պատկերացումները՝ յերբեք չկետք և ժխտի, վոր սոման կարող է ներգործել գեների վրա: ԶԵ վոր սաղմային ուղղու գոյություն ունենալը, վորի մասին խոսեցինք յերկրորդ գլխում, չի նշանակում, թե սեռական ըջիշները բացարձակապես սահմանագծված են ամբողջ աշխարհից: Միջավայրն ազդում ե որդանիզմի վրա և մասնավորապես

1) Լամարկիզմի ուժիք որինակն է մինչև այժմ ել տարածված այն հավատը, թե նոր եզրի առաջացությունները կարող են ազգել արգանդում զանգող ձագերի վրա: Կարանց մարտիք կառուցվածքում առաջ բերել մոր ապրած տպավորություններին համապատասխան փոփոխություններ: Ինարկե, վոչվոց չի ժխտում, վոր սոգանիզմի փիզիոգիտական վիճակն ազդում է սազմի զարգացման վրա: Սակայն վոչվոց համապատասխան մորթություն չի կարող լինել ձնգող ձագի և մոր ապրած տպավորությունների մեջև: Կարմիր կովերի համ տեսած կովի տեսողական տպավորությունը չի կարող համապատասխանընքն, ազեկզատ կերպով ազգել զարգացող հօրթի վրա, առաջ բերելով նրանում մորթու կարմիր զույն, յեթե նա ունի զենոտիպ ունի: Այդ հավատի հետքը կազմող ազեկվատության զարգափարը նույին ե, վորը նառուկ և լամարկիզմին:

սեռական բջիջների վրա, չնայած, վոր նրանք շատ զդալի, թեպետ և Հարաբերական, կայունություն ունեն։

Վերը մենք արգեն քննել ենք այն ներդորժումները, վորոնցով կարելի յե փոխել գեները։ Սեռական բջիջների համար նրանց ըրջապատող մարմինն արտաքին միջավայր է, թեպետ ամբողջ որգանիզմի նկատմամբ այդ միջավայրը ներքին կլինիֆ. Որգանիզմի մարմինը, ինչպես և ջերմաստիճանը, հառագայթներըն այլն, նմանապես կարող են ազդել գեների վրա և փոխել նրանց Երականը միայն ներդորժման ուժու ու նրա բնույթն է։ Սեռական բջիջներն այնքան վարժվել են իրենց ըրջապատող մարմինի ազդեցության սովորական հոսանքներին, վոր ստեղծվել են նրանց կարծես մշտականությունը, «իմունիտետը»։ Սերկայն վորոշ պայմաններում մարմինի ազդեցություններից մի քանիսն ընդունակ են փոխելու կամ կործանելու այս կամ այն գեները։ Հարկավ, գեների «պատասխանը» ներդորժմանը վոչ մի չափով չի համապատասխանում մարմինում տեղի ունեցած այն փոփոխությանը, վորի հետեւնքն է յեղել այդ ներդորժումը, վորովհետեւ սեռական բջիջը մարմինի բոլոր փոփոխություններն արտացոլող մի հայելի չե, այնպես վոր ալդ ազդեցության ընդունումն վորեն յելք չի ստեղծում լամարկիզմի համար։

Ժամանակակից գենետիկան յեվ գենի անփոփխականության գաղափարը։ —Մինչեւ վերջին ժամանակներս գենետիկների մեջ կար բավականին ուժեղ մի խմբակ, վորը պնդում եր, թե գենը մշտական և և անփոփխ։ Այդ հոսանքը, գեների անփոփխականության թեորիան ստեղծող Լոսովի ազգանունով, կոչվում է լոսովականօւրյուն։

Հստ Լոսովի, անփոփխ գեները միմիկայն կոմբինվում, համակրցվում են, և այդ և եվոլուցիայի ամբողջ պրոցեսը՝ կոմբինատիվ փոփոխականությունն իր նշանականությունն ունի եվոլուցիայում (գրա մասին մենք խոսելու յենք հաջորդ զյառում), սակայն այդ համարել եվոլուցիայի եյությունը՝ նշանակում և ժխտել եվոլուցիան վորպես նորի ստեղծման պրոցես։ Լոտուիականները, ժխտելով գեների գոյանալը՝ կանգնում են հակապատմական և հակաելուլուցիոն տեսակետի վրա։ Ժամանակակից գենետիկայի փաստերը բացահայտորեն հակառակ են լոտուիականությանը։

Ամենայն նրբության հասած ժառանգականության ուսմունքը, Մորգանի գարոցի մացրած պատկերացումների ամենաբարդ ցանցը, վոր իր խորությամբ համեմատում են ժամանակակից ֆիզիկայի հետ, կառուցված և գեներում և քրոմոսոմներում տեղի ունեցող փոփոխությունների պրոցեսների ուսումնասիրման վրա։ Առաջին գենը, վոր ուսումնասիրվել եր զրոգոֆիլի սոս, աչքի սպիտակության գենն եր, վոր առաջ եր յեկել մուտացիայի շնորհիվ, այսինքն՝ գենի փո-

վկոխման պղոցեսի շնորհիվ, ժամանակակից ամենաբարդ գենետիկա-կան աշխատանքները, տրանսլոկացիաների, տեղափոխութեների ամենանուրբ հետազոտությունները կատարվել են այն նյութի վրա, վորն ստացվել ե գենոտիպի փոփոխման շնորհիվ, ունտղման ճառագայթների ազդեցությամբ:

Գենը կարող է փոխվել զանազան յեղանակներով: Յերեամ մուտացիան ներկայացնում է առանձին գենի, նրա մի մասի կամ գեների մի ամբողջ խմբի՝ քրոմոսոմների մի մասի դուրս ընկնելը կամ կործանումը: Յերեամ դա կարող է լինել գենի բաղկացուցիչ մասերի տեղափոխում, վերախմբավորում, վորի հետևանքն է լինում նոր հատկության գոյացումը նրանում: Վերջապես, կարելի յե պատկերացնել նաև այնպիսի գեղաք, յերբ բոլորովին նոր գեն է գոյանում, այն ե՝ յերբ քրոմոսոմի գեների կոմպլեքսին միանում են քիմիական նոր մասեր Գենետիկները (Մարգանը) սովորաբար այդ վերջին հնարավորությունը թողնում են բաց, սակայն բոլորովին բացառված չպետք է համարել այդ:

Մյոլլերի, Սերեբրովսկու և ուրիշ շատերի աշխատանքները արհետականութեն մուտացիա առաջացնելու ուղղությամբ, ամենամեծ հարգածը հասցրին գեների անփոփխականության թեորիային, վորորովներու պրոցեսին տիրապետելը, պրոցեսին իր ցանկացած ուղղությունը առաջ ընդունակությունը միշտ և գիտության բոլոր բնագավառներում կործանում է մետաֆիզիկական և իդիալիստական կառուցութեները:

Աշխամինի յևլ Անդրինի պրոբլեմը ժառանգական փոփօխտականության մեջ. — Մենք գիտենք, վոր բնական պայմաններում ևս տեղի յե ունենում մուտացիոն պրոցես, սակայն շատ ավելի զանդաղորեն, քան, որինակ՝ ունտղենյան ճառագայթների ներգործմամբ: Բայց ինչ պատճառներից են փոփոխություններ առաջանում գեներում բնության մեջ: Ժամանակակից գենետիկան առաջժմ դեռ ի վիճակի չե պատասխանելու այդ հարցին: Մի ժամանակ միտք հղացավ, թե բնական պայմաններում ևս նշանակություն ունի ճառագայթավոր ներգիտան: Սակայն համապատասխան հաշվարկութերը ցույց տվին, վոր բնության մեջ նորմալ կերպով գոյություն ունեցող սաղիուակիտիվությունը շատ թույլ ե՝ մեղ հայտնի սովորական հաճախականությամբ մուտացիա առաջացնելու համար:

Մյուս կողմից, մուտումը տեղի յե ունենում վորպես մի տեսակ վիճակագրական պրոցես, կարծես անփոփոխ «արագությամբ»: Այդ բոլորն առիթ տվեց մի քանի գենետիկների պնդելու, թե գեներներներնը, իրենց պատմության վորոշ ետապներում, փոխվում են՝ նըրանց հատուկ ներքին որինաչափությունների հիման վրա, իսկ սե-

ուական բջջի նկատմամբ արտաքին ազգեցությունները միայն արտապացմամբ են այդ պրոցեսները, մոտեցնում են այն, ինչ վոր ըստինքան պետք է տեղի ունենա գևների նկատմամբ։ Այդ հոսանքը, վոր ընդունում է, թե մուտացիաների պատճառներն որդանիղմի ներսումն են, կոչվում են, ավագինականություն¹⁾։

Վերջին տարիների փորձը ցույց տվեց, վոր արդեն գտնվելու վրա յեն արտաքին այնպիսի ներգործություններ, վորոնց միջոցով կարելի յի ազգել մուտացիան փոփոխականության վրա Բայց ավտովներուկան համար այդ փաստերն ապացույց չեն համարվում։ Նրանք զըտնում են, վոր ունտգենյան հառագայթները, ուղղիումը և այլն միայն արտագցնում են մուտացիայի նորմալ պրոցեսը, վոր, միենուին և, պետք է տեղի ունենար ինքնիրեն։

Այդ տեսակենան ընդունելի չե մեզ համար։ Նա իր հետագա գարագացմամբ հանդում և վիտայիշմին, հակամատերիալիստուկան այն պատկերացմանը, թե որդանիղմիները զարգանում են ինչ-վոր գաղանի, ներքին ինպուլսների հիման վրա։

Ավտովներաթիկական պատկերացումները հատուկ եյին նաև մեր մենաշեփիկող իդեոլիատներին։ Ավտովնելիի վեմ պայցքարելը մեխանիշիցիմի դեմ պայքարելու հետ միասին, մինչև այժմ ել հրատապ խոնդիր և հանդիսանում, նույնը վերաբերում է և լամարկիլիմին, վորը մեխանիշիցիմի գրանորումներից մեկն և հանգիստանում։ Թե մեկը և թե մյուսն արգելակ են հանդիսանում տոհմային անասնաբուժության գործը գիտական հիմքերի վրա գնելու համար, առաջինը՝ ժխտելով արտաքին պայմանների վերը, յերկը ուղղողը՝ ժխտելով տոհմային գործը, և ընդհանարարեն զենքաթիկայի դորձը, գանելով, վոր կենդանիների բարելավելու ուղին միայն պայմանների բարելավումն եւ։

Ի՞նչպիս պետք է դնենք մենք այժմ ժառանգական փոփոխականության պրոբլեմը և արտաքին ու ներքին զերի պրոբլեմը փոփոխականության մեջ։ Սխալ արած կլինինք, յեթե հանգենք այն չեղակացության, թե ժառանգական փոփոխականությունն ամբողջովին վորոշվում և արտաքին գործուներով։ Այս կամ այն փոփոխությունների յերեան դարւ ուղարձառն և արտաքին մզումը։ Սակայն փոփոխությունները տեղի յեն ունենում մի վորոշ սիստեմում որդանիղմում, քրոմոսոմներում, գեներում, և այդ սիստեմն և վորոշում

1) Ավտովների տեղում՝ իրաք հասկանում են եվլուցիոն այն հոսանքը, վոր զանիղմի ներսում, Յիլլալի միկոն, վոր պաշտպանում եր ավտովնեղը, այդ տերմինը փոփակըց նաև մուտացիաներ առաջ գալու հարցի վրա։ Պարզ եւ, վոր եվլուցիոնի և մուտացիաների վերաբերմամբ այդ տերմինը միենալուն նշանակությունը չտնի։

ստացված փոփոխությունների ընույթը, զե՞ւ վոր այն, ինչ վոր մենք ժառանգական գենոտիպ ենք անվանում, որդանական մի սխտեմ ե, վոր զարգանում ե հսկայական ժամանակի ընթացքում և ունի բարդ կառուցվածք ու շոշափելի կայունություն, Կողմանակի ներդործումը կարող ե ազդել գենոտիպի վրա, փոխել նրան, բայց այդ սխտեմի փոփոխումը սահման ունի Մենք չենք կարող դրողոֆիլի ձուն փոխել այնպես, վոր նրանից փոքրիկ ճուտ դուրս գա: Սակայն մենք ի վիճակի յենք ներգործել դրողոֆիլի ձվի վրա այնպես, վոր հաջորդ սերունդներում առաջ գան զանազան հատկանիշների բազմաթիվ փոփոխություններ, նույնիսկ այնպիսիք, վորոնք հատուկ են դրողոֆիլի բոլորօվին այլ տեսակներին:

Քրոմոսոմը վորոշ կառուցվածք ունի. Նրա յերկայնքով դասավորված են գեները, վորոնք ազդում են տվյալ գենի համար ընորոշ յեղանակով: Արտաքին զանազան ներգործություններ կարող են տարբեր ենթեկող և տարբեր չափով ազդել գեների վրա: Սակայն քրոմոսոմի տվյալ կետում առաջ բերված փոփոխությունը կանգրադառնա հատկապես այն հատկանշի վրա, վորի հետ կապ ունի նրանում գտնը վազ գենը:

Հետեաբար չի կարելի արտաքին միջավայրի ներգործումը վերցնել առանձնացված նյութական այն սուրստրատից, վորի վրա ներգործում ե այդ միջավայրը: Խոկ նյութական սուրստրատը՝ քրոմոսոմներն ու գեները, ունեն պատմականորեն կազմակորված կառուցվածք՝ իր յուրահատուկ որինաչափություններով:

Ժառանգական փոփոխականության պրոցեսը տեղի յե ունենում այդ ներքինի մեջ՝ գեներում, շնորհիվ նրանում ստեղծվող հակասությունների, վորոնք հանդիսանում են արտաքինի արտաքողումը, որդանիղմը շրջապատող բազմաթիվ արտաքինի ազդեցությունների արտահայտությունը: Առա թե ինչու մենք խոսում ենք ժառանգականության մեջ գոյություն ունեցողի արտաքին և ներքինի միասնության մասին: Մենք դեռ չգիտենք այդ միասնության կոնկրետ ձեռքերը: Առայժմ մենք հնարավորություն ունենք դիտելու գենային փոփոխությունների զրանորման միայն կոպիտ ձեռքը՝ «թորիչքի» արդյունքը՝ նոր գեների առաջ գալը (այն ել միայն հնից և վոչ թե իրոք նոր գենի ստեղծումը), Խոկ թե ինչն ե նախորդում՝ «թորիչքին», մինչ այդ ներքին ինչպիսի պրոցեսներ են կատարվում գեներում, արտաքին ու ներքին ինչպիսի մզումներով են ստեղծվում նրանք, — ալդ բոլորն ապագա հետազոտությունների խնդիր ե:

ԲՆԴԱՌԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գեներն անփոփոխ չեն Նրանք ընդունակ են մուտերու, վորբէ հետեանքն և լինում ժառանգական նոր հատկանիշներ առաջ դալը:
2. Մուտացիայի յերեսութները մանրամասն ուսումնասիրման յինթարկիցներն Մորգանի դպրոցի և ուրիշների կողմից։ Գոյություն ունի մուտացիաների յերկու կատեգորիա՝ քրոմոսոմային արերրացիաներ (զանազան տիպի) և առանձին գենների արանսգենացիաներ։
3. Սովորական պայմաններում բնության մեջ մուտացիաներն առաջ են զայխ վորոշ հաճախականությամբ։
4. Ծինագենյան ճառագայթների, սադիումի և այլ միջոցների ներգործմամբ հաջողվեւմ և ստանալ ամեն տիպի բազմաթիվ մուտացիաներ։ Արևեստականորեն մուտացիա առաջացնելը հակայական հետանկարներ ունի ապագայում, վորպես կենդանիների և բույսերի նոր ձևեր ստանալու մեթոդ։
5. Ժառագայթական հատկությունների փոփոխման վրա արտաքին միջավայրի դործած ազգեցությունը չի կարելի շփոթել այսպես կոչված՝ ձեռքբերովի համկանիշների ժառանգման հետ, վոր հերքվում է գենետիկայի նվաճումներով։
6. Զենքերովի հատկանիշների՝ ժառանգումն անհամեշտորեն կազմած և սոսայում և սեռական քջիշներում աղեկված փոփոխություններ ընդունելու հետ, մի բան, վոր հակասում և ժառանգականության մեխանիզմի վերաբերյալ մեր փաստական գիտելիքներին և հանգում և քրոմոսոմների նպատակահարմար ունակցիայի ընդունմանը։ Լամարկիզմի սխալն այն ե, վոր նա ժխտում և փենոտիպի և գենուտիպի վորակական տարրերությունները։
7. Գենետիկայում զոյություն ունեն նաև ավտոգենետիկական հստանքներ, վորոնք ժառանգական փոփոխականության պատճառն են համարում գենոտիպի ներքին փոփոխությունները։
8. Գենետիկայի հիմնական խնդիրն ե՝ պայքար մղել մի կողմից ավտոգենեղի և, մյուս կողմից՝ լամարկիզմի դեմ։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Синнот-Ден, Курс генетики, ГИЭ, 1980 г., գլուխ Խ1 (ժառանգական փոփոխականության զործոնների հարցը շատ բույլ և շարադրված)։
2. Филиппенко Ю. А., Изменчивость и методы ее изучения, 4-е изд. ГИЭ, 1929 г. (մուտացիաների բնութագրումը և նրանց համակառնությունը)։
3. Морган, Структурные основы наследственности (առ գլուխ ԽХ)։

4. Филиппенко Ю. А., Частная генетика, ч. II, изд. «Сентель», 1928 г. (изучение наследственности у дрозофилы и ее гибридизации с другими видами дрозофилы).
5. Гольдшмидт, Учение о наследственности, ГИЭ, 1929 г. (Характер генов и их наследование).
6. Адамец, Общая зоотехника (генетика в зоотехнике), ГИЭ, 1929 г. (Характер генов и их наследование).
7. Крү, Генетика животных (табл. 42 из XI).
8. Филиппенко, Генетика, ГИЭ, 1929 г. (II глава о генетике животных и растений, IV глава о генетике растений, X глава о генетике животных и растений).
9. Бреславец, Введение в цитологию, ГИЭ, 1930 г. (анатомия растений и животных).
10. Завадовский М. М., Внешние и внутренние факторы развития, ГИЭ 1928 г. (VI глава о генетике животных и растений, IV глава о генетике животных и растений, V глава о генетике растений).
11. Морган, Теория гена, изд. «Сентель», 1927 г. (главы о генетике животных и растений).
12. Серебровский А. С., Получение новых наследственных свойств рентгеновскими лучами, журнал «Научное слово» за 1928 г. № I. (глава о генетике животных и растений, глава о генетике растений).
13. Кольцов Н. К., Об экспериментальном получении мутаций. Журнал «Успехи экспериментальной биологии» за 1930 г., т. VI, вып. 4.
14. Местергэзи, Основные проблемы органической эволюции, ГИЭ, 1930 г. (глава о генетике животных и растений, глава о генетике животных и растений, глава о генетике растений).
15. Пайнтер и Меллер, Параллельное цитологическое и генетическое исследование транслокаций и потерь, вызванных воздействием X-лучей на дрозофилу. Журнал «Успехи экспериментальной биологии» за 1929 г., том VIII, № 4 (глава о генетике животных и растений, глава о генетике растений).
16. Гольдшмидт Р., Экспериментальное получение мутаций и проблема так называемой параллельной индукции. «Успехи экспериментальной биологии» за 1929 г., т. VIII, № 4 (глава о генетике животных и растений, глава о генетике растений).
17. Рокицкий П. Ф., Влияние высокой температуры на появление наследственности изменений у дрозофилы. Журнал «Экспериментальной биологии» за 1930 г. т. VI, вып. 4.
18. Морган и Филиппенко, Наследственные ли приобретенные признаки? Изд. «Сентель», 1925 г. (глава о генетике животных и растений).

19. Валдемирский А. П. Передаются ли по наследству приобретенные признаки? ГИЗ, 1927 г. (Յայշն ավելի համառոտակի «Խայտ XX դար» ժողովածքում). Биология, II, 1929 г. Բեղման Աղբյակը լամարկիս և բայց շատ պրեկարփորեն նկարագրում է բազմաթիվ փորձեր, վարուց-ոզնությամբ ձգուկ և ապացուցել մերբերովի հատկանիշների ժառանգությունը):

20. А год. Диэлектрический метод и эволюционное учение, изд. Комиссии, 1930 г. (այս լով և շարադրված մերբերովի հատկանիշների ժառանգման և բամարկեցմի հարցը).

21. Дубинин Н. П. Генетика и неоламаркизм. Журнал «Естествознание и марксизм» за 1929 г., № 4.

22. Вейсберг И. Против механистической генетики. Журнал «Проблемы марксизма» № 4, за 1931 г. (մերբիստական տեսակետից ընկալի և ժառանգական փոփոխականության արտաքինի ու ներքինի պրոբլեմը):

23. Токин Б. П. Против механистического материализма и меньшевистствующего идеализма в биологии. Журнал, «За марксистско-ленинское естествознание» 1931 г. (պարունակում է զենքետիկայի մի շարք սխալների քննադատությունը, քննադատում և մասնավորապես արտաքինի անհատումը ներքինից, սխական պլազմի ու տեղույթի անշատումը և այլն):

24. Де-Фриз, Гуго., Избранные произведения, Медгиз. 1932 г.

25. Серебровский А. С.. Теория Мендель-Моргана и марксисты «Под знаменем марксизма» 1926 г., № 3. (ընթագմանման և ազեկվածությունը մերբովի հատկանիշների ժառանգման ուսմանը բանական):

ԳԼՈՒԽ IX

ԴԵՆԵՑԻԿԱՆ ՅԵՎ. ԵՎՈԼՈՒՑԻԱՆ

Եվոլուցիան վարպետ վաստ. — Մինչև այժմ մենք զբաղվել ենք ժառանգականութեան ու փոփոխականութեան որինաշափութեունների ուսումնասիրմամբ։ Նրանց վրա յե հիմնված մարդկային պրակտիկան, կենացանիների և բույսերի բուծման պրակտիկան։ Մարդկային գործունեցության պրոցեսում կենդանիների ու բուսական ձեւերի փոփոխման հարցերը մենք չենք կարող անջատել ամբողջ կենդանի աշխարհի փոփոխման, եվոլուցիայի ընթացքի հարցերից։

Մենք պետք են հարց դնենք, թե ինչ նշանակություն ունի գենետիկան եվոլուցիայի հարցերի համար։

Կենդանի արարածների աշխարհը շարունակ փոխվող և շարժվող մի աշխարհ եւ Ներկայումս գոյություն ունեցող բոլոր կենդանիներն ու բույսերն առաջ են յեկել իրենցից տարրեր այլ կենդանիներից ու բույսերից, ընդվորում ավելի բարձր կազմակերպված եյակները, ներքայալ նաև մարդը, առաջ են յեկել ժամանակի ընթացքում ավելի ցածր կազմակերպվածներից։

Հենց այդ զրույթով են ձեւակերպվում եվոլուցիայի թեորիան։ Այժմ կարիք չկա ապացուցելու, վոր եվոլուցիան վաստ եւ Եվոլուցիան հիմնավորվեց զանազան կողմերից։ Մի շարք բիոլոգիական գիտություններ՝ համեմատական անատոմիան, սաղմաբանությունը, կենդանական աշխարհագրությունը, պալեոնտոլոգիան և նույնիսկ բիոքիմիան և համեմատական պարագիտոլոգիան, եվոլուցիոն ուսմունքը հիմնավորող հսկայական քանակությամբ նույթ ավին։ Մշակվել են կենդանական աշխարհի զանազան ձեւերի ծագման եվոլուցիոն շարքեր։ Հայտնի յեն, որինակ՝ ձիու, փղի և ուրիշ շատերի այդպիսի շարքեր (տես նկար 103 և 104)։

Ուստի եվոլուցիայի թեորիայի (կամ եվոլուցիոն ուսմունքի) ինդիքն են ուսումնասիրել եվոլուցիայի այդ փառակից բղխող վրոշ պրոբլեմներ, այսինքն՝ ուսումնասիրել թե ինչպես են վերափոխվել կենդանիների և բույսերի տեսակները դարերի ընթացքում, ինչպիսի

Հեռնկրեստ ուղիներով և ինչ պատճառների ազդեցությամբ և ընթացել այդ վերափոխումը, ինչ պատճառներ են վորոշել որդանական աշխարհի նպատակահարմարությունը և նրա աստիճանարար բարգահայլը:

Դարվինիզմը լև յամարկիզմը.—Ներկայումս եվլուցիայի ուսմունքը կապված և անգլիական գիտնական Զարլ Դարվինի անվան հետ, վորն անցյալ դարի կեսերին տվեց մի փայլուն ուսմունք՝ ներկայիս դարվինիզմը:

Չարլ Դարվինը տեսակների ծագմանը վերաբերող իր աշխատությունը հրապարակեց 1859 թվականին իր այդ և հաջորդ աշխատություններում նա դարձացրեց եվլուցիոն ուսմունքի հիմունքները: Դարվինը ցույց տվեց, վոր կենդանիներն ու բույսերը փոխվում են կենդանի արարածների միջև: Անընդհատ պայքար և մզգում գոյացության համար և այդ պայքարի հողի վրա տեղի յե ունենում ավլյալ շրջապատող պայմաններին ամենից ավելի հարմարված կենդանիների ու բույսերի բնական ընտրությունը: Անընդհատ տեղի ունեցող այդ բնական ընտրությունն և հենց, վոր հանդիսանում և կենդանի արարածների փոփոխությունների շարժիչը:

Բնական ընտրության համար հիմք և հանդիսանում ժառանգածանությունը և փոփոխականությունը, վորովնետե, հարկավ, հաջորդների մեջ հատկություններն ամրացնելու համար նշանակություն ունի միայն այն, ինչ վոր ժառանգական եւ Բանի վոր ժառանգականությունը միշտ կապված և փոփոխականության հետ, բնական ե, վոր փոփոխականության շնորհիվ բնության մեջ միևնույն տեսակներում, միևնույն ցեղերում, միևնույն փոփոխակներում և, վերջապես, առանձին անհատների մեջ չափազանց մեծ բազմազանությունն զոյլություն ունենալու շնորհիվ բնության մեջ տեղի յե ունենում գոյլության պայմաններին ավելի հարմարվածների ընտրությունը:

Այդպես, քայլ առ քայլ հազարամոր ու միլիոնավոր տարիների ընթացքում տեղի յե ունենում կենդանի աշխարհի զարգացումը, նրա անընդհատ ձևափոխումը, նրա վերածումը նորանոր այլ ձևերի: Այդ և Դարվինի ամբողջ ուսմունքը՝ Դարվինն իր գիրքը գրելիս հենվում է եր այն հսկայական թվով փաստերի վրա, վոր տալիս իր ժամանակակից տօնմական գործը կենդանիների բուժման, բուլսերի նոր տեսակներ ստանալու գործի և այլ բնագավառների վերաբերյալ:

Մարքսիզմի հիմնագիրները Դարվինի թեորիան գնահատեցին նրա հրատարակ գալու առաջին խոհ մոմենտացի: Դրա մասին մենք ունենք Մարքսի, Սենգելսի, Լենինի բազմաթիվ ցուցումները:


Այդպիսով, դարվինիզմի եյությունն այն ե, թե կենդանի արա-

բածների փոփոխման գլխավոր հիմքն և հանդիսանում բնական ընտրությունը Ինչական ընտրությունը տեղի յեւ ունենում գորության կազմի պատճառներով:

Սակայն եվոլուցիոն գաղափարների պատմության մեջ մենք բաղխվում ենք մի այլ եվոլուցիոն ուսմունքի հետ, վորն ամենից համար հակաղրվում ե դարվինիզմին: Այդ ուսմունքը կապված է կամարի անվան հետ և կոչվում է լամարկիզմ:

Լուսաւեր ֆրանսիացի գիտնական ե, վոր ապրում եր Դարվինից 50 տարի առաջ և հրապարակ եր հանել իր տեսությունը 1809 թվականին՝ եվոլուցիոն ուսմունքի արշալույսին:

Լամարկի ուսմունքը հանգում է յերկու հիմնական սկզբունքներին՝ վորոնց միջոցով նա ձգում է բացատրել կենդանական և բուսական



Նկ. 103. Զեռու հետեւ զառ (Г) եվոլուցիոն: А. և В.-ն ձեռ նորիանայրերի վառներն են

Նկ. 104. Փղի փորածումի շարք նախալայրերի զանդերը

բոլոր ձեւերի աստիճանական փոփոխումը, այսինքն՝ եվոլուցիան նրա ուսմունքի համաձայն, մի կողմից՝ բոլոր որգանիզմներին հատուկ և կատարելագործվելու զուտ ներքին ձգուում: Դա արտահայտվում է որգանիզմի բոլոր առանձնահատկությունների բարդացումով ու կատարելագործումով («գրաղացիա»): Մյուս կողմից՝ աղղում են արտաքին սկայամանները, վորոնք միշտ ձգուում են խախտել զբաղացիայի

(աստիճանավորման) կանոնավորությունն որդանիզմի բարդացման գործում։ Դրա արդյունքն ե լինում ամբողջ կենդանի աշխարհի զանգագ եվոլուցիան և ամարկը վորոշակի ուսումնագիծ եր անցկացնում կենդանիների և բույսերի միջև ևամտրկի կարծիքով, բույսերի վրա արտաքին պայմաններն աղջում են ուղղակի և փոխում են նրանց անմիջականորեն իսկ կենդանիների վրա արտաքին պայմաններն անդրագանում են հետեւյալ կերպ, փոխում են արտաքին պայմանները, փոխվում են նաև կենդանիների պահանջները։ Պահանջների փոփոխութեառաջ առաջ և բերում նաև նոր սովորույթներ, իսկ նրանց աղջեցությունը կատարել, մյուսը զուրկ և մասում վարժությունից, այսինքն սկսվում և որգանիզացիայի փոփոխումը։

Լամարկն իր «Կենդանաբանության փիլիսոփայությունը» զրվածքում արտաքին պայմանների աղջեցության հարցը շոշափում և ավելի շտա, քան «կատարելազործման ներքին սկզբունքի» հարցը, ուստի յերբեմն լամարկիզմ են անվանում նրա ուսմունքի միայն արդ կողմքությոց իրոք վոչ պակաս բնորոշ և եվոլուցիայի ներքին տեսնենցի ընդունումը և «Ավտոգենեզի» այդ սկզբունքը հետագայում հանդիսանութեառ մի շարք ներկայացուցիչների մոտ, ընդունելով կատարելապես վետալիստական յերանգ։ Իսկ ինչ վերաբերում և արտաքին պայմանների աղջեցության դերին, առաջ այն լամարկիսմանները, փորոնք ընդունում են Լամարկի ուսմունքի այդ կողմքը, բայց ժխտում են յերկրորդը, կոչչեցին մեխանոլամարկիսմները։ Այդպիսով լամարկիզմի (և մեխանոլամարկիզմի) հիմքն և կազմում ձեռքբերովի համականիշների ժառանգման ընդունումը (մի հարց, վոր քննել ենք մենք նախորդ դլխում)։

«Ենթակիայի նօամակուրբանը և վոլուցիայի հարցերի համար, — Գեներալիկան կուտակել և հակայական քանակությամբ փաստական նյութ, և ներկայումս կարելի յե հասաւատապես պնդել, վոր գեներալիկայի զարգացումով հաստատվեց դարվինիզմը։ Գեներալիկան ճշտեց ժառանգականության և փոփոխականության հասկացողությունները։ Նա ցույց տվեց, վոր կա ժառանգական և վոչ ժառանգական փոփոխություն, և վոլուցիայի համար նշանակություն ունի միայն առաջինը։ Դեներաբիկան ցույց տվեց, վոր բոլոր կենդանիների և բույսերի մեջ անընդհատ տեղի յե ունենում ժառանգական փոփոխության պրոցեսը։ Նա կատարիվում և միջավայրի աղջեցությամբ, բայց վոչ թե որգանիզմի հատկությունների վրա ուղղակի աղջեցություն գործնկով, այլ աղջելով քրամսումների վրա և փոխելով գենոտիպն ու գենները։ Հենց այդ որոցեան և, վոր հիմք և կազմում բնական ընտրության համար Այժմ մեզ հայտնի յե ժառանգական փոփոխականության յերկու

կառեգրիա՝ կոմբինացիա և մուտացիա։ Նրանք յերկուսն ել նյութ են ծոռայում եվոլուցիայի համար։

Ժառանգականության այն ընդհանուր գաղափարը, վոր հրապարակ երբեմն աշխատություններում, կոնկրետացվեց վորութիւն մենազելյան-մորդանյան կամ ավելի ընդհանուր՝ կորիզային ժառանգականություն, հատկապես նրա վրա յեն հիմնված կոփոխականության այն պրոցեսները, վորոնք նշանակություն ունեն եվոլուցիայի համար։

Գենետիկան մերժեց լամարկիզմը, վոր եվոլուցիայի պատմական պրոցեսը վերածում եր միջավայրին Փիզիոլոգիորեն հարյարմվելու ունակության նա բիոլոգիական գաղափարների շրջանից դուրս գցեց ձեռքբերովի հատկանիշների (մոդիֆիկացիաների) ժառանգման սկզբանքը, վոր զուրկ եր թե փաստական ե թե տեսական հողից և դրանով իսկ մերժեց եվոլուցիայի լամարկիստական սկզբունքները։

Եվոլուցիան հիմնված ե այն բանի վրա, վոր տեսակի սահմաններում անհատները գենոտիպորեն տարբերվում են միմյանցից։

Պապուլացիաների գենոտիպական կառուցվածքը։—Խօնանեսնն առաջ մեր «պոպուլացիա» տերմինը, վորպես հակադրություն ըմաքուր (կուտ) գծի Զուտ գիծն ընդգրկում ե գենոտիպորեն կատարելապես միացեղ անհատների։ Զուտ գիծ կարող են ունենալ միմիայն ինքնափոշովով լույսերը։ Սակայն կարելի յէ կենդանու կամ մի խումբ կենդանի գիծների «զուտթյան» կամ հոմոլիգոտության մասին խոսել պայմանական կերպով մի կամ մի քանի հատկանիշների նկատմամբ։ Խօնանենք, վորձեր կատարելով լորու և այլ ինքնափոշովով բռուսերի վրա, հաստատեց այն կարենոր փաստը, վոր տվյալ տեսակի, փոփոխակի կամ ցեղի ամեն մի խումբ բաղկացած ե շատ գենոտիպերից, վորոնց անդամները բնության մեջ սովորաբար խառնված են իրար հետ։ Անհատների այդպիսի խումբը նա անվանեց պոպուլացիա։ Այդպիսով պոպուլացիայի համար բնորոշ ե նրա գենետիկական այլացեղությունը, այն, վոր նա ներկայացնում ե տարբեր գենոտիպերի մի խառնուրդ։

Գենետիկորեն չկա մի տեսակի և ցեղի պատկանող յերկու կենդանի, վորոնք միևնույն գենոտիպն ունենային նրանք նման լինելով վորոշ գեներով, միևնույն ժամանակ տարբերվում են մյուս գեներով։ Մեռական բազմացումը, մի տեսակին պատկանող տարբեր անհատների արտմախաչումը միմյանց հետ, առաջ են բնորում գեների անընդհատ «կառանում»։ Միևնույն ցեղի սահմաններում առանձին անհատներ դանազան ցեները ունեն, ուստի ամեն մի ցեղ ըստ եյության պոպուլացիայի յեւ Յեթե ինքնափոշովով լույսերի պոպուլացիան բազկացած ե զուտ գծերից, ապա կենդանիների պոպուլացիան ներկայացնում է

ամենատարբեր գենոտիպերի մի պոպուլացիա։ Պոպուլացիայից վերցրած յուրաքանչյուր դույդ հանատներ միմյանցից կտարբերվեն իրենց ժառանգական հասկություններով։

Վոչ միայն ամբողջ ցեղը, այլև տվյալ ցեղի ներկայացուցիչներից կամայականորեն վերցրած ամեն մի խումբ պոպուլացիա յէ, վորովհետև տվյալ խմբի անդամները գենետիկորեն միատեսակ չեն։

Թանի վոր պոպուլիացիայում հանդիպում են հոմոլոգում և հետերոզիգուտներ, կարելի յէ պատկերացնել թե պոպուլիացիան բաղկացած և յուրաքանչյուր գենի նկատմամբ վարոշ թվով հետևյալ տիպի անհատներից՝ ԱԱ-ից, Աա-ից, աա-ից։

Յեթե մենք շրջանի սահմաններում ունենք մի խումբ անասուն, սպա գոմինանաների, հետերոզիգուտների և ուցեսիվների այդ յերեք խմբերը կլինեն շատ զեներով ոժտված, որինակ կովերից և ցուլերից մի քանիսը սև կլինեն, մյուսները՝ կարմիր, իսկ սևերի մի մասը հետերոզիգոսա կլինի։ Յեթե կենդանիների հատուկ ընտրություն չկատարվի բայց գորևեն դույնի, ապա սեչսե, սեչեամիր և կարմիր չկարմիր արամիր արամախաչումը կախված կլինի պատահականությունից՝ տվյալ հստում այս կամ այն կենդանու գտնվելուց հնական պայմաններում վայրի կենդանիների տեսակի սահմաններում վորպես կանոն տեղի յէ ունենում այդպիսի ազատ արամախաչում։ Իսկ յերբ կենդանիներին բազմացնում և մարդը, ազատ արամախաչում կկատարվի փաստորեն այն զեպքում, յերբ վոչ մի ընտրություն չի կատարվում ։ Աստ տվյալ նշանի։

Արհմաշափուրյուններ պոպուլացիայի մեջ։ — Պիրունի լեռ Հատդիկ արենթները։ — Իսկ բնչ կլինի պոպուլացիան, յեթե նրանում վոչ մի ընտրություն չի կատարվում և առանձին անհատներ իրար հետ զուգորդվում են պատահականորեն։

Պիրունը հայտարենց մի շատ կարեռ որինաչափություն, ցուց տալով, վոր յեթե պոպուլացիան բազմանում և իր մեջ, ապա արամախաչումը կատարելապես ազատ, առանց վորեն ընտրության։ կատարվելու դեպքում Բչում կսաացվի գենոտիպերի այնպիսի հարաբերություն, վորը կապահպանվի առանց փոփոխության նաև հաջորդ բոլոր սերունդներում։ Այդ հարաբերությունը կարող է ամեն տեսակ լինել բայց նրան և հատուկ ենորոշ որինաչափություն։

Այդ ավելի հասկանալի դարձնելու համար վերցնենք մի որինակ, Յենթագրենք, թե մենք ունենք հոմոլոգուտային չորս անհատ՝ չորս ԱԱ (199 և 2օօ) և հետերոզիգուտային յերկու անհատ՝ յերկու Աա (19 ու 1օ)։ Այդ ձեերն իրար հետ ազատորեն արամախաչվելիս նրանց հաջորդները կունենան հետեյալ հարաբերությունը՝

Գենոտիպերի նույնագիսի հարաբերությունն կստացվի նաև հաշորդ բոլոր սերունդներում։ Այդ դրույթն ստուգելու համար հաշվինք, թե վորքան և ինչպիսի գամետներ կտան վերոհիշյալ Յ անհատներն իրենց հաջորդների մեջ։ Ընդումին պարզության համար ընդունենք, վոր յուրաքանչյուր անհատ միայն յերկու գամետ ե տալիս Մենք ունենք Յ-ական եղ և արու՝ 2AA և 1Aa, Նրանք կտան Յ-ական գամետ A և 1-ական՝ 1a.

Կառուցենք Գեննետի սովորական ցանցը.

	Զկեր	5	1
Սպերմիներ		A	a
5 A		25AA	5Aa
1a		5 Aa	1 aa

$$25AA + 10Aa + 1aa.$$

Այժմ հաշվենք, թե գենոտիպերի ինչպիսի հարաբերությունն կստացվի այդ անհատները բազմացնելիս։ Յենթադրենք, վոր արուների թիվն եղերի թվի չափ եւ Այն ժամանակ յուրաքանչյուր սեռ կտա գամետ հետեւյալ հարաբերությամբ՝ 60A : 12a.

	♀	60	12
♂		A	a
60 A		3600 AA	720 Aa
12 a		720 Aa	144 aa

$$3600AA + 1440Aa + 144aa.$$

Այդ հարաբերությունը կարող ենք կրնատել 144-ով. կստանանք 25AA : 10Aa : 1aa, այսինքն՝ ինչ վոր պետք եր ապացուցեր

Մեր քննած որինակը լուսաբանում է Պերովի մի որենքը, այսպես կոչված կայունացնող արամախաչման որենքը, վոր կարելի յե-

Հետքերպիկ հետեյալ կերպ. աղաս տրամախաչման պայմաններում ձևողների հոմողիգոտային և հետերողիգոտային ձևերի թվական վոր հարաբերությունն ել վերցնենք, առաջին տրամախաչման հետևանքով ստացված պոպուլացիայում հաստատվում և հավասարակշռության համապատասխան վիճակը:

Իսկ վորոնք են բնորոշ գծերը հոմողիգոտային գերեշխող (դոմինանտ) ու սեցեսիվ ձևերի թվի և հետերողիգոտային ձևերի այն հարաբերության մեջ, զորն ստեղծվում և կայունացնող տրամախաչումից հետո և պահպանվում և հետագա տրամախաչումների ընթացքում:

Հարդիկ ցույց տվեց, զոր պոպուլացիայում հավասարակշռության վիճակն այն գեղքում միայն կպահպանվի, յեթե նրա կազմը համապատասխանի հոմողիգոտային և հետերողիգոտային անհատների խմբերի հայտարարությունն արտահայտող հետեյալ փորմուլին՝

$$p^3AA + 2pqAa + q^2aa = 1,$$

Ընդումին ընդունվում ե, զոր $p+q=1$ (ը-ն ցույց ե տալիս A զենք կրող զամետների առաջ գալու հավանականությունը, իսկ Q-ն ցույց ե տալիս ա զենք կրող զամետների առաջ գալու հավանականությունը):

Այդ փորմուլը ցույց ե տալիս հետեյալը, վորպեսզի պոպուլացիայում հավասարակշռությունը հետապայում ևս պահպանվի, անհրաժեշտ և վորոշ հարաբերությունն գերեշխող հոմողիգոտաների, հետերողիգոտաների և սեցեսիվ հոմողիգոտաների թվերի միջև, այնպիսի հարաբերություն, զորը բղխում և կոնֆիցիենտներից, այն եւ հոմողիգոտային ձևերի թվի արտազրյալը պետք ե հավասար լինի հետերողիգոտային ձևերի թվի կեսի քառակուսուն՝¹⁾:

Հոմողիգոտաների թիվը	AA	p^2
Հոմողիգոտաների թիվը	aa	q^2
Նրանց արտազրյալը		p^2q^2
Հետերողիգոտաների թիվը	Aa	$2pq$
Հետերողիգոտաների թվի կեսը		pq
Հետերողիգոտաների թվի կեսի քառակուսին		p^2q^2

Արդարիսով ամեն մի պոպուլացիայա, ինչպիսի հարաբերությունն ել ունենան թվերը, այն եւ

$$X \text{ AA : } y \text{ Aa : } z \text{ aa,}$$

կողահպանի իր հավասարակշռությունը, յեթե

$$X \cdot z = \left(\frac{y}{2}\right)^2.$$

1) Այդ հարաբերությունը բղխում է փորմուլի հենց եյտթյունից, մի փորմուլ զորի կոնֆիցիենտները հանդիսանում են բինոմի կոնֆիցիենտները:

Վարպեսդի համոզվենք, թե Հարդիկ Փուրմուլը ճիշտ է, պարզենք
թե վարքան և ինչպիսի գամեաներ կկազմեն տվյալ պոպուլացիայի
անհատները:

$$p^3 AA : 2 pq Aa : q^3 aa$$

AA	համոզիցաները կատան միայն A գամեաներ թվով	p^3 համ
AA	համերգիցաների աված գամեաներից կեսը կինք Ա գամեան	pq >
A	կեսը կինք Ա գամեան	pq >
կե, աեղի ունենալ բոլոր մարդկանց իրոք բարելավումը, վորովհետեւ
բուրժուական իրավակարգի ամրող կառուցվածքի նպատակին և պրո-
լետարիատի շահագործումը։ Մարդու թե ֆենոտիպի և թե գենոտիպի
խևական վերափոխումը հնարավոր և, միայն սոցիալիստական հասա-
րակության պայմաններում։ Սոցիալիստական հասարակությունն ան-
ստահման ասպարեզ կրանս մարդու գենոտիպական զարգացման հա-
մար, վորովհետեւ այն ժամանակ ֆենոտիպը դոյցության սոցիալ-տըն-
տեսական այլանդակ պայմանների արտացոլումը չի լինի, այլ իսկա-
կան արտացոլում կլինի այն առողջ և ուժեղի, վոր թագնված և
մարզու մեջ։

Ընդգլութեան սոցիալիզմի պայմաններում.—Այս ժամանակ յեվ-
զենիթեան ևս կարող է իրոք լեզվենիկա դառնալ վորովնետե նա չի
ծառայի բուրժուազիայի զասակարգային շահերին, այլ կզառնա մար-
զու խոկական գենուտիպային բարելավման գործոնը

Դա շատ խոչըր խնդիր եւ նա բցիսում և մարգու, վորպես սոցիալ-
բական միջավայրում ապրող՝ բխուզգիական որդանիքմի, առանձնա-
հատկությունից, վորի մասին խոսել ենք մենք հենց սկզբում։ Սոցիա-
լիզմի պայմաններում, յերբ սոցիալիստական նոր հասարակությունը
կոչնչացնի կապիտալիզմի սովոր, աղքատությունը, գործազրկությունը
և անկուլտուրականությունը, սահեղենլով ըստ եյության լիվդենիկական
նշանակություն ունեցող պայմանները, հնարավոր և կիբրուել նաև հա-
տուկ յեվլենիկական միջոցառումներ։

տիարակվող յերկվորյակների համեմատումը նյութ կտա հետևություններ անելու այն մասին, թե զանազան Փիդիկական և հոգեկան առանձնահատկությունները վորչափով են պայմանավորված գենոտիպով և պարատիպով:

Պարզելով միջավայրի ու շրջապատի զանազան պայմանների նշանակությունը մարդու որգանիզմի այս կամ այն գծի զարգացման համար՝ մենք հասրավորություն կատանանք մատնացույց անելու այն պայմանները, վորոնցով կարելի յե կանխել ժառանգական վնասակար յերևույթը:

Գիտենալով մարդու ժառանգականությունը և փոփոխականությունը՝ կարելի յե կանոնավորել մարդու բազմացման սիստեմը, ստուգելով և նախատեսելով այս կամ այն ամուսնության հետեւանքները, խրախուսելով յեվգենիկայի տեսակետից դրական ամուսնությունները և, ընդհակառակ՝ արգելելով ու հնարավորությունից գրկելով գենոտիպորեն բացառական անհատների բազմացումը:

Այդ բոլոր միջոցառումները հնարավոր են միմիայն անդասակարգ հասարակության պայմաններում:

Գետք ե, սակայն, աչքի առաջ ունենալ վոր ներկայումս յեկանիկական ձեռնարկումներն այնքան ել հրատապ չեն, ինչպես շեշտում են բուրժուական գիտնականները. Նրանք փորձում են այդպիսով բիուրգիայի վրա բարդել այն ոլատախանառությունը, վոր կրում և վոճագործ կապիտալիստական հ սարակությունը շահագործվող գասակարգերի ու ազգերի նկատմամբ:

ԸՆԴԱԱՆՈՒՐ ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մարդը, վորպես գենետիկական որյեկտ, ունի մի շարք յուրահատուկ գծեր, վորոնք նրա սոցիալական բնության արդյունքն են (բնական ընտրության բացակայությունը, սոցիալ-անտեսական գործոնների նշանակությունը մարդու առանձնահատկությունները վորոշելու գործում, և այլն):

2. Մարդու ժառանգական հատկությունները բարելավելու պրոբլեմը չի կարելի լուծել կապիտալիստական իրավակարգի պայմաններում, վորովհետեւ յեվգենիկական բոլոր միջոցառումները դասակարգային վառ բնույթ են ընդունում և աշխատավորներին ճնշելու գործիքներից մեկն են դառնում (սոցիալական դարվինիզմը, դասակարգերի գենետիկական անհամարժեքության գողափարի հիմնավորումը, ցեղային թերիան և այլն):

3. ԽՍՀՄ-ում յեվգենիկան շոշափելի չափով հանդիսացավ բուրժուական յեկանիկայի գաղափարների արտացոլումը:

4. Միմիայն սոցիալիստական իրավակարգի ուսումնակրում հնարավոր ե կիրառել այն միջոցառությունը, վորոնք իրոք կառողջացնեն ու կրաքելավին մարդու ժառանգական բնությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Կոլյով Հ. Կ. Սկզբանական իրավակարգի շատ հետաքրքր ժամանակին չօրապարագին հանդիսացած հոգածը: Անի մի շաբթ սկզբունքային սխալներ՝ բուրժուական յեզրենիկայի գառակարգային նշանակությունը շնասկանար ուստափ:

2. Տառեկ Վ. Եպիկու, ՀԻՅ, 1927 թ. (բարեկանին լավ գրված, մատչելի մի գրքում): Թեպետ վոչ բուր գրութեներն են ձիւտ:

3. Սուբրուսկի Ա. Ս. Անտրոցոգենետիկա և սցենիկա և սոցիալիստիկական առաջնորդության մեջ առաջնական դերը կատարությունը կազմակերպությունը: Հեղինակը զարգացնում է նաև այն գաղափարը, թե հարկավոր ե արևոտականութեան սերմանավորել մարդկանց՝ յեզրենիկական նպատակներով:

4. Պրեզ. Ի. Պրоблема научных кадров в освещении буржуазных биологов. «Под знаменем марксизма» за 1931 г. № 6 (Ց. Ա. Ֆրիդլանդների յեզրենիկական հոգածը հայտցների մարդիկանական քննությունը):

5. Տարբերակ «Учение Дарвина и марксизм-ленинизм» Партиздат, 1932 թ. (Ա. Դիլիսի հոգածը սոցիալիստական զարգինությունին):

6. Մելլեր Գ. Ի. Եպիկա և սոցիալիստիկական առաջնորդությունը: Մալլեր Գ. Ի. Եպիկա և սոցիալիստիկական առաջնորդությունը: Մալլեր Գ. Ի. Եպիկա և սոցիալիստիկական առաջնորդությունը:

7. Մալլեր Գ. Ի. Գенетика против учения о «чистоте рас». Журнал «Успехи современной биологии» за 1934 թ. թ. III, вып. 5. (ընութագրում ե Գերմանիայում ֆաշիստների տարածության գոկարքնը և ցուց ե տալին, վոր այն, ինչ վոր տառապրում են վարպետ գենետիկական սկզբունքների կիրառում, իրոք անտեսական ե սոցիալիստական հնաման սխալներ ե):

ԳԼՈՒԽ XI

**ԴԵՆԵՑԻԿԱՆ ՅԵՎ ԴՅՈՒԿԱՑՆՑՍԱԿԱՆ ԿԵՆԴՐԱԿԱՆԵՐԻ
ԲՈԽՄՈՒՄԸ**

Հին զառեխմիայի և մայրիկմը յավ գիտակուրյունը. — Տավարի, ձիերի, վոչխարների, խողերի, ընտանի թոշունների տնտեսական տեսակետից արժեքավոր բազամաթիվ ցեղերս ինչպես և դաշտային ու այգեգործական բույսերի զանազան սորտեր են ստացել պրակտիկ գյուղատնտեսները զեր այն ժամանակի, յերբ գենետիկայի անունն անգամ չկար: Բուսաբուծները և անասնաբուծներն, անշուշտ, գիտեյին աշխատանքի մի շառք ձևեր, բուծման ուղղագումներ: Սակայն նրանք որենքներ չեյին հայտնագործում, ուստի և չեյին կարող հանգել լայն ընդհանուրացումների: Ի. Վ. Միջուրինը, առանց գիմելու զուտ գենետիկական մեթոդների, շոշափելի արդյունքներ ձեռք բերեց կուլտուրական բույսերի, առավելապես մրգատու ծառերի և պտղատու թփերի բարելավման գործում: Ամերիկայում հայտնի յե կյուտեր Բերբենիք, վոր նույնպես զարմանալի բաներ արեց բույսերի զանազան սորտերի բարելավման գործում:

Վորքան եւ շոշափելի լինեն անցյալում ձեռք բերված արդյունքները, նրանք այսուամենայնիվ շատ մեծ և յերկարատե ջանքերի պառագ են: Զոստեխնիկների և բուսաբուծների ուղին մինչև վերջին ժամանակներս փորձի ուղին և յեղել: Պրակտիկ անասնաբուծները և բուսաբուծները շատ դեպքերում չեն՝ կարողացել բացատրել իրենց ստացած հաջող արդյունքները, ուստի և հնարավորություն չեն ունեցել նորից ստանալու դրանց:

Հին միջոցառութները զուրկ ելին տեսական հիմքեց, ինչպիսիք են՝ հատկանիշների ժառանգման որինաշափության վերաբերյալ բիսոլգիական կոնկրետ զիտությունները: Յեվ միայն մեր ժամանակն ստեղծեց այդ հիմքերը:

Հին անասնապահական հայացքները՝ գենետիկայի լույսով, յավ նույսապատրութների վոչմացումը. — Զտարյուն կենդանիների սերնդում նախահայրերի հատկանիշների հանկարծակի յերևան գալլ («ատա-

վիզմայ մարդկանց մոլորության մեջ եր դցում, անհասկանալի յեր թվում։ Այդ յերեսությը հաճախ բացատրվում եր շատ սիսկավոր, չապացուցված գատողություններով։

Մենադեմումը պարզորոշություն մտցրեց այդ բնագավառում, ցուց տալով, վոր տրամախաչման ժամանակ առաջացած Շնորագոյացումների բազմաթիվ գեղքերն արդյունք են շատ գեների կոմքինացման կամ անակընկալ ուցեսսիմների դրսերման։ «Անհատական պոտենցիան» մեկնաբանվեց վորպես հոմոդիգոտություն՝ այս կամ այն գեների գծով։

Հոստեխնիայի շատ հայացքներ կապված են լամարկեմբի հետ։ Գենետիկային ծանր խնդիր վիճակինց՝ արմատախիլ անել լամարկեմբը Այս հավասր, թե ձեռքբերովի հատկանիշները ժառանգվում են, խորապես արմատացել և զոտեխնիայի մեջ և, դժբախտաբար, մինչև ալժմ ել վերջնականապես չի վերացվել խորհրդային զոտեխնիայից։ Նա մի հսկայական արգելակ և ցեղական անասնաբության դարդացման գործում, ըստ երության վերացնելով լավ դննոտիպերի համար պայքարելու անհրաժեշտությունը, հույս ներշնչելով, վոր նըանք իրենց կստեղծվեն, յեթե միայն բարելավենք ֆենոտիպերը։

Անհրաժեշտ և մի անգամ ևս կարականորեն շիշտել վոր լամարկիոտական դիրքերն անհամատեղելի յեն անասունների բուժման դիտական գրանցում։

Հոստեխնիայում լամարկիոտական հայացքների կործանումը և բուժման իրոք դիտական հիմունքների մշակումը հանդիսանում և գենետիկայի մտառացած հսկայական ծառայությունը։

Գենետիկան փարատեց նաև այն ամեն տեսակի հավատալիքները, թե նդի կենդանու տեսածը նշանակություն ունի նրա բերած ձագերի համար, փարատեց «տեկեղոնիայի» հավատալիքը և այլն։

Դենետիկական սկզբանները սկզբանայի մերովների հիմն ևս կազմում։ — Բնապի չհիմնավորված գրությների ու միջոցառումների հետ միասին զոտեխնիան ունի բուժման պրակտիկայում գործադրվող մի շարք բավականաչափ արժեքավոր մեթոդներ։ Մշակվել են տրամախչման զանազան սիստեմներ։ Արժեքավոր ցեղեր ստեղծելու համար կիրառվել ե ընարությունը։ Այդ միջոցառումների ելությունը բացատրեց զենետիկան։ Գենետիկան հնարավորություն և տալիս այդ միջոցառումները վերածակելու գիտական նոր հիմքեր վրա։ Վերջապես, գենետիկան առաջազրում և նաև նոր մեթոդներ, վերջիններս կրծատում են այն ժամանակն ու աշխատանքը, վորն անհրաժեշտ և ցանկալի սորտեր ու ցեղեր ստանալու հսմար։ Դրանով իսկ զանազան կենդանիների և բույսերի բարելավումը հնարավոր կլինի կատարել ամենակարճ և արագ ճանապարհներով։ Այդ մեթոդները գիտակա-

բար գարող ե կիրառել միայն նա, ով պարզութագով ըմբռնել ե գենետիկայի հիմնական կանոնները:

Ահա թե ինչու գենետիկայի գասընթացը նախորդում է բուժման դասընթացին, Տվյալ զղուխը մի տեսակ կամուրջ ե հանդիսանում նրանց միջև, գենետիկորեն հիմնավորելով սելեկցիայի մեթոդները:

Սելեկցիա ասելով մենք հասկանում ենք գիտական այն ընագավառը, վոր մշակում ե կենդանիների և բույսերի գենետիկական բարելավման մեթոդները: Նա պարփակում է կենդանաբուժյան, եկոնոմիկայի և նույնիսկ մաթեմատիկայի մի շարք ճյուղերը, սակայն նրա գիտական հիմքն ե գենետիկան: Սելեկցիայի հիմքն են կազմում իրոք նախորդ եներից մեզ ծանոթ հետեւյալ դրույթները:

1) մոդիֆիկացիաների չժառանգվելը,

2) ֆենոտիպի և գենոտիպի տարբերությունը,

3) այն, վոր գոյություն ունեն համեմատաբար կայուն, համակըցման յենթակա գեներ, վորոնց հաղորդումն է կազմում հատկությունների ժառանգումը:

Դրանց վրա յեն հիմնված հետազա բոլոր պատկերացումները՝ ընտրության մասին, նրա ձևերի և որինաչափությունների մասին, տրամախաչումների տարբեր ձևերի նշանակության մասին և այլն:

Արևոտական ընթարքաւմը կենցանաբուժության մնաք.—Զանազան ցեղեր ստանալու գործում շոշափելի դեր խաղաց ընտրությունը, այսինքն՝ այն կենդանիների ընտրությունը վորպես արտադրող, վորոնք ամենից ավելի յեն մոտենում ցանկալի տիպին: Խնչակն հայտնի յե, ըստարուծության և կենդանաբուժության մեջ կիրառվող արհեստական ընտրության հսկայական թվով փաստերը նկարագրել ե Գարվինը: Ընտրությունն այժմ լայն չափով կիրառվում է գյուղատնտեսության մեջ: Առաջ նա զգալի չափով հիմնված եր ընտրվող կենդանիների և բույսերի արտաքին տեսքի վրա: Ազելի ուշ սկսեցին հաշվի առնել ընտրվող անհատների ծագումը, նրանց ազգակցության աստիճանը և հաջորդների վորակը: Բայց փաստն այն ե, վոր նպատակահարմար կերպով կատարված ընտրության միջոցով ձեռք բերվեցին շատ շոշափելի արդյունքներ: Այդ ցույց են տալիս թեկուզ հետեւյալ թվերը: Կիսավայրի կովերի կաթի քանակը մի լակտացիալի (կաթնատվության) շրջանում կազմում է 700—800 լիտր: Իսկ բարձր կուլտուրական ցեղերը տալիս են հինգ անգամ ավելի կաթ (3500—4000 լիտր): Մակայն նրանց մեջ պատահում են այնպիսիները, վորոնք տալիս են մինչև 10000 լիտր և ավելի կաթ (ռեկորդիստներ): Վայրի հավը (gallus bankiva) տալիս է տարեկան միջին հաշվով մոտ 25 ձու: Այն ցըշաներում, վորտեղ թռչնաբուժությունը լավ հիմքերի վրա յե գրված, հա-

մերի միջին արտադրողականությունը կազմում է մոտ 100 ձու մի հավիք, իսկ առանձին զծերի արտադրողականությունը համում է 250—300 ձվի:

Դնեստիկան ստեղծվելու որերին փորձնական բավականաչափ ավագաներ եյին կուտակվել ընտրության մասին, Պարզվեց, վոր ըոլոր հատկանիշներն ել հավասար հեշտությամք չեն յենթարկվում ընտրության: Մի քանի դեպքերում ընտրությունը շատ արագ և ընթանում, բայց միայն մինչև վորոշ սահման, վորից հետո նա անզոր և լինում: Իսկ այլ հատկանիշներ, ընդհակառակը, շատ վատ են յենթարկվում ընտրության: Մշակվեցին ընտրության մի քանի տարբեր սիստեմներ, բայց քանից դեպքեր են յեղեք, յերբ ընտրության նմանորինակ մեթոդները տարբեր արգունքներ են ավել Վորովինետն ընտրության դերի, նրա ներգործման մեխանիզմի ընդհանուր բացարձություն չկար, ուսաի մեծ շփոթություն եր տիրում ընտրության նկատմամբ գոյություն ունեցող հայացքներում: Քիչ չեյին փոխազարձարար հակադիր հալացքներ՝ ընտրության հաջողության և անզորության պատճառների նկատմամբ:

Ներկայումս գենետիկան դդալի պարզորշություն մտցրեց արդ պրոլեմի մեջ, և այժմ ընտրության վերաբերյալ մի շարք հարցերում մենք գենետիկական նզդրիտ բացարձություն ունենք:

Խոհաննանի աօխատանիք լորու մահուր գծերի վրա.—Ընտրության ազգեցությանը ճիշտ բացարձություն տվող հիմնական աշխատություններից մեկն և գանհական բուսագետ Խոհաննանի 1933 թվականին հրատարակած աշխատաւթյունը: Մեր գրքի առաջին գլուում մենք համառոտակի հիշատակել եյինք այդ աշխատաւթյան մասին:

Խոհաննան ուսումնասիրեց ընտրության ազգեցությունը լորու հատիկների կշռի վրա: Նա վերցրեց իր ուսումնասիրած սորտի զանազան բույսերից հավաքած լորու հատիկները, Պարզվեց, վոր հատիկների կշռոը տատանվում է 25-ից 85 սանտիգրամի միջև, կազմելով միջին հաշվով մոտ 50 սանտիգրամ: Այդ խառնուրդից նա ընտրում և անկում եր ավելի ծանր և ավելի թեթև հատիկները: Լորու ավելի ծանր հատիկներից անեցրած բույսերը նմանապես ծանր կշռող սերմեր տվին (նրանց միջին կշիռը կազմում եր 65 սանտիգրամ, ալիքնքն՝ միջինի նկատմամբ ավելացել եր 15 սանտիգրամով), իսկ ավելի թեթև սերմերից ստացված բույսերը տվին ավելի ցածր՝ 45 սանտիգրամ միջին կշիռ ունեցող սերմեր: Այդպիսով այն ընտրությունը, վոր կիրառվեց դանազան բույսերից ստացված լորու խառնուրդի նկատմամբ, հաջող եր:

Տ Ե Ւ Ն Ե Բ	Մ Ա յ լ ք - ս ե ր մ ե ր ի մ է լ - ջ ի ն կ լ ե ր ո ւ ս ա ն ա տ ի - գ ր ա մ ե ր ո վ զ		Հ ա յ լ ք ը բ դ ն ե ր ի մ է լ ի ն կ լ ե ր ո ւ	Հ ա յ լ ք ը բ դ ն ե ր ի մ է լ ի ն կ լ ե ր ո ւ		հ ա ր բ ե ր ո ւ - թ յ ա ն ը
	a	b		a	b	
	թ ե ր ե - ն ե ր ի ն ը	ժ ա ն ր ե - ր ի ն ը		թ ե ր ե ն ե - ր ի ն ը	ժ ա ն ր ե - ր ի ն ը	
1909	80	40	10	$85,85 \pm 0,44$	$84,78 \pm 0,38$	$-1,05 \pm 0,58$
1908	25	42	17	$40,21 \pm 0,65$	$41,08 \pm 0,48$	$+0,81 \pm 0,78$
1904	31	48	12	$81,89 \pm 0,29$	$89,64 \pm 0,21$	$+1,25 \pm 0,86$
1905	27	59	12	$88,26 \pm 0,16$	$89,15 \pm 0,17$	$+0,89 \pm 0,23$
1906	90	46	16	$87,92 \pm 0,22$	$89,87 \pm 0,16$	$+1,95 \pm 0,27$
1907	24	47	23	$87,86 \pm 0,30$	$86,85 \pm 0,21$	$-0,41 \pm 0,37$

Այդ նույն պատահական խառնուրդից փորձարարը վերցրեց լորու 16 հատիկը Յուրաքանչյուր հատիկն ստացվել եր տարբեր բույսից: Նո հավաքեց այդ հատիկներից աճած 16 բույսի սերմերը՝ յուրաքանչյուր բույսից առանձին: Միևնույն բույսի լորու հատիկները նույնպես միատեսակ չեյին—մի քանիսը ծանր, մյուսները թեթև եյին: Յուրաքանչյուր բույսի հաջորդներից ընտրվեցին և տնկվեցին ավելի ծանր և ավելի թեթև հատիկները: Դուրս յեկավ, վոր թե մեկից և թե մյուսից աճած բույսերը նման հաջորդներ ավելի Ավելի ծանր և ավելի թեթև ծնող-հատիկներից աճած բույսերի հատիկներն իրենց միջին կշռով միատեսակ եյին: Այդ ցույց ե տալիս, վոր ընտրության կիրառումը միևնույն բույսի սերմերի նկատմամբ վոչ մի արդյունք չի տալիս (աեւ ճ-ըդ աղյուսակը):

Բայց ինչնի ե բացատրվում ընտրության այդ տարբերությունը: Լորին բազմ անում ե ինքնափոշտմամբ:

Դուրս ե գալիս, վոր աղբակցական բազմացումը (իսկ ինքնափոշտումն ամենասեր աղբակցական բազմացումն ե) ավտոմատիկաբար բարձրացնում ե հոմոզիգոտությունը (ստորև տես Ռայանի տվյալները): Արդարեւ, յեթե սկզբնական բույսն հա յեր, ապա իր նմանների հետ տրամախաչվելիս նա կտա ԱԱ+2ԱԱ+ԱԱ: Ինքնափոշտումը պահպանվելիս տաշինները և վերջինները կտան միմիկայն իրենց նմանները, իսկ հետերոզիգոտները հետագայում ևս կտան իրենցից մի քառորդ ԱԱ հոմոզիգոտներ և մի քառորդ այս հոմոզիգոտները Դրանով իսկ հոմոզիգոտ-

Պ Տ Լ Բ	Մարդ սերմերի կշիռը սանտի- գրամերով						Զաւագի մէջն կշիռը
	20	30	40	50	60	70	
A	—	—	—	—	63,1	64,0	64,2
B	—	—	57,2	54,9	56,5	55,5	55,8
C	—	—	—	56,4	56,6	54,4	55,4
D	—	—	—	54,2	53,6	56,6	54,8
E	—	—	52,8	49,2	—	50,2	51,2
F	—	48,5	—	47,9	—	—	48,2
G	—	42,1	46,7	46,9	—	—	46,5
H	—	45,2	45,4	46,2	—	—	45,5
I	—	47,5	45,0	45,1	45,8	—	45,4
K	46,0	—	—	44,6	45,0	—	45,0
L	—	45,9	44,1	41,0	—	—	44,8
M	44,0	—	42,4	—	—	—	42,8
N	41,0	40,7	40,8	—	—	—	40,8
O	—	35,8	34,8	—	—	—	35,1
P	—	45,4	46,9	—	42,8	—	45,5
Q	45,9	—	49,5	—	48,2	—	49,2
R	49,6	—	—	45,1	44,0	—	45,5
S	—	49,1	49,1	47,5	—	—	48,9
T	—	59,5	50,8	—	42,5	—	50,6
Այլող նյութը	44,0	44,3	46,0	49,0	51,1	56,1	47,9

Ների թիվը սերնդից սերունդ կավելանա ի հաշիվ հետերոդիգուային խմբի տեսակաբար կշռի, հետեյալ աղյուսակի համաձայն,

F_1 —100% Aa

F_2 —25% AA + 50% Aa + 25% aa

F_3 —37,5% AA + 25% Aa + 37,5% aa

F_4 —43,75% AA + 12,5% Aa + 43,75% aa

F_5 —46,875% AA + 6,25% Aa + 46,875% aa և ալին:

Ի վերջո, մի բույսի բոլոր հաջորդները շուտով ընդունում են ժառանգական միատեսակ կազմ, ունենալով միենույն գեները. Սերմերի կշռի փոփոխականությունը, վոր նկատվում է միենույն բույսի հաջորդների մեջ, առաջ և գալիս միջավայրի բաղմաղան ազդեցություններից, բայց նա ժառանգական չել. Միենույն բույսի հաջորդներից ստացված ավելի ծանր և ավելի թեթև սերմերն իրենց ժառան-

դական հատկություններով չեն տարբերվում։ Նրանց հաջորդները միատեսակ կլինեն, ուստի ինչպիսի սերմեցու ել թողնենք, միևնույնն է, միջին կշուը չենք կարող փոխել, այսինքն՝ ընտրությունն ապարագում կլինի։

Իսկ այն դեպքում, յերբ վերցնում ենք գենոտիպով տարբեր ծնողների հաջորդներին, նրանց սերմերի կշուի տարբերությունները վորոշվում են վոչ միայն միջավայրի ազդեցությամբ, այլև ժառանգական պատճառներով։ Ուստի Խմանանքը, ընտրելով այդ խառնուրդից պիտի ծանր և ավելի թեթև լորիներ, կարողացավ առանձնացնել իրենց ժառանգական հատկություններով տարբերվող զանազան գծեր։ Ուստի այդ բազմազան խառնուրդների սահմաններում կատարված ընտրությունն իրական եր: Հետագայում Խմանանքը, հաջորդներ ստանալով ինքնափոշոտվող մի բույսից, առաջ բերեց մի շաբաթ զուտ գծեր, այսինքն՝ այնպիսի գծեր, վորոնց մեջ բոլոր անհատներն ել գենետիկորեն միատեսակ են: Զուտ գծերի սահմաններում գոյություն ունեն միայն ֆենոտիպային փոփոխություններ: Նրանց նկատմամբ ընտրությունն ուժ չունի: Իսկ զուտ գծերի խառնուրդում, զանազան գծերին պատկանող անհատների միջև գոյություն ունեն գենոտիպի տարբերություններ: Ընարությունը, համակերպվ այդ գենոտիպական ժառանգական տարբերությունները՝ եփեկտավոր ե դառնում:

Հասկացագուրջաւան մաեմար (զօն) գծի մասին: — Խմանանքի մացրած մաքուր գծի հասկացողությունը ներկայում է հակալական դեր և խաղում: Այդ տերմինը կիրառվում է յերբեմն ավելի լայն իմաստով՝ հոմոգիզատային միևնույն գենոտիպն ունեցող անհատների ամեն մի խմբի նկատմամբ: Յեթե բույսը բազմանում է ինքնափոշոտմամբ կամ յեթե ստորին կենդանիները բազմանում են բաժանումով կամ միջատները՝ կուսական լեզանակով, ապա մի անհատի սերունդը կազմում է մաքուր կտմ զուտ գիծ:

Մենք արդեն մատնանշել ենք, վոր պոպուլացիան, ի հակագրություն զուտ գծի, ներկալացնում և գենետիկորեն վոչ միատարր անհատների խառնուրդը: Պոպուլացիայում ընտրությունն իրական եր, քանի վոր նա գործ ուներ իրենց գենոտիպական հատկություններով այլատարը անհատների հետ:

Խաչաձև փոշոտվող բույսերի կամ յերկու անհատի զուտգործությունը պատճառացող կենդանիների նկատմամբ չի կարելի խոսել բառացի զուտ գծի մասին: Դրանք յերկար ժամանակ իրենց մեջ բազմացնելով՝ կարելի յե, ինարկե, շոշափելի հոմոգիզոտության հասնել: Սակայն դորժնականորեն այդ դեպքում յերեք չի կարելի հասնել գենոտիպական այնպիսի միատարրության, վոր գոյություն ունի իսկական զուտ գծում (ինքնափոշոտավող բույսերի մեջ): Հստ եյության, բոլոր գեների

նկատմամբ անիրազորենիլիք յե լիակատար հոմողիգոտությունը, բայց
այդ չի նշանակում, թե չի կարելի ստանալ մի շարք գիներով հոմո-
ղիգոտ դիմում Այդպիսի գիծը ևս կարելիք յե զուտ անվանել, ավելաց-
նելով միայն, թե՝ այսինչ-այսինչ հատակիշներով: Այն հատկանիշների
նկատմամբ, վորոնցով գիծը զուտ ե, այսինքն՝ հոմողիգոտային ե,
ընտրությունն ուժ չունի և այդ զրույթի ապացույցն են խոհանսենի
աշխատանքի արդյունքները:

Ընթարքյան հաջողաւրյանը կախված ե խմբի գեներիկական արտ-
առըության աօսիձանից: — Այդպիսով ընտրության հաջողությունը կախ-
ված ե նրանից, թե գեներիկական միատարրությունն կամ արդյոք
կինդանիների կամ բույսերի այն խմբի սահմաններում, վորտեղ ընտ-
րություն և կատարվում: Յեթե առանձին անհատներ տարբերվում են
իրենց ժառանգական հատկություններով, յեթե պոպուլացիան, այ-
սինքն՝ տվյալ բոլոր անհատների գումարը հետերոգեն ե, ապա ընտ-
րությունն արգունք կտա: Յեթե ընտրության յենթակա հատկանիշը
կախում ունի սակավաթիվ գեներից, ապա այդ ճանապարհով կարելիք
յե շատ շուտով ավյալ գեների հետերոգենոտային վիճակը հոմողի-
գոտայինի փոխարեկել Ավելի կամ պակաս հոմողիգոտության հասնե-
լուց հետո ընտրությունն այլևս եֆեկտ չի տալիս:

Ընտանի կինդանիների տնտեսապես արժեքավոր հատկանիշները,
ինչպիսիք են՝ կշիռը, կաթնատվությունը, ածանությունը և այլն, ըստ
յիշենութիւն մեծ մասամբ կախված են շատ գեներից, իսկ մեր ցեղերն
ըստ այդ գեների շատ հետերոգենոտային են: Ըստ այդ հատկանիշ-
ների կատարվող ընտրությունը հաճախ իրական ե լինում: Այդ պատ-
ճառով, ընտրության միջոցով կարելիք յե բարեկավել տվյալ ցեղը


Շատ գեներով գոյություն ունեցող այն հետերոգենոտությունը,
վոր համարյա միշտ նկատվում ե պոպուլացիայի սահմաններում,
բացատրում ե այն փաստը, վոր ընտրությունը շատ սերունդների
ընթացքում կարելիք յե կատարել շոշափելիք արդյունքներով: Այն ժա-
մանակ զծանկարով պատկերելով, թե ինչպես սերնդից սերունդ ավե-
լանում և այն հատկանիշը, ըստ վորի կատարվում ե ընտրությունը,
կարելիք յե ստանալ մի կորագիծ՝ 105-րդ նկարում բերվածի նման:

Ընթարքյան կորագիծը: — Այդպիս անընդհատ բարձրացող կորա-
գիծը ցույց է տալիս, վոր ինչքան ել մանք և աննշան լինի տվյալ
հատկանիշն իր ընույթով, իրոք նա կախված է շատ գեներից: Գենե-
րից մի քանիսն զգալի գեր են խաղում տվյալ հատկանիշը կազմվելու
գործում և այդ գեների հոմողիգոտային վիճակի փոխարկվելու դեպ-
քում ընտրության կորագիծն իսկույն ուժեղ թուչք և գործում վեպի
վեր: Հետազայում ընտրվում են այն բոլոր փոքր մողեփիկատոր գե-
ները, վորոնք շատ աննշան, բայց և այնպես նկատելի ազդեցություն

են գործում հատկանշի վրա։ Նըանց կուտակմանը զուգընթաց՝ ընտրության կորագիծը սահուն կերպով, շարունակ, թեպետև շատ դանդաղորեն, վեր և բարձրանում է վերջիվերջո վրա յե հասնում այսպիսի մի մոմենտ, յերբ տվյալ հատկանշի վրա աղբող այն բոլոր գեները, վորոնց ներգործումը հնարավոր ե քիչ թե շատ հաշվառել անցնում են հոմոզիգոտային վիճակի։ Դիմը զուտ ե դառնում և ընտրությունն այլա արդյունք չի տալիս։ Այն ժամանակ ընարության կորագիծը, ընդհանուր առմամբ, հորիզոնական ուղղություն և ստանում, ինչպես նկատվում էր Խոհանոսի բոլոր զուտ գեներում։

Կարո՞ղ ե արդյոք մատուց գիծն ամփոփուի մնալ։ — Հնարավիր և արդյուք, վոր զորեւ մաքուր գիծ յերկար ժամանակ անփոփոխ, քարացած մնա։

Այդպիսի պատկերացումը չի կապվում այն բանի հետ, ինչ վոր գիտենք մենք բոլոր կենդանի արարածներին հատուկ փոփոխականու-



Նկ. 105. Կորագիծ, վոր ցույց և տակա գրողովիկ կրծքի մազերի թվի ավելացումը՝ 10 սերնդի ընթացքում կատարված ընարության շնորհել (ըստ Ռոկիցեկու)

Բյան մասին Խոհանոսենի տեսակետը, յեթե այդ ընդունենք բառացի, մետաֆիզիկական և հանդիսանում։

Ցոթերորդ գլխում մենք քննել ենք գենի մայնության կամ անփոփոխականության հարցը։ Ամեն մի գեն մնայուն և միայն համեմատաբար Որդանիզմի գենութիպում անընդհատ տեղի յեն ունենում ժառանգական փոփոխականության պրոցեսներ։ Մուտում, փօխվում են առանձին գեներ, ամեն մի գենի փոփոխումը, վորի հետևանքն ե լինում ժառանգական նոր հատկության առաջացումը, անդրադառնում և մյուս բոլոր գեների վրա, ամբողջ գենութիպի վրա, վորովնետև գենոտիպը վոչ թե սոսկ մեխանիկական գումարն և այն գեների, վորոնցից բաղկացած և նա, այլ վորոշ ամբողջականություն ունի։

Ուստի վոչ մի զուտ գիծ չի կարող քարացած համարվել Նրա-

նում շարունակ տեղի յեն ունենում ձուտացիոն փոփոխականության պրոցեսներ, կուտարկվում են նոր գեներ, փոփում են հները։ Զուտ գծի յուրաքանչյուր նոր սերունդ այլա նախորդին նման չի լինում։ Այդ փոփոխությունը կարող ե համարյա աննկատելի լինել, բայց նա այսուամենային տեղի յեն ունենում։ Ցեթե մենք վորոշ հատկանըշի վորեն գենով, որինակ՝ ածանության գենով, հոմոլոգոտային գիծ ունենք, ապա մի շարք սերունդների ընթացքում մենք կարող ենք նաև չնկատել միջին ածանության վորոշակի փոփոխությունը, յեթե մուտացիոն փոփոխության պրոցեսները դեռ չեն ընդգրկել տվյալ հատկանիշը վորոշող դիմավոր գեներին։ Ամեն մի մուտացիա, թեկուղ լինի դա անմիջականորեն ածանության վրա չազդաղ գենի մուտացիա, անդրադառնում ե կենդանու ամբողջ գենոտիպի վրա և դրանով իսկ ազդում ե ածանության գեների ներգործման վրա։

Թանի վոր զուտ գծի սահմաններում ևս մուտացիոն փոփոխություն ե կատարվում, ուստի ընտրությունը պետք ե ներգործի նաև զուտ գծում նա պիտի և ամբացնի մուտացիոն փոփոխությունները։ Դրանց կուտակմանը զուգընթաց, ընտրության կորագիծը պետք ե դանդաղորեն, բայց անընդհատ բարձրանա գեպի գեր և վոչ թե ընթանա նորիգոնական գծով, ինչպես հետեւում ե Խմիտաննի բառացիորեն ընդունված դրույթներից։ Այս ուղղումը չի ժխտում այն պատկերացումը, թե ընտրությունն ուժ ունի անհատների մեջ միմիայն գենետիկական տարրերություններ լինելու գեպքում։ Այդ ուղղումն ընդարձակում ե ընտրության վերի վերաբերյալ մեր պատկերացումը, հաստատելով, վոր ընտրության միջոցով հոմոլոգոտության հասնելուց հետո ընտրությունը կարող ե տեղի ունենալ նոր առաջ յեկող գենոտիպական տարրերությունների հիման վրա։

Այդ դրույթը հրաշալի կերպով հաստատվում ե այն աշխատանքով, վորը կատարել է Ձեկնինի։ Նա ընտրության յենթարկեց նեղ, շերտի նման աչքեր ունեցող դրողոֆիլի մուտացիոն մի գիծն ըստ աչքի ֆասետների թվի (Բառ գենը), Ընտրության միջոցով նա ստացավ թե ավելացած և թե նվազած թվով ֆասետներ ունեցող ձեեր, սակայն այդ փոփոխությունների հիմքն եր կազմում վոչ թե ընտրության կուտակող գերը վորպես այդպիսին, այլ գենոտիպական կառուցվածքի փոփոխությունները, այսինքն՝ մուտացիաները ֆասետները նվազեցնելու ուղղությամբ ընտրություն կատարելիս առաջին յերեք սերնդում ֆասետները նվազեցին, այսինքն՝ մուտացիոն փոփոխման հիման վրա առանձնացվեց նոր գենոտիպ։ Հերդից մինչև 12-րդ սերունդն ընտրությունն արգելն վոչ մի արդյունք չեր տալիս, սակայն հաջորդ յերեք սերունդների ընթացքում նա դարձաւ նվազեցրեց աչքի ֆասետների թիվը (տեղի ունեցավ նոր մուտացիա)։ Ապա

մինչև 42-ըդ սերունդը, չնայած շարունակվող ընտրության, ֆասետ-ների թիֆ անփոփոխ մնաց:

Վերջապես ինքը Խոհանոնքը նկատել և մուտացիաների առաջ գալը լորու զուտ գծերում:

Սելեկցիայի սիմերի կատարելացիան.—Ընտրության մեխանիզմի մտախն մեր տված պատկերացումը շատ կարևոր և սելեկցիայի համար, վորովնետև սելեկցիան հիմնված է ընտրության կիրառման վրա: Նայած թե ինչպես և կատարվում սելեկտվող կենդանիների ընտրությունը, կիրառվում են սելեկցիայի այս կամ այն համապատասխան մեթոդները կամ տիպերը: Գոյությունը ունի յերեք մեթոդ կամ տիպ՝
1) մասսայական, 2) գծային, 3) անհատական:

Սելեկցիայի այդ յերեք տեսակներից յուրաքանչյուրն իր հերթին կարելի յերաժանանել յերկու տեսակի՝ ա) սելեկցիա ըստ առանձին գենների, բ) սելեկցիա ըստ գումարային գենոտիպի: Առաջին գեպքում սելեկցիան ընթանում է այն հատկանիշներով, վորոնք պայմանավորված են մեզ արգեն հայտնի վորոշ գեներով: Յերկրորդ գեպքում սելեկցիան գործ ունի այնպիսի բարդ հատկանիշների հետ, վորոնց գենոտիպային բնույթը հայտնի չե, այնպիս վոր ընտրությունը կատարվում է վոչ թե ըստ առանձին գենների, այլ ըստ ընդհանուր գենոտիպի:

Մասսայական սելեկցիա.—Մասսայական է կոչվում այն սելեկցիան, յերբ արամախաչման համար ընտրում են պյանդիսի անհատներ, վորոնք ամենահարմարն են համարվում այս կամ այն նպատակի համար և ամենից ավելի փոխված են մեզ ցանկալի ուղղությամբ, այսինքն՝ ընտրում են իրենց փենոտիպով լավագույն կենդանիները և նրանցից են ստանում հաջորդ սերունդը Յերկրորդ սերնդում դարձյալ կրկնում են նույն ընտրությունը և բուծման համար թողնում են անհատների լավագույն մասը: Մասսայական այդ ընտրությունը շատ վաղուց ե կիրառվում կենդանաբուծության ու բուսաբուծության մեջ և նրա ոգնությամբ բավականին ցեղեր ու տոհմեր են ստացվել Սակայն նա շատ դանդաղ և անհուսալի մեթոդ եւ նրա անհուսալիությունը բղիսում է այդ ընտրության եյությունից՝ նրանից, վոր ընտրությունը կատարվում է ըստ փենոտիպի: Յեթե փենոտիպը լիովին համապատասխանեց գենոտիպին, ալսինքն՝ յեթե գոյություն չունենար արտաքին պայմանների ձևափոխող աղդեցությունը, վոր, ճիշտ ե, տարբեր աստիճանի յև լինում տարբեր հատկանիշների նկատմամբ, այն ժամանակ ընտրությունն ըստ փենոտիպի կատարելիս ել կարելի յեր սպասել հարյուր տոկոսանի արդյունք, որինակ՝ յեթե մասսայական ընտրությունը կիրառվի ըստ ռեցեսիվ գենի իսկ գերիշխող գենն ընտրության յենթարկելու գեպքում միասնական փենոտիպի տակ թագնված են հոմոգիգուաներ և հետերոգիգուաներ, այնպիս, վոր ընտ-

բելով պոսուլացիայից Ա ֆենոտիպով անհատներ (գենոտիպորեն՝
ԱԱ և Աա), հաջորդ սերնդում մենք կստանանք դարձյալ
տԱԱ+սԱա+րա-ներից բազկացած պոսուլացիա Ժիշտ և սեցեսիֆների
թիվը արդեն համեմատաբար պակաս կլինի, քան նախորդ սերնդում,
քայլ քանի վոր մենք, ընտրությունն ըստ ֆենոտիպի կատարելով,
տրամախաչմանը մասնակից ենք դարձնում նաև հետերոզիգոտներին՝
ուստի դրանով իսկ պոսուլացիայում պահպանում ենք ունեցելիվ դենը
վորոշ խտությամբ, վոր, ճիշտ և, դանդաղորեն նվազում և մասսա-
յական ընտրության շնորհիվ:

Հաշվարկումների յենթարկելով պոսուլացիայում առաջացող դա-
մետները, ինչպես արել ելինք Զ-րդ զվարում Հարդիի և Պիրանիի որենք-
ները քննելիս, կարելի յև ցույց տայ վոր ըստ գերիշող գենի մաս-
սաբական ընտրություն կատարելիս յուրաքանչյուր հաջորդ տրամա-
խաչում, Պիրանի Վորմուլի համաձայն, կտա հոմոզիգոտների և հետե-
րոզիգոտների նոր հարաբերություն:

Ալզիսիսով, մասսայական ընտրություն կատարելով ըստ գերիշ-
խող գենի, մենք իսկապես չենք կարող լիովին ազատվել ունեցելիքից,
այսինքն՝ միշտ վորոշ քանակությամբ տոհմային խոտան կատացվի:

Եեթե մասսայական սերեկցիան կատարվում և այնպիսի բարդ
հատկանշով, վորը կախված և շատ գեներից և, բացի զրանից, յեն-
թարկում և արտաքին պայմանների ուժեղ ազդեցության, այն ժա-
մանակ ֆենոտիպի ու գենոտիպի միջև ավելի քիչ համապատասխա-
նություն կլինի, ուստի և սերեկցիայի հաջողությունն անչափ պակաս
կլինի. Միայն սկզբում, յերբ նույնի բազմապիսի յե, յերբ հոտի
կազմի մեջ մտնող գենոտիպերն ավելի խսյատարեն են, մասսայական
ընտրությունը շոշափելի արդյունք կտա իսկ հետազայում, համապա-
տասիան ֆենոտիպերը թողնելիս, այլև հնարավոր չի լինում լավա-
զույն գենոտիպերն առանձնացնել և ընտրությունն ապարդյուն և
մնում:

Ամերիկայի Մեն քաղաքի փորձակայանում 30 տարի սրանից
առաջ սկսվել եր հավերի ածանությունը բարձրացնելու մասսա-
յական ընտրություն: Չնայած 10 տարվա աշխատանքին, կայտնը
չկարողացավ քիչ թե շատ նկատելի չափով ավելացնել հավերի տա-
րեկան միջին ածանությունը նա ստիպված յեղավլ թողնել այդ յեղա-
նակը և անցնել ավելի կատարելագործված մեթոդների:

Չնայած մասսայական ընտրության անհուսալիության, այդ
մեթոդը չպետք և անաեսեր Յեթե այդպիսի ընտրությունը կատարվի
լայն մասշտաբով, բազմաթիվ կենդանիների վրա, նա շատ շոշափելի
արդյունքներ կտա: Գործնական մեծ սխալ գործած կլինինք, յեթե
ժխտենք մասսայական ընտրության նշանակությունը նրա թերու-

թյունների պատճառով։ Ստորև մեր բերած ընտրության ավելի հուսուլիք միջոցը, վոր հիմնված է հաջողդներին անհատապես փորձի յինթարկելու վրա, հեշտ չեւ գործնականորեն գլուխ բերել ուստի գրանով կարելի յեւ ընդգրկել համեմատաբար սակավաթիվ արտադրողներ։

Անսառունների մնացած ամբողջ մասսայի վորակը բարձրացնելու համար անհրաժեշտ ե մասսայական ընտրություն կատարել Մեր պլանային սոցիալիստական տնտեսությունը հնարավորություն և տալիս ամենալայն չափով կիրառելու այդ մեթոդը, ընդգրկելով համարյա բոլոր անսառուններին։ Այդ հանգամանքը, հարկավ, տնտեսական բավականին խոջոր եփեկա կտաւ Մեր անտեսության աճմանը զուգընթաց կարելի կլինի ավելի ու ավելի լայն մասշտաբով անցնել ընտրության ավելի կատարելազործված ձևերին։

Դժայիթ սելիկցիա։—Դժայիթն սելիկցիան մասսայականից տարբերվում է նրանով, վոր ըստ Փենոտիպի համեմատվում են վոչ թե առանձին անհատներ, այլ անհատների խմբեր։ Ամեն մի խմբի մեջ մտնում են ազգակցական վորոշ աստիճանով միմյանց հետ կապված անհատներ։ Դժայիթն սելիկցիան ներկայացնում է սելիկցիայի շատ ավելի բարձր աստիճանը Յուրաքանչյուր խմբի սահմաններում, վոր կոչվում է գիծ, գտնվում են այնպիսի անհատներ, վորոնք իրար նման են իրենց գենոտիպով, ուստի գծերը բնութագրող փենոտիպերը հնարավորություն են տալիս զատելու գենոտիպի մասին հարկավ, անհրաժեշտ է համեմատություններ անել կիրակրման ու պահպանման միատեսակ և լավ պայմաններում, մի բան, վոր պարտադիր և ամեն մի սելիկցիայի համար։

Դժայիթն սելիկցիան պահանջում է կիրառել տրամախաչման այն սիստեմը, վորը կոչվում է ինքրիդինգ կամ ազգակցական տրամախաչում։ Ստորև մենք կքննենք ինքրիդինգը՝ արամախաչման մյուս սիստեմների հետ միասին։ Իսկ այստեղ մենք միայն կմատնանշենք, վոր ազգակցական արամախաչման ոգնությամբ զանազան գծեր ստեղծելով, նրանցից յուրաքանչյուրի ներսում ստանում են ավելի կամ պակաս չափով միատարր, կինսոլիդացած գենոտիպեր։ Այդ միասիպությունն ստեղծվում է շնորհիվ այն հանգամանքի, վոր ինքրիդինգի ընթացքում հոմոզիգոտությունն ավտոմատիկաբար ավելանում է Դրանում կարելի յեւ համոզվել համապատասխան որինակների հիման վրա։

Իհարկե, այստեղ ես Փենոտիպն ու գենոտիպը կատարելազուն չեն համապատասխանում իրար, սակայն և այնպես, յեթե ազգակից ամրող մի խումբ ունենում է մյուսից ավելի բարձր ցուցանիշներ, առա այդ կարելոր ապացույց և հոգուտ գենոտիպի նշանակության։

Զանագան զծեր համեմատելիս բարդացնող հանգամանք և հանդիսանում այն, վոր ինը բիդինդի ժամանակ մի քանի զծեր կարող են վորոշ չափով իջեցնել իրենց արժանիքները շնորհիվ այն հանգամանքի, վոր վոչ ցանկալի կիսալետալ գեներն անցնում են հոմոլիգոտային վիճակին Այդ գեպքում, այդ բացասական լեռեռույթների զեմ պայքար մղերու և միաժամանակ արժեքավոր արդյունքները պահպանելու նպատակով, կարելի յե դիմել միմյանց նմանող, զուգահեռ զծերի տրամախշման։

Մասսայական ընտրության նկատմամբ զծային սելիկցիայի ունեցած հսկայական առավելությունը լուսարանում և այն աշխատանքը, վոր կատարվեց Մենի կայանում՝ ածանության սելիկցիայի բնագավառում, մինչև 1908 թվականը կատարված սելիկցիոն աշխատանքը ձախողելուց հետո Դրանից հետո գենոտիկներ Պերլը և Սլուշնար կարողացան բարձրացնել հագերի ածանությունը, ձեռնարկելով զծային սելիկցիային և առանձնացնելով մի շաբթ արժեքավոր զծեր։

Անհատական սելիկցիա.—Սելիկցիայի բարձրագույն ձեռն և անհատական սելիկցիան, յերբ առանձին կենդանին (սովորաբար արտադրողը) գնահատվում է ըստ իր հաջորդների, այսինքն՝ ըստ նրան հատուկ գենոտիպի և վոչ թե ըստ ֆենոտիպի։ Այդ մեթոդը զեռամենից քիչ ե մշակված, թեպետ նրա նշանակությունն անվիճելի յեւ

Անհատական գնահատումը ըստ մեզ հայտնի առանձին գեների (կամ գենի) փաստորեն գոյություն ուներ զեռ մենդելիզմում. դա անալիզող տրամախաչումն եր Տրամախաչելով սեցեսիվ ձեռների (սեցեսիվ անալիզատորների) հետ, կարելի յե վորոշել թե տվյալ արտադրողը մեզ հետաքրքրող գեներով հոմոլիգուային և, թե հետերոլիգուային Բայց մեծ մասամբ կենդանիներին պետք ե ստուգել այնպիսի հատկանիշների տեսակետից, վորոնց գեները չեն առանձնացված։ Այդ գեպքում պետք ե գնահատել ընդհանուր գենոտիպի տեսակետից։

Գնահատման ճշտությունն ապահովելու համար յուրաքանչյուր արտագրողից պետք ե ստանալ զգալի թվով հաջորդներ։ Այդ հարցում խորհրդային սելիկցիան գտնվում է շատ ավելի բարձր մակարդակի վրա, քան բուրժուական յերկրների սելիկցիան։ Այնտեղ, հենց տնտեսության պարմաններից զրդված, պետք ե բավարարվել նվազագույն թվերով, ուստի մի քանի զիտնականներ հնարավոր են համարում հիմնվել 8—10 զավակների վրա։ Իսկ մեր տնտեսություններում արտադրողների գնահատումը հնարավոր ե կառուցել զիտական ճիշտ հիմքի վրա։ Այդ հարցի թեորիայի ուսումնասիրումը ցույց տվեց, վոր ամենից ավելի նպատակահարմար ե ձգտել ստանալու մի արտագրողից յերկու սեռի 100—200 հորթ։

Ըստ եյության կատարվում և վոչ թե գենոտիպի բացարձակ

գնահատումը, այլ մի քանի արտադրողների միայն համեմատական գնահատումը այն տեսակետից, թե ինչպես են ազգում նրանք սերունդների վրա Յեթե խոսելու լինենք տավարի մասին, ապա այդ գնահատումը կարելի յե անել մի քանի մեթոդներով:

1) համեմատելով տվյալ արտադրողի հաջորդների միջինն ամբողջ հոտի (ամբողջ պապուլացիայի) միջիննի հետ Որինակ՝ ամբողջ պապուլացիայում հաջորդները ծնվելիս նրանց միջին կենդանի կշիռը կազմում է $39,92 \pm 0,27$ կիլոգրամ, իսկ տվյալ ցույք հաջորդների միջին կենդանի կշիռը կազմում է $44,81 \pm 0,89$ կիլոգրամ։ Դանելով տարբերությունը և բաժանելով սխալի վրա, կարելի յե գտանել տարբերության ճշտության մասին։

2) համեմատելով հաջորդների միջինը մայրերի միջինի հետ,

որինակ՝ մայրերի միջին կիլո կազմում է 3976 կիլոգրամ
նրանց աղջկների միջին կիլո 5013 ,

1036 կիլոգրամ տարբերությունը վկայում է այդ ցույքի կատարած գերը (դա սեալ ե, վորովհետև տվյալ գեղքում տարբերության սխալը հավասար է ± 255 կիլոգրամի)։

3) համեմատելով մի արտադրողի հաջորդների միջինը յերկու արտադրողների հաջորդների միջիննի հետ, որինակ (ըստ Լյուտիկովի աշխատանքի)՝

№ 636 ցույք ավեց հորթեր, վորոնք 3 ամսական հասակում ունեյին $81,2 \pm 1,65$ կգ միջին կշիռ,

№ 673 ցույք ավեց հորթեր, վորոնք 3 ամսական հասակում ունեյին $89,5 \pm 1,45$ կգ միջին կշիռ,

№ 783 ցույք ավեց հորթեր, վորոնք 3 ամսական հասակում ունեյին $91,4 \pm 1,45$ կգ միջին կշիռ։

Տվյալ արտադրողների մասին ճիշտ դատելու համար անհրաժեշտ է միայն մի պայման¹⁾, անհրաժեշտ ե, վոր քիչ թե շատ համարժեք լինեն եգերի այն խմբերը, վորոնց հետ տրամախաչվում են ցուլերը, հակառակ գեղքում մենք չենք գիտենա, թե ում վերագրենք հաջորդների բարելավումը՝ արվի՛ կատարած գերին, թե մայրերի պատահական ընտրությանը։ Մայրերի ճիշտ բաշխումն արտադրողների միջև հակայական նշանակություն ունի։

Եգերի գերը չեղոքացնելու ամենակատարյալ մեթոդն է դիալի տըամախաչումը, վոր առաջին անգամ առաջարկեց ի. Նմիդաք, և վորը կիրառվում է դյուլապանտեսական կենդանիների մի շարք տեսակների նկատմամբ։ Դիալի արտամախաչման սկզբունքն այն ե, վոր յերկու

1) Անհրաժեշտ ե նաև, վոր մինչեւ տվյալ հասակը (3 ամսական) հորթերը սննդի և խամքի միասնակ պայմաններում լինեն, նաև և. Յեր.

արտադրողները (կամ յեթե ավելի շատ արտադրողներ կան, այն ժամանակ արդին պետք է անվանել պոլիմալի տրամախաչում) համեմատում են միենույն եզրից ստացված հաջորդների հատկությունների տևակետից: Եզերի խումբը բաժանում էն յերկու յենթախմբի և յենթախմբերից յուրաքանչյուրը հերթով տրամախաչում են արտադրողներից յուրաքանչյուրի հետ (փոխելով յերկորդ տրամախաչման ժամանակ արուների տեղերը): Յերկու արտադրողների հաջորդների տարրերությունը մայրերի գենոտիպերից կախված չի լինի, վորովհետեւ նրանք միատեսակ են (դրա համար, ինարկե, հարկավոր և հաջորդներից վերցնել բավական թվով անհատներ): Տարրերությունը կախում չպետք և ունենա նաև պայմաններից: բոլոր հաջորդներին պետք և պահել միատեսակ պայմաններում: Այդ գեղպառում տարրերությունը ցույնը ցույց կտա արտադրողների հարաբերական գենետիկական արժեքը: Յեթե տարրերությունները ունել լինեն, լիակատար հիմք կունենանք հետազա բուժման համար ոգտագործել լավագույն արտադրողներին:

Վերջին տարիներս Ամերիկայում տվյալներ են հրապարակվում ցուլիրի այնպիսի զնահատման մասին, վորը կատարվում և նրանց աղջիկներին մայրերի հետ համեմատելով: Բայց այդ զնահատականը մեծ մասամբ կատարվում է չափազանց սակավաթիվ աղջիկների վրա: Այդպես, Ֆարմանք (1933 թ.), վոր վերլուծման եր՝ յենթարկել այրշեք ցեղի 51 ցուլի հաջորդներին, ողափել եր 0-ից մինչև 48 աղջիկներին վերաբերող թվերից: 51 ցուլից միայն 4-ը զնահատվել եր 30-ից ավելի թվով աղջիկների հիման վրա: Այդ նշանակում և, վոր միայն այդ ցուլիրի նկատմամբ կարելի յետեսը, թե նրանք համեմատաբար ավելի ճիշտ են զնահատվել ըստ իրենց գենոտիպի:

Բայց հաջորդների կատարվող անհատական ստուգման մեթոդի արժեքն անվիճելի յեւ: Դժբախտաբար նա բավականաչափ լայնորեն չի կիրառվում պրակտիկայում, և յեթե կիրառվում ե, ապա վոչ բավականաչափ խորապես իսկ մեր պլանային սոցիալիստական դյուզատնուսության պայմաններում այդ ստուգումը կարելի յեւ կիրառել լիակատար չափով և մեթոդիկորեն ճիշտ յեղանակով: Այդ մեթոդն ավելի մեծ նշանակություն և ստանում շնորհիվ այն հանգամանքի, վոր մեր անասնաբության պրակտիկայում լայնորեն արժատանում և արհեստական սերմանավորումը, յերբ մի արտադրողի սերմով բնութափում են հարյուրավոր եզեր:

Ինչ հասկանիօներ պետք է նկատի առնվիճ ընթարքյան ժամանակի:— Այն հարցը, թե ի՞նչպիսի նկատառութերով պետք և զեկավարվել տոհմի համար անասուններ ընտրելիս, շատ դժվար և լուծել և նրա շուրջը մեծ վիճեր են յեղել ու լինում են: Հիմնական մոմենտն այն ե,

զոր ընտրությունը պետք և կատարվի նախնառաջ տնտեսապետ ողակար հատկանիշների տեսակետից, նորվեգիական գննետիկ Վրիդոր շատ խիստ և քննազատում կաթնային անասնաբուծության մեջ գորյություն ունեցող տոհմային ընտրությունը և առ մտնանչում և, վոր մինչեւ այժմ շատ լայնորեն և կիրաւում տոհմային անասունների գնահատումը վոչ թե նրանց արտադրողականության, այլ սոսկ արտաքին ձևերի՝ եքստերյերի տեսակետից, Այդ առանձնապես վերաբերում և ցուցերին Ուստի Վրիդոր գանում եր, վոր անհրաժեշտ և լուրջ ուշադրություն նվիրել արտադրողների ընտրությանն ըստ նրանց գենոտիպերի, այսինքն՝ նկատի առնելով նրանց աղջիկների կաթնատվությունը, Գերմանական գենետիկներ Կրօնախերը և Պատովը վորոշ ուղղում են մացնում Վրիդոր ցուցումների մեջ, Նրանց կարծիքով Վրիդոր մոռանում և յերկրորդ, կարեւոր պայմանը՝ կենդանու մարմնի կառուցվածքը, Յեզ վորովնետեւ կառուցվածքը ճանաչելու համար ուրիշ վոչ մի ավյալ չկա, բացի արտաքին ձևերից, ընտական և, վոր վերջիններս պետք և նկատի առնվեն կենդանիներին գնահատելիս և կաթնատվության տեսակետից համապատասխան տոհմ ընտրելիս Բացի դրանից, Կրօնախերը և Պատովը մատնանշում են, վոր միակողմանիություն կլիներ բացառապես կաթնատվությամբ կողմնօրոքշվելը, մինչդեռ հաճախ կարիք և լինում նկատի առնել նաև միացյալ արտադրողականությունը (և՝ կաթնատվությունը, և՝ մասամբությունը), Իսկ մսային մթերավավությունն անխղելիորեն կազմած և կենդանու կազմվածքի ձևերի հետ Խակ ինչ վերաբերում և ձևականությանը, յերբ հատուկ ուշադրություն և նվիրվում վոչ մի նշանակություն չունեցող արտաքին հատկանիշներին և բժաննդություն և ցուցաբերվում նրանց նկատմամբ, ապա Պատովը և Կրօնախերն ամբողջովին համամիտ են Վրիդորի կարծիքի հետ Ազելի ճիշտ կլինի, յեթե սելեկցիայի ժամանակ կենսանուն զնահատենք վոչ միայն մի հատկանշի (որինակ՝ միայն կաթնատվության) տեսակետից, այլև նկատի առնենք մյուս հատկանիշները՝ մսամափությունը, առողջությունը և այլն, վորովնետեւ այդ հատկանիշներն անտեսելով, դժվար չե կորցնել դրանք, որինակ՝ ստանալով կաթնառատության բարձր ցուցանիշներ, կարող ենք կանգնել կէսոք նվազման և կազմվածքի թուլացման առաջ Արտադրողների գենոտիպական արժանիքների միասնական գնահատման մեթոդներ գտնելու ձգտումը ծննեց սելեկցիոն կոնֆիցիենտի գաղափարը, ըստ վորի այդ կոնֆիցիենտի մեջ պետք և մտնեն մի շարք հատկանիշների համապատասխանորեն կշռված ցուցանիշները:

Այդ կշռման վորոշ չափով պայմանական լինելը մի փաստարկում և սելեկցիոն կոնֆիցիենտի գեմ, բայց համենայն դեպք հնարավոր և

չափերի վորոշ սիստեմի մեջ դնել գանազան հատկանիշների մի շաբթ ցուցանիշներ, արտահայտելով դրանք վորեն մի չափումով:

Անլիկցիայի ժամանակ պահպանման ու կերտեցման պայմաններ սահմանվու նօանուկուրրումը: — Հնարավոր չե սեմիկցիոն ձեռնարկումներ կիրառել, առանց պահպանման ու կերտեցման նորմալ պայմաններ սահմանվու լավ գենուտիպեր կարող են առաջ գալ միմիայն այն գեղագում, յերբ նրանց իրականացումը համապատասխան պայմանների մեջ և դրանք իսկ վատ պայմաններում բոլոր ֆինուտիպերն եւ կդանին զգալիորեն ցածր մակարդակի վրա, և կարող ե պատճել, վոր հաջորդների ֆինուտիպային տարրերությունները բոլորովին թրուր լինեն, չհամապատասխանեն արտադրողների ֆինուտիպային տարրերություններին: Մյուս կողմից՝ անհրաժեշտ ե, վոր համեմատվող խմբերը դանին նման, վորքան կարելի յե, միատեսակ պայմաններում: Միայն այդ ժամանակ կարելի յե համոզված լինել վոր նրանց տարրերությունը բղխում և գենուտիպերից և վոչ թե միջավայրի տարրերություններից: Ուստի փորձը կազմակերպելիս նախատեսվում ե, վոր փորձի յենթակա արտադրողները դանին միևնույն տնտեսության մեջ: Զանազան անտեսություններում ստացված տվյալները կարելի յե միացնել միայն այն գեղագում, յերբ լիակատար յերաշեիք կա, վոր այդ անտեսություններում անասունների կերակրումն ու խնամքը միատեսակ են յեզեր:

Ընթացական համեստը ամրացումը ուամխաչման միջոցավ: Խնդրիդինգ յև ասւարդիդինգ: — Այս կամ այն հատկությունները հաջորդների մեջ ամրացնելու համար ըստ հնարավորության իրար հետ տրամախաչում են այնպիսի անհատներ, վորոնք յերկուսն ել ունեն ավլալ հատկությունները: Այդ ամենից հեշտ ե գլուխ գալիս այն գեղագում, յերբ արամախաչելու համար վերցված անհատներն աղդակից են իրար: Սովորաբար, արժեքավոր փոփոխակներ ավող բուծման բուրու գեղագումը ել տրամախաչումը կատարված և լինում աղդակից անհատների միջև: Այդ յեղանակը կոչվում է ինքրիդինգ կամ ներբուծում:

Խնդրիդինգ խոսքն ինքը շատ մանվածապատ ե և կարող ե կիրառվել տրամախաչման զանազան տիպերի նկատմամբ¹⁾: Այն գեղ-

1) Զովեար և մոռանալ, վոր մենք արամախաչում տերմինը գործ ենք ածում սովորական գենետիկական իմաստավ, հասկանալով այդ տերմինության ամեն տեսակ զուգարգում: Իսկ զոտեխնիկները հաստուկ տերմինուրգիա յեն փորձածում: արամախաչում տակով նրանք հասկանում են միայն տարրեր ցեղերի ներկայացուցիչների զուգորդումը միմրանց նետ, իսկ ցեղի միջև կատարված զուգորդումը նրանք անվանում են մաքուր բուծում: Դրանց վոչ ցանկալի շփոթություն ե առաջ գալիս գենետիկական և զոտեխնիկական գրականությունը համեմատելիս:

քերում, յերբ տրամախաչվում են միևնույն ցեղի ներկայացուցիչները, կարող ե տեղի ունենալ վորոշ չափով, թեպետև հեռավոր, ինըըիդինգու Ուստի գործնականորեն ավելի հարմար հանդիսացավ այդ տերմինը սամանափակել մերձավոր ազգականների՝ ազգակցության յերրորդ աստիճանից վոչ հեռու տրամախաչման գաղափարով։ Վոչ ազգակից անհատների կամ հեռավոր ազգականների միջև կատարվող տրամախաչումը կոչվում է առւտրբիդինգ կոմ արտաքուժում։ Ավելի հեռավոր՝ տարրեր ցեղերի կամ փոփոխակների միջև կատարված տրամախաչումը կոչվում է կրօսսըրբիդինգ։ Ասենք՝ կրօսսըրբիդինգը և առւտրբիդինգը յերբեմն գործ են ածում միևնույն իմաստով, վորպես վոչ ազգակից կամ հեռավոր ազգակցություն ունեցող անհատների տրամախաչում։

Տրամախաչման այդ բոլոր տարրեր սիստեմներն ըստ եյության կարելի ին բաժանել յերկու խմբի՝ ինըըիդինգի և առւտրբիդինգի, վորոնք տարրերվում են տրամախաչվող անհատների ազգակցության աստիճանով։

Խնդրիդինգի լայն կիրառումը։—Խնդրիդինգը վաղուց ի վեր բավական լայն չափով կիրառվում է բույսերի, կենդանիների և նույնիսկ մարդկանց նկատմամբ։ Խնդզես հայտնի յե, մի շաբք բույսեր ընդհանրապես բազմանում են ինքնափոշումամբ։ Սակայն և այնպես, չնայած գործնական փորձն այնքան շատ տվյալներ ե կուտակելու շատ տարրեր ու հակասական հայացքներ կան ինըըիդինգի արդյունքների շուրջը։

Բուսաբուժների և կենդանաբուժների մեծ մասը համամիտ եր, վոր ազգակցական տրամախաչման արդյունքն և լինում ձեւերի զգալի միտափառությունը Բայց մինչդեռ վոմանք գտնում եյին, վոր ինըըիդինգի հետեւանքն և լինում կենսունակության թուլանալը, պաշավեսության նվազումը և այլ վնասակար յերևույթներ, մյուսները ժխտում եյին այդ Այդ հակասությունների արմատը թաղված ե փորձնական ավյալների տարրերությունների մեջ։


Մի կողմից հայտնի յե, վոր անասունների ոգտակար շատ ցեղեր զգալի չափով ստացվել են ինըըիդինգի միջոցով։ Ազգակից տրամախաչման միջոցով ստացվել են աշխարհանոչակ շորտնորն (կարճեղյուր) անասունները։ Այդ ցեղն ստանալու համար Թավորիտ ցուլը և սերնդի ընթացքում տրամախաչել են իր աղջիկների հետ։ Աբերդինոս—անգուսյան անասուններն ստեղծելու գործում նմանապես փոքր գեր չի խաղացել ազգակից տրամախաչումը։

Գրակտիկ անասնաբուժների կարծիքով խոզն տռանձնապես պիտանի չե ազգակից բազմացման համար։ Այնուհանդերձ կան խոզերի մի շաբք արդյունավետ գծեր ու հոտեր, վորոնք ստեղծվել են ազգա-

կից բուժման հետեւանքով: Բերկիցից ցեղը բուժող մի շաբթ ամերիկյան խողարուծներ վճռաբար արտահայտվել են հոգուտ պազակից բուժման: Մշտապես ինքնափոշուավող բուժյաներն իրենց կենսունակությամբ և պազավետությամբ չեն դիշում խաչածն փոշուավողներին:

Մյուս կողմից, հայտնի եյին անվիճելի փաստեր, յերը ինըրի-դինդի միջոցավ յերկար ժամանակ բուժվող դժերը շատ թուլացել եյին, նվազեցնելով իրենց պաշտամակառությունը: Այդ պատճառով բուժման կոնկրետ կանոնները ևս հակասական եյին:

Ինըրիդինդի փառենք մկների ու ծովախոսվերի վրա:—Գենետիկներն ինըրիդինդի մի շաբթ նշարիա փորձեր արեն կենդանիների ու բույսերի վրա և արդյունքները վերլուծեցին գենետիկորեն ու բիոմետրիկորեն: Այդ փորձերի հիման վրա աստիճանաբար մշակվեց ինըրիդինդից այս



Նկ. 106. Կորագիծը ցույց է տալիս՝ առնետի ձագերի միջին թիվը յուրաքանչյուր ձնի ժամանակ՝ 25 սերնդի ընթացքում:

կամ այն արդյունքն ստացվելու պատճառների բավականին պարզորոշ ըմբռնում և գտնվեց այն ընդհանուր բացարությունը, վոր մեկնարանում և գենետիկական տեսակետից այդ հակասական բոլոր արդյունքները:

Կենդանիների վրա կատարված ինըրիդինդի լայն փորձերը չհաստատեցին առաջ ուրվագծվող այն հետեւթյունը, վոր ինըրիդինդի շնորհիվ նվազում և մասն կենդանիների պաշտամակառությունն ու կենսունակությունը և ավելանում են նրանց մեջ հիվանություններն ու դանագան աննորժալությունները:


Մյուս կինդն ուսումնակիրենց 25 սերնդի ընթացքում ինըրիդինդի միջոցավ բուժվող առնետներին ընդուամենն ստացվել եր 25.000 կենդանի: Սկզբում վերցվել եյին մի գծից առաջ յեկած 2 ալբինոս արու-

և 2 եղանք արամախաչվեցին իրար հետո 106 նկարում բերված
 կորագիծը ցույց է տալիս, թե միջին թվով քանի ձադ է տալիս յու-
 րաքանչյուր ծինը Առաջին Յ սերունդների ընթացքում պտղավետու-
 թյունն ու կենսունակության այլ տարրերը նվազում եյին, Սակայն
 այդպիսի յերևույթ եր նկատվում այդ ժամանակամիջոցում նաև
 տասնց ինքրիզինգի բազմացող այլ առնետների մեջ Բուժարանում
 ընդհանրապես բոլոր առնետների սնունդը բարելավվելուց հետո, ին-
 ըրիդինգվող առնետները օ-բդ սերնդից հետո սկսեցին ավելի լավ
 անել, և յուրաքանչյուր ծնից հետո ստացվող ձագերի միջին թիվն
 ավելացավ, օ-բդ սերնդից հետո մկներին սկսեցին վորոշ ընտրության
 յենթարկել այն եւ տրամախաչման համար ընտրվում եյին ամենա-
 կենսունակները Հետագայում կենսունակության վոչ մի նվազում
 չնկատվեց: Ընդհակառակը, ին-
 ըրիդինգի մի քանի սերունդների
 ընթացքում պտղավետությունը
 մի քիչ ավելացավ: Բացի դրա-
 նից, ինքրիզինգվող գծերից մեկն
 իր հաստիով և մարմնի չափով
 նույնիսկ գերազանցեց կանորու
 զնից: Շատ մեծաքանուկ նյութի
 վրա կատարված այդ փորձը
 ցույց տվեց, վոր ինքրիզինգը,
 դուգահեռարար ըստ կենսունա-
 կության ընտրություն կատա-
 նելու դեպքում, անբարեհաջող բրիդինգային (C) առնետների անումը (ըստ
 Զոնով):



Կության ընտրություն կատա-
 նելու դեպքում, անբարեհաջող բրիդինգային (C) առնետների անումը (ըստ
 Զոնով):

Ինքրիզինգի յերկրորդ, շատ մեծ փորձ կատարեց Ուայսը ծովա-
 խողերի վրա (նկ. 108): Փորձը կատարվեց 20-ից ավելի սերնդի
 վրա ավելի քան 15 տարվա ընթացքում և ընդգրկեց 20000 ծովախող:
 Մի քանի տարրեր ընտա-
 նիքների սահմաններում
 տրամախաչվում եյին յեղ-
 բայրներն ու քույրերը,
 ուստի հնարավոր եր ինքրի-
 զինգի արդյունքները հա-
 մեմատել առանձին մեկու-
 սոցրած գծերում: Ընդհա-
 նուր առմամբ ծովախողերի
 յերկարատև ինքրիզինգի
 հետեանքը յեղավ կենսու-



նկ. 108. Մովախողերի էիքրիզիների կենսունակու-
 թյան առելանալը, ներկու ցեղեր (2 և 4), F1 (1)
 և F2 (3) արդյունքի առման կորագիծը

Նակության բոլոր տարրերի թուլանալը Սակայն բնորոշ ե, վոր այդ արդյունքները յուրաքանչյուր ընտանիքում տարրեր ենին. Յուրաքանչյուր ընտանիք սկսեց բնորոշվել հատկանիշների վորոշ համակըզմամբ Մի ընտանիք սովորաբար ավելի կենսունակ ե վորոշ կողմերով և պակաս կենսունակ՝ այլ կողմերով: Խնբրիդինգով ամրացած ընտանիքների դիմերենցիացիան անդրադարձավ նաև մի շարք այնպիսի հատկանիշների վրա, ինչպիսիք են՝ զույնը, մատների թիվը և այլն: Այն փաստը, վոր այնունաղերձ ինքրիդինգի պատճառով նկատելի հնտագիմում չնկատվեց, կատարելապես համապատասխանում ե միսս Կիմզի տվյալներին և ցույց ե տալիս, վոր ինքրիդինգի ժամանակ «այլանելըման» հատկանիշների առաջ գալը պարագիր չե:

Մյուս կենդանիների ինքրիդինգին վերաբերող տվյալները քիչ են տարրերվում ծովախողերի վրա կատարված փորձի արդյունքներից: Ճիշտ ե՝ ինքրիդինգային մի քանի ընտանիքներում նկատվել են պտղաբերության նվազում, մահացման ավելացում, աճման դանդաղում: Սակայն առանձին ընտանիքների միջև յուրահատուկ վորոշ տարրերություններ կային:

Ընդհանրապես ինքրիդինգի կիրառման հնարավոր կամ անհնարին մինելու հարցին կարելի յե կոնկրետ պատասխան տալ միայն տվյալ ցեղի վրա փորձ կատարվելուց հետո: Այդպիսի փորձերի անհրաժեշտությունն անվիճելի յի: Թե մեր գրականության մեջ և թե արտասահմանում ամեն տարի լույս են տեսնում զանազան տեսակների ու ցեղերի ինքրիդինգի եֆեկտը վերլուծող աշխատությունները: Վորոշես որինակ, յես կմատնանշեմ, վոր ամերիկացի Զալը, սկսած 1929 թվականից, մի շարք հազորդագրություններում հրապարակել ե այն արդյունքները, վոր նա ստացել ե լեգորնների և պլիմուտուրինների վրա իր կատարած աշխատանքից: Ինքրիդինգային նյութը (յեղբայր+քույր) կրուբրիդինգայինի հետ ըստ միքանի հատկանիշների համեմատելիս (ձվերից ստացվող ճաների քանակը, ճաների կենսունակությունը և այլն) աեսնում ենք, վոր մի քանի հատկանիշներ վատանում են:

Այդ հիման վրա Զալը խորհուրդ չի տալիս յեղբորը տրամախաչել քրոջ հետ իսկ Հազիւր բերկշիռ խողերի վրա իր կատարած փորձերով ցույց տվեց, վոր ինքրիդինգային ընտանիքում լուրաքանչյուր ձնից ստացված խոճկորների միջին թիվը ավելանում ե:


Դնննը՝ հավերի ինքրիդինգի վերաբերյալ իր մի շարք աշխատություններում նույնպես մատնանշում ե, վոր մերձավոր ինքրիդինգն աննպաստ արդյունքներ ե տվելը ի վերջո՝ նա հանգում ե այն ճիշտ յեղբակացության, վոր ինքրիդինգը վորոշ չափով պետք ե կիրառել միայն հատուկ նպատակներով, յերբ վորոշ առանձնահատկություն-

Ներ հարկավոր և ամրացնելի նա հետաքրքիր տվյալներ և ստացել թէ
ինչպիսի ազդեցություն և գործում ինքը իդինդը վոսկրների վրա:
Ինքը իդինդը շարունակվելուն զուգընթաց՝ նվազում եր առանձին վոս-
կրների լերկարությունը, սակայն մասերի մեծության հարաբերու-
թյունը չեր փոխվում: Միենայն ժամանակ ինքը իդինդային ընտա-
նիքներում դիֆերենցիացիան առանձնապես հաճախ եր պատահում
ձարթի մասերի (վոսկրների, վոսների) հարաբերության մեջ:

Այդպիսով, ինքը իդինդի հետևանքն ել լինում հաճախ (բայց վոչ
անպայման) կենսունակության թուլանալը և միենույն ժամանակ
ժառանգական հատկանիշների փոփոխականության նվազումն ու նրանց
ամրացումը՝ ինքը իդինդային գծի կամ ընտանիքի սահմաններում:

Թառենթազող արդյունքներ՝ առևտրիդինդի ժամանակի: Հետեւզիս.—
Ի հակադրություն ինքը իդինդի մասերի առևտրը դիֆերենցիա համա-
րում են կենսունակությունը բարձրացնելու միջոց:

Ենթել են մի շարք փաստեր, յերբ վոչ ազգակից առանձին ցե-
ղերի միջև կատարված տրամախաչումից առաջ են յեկել շատ կենսու-
նակ և ուժեղ հաշորդներ: Վաղահաս խողեր ստանալու համար լայնու-
րեն կիրառվում ե խողերի դյուրոկ-շերսեց և բերկիո ցեղերի տրա-
մախաչումը: Տաքարի յերկու ցեղերը՝ արեգին-անգուստ ու շորտնորնը
տրամախաչելիս և մի շարք միջցեղային այլ տրամախաչումներ կա-
տարելիս ստացվում են լավ ձեռքբով, խոշոր, մասսանա-
